

ԱՐԱՆՆ ԴԵՏՐՈՍՅԱՆ

**ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ
ԾԱԳՄԱՆ ԽՆԴԻՐԸ**



ՆՎԻՐՈՒՄ ԵՄ ԾՆՈՂՆԵՐԻՍ ՀԻՇԱՏԱԿԻՆ

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ



ARMEN PETROSYAN

THE PROBLEM OF ARMENIAN ORIGINS

MYTH
HISTORY
HYPOTHESES



YEREVAN
ANTARES

ԱՐՄԵՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ
ԾԱԳՄԱՆ ԽՆԴԻՐԸ

ԱՌԱՍՊԵԼ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
ՎԱՐԿԱԾՆԵՐ



ԵՐԵՎԱՆ
ԱՆՏԱՐԵՍ

ՀՏԴ 821.19-31 Պետրոսյան
ԳՄԴ 84(5Հ)-44

Armen Petrosyan
THE PROBLEM OF ARMENIAN ORIGINS
MYTH, HISTORY, HYPOTHESES

Խմբագիր՝
Արքմենիկ Նիկողոսյան

Պետրոսյան Արմեն
Հայ ժողովրդի ծագման խնդիրը: /Արմեն Պետրոսյան.-
Եր.: Անտարես, 2017.- 256 էջ:

Գրքում քննվում է հայագիտության առավել կարևոր և վիճահարույց խնդիրներից մեկը՝ հայ ժողովրդի ծագման և կազմավորման հարցը: Խորությամբ ներկայացվում և քննարկվում են հարցի վերաբերյալ եղած հայտնի տվյալները և նրանց հիման վրա առաջ քաշված գիտական վարկածները: Նախատեսվում է մասնագետների և ընթերցող լայն շրջանակների համար:

ISBN 978-9939-76-053-7



© Պետրոսյան Ա., 2017
© Անտարես, 2017

Իմ երախտագիտությունն եմ հայտնում Լևոն Աբրահամյանին, Պավել Ավետիսյանին, Արսեն Բոբոխյանին, Երվանդ Գրեկյանին, Լևոն Եպիսկոպոսյանին, Հասմիկ Հարությունյանին, Հրաչ Մարտիրոսյանին և բոլոր նրանց, ում հետ ես քննարկել եմ այս գրքում արծարծված գիտական խնդիրները և ովքեր նպաստել են գրքի ստեղծմանը:

ՆՎԻՐՈՒՄ ԵՄ ԾՆՈՂՆԵՐԻՍ ՀԻՇԱՏԱԿԻՆ

լեզուներից էր խուռիերենը, իսկ հյուսիսում՝ Հայկական լեռնաշխարհի հարավում խոսել են նաև այլ՝ մեզ անհայտ լեզուներով: Մ.թ.ա. II հազարամյակի վերջից՝ արամեացիների արշավանքներից հետո, երկրում սկսում է էական դեր կատարել սեմական մեկ այլ լեզու՝ արամեերենը, որը տերության գոյության վերջին դարում փաստորեն դուրս է մղում ասուրերենը՝ այն թողնելով որպես միայն պաշտոնական լեզու:

Ասորեստանը կարևորագույն դեր է կատարել Հայկական լեռնաշխարհի պատմության մեջ: Տեղի հնագույն ցեղերը հաճախ միավորվել են Ասորեստանի արքաների արշավանքների դեմ, իսկ Ուրարտու պետության ձևավորումը կարող է դիտվել որպես այդ արշավանքների պատասխան պաշտպանական արձագանք: Մեծ է եղել նաև Ասորեստանի մշակութային ազդեցությունը: Այսպես՝ ուրարտական պետական մշակույթը իր բազում դրսևորումներով ձևավորվել է ասորեստանյանի հիման վրա: Հայկական լեռնաշխարհի վերաբերյալ հնագույն տեղեկությունների մի շատ կարևոր մասը, որն ընդգրկում է մ.թ.ա. II հազարամյակի սկզբից մինչև մ.թ.ա. VIIդ., գալիս է ասորեստանյան աղբյուրներից¹²⁸:

Մաննա: Այս թագավորությունը հայտնի է մ.թ.ա. I հազարամյակի սկզբներից: Գտնվել է Ուրմիա լճից հարավ և արևելք ընկած տարածքներում և տիրել է Հայկական լեռնաշխարհի որոշ հարևան հատվածների: Մայրաքաղաքն էր Իզիրտուն (Ջիրտա): Եղել է ուրարտական և ասորեստանյան արշավանքների և նվաճումների թատերաբեմ, առավելագույն հզորության է հասել մ.թ.ա. VIIIդ. վերջերին: Ի տարբերություն Հայկական տարածաշրջանի ավելի հին և կազմակերպված պետությունների՝ սեփական գիր չի ունեցել:

Մաննայի հիմնական բնակիչների լեզուն հայտնի չէ: Անվանաբանության տվյալներից դատելով՝ երկրում եղել է, ի թիվս այլոց, նաև իրանական և խուռիական բնակչություն: Շատ հետաքրքիր է, որ Ուրարտուի գլխավոր աստված Խալդիի պաշտովել է նաև այս երկրում¹²⁹:

¹²⁸ Ասորեստանի վերաբերյալ հսկայական գրականությունից մեր թեմայի համար պետք է առանձնացնել ՀՀԵՊ, 54-113:

¹²⁹ Մաննայի պատմության վերաբերյալ տես Кашкай 1977. RLA 7, 5/6, 340-342. Գրեկյան 2002. այնտեղ Խալդիի պաշտամունքի մասին՝

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Գրքում քննարկվում են հայ ժողովրդի սկզբնավորման, ձևավորման, նախապատմության ու վաղ պատմության խնդիրները, որոնք տարբեր աշխատություններում կոչվել են «ժողովրդի ծագում», «ազգածագում», «ժողովրդի ձևավորում» ևն: Մարդկային հանրույթների «ազգ» և «ժողովուրդ» անվանումները միարժեք չեն: Այսպես, տարբեր եվրոպական լեզուներում նույնիսկ նույնարմատ բառերը տարբեր իմաստներ ունեն (հմմտ. ռուս. национальность «ազգություն, էթնիկական պատկանելություն» և ֆրանս./անգլ. nationalité/nationality, «որևէ երկրի հպատակություն/քաղաքացիություն»): Նույնիսկ նույն լեզվում դրանք հաճախ տարբեր սահմանումներ են ունեցել՝ տրված տարբեր ժամանակներում և տարբեր գիտնականների կողմից և ըստ այդմ արժանացել են տարբեր մոտեցումների ու մեկնաբանությունների: Արևելահայ ժամանակակից տերմինաբանությունը հետևում է ռուսերենին, որը որոշ առումով, կառչած էր մնացել XIX դ. արևելաեվրոպական ավանդույթին՝ այն զարգացնելով խորհրդային քաղաքականության պահանջներին համապատասխան (ԽՍՀՄ բնակչությունը բաժանվում էր «ազգությունների», որոնցից համեմատաբար մեծերը, ըստ լենինյան սահմանման, կազմում էին «սոցիալիստական ազգեր», իսկ ողջ բնակչությունը կոչվում էր «խորհրդային ժողովուրդ»): Այս մոտեցումները, այսպիսով, հաճախ նաև քաղաքական ենթատեքստեր են պարունակում՝ «ինտերնացիոնալիստական», սոցիալիստական, ազգայնական ևն (ընդ որում՝ *ազգայնական* «նացիոնալիստ» տերմինը ևս նշանակալիորեն տարբերվում էր արևմտյան¹ և խորհրդային իրականության մեջ. երկրորդում այն ավելի բացասական երանգավորում ուներ):

Ազգ, եվրոպական լեզուներով՝ nation, Nation, nación, nazione, нация կատեգորիայի սահմանումը և ազգերի ձևավորման ու ժառանգորդության հարցերը ժամանակակից գիտության մեջ լայնորեն քննարկվող և միարժեք պատասխաններ չունեցող խնդիրներից են¹: Այս հարցերի վերաբերյալ կա երկու հիմնական մոտեցում

¹ Եվրոպական լեզուներում nation և հայերեն *ազգ* բառերի հարաբերու-

«պրիմորդիալիստական» և «կոնստրուկտիվիստական» (կամ «մոդեռնիստական»): Առաջինն ընդունում է ազգերի վաղնջական արմատների էական դերը, երկրորդը՝ դիտում ազգերին որպես նոր դարաշրջանին բնորոշ երևույթներ և վճռական նշանակություն տալիս ուշ գործընթացներին: Իմիջիայլոց, առաջին մոտեցման կողմնակիցները հայերին համարում են աշխարհի՝ հնում ձևավորված մի քանի ազգերից մեկը²: Մեզանում՝ հասարակության լայն շրջանակներում, մինչև այժմ շատ տարածված է պրիմորդիալիստական մոտեցումը, իսկ պատմականորեն էական է եղել Ի. Հերդերի և XIX դարի գերմանական ռոմանտիկների՝ ավելի իռացիոնալ սկզբունքների վրա հիմնված ըմբռնումը, ըստ որի՝ ազգն արտահայտում է «ժողովրդի ոգին» և հենվում ընդհանուր ծագման ու մշակույթի վրա:

Հին հայերենի *ազգ* բառի մեզ հետաքրքրող նշանակությունները կենտրոնանում են մեկ անձից ծագման վրա՝ «մեկ նահապետից (ցեղապետից, նախահորից) սերված ժողովուրդ՝ մարդիկ» իմաստով³ (և հատկանշական է, որ ավանդաբար *ազգ* է կոչվել հենց մեկ նահապետից սերող հայկական ավանդական նահապետական ընտանիքը)⁴: Մինչդեռ ժամանակակից հայերենի խորհրդային բառարաններում բերվում է բառի ստալինյան՝ «մարքսիստական» համարվող սահմանումը՝ «լեզվի, տերիտորիայի, տնտեսական կյանքի և մշակույթի ընդհանրությամբ արտահայտվող հոգեկան կերտվածքի՝ պատմականորեն կազմավորված մարդկանց կայուն ընդհանրություն» (որը, ի դեպ, շատ ընդհանրություններ ունի մոդեռնիստականի հետ), ապա՝ «ժողովուրդ», «պետություն», իսկ հետո՝ «ցեղ»,

թյան և ընդհանրապես *ազգ* հասկացության ժամանակակից սահմանման և մեկնաբանության վերաբերյալ տես Հովակայան 2011: Էթնիկական խմբերի, ազգերի և հարակից հարցերի շուրջ տես, օրինակ, Smith 2000, Смит 2004 և նույն հեղինակի այլ աշխատություններում, գրականությամբ: Պետք է նշել, որ 1983-ին հրապարակված երեք աշխատություններ հատկապես փոխեցին գիտության այս ճյուղի ժամանակակից ուսումնասիրությունների ողջ ուղղվածությունը, տես Anderson 1983. Hobsbawm, Ranger 1983. Gellner 1983:

² Տես, օրինակ, Grosby 1997. այս հարցի վերաբերյալ հայ հեղինակների աշխատություններից տես Գևորգյան 1997. Այվազյան 2005. 2007. Abrahamian 2006, 137-145. Абрамян 2011:

³ ՆՀԲ Ա, 6-7:

⁴ Карапетян 1966.

«գերդաստան», «ազգական», «տեսակ» և այլ հին նշանակություններ⁵: Իսկ ժամանակակից մասնագիտական գրականության մեջ ազգ բառը կիրառվում է որպես եվրոպական nation-ի համարժեք:

Այս ազգ/nation-ը առնչվում է *էթնիկական հանրույթ/համայնք* կամ *էթնիկական խումբ*, *էթնոս* հասկացությունների հետ, բայց և տարբեր է նրանցից: Այն շատ ավելի անանձնական, վերացական և բացահայտորեն ավելի քաղաքական երևույթ է: Ազգը բնորոշվում է որպես ինդուստրիալ դարաշրջանի մարդկանց պատմական, սոցիալ-տնտեսական, մշակութային, մշակութաքաղաքական և հոգևոր ընդհանրություն, որը գիտակցում է իր միասնականությունը և մասնավոր շահերը: Բ. Անդերսոնն ազգերն անվանում է «երևակայական հասարակություններ» (imagined communities)⁶՝ երևակայված իրենց այդ խմբի մաս ընկալող մարդկանց կողմից⁶: Ա. Սմիթը, ի լրումն էթնիկական խմբի հատկանիշների (ընդհանուր անվանում, ընդհանուր պատմական տարածք, ընդհանուր առասպելներ և պատմական հիշողություններ, տե՛ս ստորև) շեշտում է ազգին բնորոշ հետևյալ ընդհանրությունները. զանգվածային հասարակական մշակույթ, ընդհանուր տնտեսություն և անդամների համար ընդհանուր օրինական իրավունքներ ու պարտականություններ:

Հաշվի առնելով արևելահայերեն և ռուսերեն տերմինների պատմականորեն ձևավորված համապատասխանությունը՝ ներկայացնենք նաև «ժողովուրդ» (народ) տերմինի ռուսական «Վիկիպեդիայի» ներկա բնորոշումը՝ 1. որոշակի երկրի կամ պետության բնակչությունը, 2. մարդկանց պատմական հանրություն. ընդ որում՝ «ժողովուրդ բառը գիտական գրականության մեջ օգտագործվում է երկու հիմնական նշանակություններով՝ քաղաքական և մշակութաէթնիկական: Առաջին նշանակությամբ վերցված այն հանդիսանում է ազգ տերմինի հոմանիշը»:

Սույն աշխատության հիմնական խնդիրը թե՛ն ձևակերպվել և ձևակերպվում է որպես ժողովրդի/ազգի ծագում/ձևավորում, իրականում կապ չունի ներկայացված ազգ և *ժողովուրդ* տերմինների ու հասկացությունների վերաբերյալ ժամանակակից մոտեցումների, սահմանումների և նրանց միջև եղած հակասությունների հետ, թե՛ն այդ հարցը երբեմն քննարկվել և նույնիսկ շահարկվել է: Մեր

⁵ ԺՀԼԲ I, 7. ԱՀԲԲ I, 5:

⁶ Anderson 1983, 6-7.

հիմնական խնդիրը հետևյալն է. տարածության և ժամանակի մեջ հնարավորության սահմաններում նույնացնել և տեղայնացնել հայկական հնագույն էթնիկական հանրույթը այնքան վաղ, ինչքան միայն հնարավոր է՝ որոշ չափով անդրադառնալով նաև նրա վաղ զարգացման ընթացքին: Բանն այն է, որ «Ժողովուրդ», «ազգ» և նման տերմիններով, ինչ նշանակություն էլ դնենք դրանց մեջ, բնորոշվում են համեմատաբար նոր և զարգացած էթնոքաղաքական միավորները: Իսկ այն հնագույն ժամանակներում, երբ ձևավորվել է հայ հանրույթը, պետք է գոյություն ունենային մարդկանց էթնիկական միավորումների առավել վաղ ձևերը՝ տոհմ, ցեղ (սրանք ավելի ցածր, ազգակցական կապերով միավորված մարդկանց խմբեր են), ցեղախումբ, ցեղերի միություն: Ընդ որում՝ էթնիկական հանրույթը կարող էր բաղկացած լինել մի քանի ցեղից կամ ցեղախմբից, որոնք իրար հետ կարող էին գտնվել նույնիսկ թշնամական հարաբերությունների մեջ (ինչպես օրինակ՝ հին հույները մ.թ.ա. I հազարամյակում)⁷:

Ժամանակակից գիտության մեջ էթնիկական խմբերը ևս միարժեք չեն սահմանվում: Ինչևէ, այդ հասկացության տակ հիմնականում նկատի են ունենում մարդկանց որոշակի խումբը, որը նույնացնում է իրեն որպես միասնական հանրույթ ընդհանուր ժառանգորդությամբ (իրական կամ ենթադրյալ) և որոշ մշակութային բնութագրերով: Որպես ընդհանուր հատկանիշներ հիշվում են միասնական ծագումը, միանման ֆիզիկական տեսքը, ընդհանուր լեզուն, պատմությունը, մշակույթը, կրոնը, բնակության տարածքը: Այսպես՝ Ա. Սմիթը կարևորում է ընդհանուր անվանման (ցեղանվան) գոյությունը, ենթադրվող ընդհանուր ծագումը (ընդհանուր ծագման առասպելներ), միասնական պատմական հիշողությունները, ընդհանուր մշակույթի մեկ կամ մի քանի տարբերակիչ տարրերի առկայությունը, կապը մի առանձնահատուկ տարածքի՝ հայրենիքի հետ, համերաշխության զգացումը բնակչության նշանակալի խմբերի միջև⁸:

Հայոց ազգածագման և նախապատմության հարցերը XXդ. գիտության մեջ առավել մանրամասն քննվել են Ի. Դյակոնովի աշխատություններում, որոնցում հատուկ դեր է հատկացվել նաև խնդրի տեսական դրույթների սահմանմանը: Հեղինակի մոտեցումը

⁷ Հին հույների էթնիկական ինքնության վերաբերյալ տես Hall 1997:

⁸ Smith 1986, 22 ff. 1991, 19 ff. 2000, 65.

հին ժողովուրդների՝ իրենց հնագույն ակունքների հետ ունեցած հարաբերությանը համապատասխանում էր իր ժամանակաշրջանի խորհրդային և արևմտյան գիտության մեջ իշխող դրույթներին: Դյակոնովն առանձնացնում էր ժողովուրդների ժառանգորդության երեք հայեցակետ՝ կենսաբանական, մշակութային և լեզվական⁹ (այստեղ ժողովուրդ տերմինը համապատասխանում է էթնիկական հանրության):

Ստորև ներկայացնենք որոշ դիտարկումներ հայկական հնագույն էթնիկական հանրության վերաբերյալ:

Միասնական ծագում

Սա որոշակիորեն սուբյեկտիվ բնութագիր է: Հին ժողովուրդներն ունեին առասպելներ, որոնցում պատմվում է իրենց՝ որպես հանրույթ ստեղծվելու պատմությունը՝ հաճախ մեկ նախնուց և նրա որդիներից, որոնցից առաջացած են համարվել իրենց տարբեր խմբերը: Հայկական ազգածին առասպելը, հայտնի Մովսես Խորենացու և Սեբեոսի գրքերից, ավանդված է հայոց գրի ստեղծումից հետո, այսինքն՝ V դարից, բայց այն ակնհայտորեն վաղնջական է:

«Էթնիկության» միջուկը ձևավորվում է առասպելների, հիշողությունների, արժեքների և սիմվոլների հիման վրա¹⁰: Ընդհանրապես, ազգածին առասպելի գոյությունն է միավորում մարդկանց, և այդ առասպելներն են կազմում այն հոգևոր հիմքը, որի վրա է ձևավորվում էթնիկական հանրությամբ և հասարակության հետագա, ավելի զարգացած միավորները՝ ընդհուպ մինչև ժամանակակից ազգերը: Տարբերությունը միայն այդ առասպելի բնույթի մեջ է՝ վաղնջական առասպելներ, առասպելախառն էպիկական գրույցներ (ինչպես հայոց մեջ է) կամ թե նորատիպ, պատմական համարվող, բայց բնությամբ առասպելական պատմություններ, ինչպես որոշ նոր

⁹ Дьяконов 1968, 7-10, 211. 1983, 12 слл., 1983a, 149. Diakonoff 1984, 1-3. 1990, 53-54.

¹⁰ Ընդհանուր առասպելների՝ որպես ազգի գոյության պարտադիր նախապայմանի կարևորագույն դերի վերաբերյալ ժամանակակից ազգաբանական տեսություններում տես օրինակ Armstrong 1982, գլուխ I, Smith 1986, 13 ff. 2000, 66 ff.:

ազգերի մոտ: Այս, ինչպես և ազգածագման թեմայով մեր մյուս աշխատությունների ամենակարևոր տարբերություններից մեկը նախորդներից այն է, որ մենք մանրամասնությամբ քննարկում ենք հայոց ազգածին ավանդությունը մի քանի կարևոր դիտանկյունից, նաև առասպելաբանական համատեքստում, ինչը հնարավորություն է տալիս նորովի մեկնաբանելու այն՝ որպես հայոց նախապատմության կարևորագույն աղբյուր:

Հայոց նախնական էթնիկական հանրույթն ազգածին առասպելում հակադրվում է Միջագետքի վաղ սեմական իշխողներին և կառուցվածքով համապատասխանում է հենց միջագետքյան՝ արքադական և հատկապես խուռիական վաղ հասարակության կառույցին (տե՛ս հաջորդ գլուխը): Այն կարող է ժամանակագրվել մի կողմից՝ հնդեվրոպական զուգահեռների գոյությամբ, իսկ մյուս կողմից՝ այն փաստով, որ խուռիները գոնե հիմնականում դուրս են եկել պատմության թատերաբեմից մ.թ.ա. երկրորդ հազարամյակի վերջին: Սա կարող է հնարավորություն տալ որոշ պատմական դատողություններ անելու, ասենք՝ թվագրելու այդ հանրույթը ամենաուշը մ.թ.ա. երկրորդ հազարամյակով, խուռիների հարևանությամբ:

Հայրենիք

Հայոց բնակության տարածքը վաղուց ի վեր եղել է Հայկական լեռնաշխարհը: Նույնիսկ անկախ այն բանից, թե որտեղ և երբ է սկսել ձևավորվել հայկական հնագույն էթնիկական հանրույթը, սա մեր հիմնական օբյեկտիվ բնութագրերից է: Տարածաշրջանի հնագույն պատմության վերաբերյալ մեր տեղեկությունները գալիս են միջագետքյան և փոքրասիական քաղաքակրթության կենտրոնների սեպագիր աղբյուրներից, որոնց համար Հայկական լեռնաշխարհը հասանելի աշխարհի ծայրամասն էր: Նրանից ավելի հյուսիս և արևելք գտնվող երկրների մասին տեղեկություններ չկան կամ համարյա չկան:

Ազգածին ավանդությունը ևս հայոց հնագույն էթնիկական հանրույթի ձևավորումը տեղայնացնում է Հայկական լեռնաշխարհում. սկզբից՝ Վանա լճի շրջանում, ապա՝ Այրարատում:

Կենսաբանական ժառանգորդություն

Առաջավոր Ասիայի լեռնային շրջաններում հնուց ի վեր բնակվել են եվրոպեոիդ մեծ ռասայի երկու՝ միջերկրածովյան և բալկանակովկասյան փոքր ռասաների ներկայացուցիչները: Հայկական լեռնաշխարհում, հյուսիսային Միջագետքում և մասամբ Փոքր Ասիայում մ.թ.ա. վերջին հազարամյակներից տիրապետող է դառնում վերջինիս արմենոիդ տարբերակը, որին է պատկանում ժամանակակից հայ ժողովրդի մեծամասնությունը¹¹: Ինչպես նշում է Ի. Դյակոնովը, հին ժամանակներին բնորոշ չի եղել ցեղասպանությունը, և տարբեր ցեղերի ներգաղթն ու տեղաշարժերը Հայկական լեռնաշխարհում նշանակալի թռիչքաձև փոփոխություններ չեն առաջացրել տեղի բնակչության մարդաբանական միջին բնութագրերում, որը, այսպիսով, հիմնականում շարունակում է տեղի հին բնակչության կենսաբանական հատկանիշները: Միջագետքում, Հայկական լեռնաշխարհում և Փոքր Ասիայում բնակչության մարդաբանական տիպը, ըստ հին պատկերագրության տվյալների և մարդաբանական գտածոների, վերջին շուրջ հինգ հազար տարվա ընթացքում գործնականում չի փոխվել, մինչդեռ Միջագետքի և Փոքր Ասիայի բնակչությունն այդ ընթացքում ամբողջովին փոխել է իր լեզուն, հաճախ նախորդին ոչ ազգակից լեզվով, առնվազն հինգ անգամ (Միջագետքում՝ շումերերեն, աքքադերեն, արամեերեն, պարսկերեն, արաբերեն, Փոքր Ասիայում՝ խաթերեն, խեթերեն, փոյուգերեն, հունարեն, թուրքերեն): Ուրեմն, նոր լեզուները ներդնող եկվորները համեմատաբար փոքրաքանակ պիտի լինելին¹²:

Այս պատկերն իհարկե շատ մոտավոր է: Ընդհանրապես աշխարհի հնագույն բնակիչների վերաբերյալ տվյալները դեռևս թերի են և ոչ բավարար ուսումնասիրված: Բայց մի բան ակնհայտ է: Ասորեստանյան, խեթական, ուրարտական, սիրիական և տարածաշրջանի մյուս հին երկրների պահպանված պատկերագրության մեջ մարդիկ՝ սովորաբար արքաներ, քրմեր և աստվածներ, ամենուրեք աչքի են զարնում արմենոիդ ռասայի տիպիկ հատկանիշներով (արծվաքիթ, կարճ գլուխ՝ տափակ ծոծրակ, առատ մազածածկույթ ևն): Ընդ որում՝ պատկերներում այդ հատկանիշները երբեմն հասցված

¹¹ Дьяконов 1968, 9-10.

¹² Дьяконов 1983.

են չափազանցության, ուղղակի ծաղրանկարային մակարդակի: Հենց հին Առաջավոր Ասիայի (ասորեստանյան) պատկերների հետ ունեցած նմանության պատճառով այդ ռասան սկզբնապես կոչվել է «ասիրոիր»: Հետո, երբ պարզվեց, որ ժամանակակից ժողովուրդներից հատկապես հայերն են բնորոշվում այդ հատկանիշներով, և Հայաստանն է նրա առավել վառ արտահայտված դրսևորման կենտրոնական գոտին, այն վերանվանվեց «արմենոիր» (երբեմն օգտագործվել են նաև «առաջավորասիական» և «պոնտոս-գագրոսյան» անվանումները): Եղած փաստերի հիման վրա նույնիսկ մի տեսակետ է ձևակերպվել, ըստ որի՝ արմենոիր ռասայի ներկայացուցիչներն են կազմել հին մերձավորարևելյան մշակութային շրջանի միջին գոտու բարձր դասակարգը՝ սկսած խորագույն հնությունից (թերևս 11000թ. մ.թ.ա.), և նրանց սփռումն է հիմնականում պայմանավորել այդ մշակույթի հետագա տարածումը¹³:

Ինչևէ, հայերն արտաքուստ աչքի են ընկնում ռասայական բավական նշանակալի միակերպությամբ: Ավստրիացի ականավոր բժիշկ, մարդաբան, հնագետ և ազգագրագետ Ֆ. ֆոն Լուշանը գրում է, որ չնայած բազմիցս իրար փոխարինած օտար ժողովուրդների տիրապետությանը, հայերի մարմնական հատկանիշները պահպանվել են ապշեցուցիչ կերպով միասնական և համասեռ վիճակում (այնպես, ինչպես պատկերված են մարդիկ տարածաշրջանի հին բարձրաքանդակներում)¹⁴: Սա՝ մինչգենետիկական հետազոտությունների մակարդակով: Մոլեկուլային մակարդակի նորագույն հետազոտությունները ևս մատնանշում են նույնը՝ բոլոր հայկական խմբերը մնում են ռասայական առումով չափազանց միատարր¹⁵:

Հայ ժողովրդի ու հարևան պոպուլյացիաների միջև եղած մեկուսիչները ոչ թե աշխարհագրական են եղել, այլ ռեպրոդուկտիվ՝ կրել են կրոնական, տնտեսական, ռասայական, էթնոմշակութային բնույթ և սահմանափակել են միջէթնիկական ամուսնությունները [...]: Մեծ ուժգնությամբ պանմիքսիա (ազատ խաչասերում) է կատարվել հայկական

¹³ Moisheson 2001, 15.

¹⁴ Фон Лушан 1925, 139-142.

¹⁵ Տե՛ս օրինակ Нерсисян и др. 1989. Епископосян 2001. Weale et al. 2001, 659, 671 f.

*էթնոսի շրջանակներում, որի հետևանքով ստեղծվել է գե-
նոֆոնդի մեծ ընդհանրություն, և ամրապնդվել են հնադա-
րյան նախնիներից ժառանգած ուրույն մարդաբանական
հատկանիշները*¹⁶:

Մեկ զարմանալի թվացող օրինակ: Ակնհայտ է թվում, որ Հայ-
կական լեռնաշխարհի և հարակից շրջանների ժամանակակից
բնակչության մարդաբանական տիպի վրա պիտի իրենց ազդեցու-
թյունը թողած լինեին մոնղոլների և մոնղոլական ռասայի նշանա-
կալի խառնուրդ պարունակող միջինասիական թյուրքական ցեղե-
րի արշավանքները: Եվ հին պատմիչների վկայություններ կան այդ
նվաճողների կողմից գործած վայրագությունների և կանանց բռնա-
նալու վերաբերյալ: Բայց ժամանակակից գենետիկական ուսումնա-
սիրությունը ցույց է տալիս, որ տեղի հին ժողովուրդների՝ հայերի և
վրացիների գենետիկայի վրա մոնղոլական ազդեցությունն աննշան
է (ընդ որում՝ այդ ուսումնասիրությունը հենվում է հայրական Y քրո-
մոսոմի քննության վրա, որտեղ մոնղոլական նվաճողների գենե-
տիկան, ակնհայտորեն, պիտի ի հայտ գար): Իմիջիայլոց, գենետի-
կական մակարդակում չի բացահայտվում նաև բավական սպասելի
արաբական ազդեցությունը¹⁷:

Ընդհանրապես ոչ միայն տարածաշրջանի հին ժողովուրդնե-
րը, այլև շատ ավելի ուշ ձևավորված և ուշ ներգաղթողների լեզ-
վով խոսող մյուս ժողովուրդները նույնպես նշանակալիորեն պահ-
պանել են տեղի հին բնակիչների կենսաբանական տիպը: Այսպես՝
մոնղոլական ռասային բնորոշ մի հատկանիշ՝ էպիկանտուսը (կոպի
մոնղոլական ծալք), որը բավական բնորոշ է միջինասիական թյուր-
քալեզու ժողովուրդներին, այսինքն՝ ադրբեջանցիների լեզվական
նախնիներին, էական չէ ժամանակակից ադրբեջանցիների մարդա-
բանության մեջ¹⁸: Գենետիկական ուսումնասիրությունները փաս-
տում են, որ միջինասիական՝ թյուրքական գենոֆոնդը համեմատա-
բար թույլ է արտահայտված նաև ժամանակակից թուրքերի մոտ¹⁹:

¹⁶ Քոչար (ձեռագիր):

¹⁷ Епископосян 2008, 90-94.

¹⁸ Дьяконов 1983, 17, прим. 20 (ներկայացնենք որոշ տվյալներ միայն տղա-
մարդկանց վերաբերյալ. կրդներ՝ 51%, դազախներ՝ 22%, ուզբեկներ՝ 11%,
թուրքմեններ՝ 6%, ադրբեջանցիներ՝ 2%, ըստ Ошанин 1957, 61, 117):

¹⁹ Cinnioglu et al. 2004, 127, 135.

Ինչևէ, հայերի գենետիկական ուսումնասիրությունը փաստորեն միայն վերջերս է սկսվել, և բազում հարցեր դեռևս պարզված չեն: Ուսումնասիրություններն ընթանում են բավական ինտենսիվ, և մոտ ապագայում մենք շատ ավելի լիակատար պատկերացում կունենանք մեր ժողովրդի գենետիկական պատմության վերաբերյալ²⁰:

Մշակութային ժառանգորդություն

Սա բավական փոփոխական երևույթ է: Այսպես՝ Հայաստանի նախաքրիստոնեական և քրիստոնեական հոգևոր ու նյութական մշակույթների միջև տարբերությունը հսկայական է: Քրիստոնեության ընդունումից հետո փոխվել են ժողովրդի աշխարհայացքը, ողջ հոգևոր աշխարհը, տիեզերաբանական պատկերացումները, հոգևորականությունը, նյութական մշակույթի բազմաթիվ իրողություններ՝ թաղման ծեսը, տաճարների ձևը, հայտնվել է գիրը ևն: Մյուս կողմից, պահպանվել են ժողովրդի և երկրի անվանումները՝ Հայք, տարածքը, պետականությունը, լեզուն՝ հայերենը, արքայատոհմը, արքունիքը, նախարարությունները, պետության, զորքի կառույցը ևն: Խոր փոփոխություններ են տեղի ունեցել Հայկական լեռնաշխարհում նաև այլ դարաշրջաններում, օրինակ՝ վաղ բրոնզեդարից միջին բրոնզեդար անցման, առաջին պետական կազմավորումների ստեղծման, ուրարտական պետության ծավալման, Աքեմենյան Իրանի և Սելևկյան Սիրիայի տիրապետության, հելլենասեր Արտաշեսյանների և պարթևամետ Արշակունիների իշխանության ժամանակներում: Հետագայում արաբական, մոնղոլական, թյուրքական ցեղերի արշավանքները և տիրապետությունը ևս հսկայական փոփոխություններ են առաջացրել Հայաստանում: Չնայած դրան, պարզ է վերջին մի քանի հազարամյակի Հայկական լեռնաշխարհի մշակութային ժառանգորդությունը (որոշ թռիչքածն փոփոխություններով Միջին բրոնզի և Ուրարտուի դարաշրջաններում),

²⁰ Այստեղ կարելի է ներկայացնել վերջերս հրատարակված մի քանի կարևոր աշխատանքներ. Եպիսկոպոսյան 2013. Margaryan et al. 2011. 2012. Herera et al. 2012. Hovhannisyan et al. 2014. Hovhannisyan, Yepiskoposyan 2016:

իսկ գոնե հետուրարտական ժամանակաշրջանը որպես «հայ ժողովրդի պատմություն» սովորաբար չի վիճարկվում:

Հնագույն և հին դարաշրջանների վերաբերյալ մեր տեղեկությունները քիչ են կամ ուղղակի չկան: Մենք չգիտենք, թե ինչ ցեղեր են ապրել Հայկական լեռնաշխարհում, ասենք, մ.թ.ա. IV հազարամյակում, և ինչ ցեղերի արշավանքներով է պայմանավորվել լեռնաշխարհի հնագիտական մշակույթի ընդհանուր պատկերի փոփոխությունը մ.թ.ա. III հազարամյակի կեսից: Այդ մասին հնարավոր է միայն ենթադրություններ անել:

Մշակույթը ձևավորվում է սուբյեկտիվ գործոններով: Հայկական մշակույթի ձևավորման վրա հսկայական է եղել, օրինակ, V և XIX դարերի հեղինակների դերը, որոնք նպատակապես կերպով խնդիր են դրել ձևավորելու, ըստ իրենց պատկերացումների, նոր հայկական մշակույթ և էթնիկական ինքնագիտակցություն (V դարում՝ քրիստոնեական, XIX-ում՝ ազգային, շատ առումներով վերականգնված ըստ պատմական տվյալների, դարաշրջանի եվրոպական տեսությունների և իրենց երևակայության):

Կարելի է այս հարցերը շատ ավելի խորությամբ քննարկել, բացահայտել ու շեշտել որոշ մանրամասներ, բայց առաջին մոտեցմամբ խնդիրը պարզ է՝ ժամանակակից հայերը ընդհանուր առմամբ Հայկական լեռնաշխարհի հնագույն բնակիչների կենսաբանական և մշակութային ժառանգներն են:

Հայոց նախապատմության և հին ժառանգորդության հարցերի վերաբերյալ բոլորից շատ գրած հեղինակը՝ Ի. Դյակոնովը կարծում էր, որ վաղնջահայերը (հնագույն հայերենի կրողները, տես ստորև) սկզբնապես կազմել են Հայկական լեռնաշխարհի բնակչության ոչ մեծաքանակ մի խումբը, որը հետագայում իր մեջ է ձուլել տեղի հին՝ մինչ այդ հզոր մշակույթներ ստեղծած այլալեզու բնակչությանը:

Ես և նրանք, ովքեր իմ տեսակետի կողմնակից են, հայ ժողովրդին համարում ենք և՛ վաղնջահայերի, և՛ Հայկական լեռնաշխարհում հինարևելյան մեծ մշակույթների ստեղծողների մշակութային ժառանգորդը: Այդ մշակույթները հայ ժողովրդի օրինական ժառանգությունն են: Այդպիսի ժառանգությամբ ամեն մի ժողովուրդ չի կարող պարծենալ²¹...

²¹ Дьяконов 1983a, 178.

Նա գտնում էր, որ հայերը Հայկական լեռնաշխարհի արդեն ուշ՝ նոր քարի դարի և վաղ բրոնզի դարի հին բնակիչների կենսաբանական ժառանգներն են, կրողները և շարունակողները այն մեծ մշակութային ավանդների, որոնք ստեղծվել են այստեղ բրոնզի դարից մինչև հին աշխարհի դարաշրջանի ավարտը²²:

Լեզվական ժառանգորդություն

Այսպիսով, վիճելի և խնդրահարույց է մնում հիմնականում հայերի լեզվական նախնիների նույնացման հարցը²³: Սա է հենց հին ժողովուրդների ծագման և սկզբնավորման առավել դժվար լուծելի և կարևոր ասպեկտը. հնում մարդիկ էթնիկապես իրենց տարբերակում էին ըստ լեզուների: Եվ հայ ժողովրդի ինքնության հարցում լեզվի գործունը միշտ համարվել է առաջնային: Այսպես, ըստ Հ. Թումանյանի.

Լեզուն է ամեն մի ժողովրդի ազգային գոյության ու էության ամենախոշոր փաստը, ինքնությունության ու հանճարի ամենախոշոր դրոշմը, պատմության ու հեռավոր անցյալի կախարդական բանալին, հոգեկան կարողությունների ամենաճոխ գանձարանը, հոգին ու հոգեբանությունը: Եվ շատ չէին սխալվում հներում, երբ լեզու ասելով ազգ էին հասկանում:

Եվ այս աշխատության մեջ քննվում է հայերենի հնագույն բարբառներով խոսող մարդկանց հնարավորինս վաղ նույնացման ու տեղայնացման խնդիրը՝ որոշ անդրադարձով նաև հարակից լեզվական և պատմական այլ հարցերի:

Լեզվաբանության մեջ հայերենի հնագույն տարբերակների համար Գ. Զահուկյանի կողմից առաջարկվել են «նախահայերեն», «վաղնջահայերեն» և «հնագույն հայերեն» տերմինները: Առաջինով բնութագրվում է հայերենի՝ հնդեվրոպական միասնությունից առանձնանալու դարաշրջանում ունեցած բարբառային վիճակը, երկրորդով՝ մ.թ.ա. XXX-XIII դդ., իսկ երրորդով՝ մ.թ.ա. XII – մ.թ. V դդ.

²² Дьяконов 1983a, 149.

²³ Дьяконов 1968, 7-10, 211. 1983, 12 слл. 1983a, 149. Diakonoff 1990, 53-54.

վիճակը (որոշակիորեն համաձայնեցնելով առաջին երկուսը ռուս. праармянский և протоармянский տերմիններին)²⁴։ Ըստ այդմ՝ հայերենի այդ վիճակներով խոսող մարդկանց էլ պետք է կոչել համապատասխանաբար «նախահայեր», «վաղնջահայեր» և «հնագույն հայեր»։ Սակայն անկախ լեզվաբանության մեջ այդ տերմինների կիրառելիության աստիճանից պետք է նշել, որ դրանք միանգամայն պայմանական են։ Իհարկե, մ.թ.ա. XII դարում հսկայական փոփոխություններ են տեղի ունեցել Հայկական լեռնաշխարհում և ողջ Հին աշխարհում (Խեթական կայսրության կործանում, քաղաքական, տնտեսական և մշակութային վայրէջք՝ «մերձավորարևելյան ճգնաժամ», «խավար դարաշրջան», ուշ բրոնզի փուլի ավարտ, վաղ երկաթի սկիզբ), բայց և այնպես, առանց այն էլ պայմանական վաղնջահայերենի և հնագույն հայերենի սահմանագծումը հենց այդ դարով միանգամայն պայմանական է, մտահայեցողական։ Այն գալիս է թերևս հայերենի հնագույն կրողների գալուստը Հայկական լեռնաշխարհի կամ նրա հիմնական տարածքներ գիտության մեջ հենց այդ դարաշրջանով թվագրելու երկար ժամանակ շրջանառվող տեսակետից։

Ինչևէ, անկախ այն բանից, թե որտեղ է սկզբնապես ձևավորվել հայերենը՝ Հայկական լեռնաշխարհում թե այլուր, հնարավոր չէ նույնացնել այն լեռնաշխարհից դուրս. դրա համար իրական, հուսալի տվյալներ չկան։ Ըստ այդմ՝ սույն աշխատության մեջ քննարկվելու են հայերենի՝ Հայկական լեռնաշխարհում բացահայտվող հնագույն հետքերը։ Եվ հատկապես մ.թ.ա. II-I հազարամյակների համար, երբ եղած անվանաբանական նյութը հնարավորություն է տալիս որոշ դատողություններ անել, կկիրառվեն միայն «հնագույն հայերեն» և համապատասխանաբար «հնագույն հայեր» տերմինները։

Տարածաշրջանում հնագույն հայերենի հետքերի բացահայտման խնդիրը ակնհայտորեն լեզվաբանական խնդիր է և կարող է լուծվել լեզվաբանական քննության միջոցով։ Հայկական լեռնաշխարհում և հարակից շրջաններում հնագույն հայերենի նույնացման և տեղայնացման համար մենք ունենք միայն հայերենի հնագույն պատմության վերաբերյալ ժամանակակից գիտության տվյալները և հին գրավոր լեզուներով ավանդված աղբյուրների նյութը։

²⁴ Զահուկյան 1987, 25։

Հայերենը հնդեվրոպական լեզու է, իսկ հնդեվրոպական լեզվաբանությունը համեմատական լեզվաբանության առավել զարգացած մի ճյուղն է: Ժամանակակից գիտությունը հնարավորություն է տալիս որոշակի դատողություններ անելու հայերենի՝ մյուս հնդեվրոպական լեզուների հետ մոտ կամ հեռու ազգակցության, պատմական զարգացման, տարածաշրջանի հին լեզուների հետ ունեցած առնչությունների վերաբերյալ:

Հայերենով մեզ հասած աղբյուրները սկիզբ են առնում Vդ.: Հայկական լեռնաշխարհի և հարակից տարածքների վերաբերյալ առավել հին աղբյուրները գրված են այլ լեզուներով՝ շումերերեն, աքքադերեն, խեթերեն, խուռիերեն, ուրարտերեն, լուվիերեն, հին պարսկերեն, արամեերեն, հունարեն, լատիներեն: Սրանցից հնագույնները Մերձավոր Արևելքի հին պետությունների սեպագիր արձանագրություններն են: Պատմելով Հայկական լեռնաշխարհում և մերձակայքում իրենց արշավանքների մասին՝ Միջագետքի, Փոքր Ասիայի և հենց Հայկական լեռնաշխարհի հնագույն պետությունների իշխողները երբեմն տեղեկություններ են հայտնում նաև տեղի անվանաբանության վերաբերյալ՝ հիշելով ցեղերի, բնակավայրերի, մարդկանց և նրանց աստվածների անունները (ցեղանուններ, տեղանուններ, անձնանուններ և դիցանուններ):

Ըստ այդմ՝ պետք է քննել, թե արդյոք հայերենում հետքեր մնացել են տարածաշրջանի հնագույն, ներկայումս անհետացած լեզուներից, կամ այդ լեզուներում կան հայերենից փոխառություններ, որոնք հնարավորություն կտային ժամանակագրել հայերենի ներկայությունը Հայկական լեռնաշխարհում այդ լեզուների դարաշրջանով: Ապա պետք է ուսումնասիրել հին միջագետքյան, ասորեստանյան, խեթական, լուվիական և ուրարտական աղբյուրներից հայտնի անվանաբանությունը և եթե հնարավոր է, նրանցում բացահայտել հայկական՝ հայերենով ստուգաբանվող անուններ:

Հայերենի՝ որպես հնդեվրոպական լեզվի համար հնարավոր է պատմական վերակազմություն մինչև պահպանված բազմաթիվ հնդեվրոպական լեզուների համեմատությամբ վերականգնվող հնդեվրոպական մայր լեզուն: Այդ լեզուն պետք է խոսվեր որոշակի դարաշրջանում՝ մի ինչ-որ սահմանափակ աշխարհագրական տարածքում՝ հնդեվրոպական «նախահայրենիքում»: Սա կարելի է համարել հնդեվրոպական լեզուների հնագույն պատմության

մեկնակետը: Մյուս կողմից, ըստ ժամանակակից «նոստրատիկ լեզվաբանության» տվյալների, հնդեվրոպական լեզուներն ազգակից են որոշ այլ լեզվախմբերի՝ սեմական, քարթվելական, ուրալյան, ալթայական ևն: Այդ լեզուների նախնին ևս պիտի խոսվեր մի ինչ-որ տեղ, ինչ-որ հնագույն մի դարաշրջանում: Ըստ լեզվական վերակազմությունների ընձեռած հնարավորությունների՝ կարելի է, այսպիսով, հայերենի պատմությունը սկսել «նոստրատիկ նախահայրենիքից»: Ավելի խոր վերակազմությունները դեռևս շատ անորոշ են:

Այս խնդիրները քննարկելիս անընդհատ բախվում ենք նորանոր բարդությունների: Նախ, հնդեվրոպական հայրենիքի տեղադրության և ժամանակագրության խնդիրը դեռևս միարժեք լուծում չունի՝ կան միայն քիչ թե շատ ընդունելի վարկածներ: Իսկ նոստրատիկ նախահայրենիքն ու նրա ժամանակագրությունն առավել քան վարկածային են (թեև երկուսն էլ հաճախ տեղայնացվում են Հայկական լեռնաշխարհից ոչ հեռու): Ինչ վերաբերում է հին լեզուների տվյալներին, դրանց մեկնաբանությունը չափազանց դժվար է: Այսպես՝ արդեն մեռած հնագույն լեզվի բառի գոյությունը հայերենում միարժեքորեն չի փաստում հայերենի և այդ լեզվի անմիջական շփումը: Բառը կարող էր անցնել մեկ այլ հին լեզվի, ապա նրանից՝ հայերենին. ընդ որում՝ միջնորդ օղակները կարող են մեկից ավելին լինել: Առավել էական են հայերենից որևէ հնագույն լեզվում եղած փոխառությունները: Եթե այդպիսիք կան, ապա դրանք մեծ հավանականությամբ կարող են բացատրվել հայերենի և այդ լեզվի կրողների անմիջական կամ միջնորդավորված շփմամբ, այդ լեզվի գոյության դարաշրջանում, տեղայնացած նրա տարածման շրջանից ոչ հեռու:

Հնագույն աղբյուրների մեծագույն մասը գրված է սեպագրով, որը գրության անկատար համակարգ է, միանգամայն անկարող արտացոլելու հայերենի ծայնաբանական հարուստ կազմը: Ապա անունների մեկնաբանությունը շատ դժվար խնդիր է, և միարժեք լուծումները ոչ միշտ են հնարավոր: Անհրաժեշտ են նաև բանասիրական ու պատմական վերլուծություններ և հիմնավորումներ:

Սույն աշխատության մեջ ձգտելով հասկանալի լինել ընթերցողների լայն շրջանակներին՝ աշխատել ենք նվազագույնի հասցնել հույժ մասնագիտական լեզվաբանական քննությունները՝ առավել ուշադրություն հատկացնելով տեղեկությունների վերլուծությանը և տրամաբանական հիմնավորումներին:

ԳԼՈՒԽ I

ԱՎԱՆԴԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ ՀԱՅԵՐԻ ԾԱԳՄԱՆ ՄԱՍԻՆ

Հին ժողովուրդների ծնավորման և վաղնջական շրջանի պատմության մասին տեղեկությունները պահպանվել են երկու կարգի աղբյուրներում՝ սեփական և օտար: Տեղեկությունները ևս երկու կարգի են՝ ավանդական և պատմական:

Հայոց նախապատմությունն ուսումնասիրողն աղբյուրների առումով գտնվում է համեմատաբար նպաստավոր վիճակում՝ հնագույն միջագետքյան գրավոր աղբյուրներից սկսած մինչև առաջին հույն հեղինակները տեղեկություններ կան Հայկական լեռնաշխարհի և հարակից շրջանների մասին: Հին տեղեկությունները ևս երկու կարգի են. վաղ, համաժամանակյա՝ երբ տեղեկությունները վերաբերում են հեղինակի ապրած դարաշրջանին, և ուշ, երբ աղբյուրը տեղեկություն է հայտնում իրենից շատ ավելի վաղ դարաշրջանների մասին: Հնագույն՝ համաժամանակյա աղբյուրների ստեղծողները՝ Միջագետքի, Փոքր Ասիայի և հենց Հայկական լեռնաշխարհի հին արքաները, նպատակ չեն ունեցել տեղեկություններ հաղորդել լեռնաշխարհի բնակչության էթնիկական և լեզվական իրադրության ու պատմության վերաբերյալ, այլ սովորաբար պատմել են իրենց արշավանքների, հաղթանակների և մեծագործությունների մասին: Իսկ ուշ աղբյուրները, ասենք՝ հունական և հայկական հեղինակները հին դարաշրջանների մասին խոսելիս հաճախ հենվում են ավանդական աղբյուրների՝ ժողովրդական լեգենդների վրա՝ դրանց ավելացնելով իրենց մեկնաբանությունները և վերլուծությունները, համապատասխան իրենց ապրած դարաշրջանի կրոնական, առասպելական և մշակութային նախապատվությունների:

Հասկանալի է, որ ավանդական տվյալը պետք է քննվի պատմական աղբյուրից տարբեր մեթոդաբանությամբ հաշվի առնելով նյութի առանձնահատկությունը:

Հայերի ծագման և վաղնջական պատմության վերաբերյալ հայտնի են հայկական, հունական, հրեական, վրացական և արաբական լեգենդները: Ավանդական տվյալները հիմնականում առասպելաբանական են, և մեր խնդրի համար հատկապես արդյունավետ է դրանց ուսումնասիրության համեմատական մեթոդը:

Հայկական ավանդությունը

Արդեն V դարում ձևավորված հայկական գրականությունն ու պատմագրությունը պահպանել են հայոց ազգածագման ավանդությունը («ազգածին առասպել»): Այն գալիս է ժողովրդական ակունքներից, թեև մեզ է հասել Խորենացու և Սեբեոսի գործերից (Խորենացի Ա, գ, Ժ-Ժգ. Սեբեոս Ա)²⁵, Աստվածաշնչի՝ բացարձակ ճշմարտություն համարվող տվյալների և հունական որոշ աղբյուրների հետ համաձայնեցված-ձևափոխված՝ «ճշգրտված» և գրական մշակման ենթարկված վիճակում: Բանահյուսական աղբյուրները թեև պատմական ճշգրտության տեսակետից զիջում են արտաքին՝ շատ ավելի հին ու վավերական աղբյուրներին, բայց, մյուս կողմից, գոնե մեկ առումով, գերազանցում են նրանց: Այդ աղբյուրների միջոցով է մեզ հասել Նախնիների կենդանի ծայնը և այն ոգին, որով նրանք իմաստավորել են իրենց գոյությունն ու անցյալը:

Խորենացու և Սեբեոսի տեղեկությունները թեև չափազանց նման են իրար, բայց և որոշակիորեն տարբերվում են իրարից: Երկու պատմիչներն էլ վկայում են, որ իրենց նյութը վերցված է ասորի հեղինակ Մար Աբաս Կատինայի (Սեբեոսի մոտ՝ Մարաբա Մծուր-նացու) մեզ չհասած մատյանից²⁶: Այսինքն՝ այն գրավոր մշակման է ենթարկված եղել մինչև Խորենացին և Սեբեոսը, որոնք ներկայացնում են Մար Աբասի տեքստի իրենց վերաշարադրանքները: Խորենացին մի քանի անգամ նշում է, որ բերված պատմությունը «ճշտում է ասված հին զրույցները», այսինքն՝ նրան հայտնի են եղել նաև այդ զրույցները, բայց նա առաջնությունը միշտ տվել է իր համար հեղինակավոր գրավոր աղբյուրին և ոչ բանահյուսական նյութին (միայն Արամ Նահապետի մասին, իր մեկենաս Սմբատ Բագրատունու խնդրանքով, նա ավելացնում է որոշ բանահյուսական տվյալներ): Պետք է հաշվի առնել նաև, որ Խորենացին իր Պատմությունը ստեղծելիս խմբագրել է նյութը՝ համապատասխանեցնելով այն այլ աղբյուրների և իր հայեցակարգի հետ:

²⁵ Գիտության մեջ Սեբեոսի պատմության առաջին գլուխը հաճախ վերագրվում է այլ հեղինակի, բայց մենք այստեղ պարզության համար այն հղում ենք օրպես Սեբեոս Ա:

²⁶ Մար Աբասի և նրա մատյանի վերաբերյալ տե՛ս Գ.Սարգսյան 1969, 124-126, գրականությամբ. հմմտ. Սահակյան 2015, 105-156:

Ըստ մեզ հասած ավանդության՝ հայերի առաջին նախնին Թորգոմի որդի Հայկն էր՝ Նոյի որդի Հաբեթի սերնդից: Նա նկարագրվում է որպես «գեղապատշաճ և անձնեայ, քաջագանգուր, խայտակն և հաստաբազուկ» մի հսկա, հզոր նետաձիգ, քաջ և երևելի մյուսների մեջ: Նա բաբելոնյան աշտարակաշինությունից հետո հրաժարվում է ենթարկվել Բաբելոնի բռնակալ, ինքն իրեն աստվածացրած Տիտանյան Բելին (որը նույնացվում է աստվածաշնչի Նեբրովթի հետ) և իր ժառանգների հսկայական՝ երեք հարյուր այր ընդգրկող աղխով՝ նահապետական գերդաստանով ու նրանց հարած ուղեկցողների բազմությամբ տեղափոխվում է հյուսիս («հանդերձ որդւովք իւրովք և դստերօք և որդւոց որդւովք, արամբք զօրավորօք, թուով իբրև երեքհարիւր, և այլօք ընդոծնօք և եկօք յարեցելովք ի նա և բոլոր աղխի»): Սկզբում նա հանգրվանում է հարավային մի լեռան (Կորդվաց Արարատ, հնում՝ Նիբուր, թուրք.՝ Զուդի դաղ) ստորոտում, ապա այդ շրջանը թողնելով իր Կադմոս թռռանը (իր առաջնեկի՝ Արամանյակի որդուն)՝ գալիս բնակվում է Հայաստանում՝ Վանա լճի հյուսիսարևմտյան Հարք գավառում, որտեղ կառուցում է Հայկաշեն գյուղը: Բելն առաջարկում է Հայկին հնազանդվել իրեն և մերժվում, որից հետո իր զորքով հարձակվում է նրա վրա:

Սեբեոսի մոտ ներկայացվում է ճակատամարտից առաջ Հայկի և Բելի երկխոսությունը: Բելն առաջարկում է Հայկին անցնել իր մոտ ծառայության՝ որպես որսորդ մանուկների պետ, իսկ Հայկը նրան «շուն» է անվանում՝ խոստանալով նրա վրա թափել իր կապարճի նետերը: Ծակատամարտը անհաղթ հսկաների մի կռիվ է, բայց ի վերջո Հայկն իր «լայնալիճ» աղեղի «երեքթեյան» նետով խոցում-սպանում է Բելին, իսկ նրա զորքը փախուստի է դիմում: Ծակատամարտի տեղում, հաղթանակի պատվին, Հայկը մի դաստակերտ է շինում և անվանում Հայք («հայեր, Հայաստան»), իսկ գավառը կոչվում է Հայոց ծոր: Այստեղից Հայկը սպանված Բել-Նեբրովթի դիակը «պաճուճեալ դեղովք» տեղափոխում է Հարք և ի տես իր կանանց ու որդիների՝ թաղում «ի բարձրավանդակ տեղւոջ»: Այդ տեղը, ինչպես վկայում են ուշ լեգենդները, Նեմրուք լեռան գագաթն է²⁷:

Ազգածին ավանդությունը ներառում է զրույցներ ոչ միայն Հայկի, այլև նրան հաջորդող յոթ նահապետների մասին (մինչև

²⁷ Ղանալանյան 1969, 72-73:

Արա Գեղեցիկ), որոնք «ազգածին այրեր» են կոչվում: Հայկի երկիր Հարքը մնում է Նրա կրտսեր որդիներ Խոռնի և Մանավազին (Խորխոռունի և Մանավազյան իշխանական տոհմերի էպոնիմներն են), իսկ ավագը՝ Արամանյակը (Արամանեակ. տարբերակներ՝ Արամանեակ, Արմենեակ), վերաբնակվում է Այրարատում՝ Արարատյան դաշտում, որը դառնում և մնում է Հայկյանների հաջորդ սերունդների ոստանը: Արամանյակի որդի Արամայիսը (տարբերակ՝ Արմայիս) կառուցում է Արմավիր մայրաքաղաքը: Նրան հաջորդում է Ամասիան, որի անունով է կոչվում Մասիսը: Ամասիայի որդի Գեղամը դառնում է Գեղամա լճի արևմտյան և հարավային շրջանների էպոնիմը: Գեղամին հաջորդում է Հարման, սրան՝ Արամը՝ ազգածին ավանդության ամենառազմական կերպարը, որը բազմաթիվ պատերազմներում լայնացնում է Հայաստանի սահմանները բոլոր կողմերից:

Արամը նկարագրվում է որպես աշխատասեր և հայրենասեր մարդ, որը գերադասում էր հայրենիքի համար մեռնել, քան տեսնել, թե ինչպես են օտարացեղ ազգերը ոտնակոխ անում իր հայրենիքը: Ասորեստանի արքա աշխարհակալ Նինոսը, վախենալով Նրանից, իրենից հետո երկրորդը կոչվելու իրավունք է տալիս Նրան: Արևելքում Արամը հաղթում է մեդացի երիտասարդների առաջնորդ Նյուքար Մադեսին (մեդացիների էպոնիմին), հարավում՝ Ասորեստանում՝ Բարշամին, որին հետագայում ասորիները աստվածացրած պաշտում էին: Արևմուտքում՝ Կապադովկիայում, նա հաղթում է Տիտանյան Պայապիս Քադյային, տեղի բնակիչներին հրամայում սովորել ու խոսել հայերեն և այնտեղ կուսակալ նշանակում իր տոհմակից Մշակին, որը կառուցում և իր անունով է կոչում Մաժաք (հետագայում՝ Կեսարիա) քաղաքը:

Արամին հաջորդում է Նրա որդի Արա Գեղեցիկը: Նինվեի թագուհի «վավաշոտ և անառակ» Շամիրամը, լսած լինելով Նրա գեղեցկության մասին, պատգամավորներ է ուղարկում՝ խնդրելով իրեն կին առնել և թագավորել իր երկրում, բայց մերժվում է: Շամիրամն իր զորքով հարձակվում է Արայի վրա: Ճակատամարտը տեղի է ունենում Արարատյան դաշտում: Հայերը պարտվում են, Արան՝ զոհվում: Բայց Շամիրամն իր սիրեկաններից մեկին «զարդարում» է որպես Արա և լուր տարածում, թե իր աստվածները, որոնք նույնացվում են շնից սերված արալեզ-առլեզների հետ, լիզել-կենդանացրել

են նրան: Շամիրամը կառուցում է Վան քաղաքը և ի վերջո զոհվում Վանա լճի ափին: Սրանով ազգածին ավանդությունը վերջանում է: Հայերն ընկնում են օտար՝ Ասորեստանի տիրապետության տակ, որից դուրս են գալիս շատ սերունդներ հետո:

Սա ազգածին նահապետների շարքն է ավագ գծով: Որոշ դեպքերում որպես էպոնիմներ են հանդես գալիս նահապետների մյուս որդիները: Այսպես՝ Արամանյակի որդի Կադմուսը դառնում է Կադմեանքի կամ Կադմեաց տան անվանադիրը, Արամայիսի որդի Շարան՝ Շիրակի, Գեղամի որդի Սիսակը՝ Սյունիք-Սիսականի ևն:

Հայ ցեղանունը կապվում է Հայկի անվան հետ: Ըստ Խորենացու, օտարները հայերին սկսում են կոչել *արմեն* և նման ձևերով Արամի անունից, իսկ Անանունի մոտ շեշտվում է Արամանեակ/Ար(ա)մենակի ազգածին բնույթը, այսինքն՝ պետք է կարծել, որ նա է համարվում *արմեն* ցեղանվան էպոնիմը²⁸: Մյուս կարևոր տեղանունը՝ Այրարատը, որը՝ որպես Հայաստանի կենտրոն, որոշ չափով ողջ Հայաստանի համարժեքն է, կապվում է Արայի անվան հետ («դաշտն Արայի»):

Հայկի և նրա առաջին ժառանգների զրույցներն ավանդաբար համարվել են վավերական պատմական աղբյուրներ XVIII-XIXդդ. որոշ հեղինակների գործերում²⁹: Հետագայում՝ XIX-XXդդ., այդ ավանդությունները քննադատաբար ուսումնասիրվել են մի շարք մասնագետների կողմից (Մ. Էմին, Բ. Պատկանյան, Ա. Կարիեր, Յ. Մարկվարտ, Մ. Աբեղյան, Ն. Ադոնց, Ա. Մատիկյան, Գ. Ղափանցյան, Հ. Մանանդյան, Ս. Ահյան, Ժ. Դյումեզիլ, Գ. Սարգսյան, Ս. Հարությունյան, Ա. Պետրոսյան, Ա. Քոսյան և այլք): Դրանք բացառիկ հետաքրքրություն են ներկայացնում որպես հայոց հին մշակույթի, ազգագրության, կրոնի, առասպելաբանության, ազգածագման և նախապատմության վերաբերյալ աղբյուր և պետք է համակողմանիորեն քննվեն տարբեր հայեցակետերից (առասպելաբանական, ազգագրական, լեզվաբանական, պատմական):

²⁸ Հմմտ. Անանունի «ազգ Արամենակայ», «որդիք ազգածնին Արամենակայ» և Խորենացու «արք Արամեանք», «Արամեան ազն» արտահայտությունները: Այդպիսին է Արամանյակը նաև Ներսես Շնորհալու «Վիպասանության» մեջ: Տե՛ս Պիոտրովսկի 1945, 27. Գ. Սարգսյան 1998, 123:

²⁹ Բարսեղյան 1996, 140-141:

Առասպելաբանություն

Աշխարհի ժողովուրդների ծագման մասին առասպելներում հանդես են գալիս մի շարք տիպական մոտիվներ, որոնք ընդգրկում են.

- ա. ծագման ժամանակի առասպելը (երբ է մեր հանրույթը ստեղծվել),
- բ. ծագման տեղի առասպելը (որտեղ է հանրույթը ստեղծվել),
- գ. նախնիների առասպելը (ումից և ինչպես ենք մենք սերում),
- դ. տեղաշարժերի առասպելը (որտեղ ենք մենք թափառել),
- ե. ազատության առասպելը (ինչպես ենք մենք ազատագրվել),
- զ. ոսկե դարի առասպելը (ինչպես ենք մենք դարձել մեծ ու հերոսական),
- է. անկման դարաշրջանի առասպելը (ինչպես ենք անկում ապրել ու նվաճվել/աքսորվել),
- ը. վերածնության առասպելը (ինչպես պետք է մենք վերականգնենք մեր անցած փառքը)³⁰:

Հեշտ է տեսնել, թե որքան տիպական են Հայկի և Նրան հաջորդած առաջին նահապետների վերաբերյալ մեզ հասած ավանդությունները որպես ազգածին առասպել: Բայց պետք է նշել նաև որոշ էական առանձնահատկություններ: Նախ, հայկական վիպական (էպիկական) ավանդությունը ընդգրկում է մի շարք էպոսներ, որոնք էպիկական ոճով պատմում են երկրի պատմությունը սկզբից մինչև միջնադար: Դրանք են՝ առաջին Հայկյանների ավանդությունը, որը կարելի է դիտարկել որպես առաջին հայկական էպոսը, ապա՝ Երվանդունիների և Արտաշիսյանների դարաշրջանների էպոսը՝ «Վիպասանքը», Փավստոս Բուզանդի և Հովհան Մամիկոնյանի վաղմիջնադարյան երկերից մեզ հասած էպիկական հատվածները՝ «Պարսից պատերազմն» ու «Տարոնի պատերազմը» և ի վերջո՝ հայոց մեծ էպոսը՝ «Սասնա ծռերը»³¹:

Առաջին Հայկյանների ավանդությունն ընդգրկում է թվարկված բոլոր կետերը, բացի վերջինից, որը հանդես է գալիս վերափոխված

³⁰ Smith 1986, 192.

³¹ Հայկական վիպական բանահյուսության պատմության վերաբերյալ այս համատեքստում տես Արեղյան Ա. Петросян 2002, 3 ժող. et passim. 2014, 227-241. Ս. Հարությունյան 2010, 139-161. Պետրոսյան 2014:

ձևով: Հայկական վեպերի կարևոր առանձնահատկություններից է այն, որ նրանք բոլորն ավարտվում են, այսպես կոչված, «զոհվող» կամ «մեռնող և վերածնվող/հառնող» տիպի դիցաբանական կերպարով: Այդպիսի կերպարներ են Արա Գեղեցիկը՝ ազգածին ավանդության վերջին կերպարը, որը պիտի վերակենդանանար զոհված հերոսներին լիզող և վերակենդանացնող շնակերպ արալեզների միջոցով, Մասիսում փակված Արտավազը, որի շղթաներն են լիզում-մաշեցնում նրա շները («Վիպասանք»), և Ագռավու քարում փակված Փոքր Մհերը («Սասնա ծռեր»), որի գալուստը պիտի լինի երկրում արդարություն և պտղաբերություն հաստատվելուց հետո: Ամեն մի նոր էպոս, այսպիսով, մի նոր վերածնության պատմություն է, և հայոց վիպական պատմության բոլոր շրջանները բնութագրվում են նույնատիպ «վերջին» վիպական հերոսներով:

Ամեն մի էպոս ակնհայտորեն ունի իր ոսկեդարը: Դրանք են՝ Արամի, Տիգրանի, Արտաշեսի և Դավթի իշխանության դարաշրջանները, երբ Հայաստանը («Սասնա ծռերում»՝ Սասունը) մեծ էր ու հզոր: Խորենացին իր պատմությունը գրելիս, ինչպես և ժողովուրդն իր պատմական հիշողության մեջ, պետք է դրանցից միայն մեկն առանձնացներ որպես բարձրագույն ոսկեդար: Դա Տիգրան Մեծի դարաշրջանն է, «Վիպասանքում» վերագրված նրանից դարեր առաջ թագավորած Տիգրան Երվանդյանին: Ավանդական պատկերացումներում լավագույն ժամանակներն անցած են համարվում: Նոր հաջողություններ կարող են լինել միայն հաջորդ դարաշրջաններում և նոր էպոսներում: Ոսկեդարը կարող է կրկնվել միայն ապագայում:

Արխաիկ առասպելներում եւ հնագույն կրոններում ամենուրեք էական, առաջնային տեղ են գրավում «Սկզբի» մասին առասպելները: Սրանք կազմում են տիեզերքի ծագման, այդ դարաշրջանի աստվածների ու հերոսների «սրբազան պատմությունը», որին հետևում է արդեն «մեր՝ մարդկային» դարաշրջանը: Այս առասպելները հաճախ ներկայացնում են «մեր, յուրային» աստվածների կամ սրբազան նախնիների կոծվը և հաղթանակը նախնական անկազմակերպ քառսի չար ուժերը խորհրդանշող օձի, վիշապի, թշամական աստվածությունների և հերոսների դեմ: Տիեզերածնության առասպելները, որոնք բացատրում են բնության (մակրոկոսմոս) առաջացումը, սերտորեն կապված են մարդու (միկրոկոսմոս) ծագման՝

մարդածնության առասպելներին, որտեղ հաճախ տիեզերքի կառույցը ծագում է առաջնագոհ կերպարի մարմնի մասերից, և կամ մարդն է ստեղծվում տիեզերքի բաղկացուցիչներից: Մարդկային հասարակության էթնիկական և սոցիալական կառույցները (մեզոկոսմոս) ևս ծագում և պայմանավորվում են տիեզերածնության առասպելներով:

Տիեզերածնությունը ամեն մի արարչագործության, ստեղծագործության և ընդհանրապես էական գործողության օրինակելի մոդելն է: Արխաիկ մտածողության մեջ իրական երևույթները համադրվում և կրկնում են առասպելական ժամանակաշրջանի նախատիպերը. այսպես՝ նոր հողերի՝ «նոր տիեզերքի» գրավումը և յուրացումը կրկնում են տիեզերածնությունը, ամեն մի պատերազմ՝ աստվածների ու նախնիների կռիվը նախնական քաոսի չար ուժերի դեմ, ամեն մի մահ՝ առաջնագոհ կերպարի ու առաջնամարդու մահը, պարտությունն ու տառապանքը՝ զոհվող աստծու չարչարանքները ևն:

Առասպելաստեղծ մտածողության մեջ տարածությունը և ժամանակը միատարր, համասեռ չեն: Առավելագույն արժեքով և սրբությամբ օժտված են այն կետը և պահը, որտեղ և երբ տեղի է ունեցել արարչագործությունը: Արարչագործության առասպելներն ընդհանրապես տեղայնացվում են «աշխարհի կենտրոնում», որտեղ՝ «ժամանակի սկզբում», սկսվում է արարումը: Այդ կետից են ծագում տիեզերքն ու ժամանակը, և այդ առասպելներից են ծագում ու դրանց են կրկնում մյուս առասպելները³²:

Հայկական ավանդության մեջ Հայկի և Նրա առաջին յոթ սերնդի ժառանգների հետ են կապվում հայոց տիեզերքի՝ երկնային մարմիններից սկսած, մինչև երկրի, Նրա նահանգների, լեռների, գետերի, Նրանում բնակվող ժողովրդի, իշխող տոհմերի, ապա և ժամանակի տերմինների ծագումն ու անվանումները: Սա, այսպիսով, մասնավորեցված, տեղայնացված տիեզերածնություն է, «հայկական տիեզերքի» արարումը: Հատկանշական է, որ Բելի դեմ ճակատամարտի տեղում Հայկը դաստակերտ է շինում և անվանում Հայք, իսկ գավառը կոչվում է Հայոց ձոր: Այդ Հայքը՝ տեղայնացած Բելի զոհվելու վայրում, առասպելաբանական համատեքստում «աշխարհի կենտրոնի»

³² Տիեզերածնության առասպելների առանցքային դերի վերաբերյալ տես Eliade 1959, 6 ff. 32 ff. այս և հարակից հարցերի վերաբերյալ տես և Tonopov 1988. MHM I, 87-89, 252-253. II 6-9. Puhvel 1987, 21-22 ևն:

այն կետն է, այն սկիզբը, այն սաղմը, որից պիտի ստեղծվեր ու ձևավորվեր հետագա Հայք-Հայաստանը՝ հայկական տիեզերքը:

Օրին համաստեղությունը կոչվել է Հայկի, իսկ մի աստղ՝ թերևս մոլորակ՝ Արայի անունով³³: Հայաստանը կոչվում է Հայկի և Արամի, Այրարատ նահանգը՝ Արայի, Մասիսը՝ Ամասիայի, Գեղամա լեռները և լիճը՝ Գեղամի, Սիսական նահանգը՝ Սիսակի, Երասխ գետը՝ Երաստի, Խորխոռունի և Մանավազյան տոհմերը՝ Խոռի և Մանավազի անուններով: Ըստ Անանիա Շիրակացու, Հովհաննես Սարկավազի և Վանական Վարդապետի՝ հայկական ամիսները կոչվել են Հայկի որդիների և դուստրերի անուններով³⁴: Իհարկե, այս անվանական կապերի մի մասը երկրորդային է, արհեստածին («ժողովրդական ստուգաբանություն»): դժվար է իրական լեզվաբանական կապ գտնել Ամասիա-Մասիս, Շարա-Շիրակ, Երաստ-Երասխ ու որոշ այլ անվանումների միջև, իսկ ամսանունների մեջ էլ չկան Հայկի հայտնի որդիների անունները (Արամանյակ, Խոռ, Մանավազ): Բայց այս տեղեկություններում գործում է միևնույն սկզբունքը. անվանումն առասպելաբանության մեջ համազոր է արարմանը: Ամեն մի արարում, ինչպես ասվեց, կրկնում է տիեզերածնությունը, և ազգածնությունը, այսպիսով, տիեզերածնության մի մասնավոր դրսևորումն է:

Հայկյանների առասպելի հնագույն նախատիպը պիտի ներկայացներ դիցածնությունը՝ տիեզերքի արարումը և աստվածների սերունդների հաջորդականությունը³⁵: Հայկի և Նրա հաջորդ «ազգածին նահապետների» կերպարները ակնհայտորեն ծագում են հին աստվածներից: Դա բոլորովին չի նշանակում, թե Նրանք հենց աստվածներ են: Հայկյանների ավանդությունը ժանրային առումով վիպական (էպիկական) բնույթ ունի. հին աստվածների կերպարներն իջեցվել են դյուցազունների ու հերոսների մակարդակի, ինչի հետևանքով փոխվել պատմականացել է ողջ կառույցը, նոր կերպարներ են ավելացել ևն³⁶: Սա տիպիկ առասպելական-հերոսական էպոս է,

³³ Ալիշան 1895, 124. ՀԱՆԲ Ա, 264, Բրուսյան 1997, 493:

³⁴ Բրուսյան 1997, 156 հտն., 385 հտն., գրականությամբ:

³⁵ Петросян 2002, 124-126.

³⁶ Միանգամայն անընդունելի է Նրանց՝ իրական պատմական հերոսներ համարելը, ինչը գալիս է առասպելական կերպարների իրական նախատիպեր ունենալու մ.թ.ա. IVդ. հույն հեղինակ Եվհեստրոսի մոտեցումից: Համաստեղությունները, աստղերը, լեռներն ու գետերը հնում կոչվել են դիցաբանական կերպարների և ոչ իրական մարդկանց անուններով:

հայոց առաջին էպոսը, որին հաջորդել են մյուսները³⁷: Արխաիկ մտածողության մեջ, ուր աստվածների և մարդկանց միջև սահմանները դեռևս անանցանելի չեն, տիեզերական արարչագործության տարրերը՝ դիցածնությունը, մարդածնությունը և տոհմական վեպը կարող են միահիյուսված լինել տարբեր համամասնություններով³⁸:

Հայերենը հնդեվրոպական լեզու է, և թեև հայ մշակույթում էական է այլ ազդեցությունների դերը, բայց և այնպես, Հայկյանների ավանդությունը՝ որպես հայոց առաջին առասպելական-հերոսական էպոս, պիտի ծագեր հիմնականում հնդեվրոպական ակունքներից: Ըստ Ե. Մ. Մելետինսկու՝

...Հերոսական էպոսը ձևավորվում է էթնիկական համախմբման գործընթացում, զարգանում և տարածվում ցեղերի էթնոգենեզի և տարաբնակեցման ընթացքում. այդ պատճառով էլ այն ավելի քիչ է թափանցելի միջազգային ազդեցությունների համար³⁹:

Հնդեվրոպական համեմատական առասպելաբանությունը բավականաչափ մշակված է, ինչը հնարավոր է դարձնում հայկական առասպելների համադրությունը հնդեվրոպական այլ ժողովուրդների առասպելների հետ: Ըստ Ժ. Դյումենզիլի՝ հնդեվրոպական առասպելաբանությունը ձևավորված է երեք հիմնական «ֆունկցիաների» շուրջ՝ 1. գերագույն իշխանություն, իր հմայական՝ «վարունայական»

³⁷ Հայկի ավանդության՝ որպես էպոսի ձևավորման այլ մեկնաբանություն տես Սահակյան 2015, 57-91:

³⁸ Puhvel 1987, 21-22:

³⁹ Мелетинский 1986, 62: Հենց միայն այս տեսական դիտարկումը բավարար է Հայկյանների ավանդության հիմնականում բնիկ հայկական ծագման հիմնավորման համար: Այս համատեքստում ուղղակի տարօրինակ է այս առասպելներին և նրանց անուններին այլ ծագում վերագրելու միտումը (Ա. Փերիխանյանը, կես էջի վրա քննելով հայ ազգածին ավանդության կենտրոնական Արամանյակ, Արամայիս և Արամ անունները, նրանց «անկասկած» իրանական ծագում է վերագրում և, իմիջիայլոց, շատ անհաջող ստուգաբանում իրանական հիմքերով, տես Периханян 1993, 11): Իհարկե, իրանական մշակույթի ազդեցությունը հայկականի վրա նշանակալի է, բայց այդ ազդեցության անհիմն գերազնահատումը, ինչպես և թերազնահատումը, կարող են հանգեցնել մակերեսային հետևությունների:

և իրավական՝ «միտրայական» ասպեկտներով, 2. ֆիզիկական ուժ, հատկապես ռազմական բնույթի, 3. պտղաբերություն՝ իր էրոտիկ և երկրագործական ասպեկտներով: Այս «եռամաս գաղափարախոսությունը», անվերջանալիորեն կրկնվելով, ի հայտ է գալիս աստվածների և հերոսների համակարգերում, կերպարներում, նրանց հերթագայության մեջ, առասպելներում, էպոսներում, զոհաբերություններում, օրհնանքներում, անեծքներում, երկնային և երկրային գոտիների, հասարակության դասակարգումներում և այլուր: Դա, ըստ հեղինակի, հնդեվրոպական մշակույթներին բնորոշ, առանձնահատուկ հատկանիշն է՝ կապված հասարակության եռամաս դասային կառուցվածքի հետ⁴⁰: Այդպիսի ձևավորված հասարակություն դժվար է պատկերացնել հնդեվրոպական միասնության դարաշրջանում՝ նեոլիթում և էնեոլիթում, բայց հասարակության այդօրինակ եռամաս կառույցի (քրմեր, ռազմիկներ, բարիքներ արտադրողներ) հետքերը պարզորոշ ի հայտ են գալիս հնդկական, իրանական, հունական, լատինական, կելտական ավանդույթներում. այսինքն՝ հին հնդեվրոպական հասարակությունն ունեցել է համապատասխան նախադրյալներ, որոնց հիման վրա և ձևավորվել են իրար այդքան նման դասային կառուցվածքներ⁴¹:

Ժ. Դյումեզիլի տեսությունը շատերի կողմից ընդունվել է, շատերի կողմից էլ քննադատվել: Մեր նպատակներից դուրս է այդ տեսության վերաբերյալ թեր և դեմ կարծիքներ ներկայացնելը: Դյումեզիլի վաստակը ոչ թե և ոչ միայն «եռամաս գաղափարախոսության» դրսևորումների բացահայտումն է, այլ տարբեր հնդեվրոպական ժողովուրդների հսկայաքանակ առասպելների համեմատությունը (իսկ այդ գաղափարախոսությունը, կարելի է ասել, ի վերջո ոչ այլ ինչ է, քան իդեալ և միաժամանակ՝ քննության մեթոդ)⁴²:

Հայկյանների ավանդության առանցքային կերպարներն են Հայկը, Արամը և Արա Գեղեցիկը: Ըստ Ս. Ահյանի մանրամասն

⁴⁰ Տե՛ս, օրինակ, Dumézil 1992, 81-115: Այս տեսակետի կողմ և դեմ կարծիքների քննարկումը տե՛ս, օրինակ, Littleton 1982, p. 153-203, 216-236: Հայկական իրականության մեջ այդ ֆունկցիաների դրսևորումների վերաբերյալ տե՛ս Ժ. Դյումեզիլի, Ս. Ահյանի, Ս. Պետրոսյանի, Ա. Օրենգոյի, մեր և այլոց աշխատություններում:

⁴¹ Dumézil 1992, 87-95.

⁴² Dumézil 1968, 15.

վերլուծության, որն ընդունվել է նաև Ժ. Դյումենզիլի կողմից, այս հերոսները կազմում են հնդեվրոպական «եռաֆունկցիոնալ» մի համակարգ՝ ներկայացնելով համապատասխանաբար առաջին, երկրորդ և երրորդ ֆունկցիաները: Հայկը գերմարդկային հատկանիշներով հերոս է, որը չի ցանկանում ենթարկվել և չի ենթարկվում ոչ ոքի, իսկ Հայաստանի հին բնակիչները ենթարկվում են նրան և նրա որդի Արամանյակին առանց կռվի, կամավոր: Սա տիրակալության ֆունկցիայի հատկանիշ է: Ըստ այդմ՝ Հայկը և Արամանյակը դիտվում են որպես առաջին՝ տիրակալության ֆունկցիայի, համապատասխանաբար «վարունայական» և «միտրայական» ասպեկտների ներկայացուցիչներ: Նրանց հաջորդող չորս նահապետները (Արամայիս, Ամասիա, Գեղամ, Հարմա), հնարավոր է, որ ներկայացնում են, այսպես կոչված, «կրտսեր տիրակալ» աստվածությունները: Արամը բացահայտ ռազմական կերպար է և ոչ տիրակալ (նա ձևականորեն ենթակա է Ասորեստանի արքա Նինոսին): Արա Գեղեցիկը, որին սիրահարվում է վավաշոտ Շամիրամը, երրորդ ֆունկցիայի էրոտիկ ասպեկտի տիպիկ ներկայացուցիչ է (այդ է ակնարկում նաև Արայի նույնանուն որդու գոյությունը, որը համադրելի է երրորդ ֆունկցիային բնութագրական կրկնակ կերպարների հետ)⁴³:

Այս վերլուծությանն իբրև լրացում կարելի է ավելացնել, որ Արամանյակը հիշեցնում է հնդեվրոպական առաջին ֆունկցիայի հնագույն «միտրայական» աստվածության անունը՝ *aryomen-⁴⁴, իսկ Արա Գեղեցիկը հայագիտության մեջ համարվել է մեռնող և հառնող բնության և բուսականության ու պտղաբերության մի աստվածություն⁴⁵, ինչը նորից նույնացնում է նրան որպես երրորդ ֆունկցիայի կերպար:

Հատկանշական է, որ համանման մի եռյակ են առաջացնում նաև առաջին Հայկյանների հակառակորդները. Բելը տիպիկ տիրակալ է (աշտարակաշինությունից հետո նա է դառնում մարդկության առաջին, այն էլ՝ աստվածացված արքան), Բարշամը՝ ռազմիկ (նա մեծ զորքի առաջնորդ է և հետմահու աստվածացվում է իր

⁴³ Ahyon 1982 (Ժ. Դյումենզիլի փոքրիկ, խրախուսական վերջաբանով, էջ 271). Dumézil 1994, 133 sqq.

⁴⁴ Այդ աստծու վերաբերյալ տես Puhvel 1981, 324 ff.

⁴⁵ Մատիկյան 1930, Ադոնց 1948. Ղափանցյան 1944. Արայի և Շամիրամի առասպելում սիրո ասպեկտի վերաբերյալ տես Պետրոսյան 2006բ:

քաջագործությունների համար), իսկ հեշտասեր Շամիրամը, ինչպես սիրո դիցուհիներն ընդհանրապես, ակնհայտորեն երրորդ ֆունկցիայի ներկայացուցիչ: Արժե նշել, որ հերոսների և նրանց հակառակորդների այսպիսի համապատասխանեցված եռամաս համակարգը բացառիկ է հնդեվրոպական ավանդույթներում⁴⁶:

Նույն եռամաս կառույցն ի հայտ է գալիս Հայկի երեք որդիների կերպարներում: Արամանյակը, ինչպես ասվեց, պատկերացվում է որպես մի «միտրայական» տիրակալ: Խոռը, որը էպոնիմն է արքաների թիկնապահ «արք քաջք», նիզակավոր և սուներավոր Խորխոռունիների՝ (Խորենացի Ա.Ժբ, Բ.է), ակնհայտ ռազմիկ է: Նրա անունը համահունչ է խուռիների ցեղանվանը (տե՛ս ստորև), որն իր հերթին համադրվում է խուռաուրարտ. *hurađi*՝ «ռազմիկ, պահնորդ» բառի հետ⁴⁷: Երրորդ եղբայր Մանավազն էլ որոշ կապեր է դրսևորում երրորդ ֆունկցիայի հետ⁴⁸: Ընդ որում՝ Հայկի աղխը, ինչպես ասվեց, բաղկացած էր երեք հարյուր այրերից՝ նրա որդիներից, սրանց ժառանգներից և նրանց ընտանիքներից: Առասպելաբանական համատեքստում լավագույն զուգահեռը հռոմեականն է՝ հին Հռոմի նախնական բնակչությունը կազմված էր երեք հարյուրյակից՝ ըստ հնդեվրոպական երեք ֆունկցիաների⁴⁹:

Բացի այդ, ինչպես կտեսնենք, ավանդության առանցքային հերոսների անունները և նրանց հետ կապված ցեղանունները ամենայն հավանականությամբ ունեն բնիկ հայկական՝ հնդեվրոպական ծագում: Այսպիսով, առաջին Հայկյանների ավանդությունը ստեղծված է ըստ վաղնջական հնդեվրոպական առասպելաբանական կաղապարների, և պատմականացումն ու հետագա մշակումը չեն վերափոխել նրա նախնական կառուցվածքային և կերպարային համակարգը⁵⁰:

⁴⁶ Ahyar 1982, 270-271.

⁴⁷ Вильхельм 1992, 21.

⁴⁸ Petrosyan 2002, 179 ff. Петросян 2002, 193 сл. հմմտ. Ս. Պետրոսյան 2001, 40-42, որտեղ ֆունկցիաների այլ բաշխում է առաջարկվում Հայկի երեք որդիների համար:

⁴⁹ Dumézil 1992, 87-92. Петросян 2002, 172.

⁵⁰ Ազգածին ավանդության մանրամասն քննությունն համեմատական առասպելաբանության համատեքստում տե՛ս Պետրոսյան 1997. 2003. 2008. 2009. 2014ա. Petrosyan 2002. 2007. 2009. 2011. Петросян 2002. 2010. 2014:

Հայկյանների ավանդության մեջ, նրանց հակառակորդներ Բելի, Բարշամի և Շամիրամի կերպարներում ի հայտ է գալիս նաև հինարևելյան առասպելական տարրը: Այսպես՝ Հայկի հակառակորդ Բելը՝ Բաբելոնի տիրակալը, պիտի նույնացվի Բաբելոնի մեծ աստված Բել-Մարդուկի հետ, Արամի հակառակորդներից Բարշամը արևմտասեմական աստված Բաալ Շամինն է («Երկնքի տեր»), Պալապիս Քաղյան՝ մի առասպելական հրեշ: Շամիրամը (Šammuramat) Բաբելոնի պատմական թագուհի էր, որն առասպելականանալով յուրացրել է Միջագետքի դիցուհիների հատկանիշները, իսկ հայոց մեջ հանդես է գալիս որպես տեղական հին դիցուհիների վիպական տարբերակը⁵¹:

Հնդեվրոպական ավանդույթներում էական է ամպրոպի աստծու և նրա հակառակորդ օձ-վիշապի հակադրության առասպելն, այնքան, որ այն անվանել են «հիմնական առասպել»⁵²: Առասպելաբանական մտածողության առանձնահատկություններով պայմանավորված՝ հետագա բոլոր առասպելական, վիպական, կամ պատմական, բայց առասպելականացած կոիվները և մենամարտերը կարող են համադրվել ամպրոպի աստծու առասպելի հետ: Այդ համատեքստում կարող են դիտվել նաև Հայկի և Բելի, Արամի և նրա հակառակորդների կոիվները, որոնք, իմիջիայլոց, ակնհայտ զուգահեռներ ունեն այլ հնդեվրոպական ավանդույթներում⁵³:

Դատելով եղած տվյալներից՝ Հայկը պիտի ներկայացներ աստվածների նահապետի, Արամը՝ ռազմի աստծու, իսկ Արա Գեղեցիկը՝ զոհվող (և հարություն առնող) աստծու վիպականացած

⁵¹ Արեղյան Է., 156 հուն. Ադոնց 1948. Պետրոսյան 2003, 220-221, 228-229. Petrosyan 2007a: Շամիրամի անունն արդեն, ըստ մի մեկնաբանության, առասպելաբանական է (սիրիական դիցուհի Անաթի կոչումն է՝ šamīm ramīm «բարձր երկինք», տես Weinfeld 1991), իսկ նրա կերպարը, որպես Նինվեի թագուհի, պիտի որ ներկայացնի Նինվեի հին դիցուհու՝ Իշտարի վիպական տարբերակը:

⁵² Հնդեվրոպական ամպրոպի աստծու և նրա հակառակորդի առասպելի վերաբերյալ տես Иванов, Топоров 1974 և նույն հեղինակների բազում այլ աշխատություններում:

⁵³ Պետրոսյան 1997, Petrosyan 2007. 2016. Петросян 2002, 47-84, 106-115. 2010: Վերաիմաստավորվել և հնդեվրոպական կապեր է ձեռք բերել նույնիսկ Բելի անունը, տես С. Հարությունյան 2000, 231-232. Պետրոսյան 2002ա:

տարբերակը: Առաջին Հայկյանների որոշ կերպարներ կապեր են դրսևորում Հայկական լեռնաշխարհի հնագույն պետական կազմավորումների աստվածների հետ: Առասպելաբանական կերպարների բացահայտման համար էական են տեղագրական տվյալները. հին աստվածների կերպարները դարերի ընթացքում պահպանվում են իրենց պաշտամունքի կենտրոններում, նոր անունների ներքո: Հայկի առաջին հանգրվանի՝ Կորդվաց Արարատ լեռան շրջանում է գտնվել խուռաուրարտական ամպրոպի և փոթորկի աստված Թեշուր/Թեյշեբայի պաշտամունքի կենտրոն Կումմին կամ Կումենուն: Այսինքն՝ Հայկի բարդ կերպարի մի բաղադրիչն էլ կարող էր ծագել Կումենուի հնագույն ամպրոպի աստծուց⁵⁴:

Արամը՝ հայերի երկրորդ էպոնիմը, ըստ Մ. Աբեղյանի արտահայտության, Հայկի «երկրորդ տիպարն» է: Վերլուծությունը ցույց է տալիս, որ նա ամպրոպի աստծու լիարժեք ժառանգն է, նրա վիպականացած և պատմականացած տարբերակը, խուռաուրարտական Թեշուր/Թեյշեբայի հին հայկական համապատասխանությունը և «Սանա ծռերի» Սանասարի նախատիպը⁵⁵:

Ըստ ավանդության՝ Արա Գեղեցիկի՝ արալեզների կողմից լիզվել-կենդանանալը տեղի է ունեցել Լեզք (հնում՝ *Լեզուր*) գյուղում: Այստեղից գտնված ուրարտական արձանագրության մեջ խոսվում է ամենայն հավանականությամբ մեծ աստված Խալդիին նվիրված պաշտամունքային կառույցի մասին, ինչը թույլ է տալիս կարծելու, որ Արա Գեղեցիկի հին աստվածային համապատասխանությունն էլ եղել է Խալդին⁵⁶:

Ազգագրություն

Հին առասպելներն արտացոլում են ոչ միայն տիեզերաբանական պատկերացումները, այլև իրենց դարաշրջանների հասարակական հարաբերությունները: Հայկի հսկայական ընտանիքը, որը Խորենացու մոտ հանդես է գալիս *աղիս* անվանումով, ընդգրկում էր

⁵⁴ Հմայակյան 1992, 131. Петросян 2002, 61-64, 107-115: Այս լեռան հետ կապված հնագույն առասպելների վերաբերյալ տե՛ս Петросян 2006:

⁵⁵ Պետրոսյան 1997, 12 հտմ. Петросян 2002, 47-49, 78-79. Petrosyan 2012:

⁵⁶ Պետրոսյան 2006, 18-21:

Նրա որդիներին, դուստրերին ու նրանց ժառանգներին, երեք հարյուր այր իրենց ընտանիքներով՝ չհաշված նրան հարած ուղեկիցները (ըստ Անանունի՝ Հայկի յոթ սերունդները՝ մինչև Արա Գեղեցիկ, ծնվել էին Բաբելոնում)⁵⁷: Սրա հետ համեմատելի է մինչև XVIII-XIX դար պահպանված հայ նահապետական ընտանիքը, որը սովորաբար կոչվում էր *ազգ*:

*Ազգն ընտանեկան-ազգակցական խումբ է, որն իր կազմում ունի մի քանի սերունդների ընտանիքներ, սովորաբար՝ վեց-յոթ, հազվադեպ՝ ութ, արական գծի վայրընթաց և կողային ճյուղավորումներով, սկսած ազգի նախնի հիմնադրից, որի անունն էլ դառնում է ազգի ընդհանրական անվանումը*⁵⁸:

Միևնույն ժամանակ, *ազգ* նշանակում է «ցեղ, ժողովուրդ»։ Նույն նշանակությունն ունեն նահապետական ընտանիքի համար կիրառվող մյուս տերմինները (*ցեղ, տուն* ևն)։ Լեզվաբանական վերլուծությունը ցույց է տալիս, որ հայերենում ա. ընտանեկան ազգակցության ոչ մի հին տերմին չի բացակայում, բացի մեկից, մինչդեռ մյուս հնդեվրոպական լեզուները կորցրել են բազմաթիվ տերմիններ, բ. հայերենում պահպանված մի քանի տերմիններ արտակարգ հազվադեպ են մյուս լեզուներում՝ մեռնող բառեր, գ. հայերենում ընտանեկան տերմինների պահպանումը զարմանալի է այն պատճառով, որ հայերենը չի հանդիսանում ո՛չ արխաիկ, ո՛չ պահպանողական լեզու և բացի այդ, կորցրել է մեծ քանակությամբ հնդեվրոպական հիմքեր⁵⁹։ Ազգակցության տերմինաբանության այդպիսի պահպանումն անկասկած մատնանշում է, որ մինչև XIX դարը պահպանված հայ ավանդական ընտանիքը ներկայացրել է հնդեվրոպական ընտանիքի առավել արխաիկ հետնորդներից մեկը։ Հայկի աղխը իր հերթին ներկայացնում է հայ նահապետական ընտանիքի

⁵⁷ Խորենացու մոտ հիշվում է, որ Հայկը Բաբելոնը լքում է Արամայակի ծնվելուց հետո, բայց հետո նշվում է, որ նա Արարադի երկիրը թողնում է Արամայակի որդի Կադմոսին ու Հայաստան գալիս իր որդիների, թոռների ու նրանց ընտանիքների հետ, այսինքն՝ Հայկի որդիներն ու թոռները ծնվել էին մինչև նրա Հայաստան գալը։

⁵⁸ Карапетян 1966, 25.

⁵⁹ Bonfante 1984, 29.

հնագույն՝ առասպելաբանական արտացոլումը և այսպիսով՝ առավել արխայիկ տարբերակը:

Հայկի անունը դարձել է Հայկի ազգ-ընտանիքի և ազգ-ցեղի տոհմական անունը (այսինքն՝ *հայ* ցեղանունը): Պատմական հայ ազգը, այն է՝ Հայկի ցեղը, համարվում է Հայկի սկզբնական ազգ-ընտանիքի աճած ու զարգացած վիճակը: Այս համատեքստում Հայկի աղխը հայ նահապետական ընտանիք-ազգի առաջին, առասպելաբանական արտացոլումն է: Հայկի անունը պիտի դառնար անվանումը նրա ազգ-ընտանիքի, որը նախնական բջիջն էր հետագա նույնանուն ազգ-ժողովրդի:

Ըստ արդի գիտության տվյալների՝ հին հնդեվրոպական համայնքը կազմակերպված էր հայրիշխանական մեծ՝ նահապետական ընտանիքների ձևով, նահապետի՝ ընտանիքի հոր գլխավորությամբ, որի շուրջն են համախմբվել նրա արական ժառանգներն իրենց ավելի փոքր «բջջային» ընտանիքներով (ընդհանրապես եվրասիայում նմանատիպ հայրագիծ՝ պատրիլինեալ, նահապետական տիպի ընտանիքները առավել տարածվածն են): Հնդեվրոպական հասարակություններում տղան սկզբում դառնում էր ամուրի և անհող պատանիների եղբայրության անդամ և դաստիարակ-հրամանատարների ղեկավարության տակ որսորդությամբ ու ավազակությամբ, հատկապես գայլի վարքը նմանակելով ապրում ցեղի տարածքի եզրերին, սահմանային շրջաններում: Մոտ 20 տարեկանում միայն նա ճանաչվում էր ցեղի լիիրավ անդամ և կարող էր ընդգրկվել ավելի հեղինակավոր ռազմական միավորումների կազմում, ամուսնանալ, ունենալ տուն և ունեցվածք: Ցեղի հասուն անդամները կոչվել են *h₂ner- արմատով, իսկ ցեղը բաղկացած է եղել սովորաբար երեք կլանից⁶⁰:

Խորհրդանշական է, որ Հայկի աղխի տղամարդիկ Խորենացու մոտ հաճախ կոչվում են այրեր, իսկ *այր* բառը հանգեցվում է հենց հնդեվրոպական *h₂ner-ին: Հայկի աղխում նրա ժառանգ այրերի թիվը՝ երեք հարյուր, ինչպես ասվեց, կարող է մեկնաբանվել ըստ հնդեվրոպական զուգահեռների, «եռամաս գաղափարախոսության» համատեքստում:

Արամն ընդարձակում է Հայաստանի սահմանները և այդպիսով վերստեղծում Հայաստանը հինգ բյուր՝ հիսուն հազար

⁶⁰ Mallory, Adams 1997, 6-7, 531, 632-633:

երիտասարդների («նորատիք») գլուխ անցած: Հնդեվրոպական ավանդություններում նոր հողերի յուրացումը սովորաբար կապվում է հիշյալ պատանեկան խմբերի հետ. նրանք են, որ հեռանում են իրենց տարածքներից ու նոր հողեր գրավում⁶¹: Արամի «նորատի» ռազմիկներն ակնհայտորեն համադրելի են պատանեկան հրոսակախմբերի հետ, իսկ նրանց թիվը՝ հիսուն հազար, կարող է մեկնաբանվել որպես այդ խմբերի անձնակազմի թվաքանակի (սովորաբար հիսուն)⁶² պատմականացած հիշողություն:

Այսպիսով, թվում է, թե սոցիալական համատեքստում Հայկը անձնավորում է տոհմի ղեկավարին, նրա այրերը՝ հասուն անդամներին, Արամը՝ պատանեկան եղբայրության առաջնորդին, նրա «նորատի» ռազմիկները՝ եղբայրությունը: Արա Գեղեցիկը հայկական զուգահեռն է տարածաշրջանի հին առասպելներին բնորոշ պատանի, գեղեցիկ աստվածների, որոնք զոհվում են մեծ դիցուհու սիրո պատճառով (Ադոնիս, Ատտիս ևն)⁶³: Ըստ այդմ՝ ազգածին առասպելի երեք հիմնական դեմքերը՝ Հայկը, Արամը և Արան (իրենց հետևորդներով), անձնավորում են հնագույն հայ հասարակության տղամարդկային տարիքային խմբերը:

Լեզվաբանություն

Հայոց ազգածագման վերաբերյալ ներկայումս շրջանառվող գիտական վարկածները տարբերվում են իրարից ըստ *հայ* ցեղանվան՝ Հայկական լեռնաշխարհում և մերձակայքում հին աղբյուրներից հայտնի ցեղատեղանունների հետ նույնացման տեսակետների (տես գլուխ IV): Ընդհանրապես ցեղանունները կարող են լինել բնիկ կամ փոխառյալ: Այսպես օրինակ՝ Եվրոպայում բնիկ են լեհերի, անգլիացիների, գերմանացիների, փոխառյալ՝ ռուսների, բուլղարացիների, ֆրանսիացիների ցեղանունները: Ցեղանվան բնիկ կամ փոխառված լինելը որոշիչ հանգամանք է այդ ցեղանվան տակ հանդես եկող հին հանրության էթնիկական ծագման բացահայտման հարցում: Եթե այն բնիկ է, ապա այդ ցեղը, ամենայն հավանականությամբ,

⁶¹ Kershaw 2001, 133 ff., 172 f.

⁶² Kershaw 2001, 116, 126 ff.

⁶³ Տես օրինակ Մատիկյան 1930. Ադոնց 1948. Ղափանցյան 1944:

հնուց ի վեր խոսել է տվյալ լեզվով, իսկ եթե փոխառված է, ապա ցեղը կարող էր այլ ծագում ունենալ և հետո միայն իր անվանումը տալ մեկ այլ ժողովրդի (ինչպես օրինակ՝ հին բուլղարների և ֆրանկների դեպքում): Այսպիսով, *հայ* ցեղանվան ծագման բացահայտումը հայ ժողովրդի ծագման խնդրի առանցքային հարցերից է: Ազգածին ավանդությունը բացառիկ հնարավորություն է ընձեռում մեկնաբանելու և ստուգաբանելու հայոց էպոնիմների՝ ազգածին նահապետների անունները, որով և մենք մոտենում ենք համապատասխան ցեղանունների ստուգաբանությանը:

ա. Արդեն XIXդ. *հայ* ցեղանունը հանգեցվել է հնդեվրոպական **poti-* «տեր, տանտեր, ամուսին» արմատին (Ֆ. Մյուլլեր, Բ. Պատկանյան)⁶⁴: Ստորև ներկայացվում են փաստարկներ այդ մեկնաբանության օգտին:

Որոշ բարբառներում *հայ* բառը հանդես է գալիս որպես մեծահասակ կանանց կողմից ամուսնուն տրվող անվանում՝ «ամուսին», «տանտեր, ընտանիքի գլուխ» իմաստով⁶⁵: Տարիքով կանայք իրենց ամուսիններին, երրորդ դեմքով խոսելով, անվանում են *մեր հայր*, որը պետք է նշանակի «ամուսինս, մեր ընտանիքի գլխավորը»⁶⁶: Ընդ որում՝ այդ կոչումը Գարդմանում հնչում է *հայիկ*, որն ուղղակի

⁶⁴ Մյուլլերի ստուգաբանությունը հղվում է ըստ Kiepert 1869, 236. Патканов 1871, 24. Հայկ < **poti-* ստուգաբանության համար ակնհայտ զուգահեռ է *հայր* < **ph₂tēr* ստուգաբանությունը: Միակ խնդիրն այն է, որ համարվում է, որ հնդեվրոպական **p-*ն *o-*-ից առաջ անհետանում է՝ հմմտ. *ոտն* < **pod-* (բայց հմմտ. Աճառյան 1971, 519-520): Ուրեմն, հնարավոր է, որ այստեղ գործ ունենք այլ օրինաչափության հետ (որ, օրինակ, *-*ti*-ից առաջ այդ կանոնը չի գործում): Ինչևէ, ըստ ժամանակակից պատկերացումների, հայերենում ոչ վերջին բաց վանկում **o-*ն վերածվում է *ա-*-ի (*o-*ն պահպանվում է երկու բաղաձայներից կամ *w-*-ից առաջ, և եթե հաջորդ վանկն ունի *o*, տե՛ս Kortlandt, Beekes 2003, 40, 156): Իսկ հնդեվրոպական *-*ti-*/-*te-*ն ձայնավորից առաջ կանոնավոր կերպով դառնում է *j*: Այսպիսով, ցեղանվան զարգացումը կարելի է պատկերացնել **poti-* > **pati-* > **hati-* > *hay-* ճանապարհով (հոգնակի սեռ. *հայոց* ձևը ցույց է տալիս, որ հիմքին հետագայում ավելացել է *-*yo-* ածանցը): Իհարկե, չի կարելի բացառել բառի հին փոխառություն լինելը հնդիրանականից, որտեղ *o-*ն կանոնավոր կերպով դառնում է *a* (հմմտ. Патканов 1871, 24), բայց դա միայն տեսական հնարավորություն է:

⁶⁵ ՀԼԲԲ Գ, 238:

⁶⁶ Այս արտահայտության վերաբերյալ տե՛ս հատկապես Խաչատրյան 2003, 19:

համընկնում է Հայկ անվան հետ⁶⁷: Հին հնդեվրոպական հասարակության մեջ տան, ընտանիքի և կլանի նահապետը կոչվում էր *pot(i)- արմատով՝ *dems-pot- «տան տեր», *wik'-pot- «կլանի առաջնորդ (տեր)»⁶⁸: Հայկը նկարագրվում է որպես գլուխը մի մեծ նահապետական ընտանիքի, որը բաղկացած էր երեք հարյուր այրերից և նրանց ընտանիքներից: Այսպիսով, Հայկը, կարելի է ասել, մի տիպիկ հնդեվրոպական *poti- էր: Հատկանշական է, որ Հայկի մշտական *նահապետ* կոչման երկրորդ մասը ներկայացնում է հնդեվրոպական *pot-ի իրանական արտացոլումը:

Օրիոն համաստեղությունը կոչվել է Հայկն Հայկի անունով⁶⁹: Այս անվան վերջավորությունն ակնարկում է հնդեվրոպական *-kon (*-ko-n) ածանցը, որը բաղարկվել է իրանական ծագման փոքրացուցիչ-փաղաքշական *-hik* ածանցի հետ (Հայկն, Հայիկ > Հայկ)⁷⁰: Այն հաճախ հանդես է գալիս տարիքով ազգականների կոչումներում (*պապիկ*, *հայրիկ*) և դիցանուններում, հմմտ. Աստղիկ դիցանունը և Հայկի որդու Արամանյակ անունը, համանման *-ակ* ածանցով:

Հայկը սպանում է Բելին «երեքթևեան» նետով (Խորենացի Ա.Ժա): Սրա լավագույն զուգահեռը հայտնի է հնդկական ավանդույթից, որտեղ Օրիոն համաստեղությունը անձնավորվում է որպես նախահայր և արարիչ աստված Պրաջապատի (Prajāpati), որին նետահարում է Ռուդրա աստվածը «եռամաս» նետով (*iṣus trikāṇḍa*, թերևս Օրիոնի գոտու երեք աստղերն են)⁷¹: Ակնհայտ է, որ Հայկը՝ որպես եռամաս նետ արձակող և իր իսկ անունով կոչվող իր որդիների և հետևորդների հայր և առաջնորդ, համապատասխանում է Ռուդրային՝ նույն անունով կոչվող ռուդրաների՝ իր իսկ որդիների խմբի առաջնորդին⁷²: Բայց և այնպես Հայկը՝ որպես հայոց նախահայր և Օրիոն համաստեղության անձնավորում, համապատասխանում է նաև Պրաջապատիին: Հատկանշական է, որ Ռուդրայի

⁶⁷ Սահակյան 2015, 71, ծան. 50:

⁶⁸ Տե՛ս օրինակ Бенвенист 1995, 75-76, 144.

⁶⁹ Ալիշան 1895, 119:

⁷⁰ Այս ածանցի վերաբերյալ տե՛ս Զահուկյան 1987, 238:

⁷¹ Այս առասպելի վերաբերյալ տե՛ս Allen 1963, 309-310. Forssman 1968, 58 (աղբյուրների հղմամբ), Fontenrose 1981, 239-240. Темкин, Эрман 1985, 16-18, 276-277.

⁷² Ռուդրայի վերաբերյալ այս համատեքստում տե՛ս Kershaw 2001.

ընութագրական մակդիրների (ganapati, vrātapati, bhūtapati, paśupati, gr̥hapati, sthapati, sabhapati), ինչպես և հենց Պրաջապատիի անվան երկրորդ մասերը ծագում են հնդեվրոպական *poti-ից⁷³:

Աքքադերենում ընտանիքի նահապետը կոչվել է bēlu (b'ī) «տեր» արմատից)⁷⁴: Այդ արմատով են կոչվել նաև իշխանավորները, արքաները, աստվածները՝ հատկապես Բաբելոնի մեծ աստված Բել-Մարդուկը: Հայկի և Բելի կերպարները, թեև հակադիր, բայց որոշակիորեն սիմետրիկ են, և Բելը, կարելի է ասել, որ Բաբելոնի Հայկն է, նույն կերպարի բացասական՝ «հայելային անդրադարձը»⁷⁵: Իսկ խուռիական ավանդույթում ընտանիքի նահապետը կոչվում էր ewri՝ «տեր», որը հատկապես Հայկի խուռիական համապատասխանության՝ գլխավոր աստված Թեշուբի կոչումն է⁷⁶: Հայկի ընտանիքի աղի կոչումն էլ հավանաբար խուռիական փոխառություն է⁷⁷: Այս ընդհանրությունները ակնհայտորեն արտացոլում են հնագույն հայերի և հին Միջագետքի ժողովուրդների միջև եղած կապերը⁷⁸:

Ներկայումս *հայ* < *poti- ստուգաբանությունը լայնորեն հայտնի է⁷⁹: Իհարկե, տեսականորեն չի բացառվում նաև այլ մեկնաբանությունների առաջադրման հնարավորությունը, բայց դրանց հավանականությունը շատ փոքր է⁸⁰:

բ. Ըստ Խորենացու, ինչպես ասվեց, *արմեն* ցեղանունը կապված է համարվել Արամ նահապետի անվան հետ: Հնդեվրոպական առասպելաբանության մեջ Արամի առավել ակնհայտ անվանաբանական զուգահեռներն են հնդկական Ռամա (Rāma) անունով հերոսները: Այս անունը պետք է ստուգաբանվի հնդեվրոպական

⁷³ Petrosyan 2002, 55, Petrosyan 2009, 30–31.

⁷⁴ CAD 2, 192 ff.

⁷⁵ Petrosyan 2007, 306. 2009, 160.

⁷⁶ GLH 86.

⁷⁷ Дьяконов 1968, 68, 77, прим. 7. տես և Martirosyan 2010, 25–26:

⁷⁸ Պետրոսյան 2013:

⁷⁹ Հայ ցեղանվան և Հայկ դիցանվան մեր այս մեկնաբանությունը տես Պետրոսյան 1986. 1987. 1988. 1997, 22–24. 2013. 2014. Петросян 2002, 64. 2016. Petrosyan 2002, 58, 61, 161. 2007. 2009: 1987-ից այս ստուգաբանությունն է պաշտպանում և Գ. Զահուկյանը, տես Զահուկյան 1987ա. 1992, 18. Джаякян 1988 I, 68. Djahukian 1990, 26:

⁸⁰ Հայ ցեղանվան գիտական ստուգաբանությունների տեսությունը տես Պետրոսյան 2014. Петросян 2016a:

*rē-mo-/*rō-mo- (կոկորդայինների հաշվառմամբ՝ թերևս *h₂reh₁mo-) «սև, թուխ» արմատից: Արամ անունը պիտի լիներ ամպրոպի հնագույն աստծու մի կոչումը («սև, թուխ» գույնը բնորոշ է ամպրոպային կերպարներին)⁸¹: Մյուս կողմից, այդ հատկանիշը բնորոշ է հնդեվրոպական պատանի ռազմիկների խմբերին, որոնց դիցաբանական առաջնորդն ու մարմնավորումն է Արամը⁸²: Ինչպես ցույց է տալիս ուրարտական առաջին արքայի Արամու անունը, Արամ դիցանունը կարող էր նաև անձնանվանական կիրառություն ունենալ (սշենք, որ Հայաստանին հարևան հին երկրներում դիցանուններն օգտագործվել են որպես անձնանուններ, օրինակ՝ ասուր.՝ Աշուր, խեթ.՝ Տելեպինուս, լուվ.՝ Ռունտիյաս, խուտ.՝ Կումարպի): Արամ և *արմեն* անվանումների միջև կապն այնքան էլ ակնհայտ չէ: Այն, թերևս, տեսականորեն չի բացառվում, բայց և այնպես, շատ է հիշեցնում կեղծ, այսպես կոչված՝ «ժողովրդական ստուգաբանությունը»: Հնարավոր է նաև, որ ցեղի հին էպոնիմի անունը ձևափոխվել է աստվածաշնչյան Արամ նահապետի (արամեացիների նախնու) և/կամ ուրարտական Արամու արքայի անունների ազդեցությամբ⁸³:

Սեբեոսի մոտ, ինչպես ասվեց, շեշտվում է Արամանյակ/Ար(ա)-մենակի ազգածին դերը, և կարելի է կարծել, որ *արմեն* ցեղանունը կապվում է նրա անվան հետ: Այս տարբերակն ավելի հավանական է և՛ լեզվաբանորեն, և՛ ըստ առասպելի տրամաբանության. նա առաջինն է *ար(ա)մ*- տարրով անուն կրող նահապետներից⁸⁴ (ըստ մի ստուգաբանության, Արամանյակը Արամ անվան մի ածանցյալ ձևն է՝ Արամ > Արամեան > Արամենակ > Արմենակ)⁸⁵: Արամանյակը նաև առաջինն է, որ հաստատվում է Այրարատում՝ հայոց աշխարհի կենտրոնում (այսինքն՝ հանդես է գալիս որպես Այրարատի էպոնիմ), որը, ըստ ավանդության, հետագայում կոչվում է Արա Գեղեցիկի անունով՝

⁸¹ Արամ նահապետի վերաբերյալ, այս համատեքստում, տես Պետրոսյան 1997. Petrosyan 2002. Петросян 2002:

⁸² Պետրոսյան 2006, 194–198: Հնդեվրոպական (հնդկական, գերմանական, կելտական և այլ) պատանեկան ջոկատների կամ նրանցից ծագած միավորումների «թուխ» ռազմիկների վերաբերյալ տես Kershaw 2001, 26, 27, 30, 42, 89, 185, 202, 211, 267. Vidal-Naquet 1986, 106 ff.

⁸³ Markwart 1928, 215, 224 seq.

⁸⁴ Տես և Պիոտրովսկի 1945, 27: Կարծիք կա նաև, որ Արամի էպոնիմ դառնալը Խորենացու խմբագրման արդյունք է, տես Սահակյան 2015, 57–58:

⁸⁵ Զահուկյան 1981, 52:

«դաշտն Արայի»: Այս անունները պարզորոշ հիշեցնում են հնդեվրոպական ավանդություններում երկրների սրբազան կենտրոնների և նրանց դիցաբանական էպոնիմների անունները (հնդեվրոպական **aryo-*, **aryomen-*): Այսպես՝ հնդկական ավանդույթում այդ աստվածը կոչվում է Aryaman, հնդարիացիների նախնական հայրենիքը՝ Āryāvarta, իրանական ավանդույթում համապատասխանաբար՝ Airyaman և Ayrānām vaejah, (արևմտա)գերմանական տարածքների կենտրոնում էր բնակվում Hermin(i)on ցեղը, կապված Irmin դիցանվան հետ, Իռլանդիայի էպոնիմն է Eremon-ը: Ըստ այդմ՝ կարելի է կարծել, որ Այրարատը կապված է **aryo-*-ի (որի հայերեն արտացոլումը կարող էր լինել *այր-*ը), իսկ Արամանյակ/Արմենակը **aryomen-*-ի մի տարբերակի հետ, որը ձևափոխվել է Արամ անվան ազդեցությամբ⁸⁶:

գ. Երեմիա Մեղրեցու միջնադարյան բառարանում հիշվում է հայերի ևս մեկ անվանում՝ *գեղնի*, *գեղնիկ* կամ *գղնի*⁸⁷: Եթե *հայ* ցեղանունը կապված է համարվել Հայկի, *արմենը*՝ Արամի կամ Արամանյակ/Արմենակի հետ, ապա տրամաբանական է ենթադրել, որ *գեղնին* էլ կապվել է ազգածին ավանդության համահունչ անունների, այսինքն՝ Գեղամի և/կամ նրա ծոռ Արա Գեղեցիկի հետ: Ինչպես ասվեց, առասպելաբանական համատեքստում Հայկի և Արամի կերպարները վիպական մակարդակում կրկնում են հին հնդեվրոպական ամպրոպի աստծու կերպարը: Հատկանշական է, որ ըստ Վ. Իվանովի և Վ. Տոպորովի՝ հնդեվրոպական ամպրոպային առասպելում ամպրոպի աստծու հակառակորդ օձ-վիշապի անունը ծագում է **wel-* արմատից (որի հայերեն արտացոլումը պիտի լիներ *գեղ-*ը): Որոշ հանգամանքներ թույլ են տալիս կապեր տեսնել Գեղամի, նրա անունով կոչված լեռների և առասպելական օձ-վիշապի միջև (հմմտ. վիշապ քարակոթողների ամենամեծ խտությունը Գեղաքունի (ուրարտ.՝ Uelikuni) գավառում, Գեղամա լեռներում, Գեղ լեռան վրա և Գեղի ամրոցի մոտ)⁸⁸:

Հնդեվրոպական լեզվում կան մի շարք նույնահունչ, բայց տարբեր նշանակությամբ **wel-* արմատներ («ոլորվել», «մահվան աշխարհ», «տեսնել» և այլն. Արայի *Գեղեցիկ* մակդիրն էլ ծագում է

⁸⁶ Петросян 2009, 98. *արմեն* ցեղանվան ստուգաբանությունների տեսությունը տես Պետրոսյան 2014:

⁸⁷ Ամայյան 1975, 64, 67:

⁸⁸ Петросян 1987. 2002, 89-90. Պետրոսյան 2015. Petrosyan 2016:

*wel- «տեսնել» արմատից, իբրև «տեսքոտ»): Հայտնի են նաև *wel- նախաձև ենթադրող բազմաթիվ հնդեվրոպական ցեղանուններ (կելտական volcae, իլիրիական velsounas, իտալյան volski ևն), որոնք «հիմնական առասպելի» վերականգնողների կողմից համադրվել են Օձ-վիշապի անվան հետ⁸⁹: Այս համադրությունը, պետք է ասել, մտահայեցողական է, և միայն հայկական նյութն է, որ հնարավորություն է տալիս ինչ-որ շոշափելի կապեր տեսնելու ցեղանվան և առասպելական օձի միջև: Ինչևէ, *գեղնի* ձևը հնդեվրոպական համատեքստում անբաժանելի է հիշյալ հնդեվրոպական ցեղանուններից: Ըստ այդմ՝ այն պիտի ստուգաբանվի *welniyo-նախաձևից (*-n-iyō- բարդ ածանցով), իսկ *գեղնիկ* ձևի վերջին *կ*-ն ցեղանուններում հանդիպող *-իկ* ածանցի հետքն է (հմմտ. միջնադարյան բրբռ. *խայիկ*՝ «հայ», ապա՝ *հնդիկ*, *պարսիկ* և այլն): Անկախ այդ ցեղանվան արմատի սկզբնական նշանակությունից, այն հայկական ավանդության մեջ համադրվել է ամպրոպի աստծու հակառակորդի համահունչ անվան հետ⁹⁰:

Հայոց մյուս հայտնի ցեղանունները՝ վրաց. *սոմեխ-ի*, քուրդ. (ուշ) *ֆլա*, հայկական ծագում չունեն, չեն հիշվում ազգածին ավանդության մեջ և մեր խնդրի համար չունեն այն նշանակությունը, ինչ վերևում քննվածները: Ազգածին ավանդության կառույցը, ինչպես տեսանք, հնդեվրոպական է, և նրա առանցքային կերպարների անունները մեծ հավա նականությամբ ստուգաբանվում են հնդեվրոպական հիմքերով (ընդ որում՝ *հայ* < *poti- և *գեղնի* < *wel- ստուգաբանությունները, ինչպես ցույց են տալիս *p- > h և *w- > q անցումները, հայկական են): Ըստ այդմ՝ հնդեվրոպական՝ հայկական պիտի լինեն նաև այդ անունների հետ կապվող ցեղանունները, որոնց հարաբերությունը կարող է արտացոլված լինել համապատասխան կերպարների հարաբերություններում:

Պատմություն

Հայկի և նրա առաջին ժառանգների զրույցներն ավանդաբար համարվել են վավերական պատմական աղբյուրներ մինչև

⁸⁹ Иванов, Топоров 1979.

⁹⁰ *Գեղնի* ցեղանվան մեր այս մեկնաբանությունը տես Петросян 1987. 1990. 2002, 86-90. հմմտ. Ս. Պետրոսյան 1976, 193. Զահուկյան 1987բ, 615-616:

XVIII-XIXդդ.⁹¹: Հետագայում՝ XIX-XXդդ., այդ ավանդություններն արդեն քննադատաբար ուսումնասիրվել են մի շարք մասնագետների կողմից (Մ. Էմին, Բ. Պատկանյան, Ա. Կարիեր, Յ. Մարկվարտ, Մ. Աբեդյան, Ն. Ադոնց, Ա. Մատիկյան, Գ. Ղափանցյան, Հ. Մանանդյան, Գ. Սարգսյան, Ս. Հարությունյան, Ա. Պետրոսյան, Ա. Քոսյան և այլք)։ Այդ զրույցներում ակնհայտորեն առկա են որոշակի պատմական տեղեկություններ։ Սակայն ավանդության առասպելաբանական տարրերը բացահայտելուց հետո է միայն հնարավոր տարբերակել և հասկանալ նրա պատմական շերտը, որը երբեմն գերազնահատվել, երբեմն էլ թերագնահատվել է⁹²։

Առասպելը դուրս է իրական տարածությունից ու ժամանակից։ Դա վերաբերում է հատկապես տիեզերածնության առասպելներին, որոնց միջոցով է հենց բացատրվում տարածության և ժամանակի սկզբնավորումը՝ արարումը։ Բայց վիպականանալով որպես ազգածին ավանդություն, առասպելը ձեռք է բերում տարածաժամանակային և այսպիսով՝ պատմական բնութագրեր։

Հայկյանների ավանդության մեջ անհրաժեշտ է տարբերակել մի քանի առասպելաբանական շերտ.

- ա. հին հնդեվրոպական առասպելաբանական միջուկը,
- բ. հինարևելյան ազդեցությունը,

⁹¹ Բարսեղյան 1996, 140-141, 144-145: Այդ մոտեցումը վերածնվեց Հայաստանի անկախացումից հետո, երբ որոշ հեղինակներ նորից սկսեցին հույժ պատմականություն վերագրել առաջին Հայկյանների ավանդությանը։

⁹² XX դարում պատմական հայեցակետից քննվել են հիմնականում Հայկի, նրա հայր Թորգոմի և Արամի դրվագները, որտեղ ուսումնասիրողներն իրենց տեսակետների հաստատումն են փնտրել, իսկ առասպելաբանականից՝ հատկապես Արայի լեգենդը ֆրեզերյան «մեռնող և հառնող աստվածության» առասպելային համատեքստում։ Երբ գիտության զարգացումը հանգեցրեց առաջին Հայկյանների ավանդության՝ ճշգրիտ պատմություն ներկայացնելու տեսակետի մերժմանը, որոշ գիտնականներ գերքննադատորեն սկսեցին ժխտել դրա ողջ աղբյուրագիտական արժեքը։ Մինչև այժմ էլ, հատկապես արևմտյան գիտնականների գործերում, Հայկյանների ավանդության անդրադառնում են նվազագույն չափով, իսկ հայոց նախապատմությանը նվիրված ամենաընդգրկուն՝ Ի. Դյակոնովի գրքում Հայկյան առաջին նահապետների և ավանդական արքաների վերաբերյալ տեղեկություններին հատկացված է միայն մեկ ծանոթագրություն, տես Дьяконов 1968, 185-186, прим. 296:

- գ. հունական ազդեցությունը,
- դ. աստվածաշնչյան ազդեցությունը,
- ե. ուշ հարմարեցումները:

Միայն այս տարրերն առանձնացնելուց հետո կարելի է փորձել գտնել ավանդությունների պատմական շերտը:

Ինչպես ասվեց, հնդեվրոպական են հայոց նահապետների և հինարևելյան (միջագետք-սիրիական)՝ նրանց հակառակորդների անունները և կերպարները: Բայց երևում է նաև, որ հայ նահապետները համապատասխանեցվել/նույնացվել են որոշ խուռիական կերպարների հետ (Հայկ-Թեշուր ևն):

Հունական ազդեցությունն ի հայտ է գալիս որոշ անուններում և նույնացումներում: Հայկի թոռը կոչվում է Կադմոս, Նոյը՝ Քսիսուրթես (շումերական Նոյի Զիուսուդրա անվան հունական ձևն է), աստվածաշնչյան Քամը և Հաբեթը նույնացվում են որպես Տիտան և Յապետոս(թե), Բել-Նեբրովթը՝ որպես Կրոնոս ևն: Բացի այդ, Խորենացին լայնորեն օգտագործում է հույն հեղինակների գործերը (օրինակ՝ Արայի ու Շամիրամի ավանդության մի շարք հատվածներ համապատասխանեցված են մ.թ.ա. V-IVդդ. հեղինակ Կտեսիասի՝ Դիոդորոսի և Եվսեբիոսի մոտ պահպանված տեղեկություններին):

Աստվածաշնչից պիտի գար ավանդության հատկապես սկիզբը. հմմտ. Հայկի աստվածաշնչյան ծննդաբանությունը՝ Հաբեթի ժառանգ, Թորգոմի որդի, և նրա ընտանիքի սկզբնավորումը Բաբելոնում ու տեղաշարժը աշտարակաշինությունից հետո: Որտեղ էլ որ տեղայնացած լիներ հայերի «նախահայրենիքը» հնագույն առասպելներում և պատմական լեգենդներում՝ Հայաստանում թե Հայաստանից դուրս, քրիստոնյա հեղինակները՝ Խորենացին, Սեբեոսը և նրանց նախորդը՝ Մար Աբասը, այն պետք է տանեին Բաբելոն, որտեղ ըստ Աստվածաշնչի տեղի է ունեցել լեզուների բաժանումը, և թվագրեին հայոց սկիզբը աշտարակաշինությանը հաջորդող դարաշրջանով:

Հայկի առաջին հանգրվան Կորդվաց Արարատը մի շարք հնագույն, այդ թվում՝ հայկական աղբյուրներում համարվում է Նոյի փրկության լեռը⁹³: Ըստ այդմ՝ Հայկը՝ որպես նույն լեռան մոտ

⁹³ Այս լեռան հետ է կապվում Նոյան տապալնի առասպելը ամենահին և հեղինակավոր աղբյուրներում՝ Բերոսոս (մոտ 275թ. մ.թ.ա.), սամարական հնգամատյան, արամեական երեք տարգումներ, Հովսեփոս Փլավիոս

հանգրվանած հայոց նախնի, իր երեք որդիներով համադրելի է դառնում նաև մարդկության նախնի Նոյին և նրա երեք որդիներին⁹⁴։ Այսպիսով, ոչ միայն Բաբելոնը, այլև Հայկի՝ Կորդվաց Արարատ լեռան շրջանում ունեցած առաջին հանգրվանը՝ որպես սկիզբ, չափազանց առասպելական մի վայր է, և չի կարող միարժեք կերպով հնագույն հայոց իրական պատմական հանգրվան համարվել։ Բացի այդ, ակնհայտ ոչ հայկական է այդ շրջանի անվանադրի՝ Հայկի թոռ Կադմոսի անունը (տեղի հին Կադմոսի երկրանվան՝ հունական Կադմոսին համապատասխանեցված ձևը)⁹⁵։

Հայկի հայրը՝ Թորգոմը, աստվածաշնչյան կերպար է։ «Թորգոմի տունը» (հին հայ.՝ *Տուն Թորգոմայ*) ներկայացնում է Աստվածաշնչի Բեթ Թոգարմա երկիրը Կապադովկիայում (եբր.՝ *Twgrmh, Tgrmh, Trgmh*, հուն.՝ *Θοργαμά, Θωργαμά, Θεργαμά*), որը համապատասխանում է ասուր.՝ *Tegarama*, խեթ.՝ *Te/akarama*, լուվ.՝ *Lakarama*, ասուր.՝ *Til-Garimmu* տեղանվանը⁹⁶։ Հայկի Թորգոմյան ծննդաբանությանը շատ հետազոտողներ պատմականություն են վերագրել՝ կարծելով, որ հնագույն հայերը սկզբնական հանգրվան պիտի ունենային Կապադովկիայում, ապա միայն անցնեին արևելք՝ Հայաստան։ Այսպես, ըստ այդ տեսակետը ներկայացնող վերջին նշանավոր հեղինակի՝ Գ. Սարգսյանի, հայերի նախնիների ներգաղթը արևմուտքից՝ Կապադովկիայի «Տուն Թորգոմայից» Հայաստան, քրիստոնեական ավանդության մեջ ձևափոխվել է Բաբելոնից Հայաստան անցման⁹⁷։

Սակայն Հայկի և հայերի՝ աստվածաշնչյան Թորգոմի հետ ունեցած կապն ուշ երևույթ է։ Հրեական ավանդության մեջ ամենահին վկայությամբ (Հովսեփոս Փլավիոս, *Ant. Jud. I.5.1*) Թորգոմը

(Լդ.), Հիպպոլիտոս (Ող.), Եվսեբիոս (Ող.), Եպիփանիոս (ԻՊ.), Աստվածաշնչի սիրիական թարգմանություն (Պերշիտտա), հայ.՝ Փավստոս Բուզանդ, Խորենացի, Թովմա Արծրունի, արաբ.՝ Ալ Մասուդի, Իբն Հաուկալ ևն, տե՛ս Петросян 2006։ Այդ ավանդույթը շարունակվում է մինչև հիմա. սեպտեմբերի 14-ին տարբեր կրոնների ներկայացուցիչներ (քրիստոնյաներ, հրեաներ, մուսուլմաններ և եզդիներ) հավաքվում են այդ լեռան վրայի մի սրբավայրում՝ նշելու Նոյի զոհաբերության օրը։

⁹⁴ Պետրոսյան 2006, 208–211. Петросян 2006։

⁹⁵ Կադմոսի վերաբերյալ տե՛ս Պետրոսյան 1997, 154–158։

⁹⁶ Այս երկրի մասին տե՛ս RLA 2014/I-II, 43–44։ Հայկական համատեքստում՝ Քոսյան 1998։

⁹⁷ Սարգսյան 1992, 44–48։

(Թորգրամես, Թյուգրամես) համարվել է փոյուգացիների և ոչ հայերի նախահայրը, իսկ հայերին այլ ծագում է վերագրվել՝ Արամոսի որդի Ուլոսից (տե՛ս ստորև): Որպես հայերի նախահայր՝ Թորգոմն առաջին անգամ հանդես է գալիս քրիստոնյա հեղինակների՝ Հիպպոլիտոսի (III դ.), ապա Եվսեբիոսի մոտ (IV դ.)⁹⁸: Այստեղից էլ այդ ծննդաբանությունը մտել է առաջին հայ հեղինակների՝ Ագաթանգեղոսի, Փավստոսի, Խորենացու երկերի մեջ (հավանաբար նրանց աղբյուր Մար Աբասի միջնորդությամբ): Թորգոմը Գոմեր/Գամերի ժառանգն է, որն անձնավորում է Կապադովկիան (Ծննդ. Ժ. 2-3, Խորենացի, Ա. Ե, թ. Ժբ. հմմտ. հայ. Գամիրք՝ «Կապադովկիա»): Նրա՝ հայերի նախնի համարվելու գաղափարը կարող էր գալ հայերի՝ Կապադովկիայի հարևանները լինելու փաստից: Սրա հաջորդ քայլն է հայերի՝ Թորգոմի եղբայր Ասքանազից սերված համարվելը (առաջին անգամ՝ Կորյունի մոտ): Այսպիսով, Հայկի Թորգոմյան ծագումը երկրորդային՝ աստվածաշնչյան ծննդաբանությունների վրա կառուցած և այն էլ՝ ուշ, քրիստոնյա հեղինակների մի համապատասխանեցում է:

Վերևում շեշտվեցին Հայկի նախնական տեղայնացման և ծննդաբանության առասպելաբանական ակունքները: Ասվածը, գոնե տեսականորեն, չի բացառում այդ տեղեկությունների մի մասի նաև ինչ-որ հնագույն իրողությունների արձագանք լինելը⁹⁹: Բայց

⁹⁸ Այս հարցի վերաբերյալ տե՛ս Adontz 1927, 190-191, Ադոնց 1972, 313: Իմիջիայլոց, կարծիք կա, որ Հայկի Թորգոմյան ծագումը կարող էր նախաստվածաշնչյան առասպելաբանական կապերի վրա հարմարեցված լինել: Թորգոմը համահունչ է անատոլիական ամպրոպի աստծու Tarhu- /Tarku- անվանը, տե՛ս Adontz 1927, 191. հմմտ. Ս. Հարությունյան 2001, 21-22. Петросян 2002, 62:

⁹⁹ Այսպես, ըստ Գամկրելիժե-Իվանովի տեսության, հնդեվրոպական հայրենիքը ներառել է Հյուսիսային Միջագետքը և Հայկական լեռնաշխարհի հարավային շրջանները, այսինքն՝ Կորդվաց Արարատ լեռը գտնվել է հնդեվրոպական հայրենիքի տարածքում: Նոստրատիկ լեզվաբանության մասնագետները մոտավորապես այս շրջանում են տեղայնացնում նաև շատ ավելի վաղ ժամանակագրվող նոստրատիկ նախահայրենիքը: Տեսականորեն հնարավոր է պատկերացնել Հայկի՝ այստեղից Վանա ծովի շրջան անցնելը որպես հնդեվրոպացի վաղնջահայերի՝ այստեղից ծագելու մի պատմական վերհուշ: Նոյի և նրա երեք որդիների առասպելը (Կորդվաց լեռան առնչությամբ) ևս տեսականորեն հնարավոր է մեկնաբանել այս համատեքստում՝ որպես ժողովուրդների, այդ թվում՝ հնդեվրոպական գաղթերի նախասկիզբ:

անկախ տեսական հնարավորություններից, Հայկի նախնական տեղայնացումները Բաբելոնում և Կորդվաց լեռան շրջանում ունեն առաջին հերթին առասպելաբանական և կրոնական ակունքներ:

Որպես պատմական կարող են դիտվել այն տեղեկությունները, որոնք չեն բացատրվում հին առասպելների կամ աստվածաշնչի տվյալների համատեքստերում: Դրանցից կարևոր է նշել հայոց առաջին նահապետների Հայաստանում հաստատվելու և նախնական տեղաշարժերի աշխարհագրությունը, որը, թվում է, ավելի քիչ չափով կարող է կախված լինել առասպելաբանական կամ կրոնական գործոններից:

Ինչ առասպելաբանական հիմք կարող է ունենալ Հայկի՝ Վանա լճի հյուսիսում նախնական ուստան ունենալու տեղեկությունը: Այս տարածքը՝ Հարքը, ի հակադրություն, ասենք, Կորդվաց Արարատի, առասպելաբանական հզոր հիմքեր չունեցող և պատմական ժամանակներում ոչնչով աչքի չընկնող մի գավառ էր: Սակայն Հարքի հարավում է գտնվում Նեմրուք լեռը, նախկինում՝ ակտիվ հրաբուխ (վերջին արտաժայթքումները տեղի են ունեցել 1352 և 1441 թվականներին): Ընդ որում՝ Նեմրուքի հրաբխային խառնարանը ամենամեծն է Արևելյան կիսագնդում¹⁰⁰: Այդ ահռելի հրաբուխը մեծ ազդեցություն պետք է ունեցած լիներ հին մարդկանց վրա: Եվ եթե Խորենացու մոտ Հայկը Բելի դիակը Հայոց ծորից է բերում և թաղում այդտեղ, ապա ժողովրդական լեգենդները հենց այդ լեռան վրա են տեղայնացնում Բելի մահը (Բել-Նեբրովքը հարձակվում է հայոց թագավորի վրա կամ ապստամբում աստծու դեմ և աստծու կողմից կայծակնահար լինում)¹⁰¹: Հայկի և Բելի կռվի այս տեղայնացումը առասպելաբանորեն համադրելի է Զևսի և Տիփոնի մենամարտի հետ, որն ավարտվում է Տիփոնի՝ Էոնա լեռան հրաբխի խառնարանում թաղվելով (իմիջիայլոց, այս առասպելը ևս ունի մի քանի տեղայնացում՝ Կիլիկիայից մինչև Սիցիլիա)¹⁰²: Բայց եթե Հայկի տեղայնացումը Նեմրուքի վրա պայմանավորված լիներ միայն առասպելաբանական գործոններով, այդ շրջանում լավագույն տեղը պիտի լիներ Տարոնը՝ Նեմրուքից և Վանա լճից արևելք, որը հայկական առասպելաբանության, էպոսի և բանահյուսության

¹⁰⁰ Տե՛ս ՀՀՏԲ 3, 976:

¹⁰¹ Ղանալանյան 1969, 72-73:

¹⁰² Fox 2008, 288-298. Պետրոսյան 2014գ, 229-230:

թերևս առավել նշանակալի կենտրոնն է եղել հնագույն ժամանակներից մինչև վերջերս (այդտեղ է գտնվել վիշապաքաղ Վահագն աստծու տաճարը, Վահագնի հաջորդ սուրբ Կարապետի վանքը, այդտեղ են կենտրոնացած հայոց հին վեպերի շատ դրվագներ): Եվ ընդհանրապես, եթե Հայկի առաջին ոստանի վայրը պայմանավորվեր ոչ պատմական հիշողությամբ, ապա դրա համար կային առասպելաբանորեն և մշակույթով աչքի ընկնող այլ՝ միանգամայն հեղինակավոր շրջաններ (օրինակ՝ Վանը՝ Ուրարտուի հին կենտրոնը, Բարձր Հայքը՝ հայոց նախաքրիստոնեական աստվածների պաշտամունքների վայրը, Այրարատը՝ պատմական ժամանակների հայոց ոստանը):

Հակառակորդի սպանության և թաղման վայրերը առասպելներում տեղայնացվում են «աշխարհի կենտրոնում» (այդտեղից է սկսվում աշխարհի արարումը), ինչը նորից շեշտում է Հարքի և ընդհանրապես, Վանա լճի շրջանի էական պատմական դերը հայոց համար: Իսկ Հայկի և Բելի ճակատամարտը տեղայնացվում է Վանա լճից արևելք, այսինքն՝ բավական հեռու Հարքից: Ճակատամարտի տեղն էլ հայկական ավանդական պատկերացումներում առանձնապես աչքի չընկնող մի վայր է, և այն ևս կարող է պատմական ինչ-որ հիմք ունենալ (այդտեղ կարող էր գտնվել հայերի հնագույն մի կենտրոն): Այս համատեքստում հատկանշական է, որ Վանա լճի հյուսիսում են տեղայնացած առավել ակնառու հայերեն ստուգաբանություն ունեցող հին տեղանունները՝ սեպագիր *Arşania*, *Arşiani*, *Alia*, *Tuaraşinie* *hubi* (տե՛ս ստորև, էջ 126-130):

Շատ ավելի պատմական են Հայկի հաջորդների տեղայնացումներն ու տեղաշարժերը: Այսպես՝ պատմական՝ իրական ակունքներ պիտի ունենա Հայկի անդրանիկ որդի Արամանյակի՝ Այրարատ նահանգում Արարատյան դաշտում հաստատվելը (այսինքն՝ հավանական է, որ հնագույն հայերը Այրարատ են անցել Հարքից): Առասպելաբանական գործոններով կամ նահանգների հեղինակությամբ պայմանավորված լինելու դեպքում Հայկը կարող էր սկզբնապես հաստատվել Այրարատում, հետո անցնել այլ շրջաններ: Այսպիսով, Հայկից հետո Այրարատում է կենտրոնանում հայոց տիեզերքի արարումը, ապա և պատմությունը: Հայկի ոստանը Հարքում կարելի է կոչել «նախնական Հայաստան»: Իսկական Հայաստանը սկսվում է Արամանյակից և Այրարատից, որտեղ և տեղայնացվում է հայոց

տիեզերածնության հիմնական մասը (մայրաքաղաքի կառուցումը, շրջակա երկրամասերի բնակեցումը ևն):

Մյուս կարևոր էտապը Արամի կողմից Հայաստանի սահմանների լայնացումն է «բոլոր կողմերից» (իրականում, ըստ Խորենացու բերած նյութի հարավ-արևելքից, հարավից և արևմուտքից), ընդ որում՝ Արամի բնիկ ուստանը նույնպես Այրարատն էր: Այստեղից պիտի սկիզբ առնեին Արամի և նրա հետևորդների դեպի հարավ և արևմուտք՝ Կապադովկիա նվաճողական արշավանքները: Շատ ավելի պատմական են ազգածին ավանդության վերջին՝ Արայի և Շամիրամի զրույցները. Շամիրամ-Շամմուրամաթը, ինչպես նշվել է, Ասորեստանի մ.թ.ա. IX դարավերջի պատմական թագուհի էր, որի կերպարն առասպելականացել էր տեղի հին ժողովուրդների մեջ: Հայոց ավանդությամբ նրան են վերագրվում Ուրարտուի հետ կապված հին երևույթները՝ սեպագիր արձանագրությունները, Վան քաղաքի («Շամիրամակերտ»), Մինուա արքայի ջրանցքի («Շամիրամի առու») կառուցումը ևն:

Ազգածին ավանդության մեջ որպես հակառակորդ կողմ հանդես են գալիս Հայաստանի հարավի՝ Միջագետքի տիրակալները: Առասպելը, ինչպես ասվեց, իր էությամբ արտաժամանակյա է. նրանում իրար կարող են խառնվել տարբեր դարաշրջանների եղելություններ: Ըստ այդմ՝ Հայկի և Բելի, Արամի և Բարշամի (Նան Նինոսի), Արայի և Շամիրամի հակադրությունները կարող են համադրվել Հայկական լեռնաշխարհի և Միջագետքի նախապատմական և վաղ պատմական հարաբերությունների հետ: Միջագետքի և Հայկական լեռնաշխարհի հարավային ու հարավարևմտյան տարածքները մշտական շփման մեջ են գտնվել ամենահնագույն՝ նախապատմական ժամանակներից: Ավելի ուշ Հայկական լեռնաշխարհի հարավն ուղղակի ընդգրկվում է միջագետքյան մշակույթային ոլորտ: Այս համատեքստում հատկանշական են լեռնաշխարհի հարավից միջագետքյան Ուրուկյան մշակույթի դուրս մղումը տեղական Կուր-արաքսյան մշակույթի կրողների կողմից մ.թ.ա. չորրորդ հազարամյակի վերջին, իրեն աստվածացրած աքքադական արքա Նարամսինի նվաճումները Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմուտքում մ.թ.ա. III հազարամյակի վերջին (հմմտ. Բել)¹⁰³, ապա՝ Ասորեստանի և Հայկական լեռնաշխարհի

¹⁰³ Մովսիսյան 1997, 24-25:

բնակիչների պատերազմները մ.թ.ա. երկրորդ հազարամյակի վերջին դարերում և ուրարտական դարաշրջանում:

Էական են նաև Հայկյանների հակառակորդների անունները: Բելի անունը, ինչպես ասվել է, հանգում է սեմական *b'l* «տեր» արմատին, որը հանդես է գալիս որպես մեծ աստվածների՝ Էնլիլի, Մարդուկի կոչում, ապա և մի շարք դիցանունների բաղադրիչ (Բաալ Շամին, Մալաքբել ևն) և անկախ դիցանուն (Բալու, Բաալ), իսկ Բարշամինը սիրիական Բաալ Շամինի աղավաղված ձևն է¹⁰⁴: Շամիրամի ամուսնու՝ Նինոսի անունը պատմական չէ և գալիս է մ.թ.ա. V-IV դդ. հույն հեղինակ Կտեսիասից: Այդ անվանաձևը, տիպիկ *-ոս* վերջավորությամբ, ի հակադրություն Շամիրամի, հունական է (պատմական Շամիրամի՝ Շամուրամաթի ամուսինը Շամշի-Ադադ V-ն էր, իսկ Շամիրամի հունական անվանաձևն է Սեմիրամիս): Ակնհայտ է, որ Շամիրամի կերպարը, ի հակադրություն Նինոսի, չի գալիս հունական աղբյուրից, այլ ունի հին տեղական արմատներ: Նինոսը, ինչպես նշում է Խորենացին, երբեմն նույնացվել է Բելի հետ: Հաշվի առնելով միջագետքյան Բել դիցանվան մասին ասվածը՝ կարելի է կարծել, որ հունական աղբյուրի հորինված Նինոսն էլ անբաժանելի է ուն- տարրով միջագետքյան (շումերական) դիցանուններից¹⁰⁵:

Առաջին Հայկյանների ավանդության վերջին դրվագներն արդեն մոտենում են իրական պատմությանը: Ասորեստանի արքա Թիգլաթպալասար I-ը (1114–1076թթ. մ.թ.ա.) պատմում է իր հաղթանակի մասին մուշքերի, ուրումացիների և կասկ/ապիշլացիների ցեղերի դեմ, որոնք գրավել էին Հայկական լեռնաշխարհի հարավարևմտյան որոշ շրջաններ: Արամի և Նրա տոհմակից Մշակի անունները երբեմն համադրվում են ուրումացիների և մուշքերի ցեղանունների հետ. այդ կերպարները կարող են համարվել համապատասխան ցեղերի էպոնիմներ (տե՛ս ստորև, էջ 117–119, 154): Ավանդությունը Արամին և Մշակին հիշում է Կապադոկիայում, Մաժակ քաղաքի կառուցման առթիվ, իսկ այլ

¹⁰⁴ Հետաքրքիր է, որ այլ հնդեվրոպական ավանդություններում ևս ի հայտ է գալիս հերոսի հակառակորդի՝ սեմական աստված Բելի հետ համադրելի մի կերպար, տե՛ս Petrosyan 2007. Պետրոսյան 2009. Петросян 2010:

¹⁰⁵ Nin-ը պատմական ժամանակներում նշանակել է «տիրուհի», բայց «տեր» իմաստով հանդես է գալիս մեծաքանակ արական աստվածների անուններում՝ Նինուրտա, Նինգիրսու, Նինագու ևն, այսինքն՝ սեմական *b'l*-ի շումերական համապատասխանությունն է:

տվյալներ հնարավորություն են տալիս նրանց տեղայնացնել Սասուն-Մուշում: Քննությունը ցույց է տալիս, որ ազգածին ավանդության Արամ-Մշակ զույգը համապատասխանում է «Սասնա ծռեր» էպոսի՝ Կեղծ Վակիդիի և Շարաֆ խանի հաղորդած հնագույն տարբերակի Սանասար-Մուշ զույգին՝ Սասունի և Մուշի էպոսիմեներին¹⁰⁶, որտեղ Սանասարն Արամի կերպարի ժառանգն է, իսկ Մշակը՝ Մուշի նվազականը (*Մուշ-ակ*)¹⁰⁷:

Արամ նահապետը, ինչպես և Շամիրամը, իրենում ամփոփում է ինքնապելաքանական, ի պատմական կերպարներ: Նրա անունը նույնական է Ուրարտուի առաջին հայտնի արքա Արամուի անվանը (վերջին ծայնավորի կանոնավոր կորստով): Առասպելի տրամաբանությամբ Արամն անխուսափելիորեն իրենում պետք է ներառեր նույնանուն պատմական արքայի (շուրջ 860-840թթ. մ.թ.ա.) հիշողությունը: Իսկ Շամիրամը նրա կրտսեր ժամանակակիցն է՝ Ասորեստանի թագուհի Շամուրամաթը (մ.թ.ա. մոտ 811-806թթ.): Սա հնարավորություն է տալիս ժամանակագրել ազգածին ավանդության վերջին փուլը ուրարտական պետության ձևավորման և առաջին արքաների դարաշրջանով (մ.թ.ա. IXդ. երկրորդ կես):

Ակնհայտ է, որ Ուրարտուի ձևավորումը հիմք դրեց Հայկական լեռնաշխարհի պատմության և բնակչության զարգացման ու կոնսոլիդացման՝ ժողովրդագրոյացման մի նոր փուլի: Բայց կարևոր է, որ հայերն իրենց որպես ժողովուրդ ձևավորումը ժամանակագրել են նախաուրարտական ժամանակներով և միայն դրա ավարտը՝ Ուրարտուի սկզբնավորման փուլով: Այդպես պետք է մեկնաբանվի ազգածին ավանդության վերջին՝ Արա Գեղեցիկի և Շամիրամի ճյուղը, որով առասպելի տրամաբանությամբ վերջանում է առասպելաբանական ժամանակը, և սկսվում է իրական պատմությունը:

«Նախահայկյան բնակչության» ավանդությունը

Ըստ Խորենացու գրքի՝ Հայաստանը բնակեցվել է երկու փուլով: Ջրհեղեղից հետո Քսիսուբերեսի որդի Սեմը գնում է

¹⁰⁶ Տեր-Ղևոնդյան 1978. տե՛ս նաև Աբեղյան Ա., 385 հտն. Հարությունյան, Բարթիկյան 1975:

¹⁰⁷ Петросян 2002, 151.

հյուսիս-արևմուտք և երկու ամիս հանգրվանում մի լեռան շրջանում, որը Սիմ է կոչում իր անունով: Նրա կրտսեր որդիներից Տարբանը իր երեսուն որդիներով, տասնհինգ դուստրերով ու նրանց ամուսիններով բնակեցնում է մերձակա հովիտը, որը նրա անունով կոչվում է *Տարան* (հետագայում՝ Տարոն): Այս ավանդությունն իբր պատմել է մի հույն փիլիսոփա՝ Օլիմպիոդորոս անունով՝ վերագրելով այն Հունաստանի գեղջուկներին՝ ըստ մի կորած գրքի, բայց Խորենացին այն հաստատում է «արամազնեայ» (հայ) ծերունիների հին անգիր երգերով: Խոսելով Հայկի և նրա սերունդների Հայաստանում տարածման մասին՝ նա մի քանի անգամ նշում է, որ Հայկից առաջ Կադմոսի երկրում, Հարբում, Արարատյան դաշտում և Տարոնում սակավաթիվ մարդիկ են ապրել, որոնք ենթարկվել են Հայկին և Հայկյաններին՝ հայերին:

Դժվար է ասել, թե ինչպիսին է եղել Տարբանի ավանդության իրական ժողովրդական՝ հայ ծերունիների երգած տարբերակը: Այն ուսումնասիրության հետաքրքիր թեմա կլիներ, բայց Խորենացին միշտ առավելությունը տալիս է գրավոր, հատկապես հունական աղբյուրներին: Ինչևէ, այս պատմության մեջ ևս ակնհայտ են հին միջագետքյան, հունական և աստվածաշնչյան ազդեցությունները (Քսիսութբեսը, ինչպես ասվեց, Նոյի շումերական անվան հունական տարբերակն է, Սեմը՝ Նոյի որդին): Պարզ է և բերվող ստուգաբանությունների երկրորդային, հարմարեցված բնույթը, օրինակ՝ Սեմ > Սիմ, Տարբան > Տարան զարգացումները լեզվաբանորեն անընդունելի են:

Հաշվի առնելով հայոց լեզվի հնդեվրոպական ծագումը՝ հեշտ է այդ ավանդությունն ընկալել որպես Հայաստանի հին՝ ենթադրյալ ոչ հնդեվրոպական բնիկների մասին հիշողություն: Բայց աշխարհի բազում ժողովուրդների ավանդություններում պատմվում է իրենցից առաջ իրենց երկրում ապրած հին բնակիչների մասին, որոնց հաճախ գերբնական, արտասովոր հատկանիշներ են վերագրվել (հսկաներ, թզուկներ, աստվածություններ, դյուցազուններ): Այդպիսի ավանդություններ ունեն և հայերի հարևան կովկասյան ժողովուրդները, որոնց հնագույն տեղական արմատները դժվար է վիճարկել¹⁰⁸ (եթե հայերենին ազգակից հնդեվրոպական լեզուները

¹⁰⁸ Այսպես, ըստ Լեոնտի Մրովելու, Վրաստանում վրացիներից առաջ ապրել են *բունորքերը*, որոնց անունը մեկնաբանվում է հենց որպես «բուն

տարածված են Հնդկաստանից մինչև Իսպանիա, ապա հյուսիսկովկասյան և քարթլեական լեզուները խոսվում են միայն Կովկասում և մերձակայքում): Ակնհայտ է, որ այդ ավանդություններում, ինչպես միշտ, առասպելականն ու պատմականը հանդես են գալիս կողք կողքի, իրար միահյուսված, իրարից դժվար տարբերակելի վիճակում¹⁰⁹: Եվ անընդունելի կլինեք դրանցում որոշակի պատմական հիշողությունների բացառումը:

Հայագիտության մեջ կարծիք է եղել, որ Նախահայայան բնակիչները պետք է լինեին Հայաստանի հին բնիկները՝ ուրարտացիները¹¹⁰: Մինչդեռ Հայկի երեք որդիներից Խոռը Նույնական է սեպագիր իսրի-ին և համարվում է խուռիների էպոնիմը¹¹¹ (սեպագրում *o* հնչյունը հաղորդվում է որպես *ու*, հմմտ. խուռիների ցեղանվան այլալեզու ձևերը՝ եբր.՝ *ḥōrī*, հուն.՝ *χοραϊός*), իսկ Մանավազը, որը հիշեցնում է ուրարտական արքայական Մինուա անունը, կարող է համարվել վերջինիս իրանական ազդեցությամբ ձևափոխված մի տարբերակը, այսինքն՝ մեկնաբանվել որպես ուրարտացիների էպոնիմ¹¹²: Այսպիսով, Հայկի երեք որդիները, կարելի է

թուրքեր» (Цыган 1979, 28, 58-60, прим. 79, 85a), շատ կովկասյան ժողովուրդների էպոնիմների համաձայն իրենցից առաջ իրենց երկրներում բնակվել են Նարթերը (առասպելական մի ցեղ), արխագական լեգենդներում երկրում առաջ ապրել են թզուկ ածանները, իսկ իրենց Նախնիները եկել են Եգիպտոսից, չեչենական և ինգուշական լեգենդներում Նրանց Նախնիները եկել են տարբեր վայրերից՝ Արաբիայից, Պարսկաստանից ևն: Այս և մի շարք այլ տվյալների համեմատական քննությունը տես Պետրոսյան 1991ա:

¹⁰⁹ Այս տեսակետից հետաքրքիր է իռլանդական ավանդությունը, ըստ որի՝ իրենց երկիրը բնակեցվել է մի քանի ալիքով, իրար հաջորդող ռասաներով, որոնցից առաջինները ֆանտաստիկ արարածներ են՝ ոգիներ և Նախաքրիստոնեական աստվածություններ, և միայն վերջին եկվորներն են իռլանդացիների Նախնիները: Ընդ որում՝ հնդեվրոպական համատեքստում կան հետաքրքիր զուգահեռներ հայ և իռլանդական ավանդությունների միջև, տես Petrosyan 2012a:

¹¹⁰ Տեր-Մկրտչյան 1979, 412-413. Սարգսյան 1988, 121-123:

¹¹¹ Խոռի՝ որպես խուռիների էպոնիմի վերաբերյալ տես Ղափանցյան 1961, 114-115. Զահուկյան 1981, 55:

¹¹² Մանաուզ անունն իրանական է (ՀԱՆԲ Գ, 196), բայց հարց է առաջանում, թե ինչպես կարող է Հայկի որդին, արմեն և խուռի ցեղերի էպոնիմների եղբայրը իրանական անուն ունենալ: Ըստ այդմ, կարծում են, որ Մանավազը Մինուայի մի ձևափոխությունն է, տես Markwart 1901, 162.

ասել, անձնավորում են հայոց ազգածագմանը մասնակցած երեք ցեղերին (հայեր, խուռիներ և ուրարտացիներ): Այս համատեքստում ևս լավագույն զուգահեռը հռոմեականն է. հին Հռոմի նախնական բնակչության երեք հարյուրյակները բաժանված էին ոչ միայն ըստ հնդեվրոպական երեք ֆունկցիաների. նրանց նաև տարբեր էթնիկական ծագում էր վերագրվում՝ լատիններ, էտրուսկներ և սաբիններ¹¹³: Այսպիսով, հայոց ազգածին ավանդության մեջ պահպանվել են հիշողություններ խուռաուրարտական ցեղերի վերաբերյալ, բայց ներառված Հայկյանների տոհմի և ոչ «նախահայայան բնակչության» մեջ: Արամանյակի՝ իր հոր երկիրը թողնելը կրտսեր եղբայրներին և տեղաշարժը Արարատյան դաշտ չի համապատասխանում առասպելի տրամաբանությանը. նահապետի ավագ որդին պիտի ժառանգեր հոր ուստանը, ինչպես տեղի է ունենում սովորաբար: Պատմական համատեքստում այն կարող է արտացոլել խուռաուրարտական ցեղերի ճնշման տակ հնագույն հայերի տեղաշարժը դեպի հյուսիս:

«Նախահայայան բնակչությանը» խուռաուրարտական ծագում վերագրելը միայն մտահայեցողական է և ելնում է այն գաղափարից, որ եթե Ուրարտուի արձանագրությունների լեզուն ուրարտերենն է, ապա այդ լեզվի կրողները հենց պիտի նույնացվեն հայերից առաջ Հայաստանում ապրողների հետ: Իրականում դա խնդրի լուծման որոնման միայն առաջին մոտեցումը կարող է լինել: Մինչդեռ լեռնաշխարհի սեպագիր անվանաբանության գիտական քննությամբ Հայաստանի «նախահայկյան» բնակչության ուստանում՝ Տարոնում, ի հայտ են գալիս խաթերենի, իսկ լեռնաշխարհի հարավում և արևելքում՝ խեթերենի հետքեր (տես ստորև, էջ 99-100, 105-109): Ինչպես ասվեց, Տարբան անունից Տարոն (հնում՝ Տարան) անցումը լեզվաբանորեն անհավանական է. այստեղ, ինչպես և նման լեզներենների նշանակալի մասում, գործ ունենք «ժողովրդական ստուգաբանության» հետ: Ընդհանրապես Տարբան անվան զուգահեռները հայտնի են հին Փոքր Ասիայից¹¹⁴: Եվ անկախ այդ անվան կասկածելի

Հյուբշման 1907, 376-377. Ինգլիզյան 1947, 30. Пиотровский 1959, 31. Арутюнян 1970, 388. Զահուկյան 1987, 441. Петросян 2002, 194 ևն:

¹¹³ Dumézil 1992, 87-88.

¹¹⁴ Տարբանի անունը նույնական է արևմտափոքրասիական Կարիա երկրի Ταρβαν/Τρυσαν ցեղատեղանվան հետ, որի համար հիշվում են բազմաթիվ նման ձևեր Փոքր Ասիայում (Տրեբեննա, Տարբասոս եւ այլն), ապա և Թրակիայում (Гиндин 1981, 93-95): Տարբանի մասին այլ տեղեկու-

վավերականությունից, առավել հավանական է նրա անունով խորհրդանշվող ցեղին՝ Տարոնի «նախահայկական բնակչությանը» խաթական (և/կամ նրան ազգակից կասկական) ծագում վերագրելը:

Այլ ժողովուրդների ավանդությունները հայերի ծագման մասին

Սրանցից առավել հայտնին, արժեքավորը, հետաքրքիրն ու անկախը Ստրաբոնի բերած հունական ավանդությունն է, որը վերագրվում է Ալեքսանդր Մակեդոնացու երկու զորավարներին՝ Կիրսիլոս Փարսալացուն և Մեդիոս Լարիսացուն (Ստրաբոն XI.4.8, XI.14.12. տե՛ս և Տրոգոս Պոմպեոսի աշխատության Հուստինոսի համառոտագրությունը՝ XLII.2.3): Ըստ դրա՝ հայերի նախնին էր արգոնավորդների արշավի մասնակիցներից մեկը՝ Արմենոսը: Նա ծագումով Հունաստանի հյուսիսից էր՝ Թեսալիայի Արմենիոն քաղաքից: Նրա ուղեկիցները հաստատվում են «Ակիլիսենեում և Սիսափրիտիսում մինչև Կալաքենե և Ադիաբենե»: Ակիլիսենեն, որ անվանաբանորեն համապատասխանում է Բարձր Հայքի Եկեղյաց գավառին, հնում ավելի մեծ է եղել և ընդգրկել է նաև շրջակա գավառների տարածքները¹¹⁵: Այս ավանդությունը, թեև հակասում է Հայկի և առաջին Հայկյանների՝ Հայաստանում հաստատման և տեղաշարժերի վերաբերյալ հայկական աղբյուրների տվյալներին, չափազանց հետաքրքրական է: Ակիլիսենեի շրջանը սովորաբար համարվում է հին Հայաստանի կենտրոնը, որը շատ ուսումնասիրողների կարծիքով հենց «նախնական Հայաստանն» է:

Հայտնի է նաև հունագիր հրեա հեղինակ Հովսեպոս Փլավիոսի (մ.թ. Ու.) հաղորդած հայերի ծննդաբանությունը: Ըստ այդ աղբյուրի՝ հայերը ծագում են Արամոսի որդի Ուլոսից (Ant. Jud. I.6.4):

թյուններ չկան, բայց նրան՝ որպես Տարոնի էպոնիմ, համապատասխանում է աղջիկ Տարոնը՝ Խանդութի նախատիպը, Սանասարի որդի Մուշի (=Դավիթ) սիրեցյալը: Կեղծ Վակիդիի ներկայացրած պատմության մեջ աղջիկ Տարոնն ամուսնանում է Սարուանդի որդու հետ, իսկ վերջինիս համապատասխան կերպարը Խորենացու մոտ Սեմ-Ջրուանի որդի Տարբանն է, տե՛ս Աբեղյան Ա, 385 հտն. Ս. Հարությունյան, Բարթիկյան 1975. Տեր-Ղեւոնդյան 1978. Պետրոսյան 1997, 77-78. Петросян 2002, 155-156:

¹¹⁵ Адонц 1908, 54. Բ. Հարությունյան 2001, 105-106:

Աստվածաշնչում արամեացիների նախնին կոչվում է Արամ, այսինքն՝ հայերի երկրորդ էպոնիմի հետ նույնական անունով: Հունական ձևով ներկայացված Ուլոսը, ըստ այդմ, պիտի համապատասխանի աստվածաշնչյան (արամեացի) Արամի որդի Հուլին¹¹⁶: Հայոց Արամ նահապետի որդի Արայի Գեղեցիկ մակդիրը, որն առանձին անվանաբանական արժեք ունի, ծագում է հնդեվրոպական *wel- «տեսնել» արմատից: Հնարավոր է, որ Ուլոսի՝ հայերի նախնի համարվելը ոչ թե մի հին հեղինակի կամայական հնարանք է, այլ երկու ազգերի նույնանուն էպոնիմի՝ Արամի և Նրա որդիների (Հուլ/Ուլոս և Արա Գեղեցիկ < *wel-) նույնացման արդյունք, հմմտ. և *գեղնի*՝ «հայ» ցեղանունը: Այսպիսով, հայերը հրեական ավանդույթում մտցվել են ազգերի աստվածաշնչյան ծննդաբանությունների շարքը¹¹⁷: Թվում է, թե այս ծննդաբանության մեջ էական դեր է կատարել *արամեացի* և *արմեն* ցեղանունների նմանությունը¹¹⁸:

Ըստ Լեոնտի Մրովելու (XII.) հաղորդած վրացական ազգածին ավանդության, հայոց նախնին էր Թարգամոսի որդի Հաոսը (= Թորգոմի որդի Հայկ)՝ Նեբրոթին (= Նեբրովթ) սպանողը, վրացիների և հյուսիսկովկասյան մի շարք ժողովուրդների անվանադիր նախահայրերի ավագ եղբայրը և տիրակալը: Երկրորդ եղբայրն էր Քարթլոսը՝ վրացիների նախնին¹¹⁹: Հայերենը, վրացերենը և հյուսիսկովկասյան լեզուներն իրար ազգակից չեն, և այս լեզունդը նշանակալի մասով գալիս է ոչ թե ժողովրդական ակունքներից, այլ երկրորդային ստեղծագործություն է՝ ձևավորված Հայկյանների հայկական ավանդության հիման վրա: Թերևս չի կարելի բացառել, որ դրա հիմքում ընկած է Հայկյանների վերաբերյալ Մար Աբասի և Նրա հետևորդներ Խորենացու ու Սեբեոսի ավանդած պատմության մեկ այլ տարբերակ (թեև այստեղ էլ ենի հայտ գալիս նույն աստվածաշնչյան դեմքերը. հմմտ. Թարգամոսի և Նեբրոթի կերպարները):

¹¹⁶ Հովսեպոսի գրքի որոշ հրատարակություններում նախընտրությունը տրվում է Ուլոսի Ուրոս ընթերցմանը (տե՛ս Կրկյաշարյան 1976, 56, 102, ծան. 129), բայց Աստվածաշնչի Հուլ անունը ցույց է տալիս, որ ճիշտ ձևն է Ուլոսը, որը և առավել ընդունվածն է գրքի հրատարակություններում:

¹¹⁷ Հայերի այս ծննդաբանության վերաբերյալ տե՛ս Պետրոսյան 1997, 160. Петросян 2002, 86, 176:

¹¹⁸ Ի դեպ, կարծիք կա այդ ցեղանունների ընդհանուր ծագման մասին, տե՛ս Diakonoff, Kashkai 1981, 11. Петросян 2002, 176-177.

¹¹⁹ ՀԺՊՔ, 26-31, Цулая 1979, 21 слл.:

Ինչ վերաբերում է Քարթլոսի և Նրա հաջորդների ավանդություններին, դրանք ինքնուրույն և արժեքավոր նյութ են պարունակում վրացիների ազգածագման և նախապատմության վերաբերյալ¹²⁰:

Արաբ հեղինակներ Յակուտի և Դիմաշկիի երկերում (XI-XII դդ.), Հայաստանի հիմնադիրը Արմինին էր՝ Նոյի որդի Հաբեթի սերնդից¹²¹: Այս տեղեկությունը չափազանց երկրորդային է և հատուկ քննարկում չի պահանջում:

Ներկայացված օտար ավանդությունները, ինչպես և հայկականը, առաջին հերթին առասպելաբանական են: Դրանցից անկախ արժեք ունի թերևս միայն հունականը, որտեղ հայերի նախնին կապվում է հույների՝ առաջին անգամ Հայաստանի մերձակա շրջաններում հայտնվելու առասպելական հիշողության հետ: Ինչպես և առաջին Հայկյանների ավանդությունները, այն նույնպես արժանացել է գերքննադատական վերաբերմունքի և երբեմն համարվել ամբողջովին արհեստածին մի հնարանք, հունակենտրոն տրամադրությունների արտացոլում, որի հետ դժվար է համաձայնել¹²²: Արմենոսը չի հիշվում արգոնավորդների հանրահայտ ցանկերում, ինչը կարող է ակնարկել նրա՝ երկրորդային կերպով արգոնավորդների առասպելի մեջ ներառվելը: Նրա արգոնավորդ և Արմենիոն քաղաքից լինելու տեղեկությունը վերցված է ակնհայտորեն ոչ թե տեղացի հայերի բնիկ լեգենդից (տեղացիները չէին կարող մանրամասներ իմանալ արգոնավորդների առասպելի, Թեսալիայի և Նրա Արմենիոն քաղաքի մասին), այլ հունական մտքի ստեղծագործություն է, Արմենիա և Արմենիոն համահունչ անվանումների համապատասխանեցման արդյունք: Նկատենք նաև, որ Արմենոսը հայերի օտարալեզու *արմեն* կոչման և ոչ բուն հայկական *հայ* ցեղանվան էպոնիմն է: Բայց և այնպես, վերլուծությունը ցույց է տալիս, որ Արմենոսի լեգենդն իր ամբողջության մեջ չի կարող հունական հեղինակների հնարանքը լինել: Նախ, արգոնավորդների առասպելը և նրանում հիշվող անուններն ունեն հնդեվրոպական զուգահեռներ (տես ստորև, էջ 174-176),

¹²⁰ Меликишвили, Лордкипанидзе 1989, 251-260. տես և Պետրոսյան 1997, 70-72. 2014դ. Петросян 2002, 181-182. 2014a:

¹²¹ Տեր-Ղևոնդյան 1971:

¹²² Пиотровский 1959, 123. Капанця 1956, 168-169. Перевалов 2010. Այդ մոտեցման քննադատությունը տես Дьяконов 1968, 206, прим. 40:

այսինքն՝ ավանդական աղբյուրներ: Հայոց առաջին նախնիները տեղայնացվում են եկեղիքում, այսինքն՝ հին Հայաստանի տարածքում, որը, ըստ բազում ուսումնասիրողների, հայոց հնագույն կենտրոնն էր: Արգոնավորողների եկած երկիրը հնագույն աղբյուրներում կոչվում է Հայասա անվան հիմքի հետ միանգամայն համադրելի ձևով՝ Այա, որը հետագայում է միայն նույնացվել Կոլխիդայի հետ: Ավելին՝ հնարավոր է, որ արգոնավորողների առասպելում պահպանվել են այդ երկրամասի՝ ուրարտական արքաների կողմից նվաճման դարաշրջանի որոշ հիշողություններ¹²³:

Արգոնավորողների առասպելը, իմիջիայլոց, բալկանյան ծագում է վերագրում նաև մեդացիներին (Մեդեայի որդի Մեդոս/Մեդեսոսից): Դա չի համապատասխանում իրականությանը, ինչն արժեզրկում է հայերի բալկանյան ծագման վարկածը ևս: Լեգենդն այսպիսով վստահելի չէ հայերի ենթադրելի հեռավոր, մինչհայաստանյան հայրենիքի տեղայնացման հարցում: Բայց տեսականորեն պատմական կարող է համարվել «նախնական Հայաստանի» աշխարհագրական տեղայնացումը՝ Արմենոսի հետևորդների հաստատումը Ակիլիսենեում: Ինչպես կարող է լուծվել հայկական և հունական լեգենդներում «նախնական Հայաստանի» տեղայնացումների հակասությունը: Ո՞ր աղբյուրին առավելություն տալ, կամ ինչպես հաշտեցնել այս տեղեկությունները: Հունական ավանդությունը, թեև ավանդված ավելի վաղ, երկրորդային է՝ հավելված արգոնավորողների առասպելին և առաջնային արժեք պիտի ունենա հայկականը: Բայց վերջինս էլ մեզ է հասել քրիստոնյա պատմիչների կողմից մշակված և Աստվածաշնչի տվյալներին համապատասխանեցված վիճակում: Ինչևէ, եթե հավատանք այս լեգենդների որոշակի պատմականությանը, հնարավոր է որոշ ենթադրություններ անել.

ա. Արմենոսի հետևորդների՝ Ակիլիսենեում և մերձակայքում հաստատվելը վկայում է միայն այն մասին, որ երբ հույները

¹²³ Արմենոսի ավանդության և արգոնավորողների առասպելի քննությունը հնդեվրոպական առասպելաբանության և հայոց նախապատմության համատեքստերում տես Պետրոսյան 1997, 62-102. 2015. 2015ա. 2015բ. Петросян 2002, 119. 2016: Հետաքրքիր է, որ ըստ մի կարծիքի՝ առասպելն արտացոլում է ոչ միայն հին հույների տեղաշարժերը Հելլադայից Կոլխիդա, այլ հիշողություն է նրանց ենթադրյալ նախնական հայրենիքից (Հայկական լեռնաշխարհի և շրջակա տարածքներ) հույների գաղթերի մասին, տես Гамкрелидзе, Иванов 1984, 908:

ծանոթացել են հայ-արմենների հետ, նրանք կենտրոն ունեին Ակի-լիսենեում և մերձակայքում: Եվ իրոք, Հերոդոտոսը (I.72, 180) հայերին տեղայնացնում է Եփրատի և Հալիսի վերին հոսանքներում, այսինքն՝ Ակիլիսենեում և ավելի արևմուտք (բայց ոչ միայն այդտեղ)¹²⁴:

բ. Արմենոսը, ի տարբերություն Հայկի, խորհրդանշում է հայերի ձևավորմանը մասնակցած մեկ այլ՝ հայերից գոնե որոշ չափով տարբեր մի ցեղ (հմմտ. *արմեններ* և *հայեր*), որը, իրոք, կարող էր բալկանյան կապեր ունենալ: Բայց այս դեպքում հարց է առաջանում, թե ինչո՞ւ են Արմենոսի հետևորդները հաստատվում Հայաստայի շրջանում, որը համահունչ է *հայ* և ոչ *արմեն* ցեղանվանը:

գ. Արմենոսը հայոց նախնին է, և հայկական լեգենդում Հայկի կողմից Հարքում ոստան հիմնելը հայերի ուշ տեղաշարժերի արտացոլում է: Ըստ այդմ՝ առասպելի հնագույն տարբերակում Հայկը Հարք պիտի գար ոչ թե հարավից (Բաբելոնից), այլ (հյուսիս)արևմուտքից: Իմիջիայլոց, հայերի տեղաշարժը մոտավորապես այդպես են պատկերացնում հայասական վարկածի որոշ կողմնակիցներ (Գ. Ղափանցյան, Գ. Սարգսյան և այլք):

Այսպիսով, մեր խնդրի համար երկու կարևոր՝ հայկական և հունական լեգենդները, որոնց վավերականությունը դժվար է վիճարկել, որոշակիորեն հակասում են իրար: Այդ հակասությունն ի հայտ է գալիս նաև հայ ժողովրդի ծագման մյուս հարցերի քննության ժամանակ:

¹²⁴ Հայաստանի սահմանների վերաբերյալ Հերոդոտոսի տեղեկությունների քննարկումը տես Գ. Սարգսյան 1988, 64-71:

ԳԼՈՒԽ II

ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԻ ՀՆԱԳՈՒՅՆ ՑԵՂԱՅԻՆ ՈՒ ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԺԱՌԱՆԳՈՐԴՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ

Հայկական լեռնաշխարհի վերաբերյալ գրավոր տեղեկությունները հայտնի են միջագետքյան աղբյուրներից, մ.թ.ա. III հազարամյակից: Սկսած մ.թ.ա. II հազարամյակից՝ այստեղ ձևավորվում են նշանակալի ցեղային և վաղ պետական կազմավորումներ:

Մ.թ.ա. III հազարամյակի և II հազարամյակի սկզբի շումերական, աքքադական, էբլայական, հինասորեստանյան և մարիական աղբյուրներից հայտնի մի շարք տեղանուններ, մասամբ վստահաբար, մասամբ ենթադրաբար տեղայնացվում են Հայկական լեռնաշխարհում կամ մերձակայքում¹²⁵: Այս երկրների և բնակավայրերի տեղադրության, պատմության և էթնիկական իրադրության մասին տեղեկություններ չկան կամ գրեթե չկան: Դրանց մի մասը հասել է հետագա դարաշրջաններ. Զուպա - ուրարտ.՝ Ծուփանի - հայ.՝ Ծոփք, Մալիդ - խեթ.՝ Մելիդ, ուրարտ.՝ Մելիտեա (ներկա Մալաթիա), Կուդմուխ - ասուր.՝ Կատմուխ/Կադմուխի - հայ.՝ Կադմեայ տուն: Առավել շատ են ու նույնացման ենթակա Հայկական լեռնաշխարհի ծայր հարավի և արևմուտքի երկրամասերի անունները, որոնց մի մասը բավական վստահորեն է տեղայնացվում:

Մ.թ.ա. III հազարամյակում Միջագետքի և Սիրիայի գրավոր մշակույթ ունեցող հնագույն երկրները (Շումեր, Աքքադ, Էբլա) դեռևս չէին սահմանակցում Հայկական լեռնաշխարհին: Իսկ արդեն մ.թ.ա. II հազարամյակում ձևավորվում են նոր երկրներ, որոնք սահմանակցում են, իսկ երբեմն էլ ընդգրկում Հայկական լեռնաշխարհի որոշ հարակից տարածքներ (հարավում և արևմուտքում): Ստորև համառոտ տեղեկություններ ներկայացնենք դրանցից ամենակարևորների վերաբերյալ՝ արևմուտքից արևելք հերթականությամբ:

¹²⁵ Մ.թ.ա. III հազարամյակի Հայկական լեռնաշխարհի տեղանունների վերաբերյալ տե՛ս Մովսիսյան 2005. Bobokhyan 2008, 294-307:

Խեթական թագավորություն: Հին աշխարհի հզորագույն տերություններից էր մ.թ.ա. II հազարամյակում: Մայրաքաղաքն էր Խաթուսան՝ ներկայիս Բողազքոյը, Անկարայից ոչ հեռու: Պատմությունը բաժանվում է մի քանի փուլի՝ հին, միջին և ուշ: Հատկապես վերջին փուլում՝ մ.թ.ա XV դարից հետո, նշանակալի ազդեցություն է ունեցել Հայկական լեռնաշխարհի արևմտյան շրջանների վրա. հարձակումներ է գործել դեպի այդ շրջանները, այդ թվում՝ Հայասա, տիրել է երկրների, դինաստիական կապեր հաստատել տեղի իշխանավորների հետ ևն: Կործանվել է մ.թ.ա. XIII դ. սկզբին՝ «մերձավորարևելյան ճգնաժամի» ընթացքում: Դրանից հետո, մինչև մ.թ.ա. VIII դ., կայսրության Խաթի անվանումն անցնում է Սիրիայից մինչև Կիլիկիա, Կապադոկիա և Հայկական լեռնաշխարհից արևմուտք ընկած տարածքներում ձևավորված, այսպես կոչված, «ուշխեթական» կամ «սիրիախեթական» կոչվող մի քանի փոքր թագավորությունների, որոնք հավակնում էին լինել հզոր կայսրության ժառանգները:

Խեթական տերության հիմնական լեզուն եղել է խեթերենը, հնդեվրոպական լեզվաընտանիքի անատոլիական լեզուներից մեկը, որով նշանակալի քանակությամբ աղբյուրներ են պահպանվել: Գրագրության մեջ օգտագործվել են նաև խաթերենը, լուվիերենը, արքադերենը և խուռիերենը: Փոքր Ասիայի՝ Խեթական տերության տարածքների բնակչության մեջ, բացի խեթերից, եղել են նաև խաթեր, լուվիացիներ, խուռիներ, կասկեր ևն: Տերության գոյության վերջին փուլում էական է եղել խուռիական տարրի և մշակույթի դերը: Պատմության վերջին դարից արդեն նույնիսկ մայրաքաղաք Խաթուսայում բարձրացել է լուվիերենի դերը, որը դարձել է ուշխեթական երկրների հիմնական լեզուն:

Հայկական լեռնաշխարհի մ.թ.ա. II հազարամյակի պատմական իրադարձությունների մասին մեր տեղեկությունների մի նշանակալի մասը մեզ է հասել խեթական աղբյուրներից: Իսկ տերության անկումից հետո ասորեստանյան, ուրարտական և բաբելոնյան աղբյուրների ավելի մեծաքանակ տեղեկությունները լրացվում են հետխեթական երկրների հիերոգլիֆային լուվիական աղբյուրների նյութով¹²⁶:

¹²⁶ Խեթական և հետխեթական պետությունների և Հայկական լեռնաշխարհի երկրների հետ նրանց հարաբերությունների վերաբերյալ տես Герни 1987. Косян 1994. Bryce 1999. 2012. ՀՀԵՊ, 165-224:

Միտտաննի: Սա հզոր, բայց թույլ կենտրոնացած մի մեծ թագավորություն էր մ.թ.ա. շուրջ 1500-1300թթ.՝ տեղայնացած Հյուսիսային Միջագետքի ու Սիրիայի տարածքներում, որն ընդգրկել է նաև Հայկական լեռնաշխարհի հարավային և հարավարևմտյան որոշ շրջաններ (Վանա լճի հարավից մինչև Ադճնիք և Ծոփք): Մայրաքաղաքն էր Վաշուկանին՝ Խաբուր գետի վերին հոսանքների շրջանում: Պատմության սկզբնական փուլում նրա գլխավոր հակառակորդն էր Եգիպտոսը, հետո՝ Խեթական պետությունը: Խեթերի, իսկ հետո Ասորեստանի հարվածներից թուլանալով՝ ի վերջո վերածվեց Ասորեստանի մի մարզի: Օգտագործվող գրագրության լեզուներն էին խուռիերենը և արքադերենը, բնակիչների նշանակալի մասն էլ բաղկացած էր խուռիներից ու սեմիտներից¹²⁷: Այս երկրի ամենահետաքրքիր առանձնահատկություններից էր այն, որ իշխող տարրի անունները ծագումով արիական (հնդիրանական) են, հնարավոր է՝ հնդարիական՝ ազգակից Հնդկաստանի հնդեվրոպական լեզուներին: Բացի իշխանավորների արիական անուններից, պահպանվել են նաև հին հնդկական աստվածներ Ինդրայի, Վարունայի և Նասատյաների տեղական համապատասխանությունների անունները, մի շարք արիական ծիավարական տերմիններ ևն: Կարծում են, որ նրանք արդեն իրենց պատմության արշալույսին լեզվով և մշակույթով հիմնականում խուռիացել էին՝ պահպանելով միայն տոհմական որոշ անուններ ու տերմիններ:

Ասորեստան: Հին աշխարհի մեծահամբավ և հզորագույն կայսրությունն էր, թերևս աշխարհի առաջին «գերտերությունը», որը զբաղեցրել է Հյուսիսային Միջագետքը մինչև Հայկական լեռնաշխարհի հարավային շրջանները, իսկ իր հզորության դարաշրջաններում՝ շատ ավելի մեծ տարածքներ: Պատմությունը բաժանվում է երեք՝ հին, միջին և ուշ փուլերի և ընդգրկում է մ.թ.ա. II հազարամյակի սկզբից մինչև մ.թ.ա. VIIդ. վերջն ընկած դարաշրջանը: Պատերազմել և հաճախ հաղթել է հին աշխարհի կարևոր պետություններին (Խաթի, Միտտաննի, Բաբելոն, Եգիպտոս, Ուրարտու, Մաննա ևն): Հիմնական մայրաքաղաքներն են եղել Աշշուրը և Նինվեն: Ասորեստանցիները սեմական ժողովուրդ էին, որ խոսում էին արքադերենի մի բարբառով (ասուրերեն): Երկրի հնագույն

¹²⁷ Միտտաննիի մասին տես Աветисян 1984. Вильхельм 1992. ՀՀԵՊ, 389-403:

լեզուներից էր խուռիերենը, իսկ հյուսիսում՝ Հայկական լեռնաշխարհի հարավում խոսել են նաև այլ՝ մեզ անհայտ լեզուներով: Մ.թ.ա. II հազարամյակի վերջից՝ արամեացիների արշավանքներից հետո, երկրում սկսում է հական դեր կատարել սեմական մեկ այլ լեզու՝ արամեերենը, որը տերության գոյության վերջին դարում փաստորեն դուրս է մղում ասուրերենը՝ այն թողնելով որպես միայն պաշտոնական լեզու:

Ասորեստանը կարևորագույն դեր է կատարել Հայկական լեռնաշխարհի պատմության մեջ: Տեղի հնագույն ցեղերը հաճախ միավորվել են Ասորեստանի արքաների արշավանքների դեմ, իսկ Ուրարտու պետության ձևավորումը կարող է դիտվել որպես այդ արշավանքների պատասխան պաշտպանական արձագանք: Մեծ է եղել նաև Ասորեստանի մշակութային ազդեցությունը: Այսպես՝ ուրարտական պետական մշակույթը իր բազում դրսևորումներով ձևավորվել է ասորեստանյանի հիման վրա: Հայկական լեռնաշխարհի վերաբերյալ հնագույն տեղեկությունների մի շատ կարևոր մասը, որն ընդգրկում է մ.թ.ա. II հազարամյակի սկզբից մինչև մ.թ.ա. VIIդ., գալիս է ասորեստանյան աղբյուրներից¹²⁸:

Մաննա: Այս թագավորությունը հայտնի է մ.թ.ա. I հազարամյակի սկզբներից: Գտնվել է Ուրմիա լճից հարավ և արևելք ընկած տարածքներում և տիրել է Հայկական լեռնաշխարհի որոշ հարևան հատվածների: Մայրաքաղաքն էր Իզիրտուն (Զիրտա): Եղել է ուրարտական և ասորեստանյան արշավանքների և նվաճումների թատերաբեմ, առավելագույն հզորության է հասել մ.թ.ա. VIIIդ. վերջերին: Ի տարբերություն Հայկական տարածաշրջանի ավելի հին և կազմակերպված պետությունների՝ սեփական գիր չի ունեցել:

Մաննայի հիմնական բնակիչների լեզուն հայտնի չէ: Անվանաբանության տվյալներից դատելով՝ երկրում եղել է, ի թիվս այլոց, նաև իրանական և խուռիական բնակչություն: Շատ հետաքրքիր է, որ Ուրարտուի գլխավոր աստված Խալդին պաշտվել է նաև այս երկրում¹²⁹:

¹²⁸ Ասորեստանի վերաբերյալ հսկայական գրականությունից մեր թեմայի համար պետք է առանձնացնել ՀՀԵՊ, 54-113:

¹²⁹ Մաննայի պատմության վերաբերյալ տե՛ս Кашкай 1977. RLA 7, 5/6, 340-342. Գրեկյան 2002. այնտեղ Խալդիի պաշտամունքի մասին՝

Հայկական լեռնաշխարհի երկրներ

Մ.թ.ա. II հազարամյակից Հայկական լեռնաշխարհում ի հայտ են գալիս բավական ճշգրիտ տեղայնացվող և նշանակալի զարգացման ու հզորության հասած մի շարք երկրներ՝ ցեղամիավորումներ և պետական կազմավորումներ: Դրանցից խեթական աղբյուրներում հիշվում են Հայասա-Ացցին, Իսուվան, Ալզին, ասորեստանյաններում՝ Ալզին, Ուրուատրին, Նաիրին, Դայենին, Շուպրիան, Կադմուխին ևն: Ավելի ուշ մ.թ.ա. առաջին հազարամյակի ուրարտական աղբյուրներում հիշվում են ևս երկու հզոր կազմավորումներ՝ Դիաուխին և Էթիունին:

Ստորև՝ կարճ տեղեկություններ որոշ կարևոր երկրների և կազմավորումների վերաբերյալ:

Շուբուր, Շուբարտու: Արդեն հնագույն աղբյուրներում Միջագետքից հյուսիս տարածվող շրջանների անվանումն է, որ հանդես է գալիս տարբեր ձևերով՝ Շu.bur^{KI}, Su.bur^{KI}, Su.bir^{KI}, Su^{KI}, աքքադ.՝ ^{KUR}Šubartu, ^{KUR}Subartum, ^{KUR}Šubari, ուգարիտ՝ Šbr ևն: Մ.թ.ա. երկրորդ հազարամյակից Միջագետքում Šubaru տերմինով անվանել են խուռիներին, իսկ VII-VI դարերում Subartu-ն դարձել է «Ասորեստան» անվանման բարձր ոճի հոմանիշ¹³⁰: Շուբուր/Շուբարտուն աշխարհագրական անվանում էր և չի կրել էթնիկական բնույթ: Ընդ որում՝ հայտնի չէ, թե որքան հյուսիս է տարածվել այն: Հնագույն ժամանակներում այս երկիրը բնակեցված էր հավանաբար տարասեռ ցեղերով: Սկսած III հազարամյակի վերջից այն հիմնականում խուռիական էր:

Մ.թ.ա. II հազարամյակի կեսերից ասորեստանյան աղբյուրներում հիշվում են «շուբարական» մի շարք երկրներ՝ Կադմուխին, Պուշու, Մումմուն, Ալզին, Ամադանին, Նիխանին, Տեբուրզին, Պուրուլումզին, Պաբխին ևն: Այս երկրները գոնե հիմնականում խուռիական էին: Խուռիական են նաև Ալզիի և Կադմուխիի մեզ հայտնի արքաների անունները: Ասորեստանյան աղբյուրներում մ.թ.ա. XI-VII դդ. Շուբուր անվան մի տարբերակով է կոչվել Շուբրիան՝ Սասունը և մերձակայքն

Ն. Տիրացյան 2001:

¹³⁰ Տես, օրինակ, Gelb 1944, 23 ff., 84 f. Diakonoff 1984, 132-134, n. 11, 16, 25; 147, n. 20. Хачикян 1985, 6:

ընդգրկող երկիրը (Šubria՝ «երկիր» կամ «քաղաք» գաղափարագրով): Հետաքրքիր է, որ Նոյնիսկ մ.թ.ա. I հազարամյակում, երբ խուռիե-րեն աղբյուրները վաղուց արդեն անհետացել էին տարածաշրջանից, Շուբրիայի արքաների անունները խուռիական էին¹³¹:

Նաիրի: Մ.թ.ա. XIII դարից ասորեստանյան արքաներն իրենց հյուսիսային արշավանքներում հիշում են Նաիրի երկրները: Այս-պես՝ Թուկուլթինիսուրտա I-ը (մ.թ.ա. 1224-1208) հիշում է Նաիրի երկրների 43, իսկ Թիգլաթպալասար I-ը (1114-1076) 60, ապա և՛ 23 «արքաների» (իրականում՝ ցեղային առաջնորդների), որոնց նրանք հաղթում են: Այդ երկրները գրավում էին ընդարձակ տարածքներ Վանա լճի շրջանում և տարածվում մինչև հեռու հյուսիս. երկրները լեռնային են, հիշվում են «հզոր» սարեր: Նաիրին առանձնացվում է Շուբարիից. Թուկուլթինիսուրտայի տիտղոսների մեջ հիշվում է՝ «Շուբարի երկրի, Կուտի երկրի և Նաիրիի բոլոր երկրների արքա»:¹³² Տարբեր դարաշրջաններում Նաիրին գրավել է տարբեր տարածք-ներ, հիմնականում Վանա լճից արևմուտք և հարավ-արևմուտք: Հե-տագայում ուրարտական Սարգուրի I և Իշպուլիսի արքաներն իրենց ասուրերեն արձանագրություններում Նաիրի են անվանում իրենց երկիրը՝ ուրարտ. Բիաինիլին: Նեղ իմաստով Նաիրի է կոչվել Վա-նա լճից հարավ ընկած մի երկիր՝ Խուբուշկիան: Նաիրի տերմինը վերջին անգամ հիշվում է մ.թ.ա. VII դ. վերջին ասորեստանյան ար-քա Սարգոն II-ի կողմից:

Նաիրին ևս աշխարհագրական հասկացություն էր՝ զուրկ որո-շակի էթնիկական հիմքից: Ասորեստանցիների համար այն հյուսի-սային լայնատարած լեռնային տարածքների անվանումն էր, ինչ-պես դրանից առաջ միջագետքցիների համար Շուբարտուն: Նաիրի երկրների լեզվական իրադրության վերաբերյալ կարելի է ասել, որ նրանց լեզուները, ըստ եղած նյութի (այսինքն՝ պահպանված ան-վանումների), չեն նույնացվում և մնում են անհայտ¹³²: Այդ երկրների շարքում առանձին տեղ էր գրավում Դայենին, որը հաճախ նույ-նացնում են ուրարտական աղբյուրների Դիաու(ե)խի երկրի հետ: Գ. Մելիքիշվիլին փորձել է ցույց տալ, որ Դայենի/Դիաուխի լեզուն

¹³¹ Շուբրիայի վերաբերյալ տես Դ.Саркисян 1988.

¹³² Նաիրիի մասին տես Salvini 1998a.

եղել է խուռիական¹³³։ Բայց բերված մեկնաբանությունները և խուռիական անունների հետ համեմատությունները շատ վարկածային են, երբեմն՝ անընդունելի¹³⁴։

Ուրուատրի/Ուրատրի, Ուրարտու։ Ուրարտու երկրանունը հանդես է գալիս IX-VIII դդ. ասորեստանյան աղբյուրներում (Urartu)։ Այդ անվան նախնական ձևերն են համարվում Uraṭri/u-ն (մ.թ.ա. XIII դ.) և Uraṭri-ն (մ.թ.ա. XI դ.)՝ տեղայնացված Հայկական լեռնաշխարհի ծայր հարավում՝ Կորդուքից մինչև Վերին Ջաբ գետի վերին և միջին հոսանքներն ընկած շրջանում կամ դրանից դեպի արևմուտք¹³⁵։ Սալմանամասար I-ը հիշում է Ուրուատրիի ութ լեռնային երկիր, որոնք նա նվաճում է, իսկ Աշուրբեկալան՝ Ուրատրիի մի շարք երկրներ և լեռներ, որոնց մի մասը համընկնում է Ուրուատրիի երկրների հետ։ Ուրարտուի վերաբերյալ մանրամասն կխոսվի ստորև։

Ալզի։ Alzu, Alzi, Alše ձևերով ի հայտ է գալիս մ.թ.ա. II հազարամյակի կեսից խեթական և ասորեստանյան աղբյուրներում։ Այն թագավորություն էր, հիշվում են երկու արքաներ։ Տեղայնացվում է Տիգրիսի վերին հոսանքների շրջանում։ Սահմանակից էր Իսուվա երկրին, որի հետ սահմանները երբեմն փոփոխվել են։ Անվանումով և հիմնական տարածքով համապատասխանում է հայկական Աղձնիքին, որը Մեծ Հայքի նահանգներից մեկն էր¹³⁶։ Արդեն մ.թ.ա. XIV-XIII դդ. հայտնի արքաների անունները խուռիական են¹³⁷։

Իսուվա, Ծուփանի։ Մ.թ.ա. XVII դարից խեթական, ապա և ասորեստանյան աղբյուրներում Արածանիի և Եփրատի միախառնման շրջանում հիշվում է Իսուվա թագավորությունը (İšua, Išua)։ Մ.թ.ա. XIII դ. Իսուվայի արքայատոհմը հավանաբար ազգակցորեն կապված է եղել խեթական կայսրության արքայատոհմի հետ, թեև

¹³³ Меликишвили 1950. 1954, 111 сл.

¹³⁴ Дьяконов 1968, 121.

¹³⁵ Пиотровский 1944, 43-46. Меликишвили 1947. 1954, 150-155. Арутюнян 1970, 17. Salvini 1995, 18 ff.

¹³⁶ Ալզիի վերաբերյալ տե՛ս հատկապես Головлева 1978։

¹³⁷ ՀՀԵՊ, 390։

խեթերի և Ասորեստանի հակամարտության ժամանակ անցել է Ասորեստանի կողմը¹³⁸։ Ուրարտական դարաշրջանից Իսուվան հիշվում է այլ անունով՝ ուրարտ.՝ *Supani*, հին հուն.՝ Σωφηνή, հայ.՝ Ծոփք (հնագույն հնչողությամբ՝ *Ծոփա*)։ Այս տեղանունը համեմատում են շատ ավելի վաղ ավանդված (շումերական, հինբաբելոնյան, հինասորեստանյան) *Zupana*, *Zuppa*, *Supanu*, *Suwa/Zubi* ձևերի հետ¹³⁹։ Այսպիսով, երկրի ուրարտական և հայկական անվանումը, հնարավոր է, ավելի հին է, քան խեթական Իսուվան։ Մ.թ.ա. XIII դարից հայտնի արքաների անունները խոտիական են։

Հայասա։ Մ.թ.ա. XIV-XIII դդ. խեթական աղբյուրներում Հայկական լեռնաշխարհի արևմուտքում հիշվում է Խայասա երկիրը (սեպագիր՝ *Hayaša*), որը հայերենում *հայ* ցեղանվան հետ համահնչունության պատճառով սովորաբար տառադարձում են Հայասա¹⁴⁰։ Այն Հայկական լեռնաշխարհի՝ խեթական կայսրության հետ սահմանակից երկրներից ամենանշանակալին էր։ Սահմանները պարզ չեն. սովորաբար կարծում են, որ այն ընդգրկել է Եփրատի վերին հոսանքների շրջանը՝ Կարինը ներառյալ, այլ կարծիքով՝ (նաև) Տուրուբերանը։ Խեթական տեքստերում երբեմն հերթագայում է Ացցի (*Azzi*, հաճախ տառադարձում են Ազզի) երկրի հետ և այդ պատճառով ներկայացվում է նաև որպես Հայասա-Ացցի։ Մ.թ.ա. XIII դարում Հայասան արդեն չի հիշատակվում, այլ միայն Ացցին. այդ երկրները միացել էին, կամ եթե ոչ՝ խեթական արքաներն այլևս չէին հասնում մինչև Հայասա։ Հայասայի սահմանները, հատկապես արևելքում, անհայտ են. տարբեր հեղինակներ այն հասցրել են մինչև Վանա լիճ և Սև ծով¹⁴¹։

Մ.թ.ա. XIV դարի առաջին տասնամյակներից հայասացիները պարբերաբար ասպատակում էին խեթական Վերին երկիրը՝ Եփրատի և Հալիսի վերին հոսանքների միջև ընկած շրջանը։ Խեթական արքա Սուպալիլուլումասի ջանքերով Հայասայում արքա է հռչակվում ագցեցի Խուկկանան, որին կնության է տրվում խեթական

¹³⁸ Իսուվայի վերաբերյալ տե՛ս հատկապես Քոսյան 1997։

¹³⁹ Bobokhyan 2008, 297, 303.

¹⁴⁰ Հայասայի վերաբերյալ տե՛ս հատկապես Forrer 1931. Капанцян 1947. Քոսյան 2004ա. 2008. 2013. 2016. Ղազարյան 2009։

¹⁴¹ Քոսյան 2004, 47-50։

արքայի քույրերից մեկը: Իմիջիայլոց, Խեթական տերության արտաքին քաղաքականության մեջ այդօրինակ քույր-թագավորությունների ստեղծման սովորույթը սկսվում է հենց Հայասայից: Հայասան ռազմականապես հզոր երկիր էր՝ Խեթական Մուրսիլիս II արքայի դեմ կռվող Հայասայի արքա Աննիայի զորքն ուներ 10000 հետևակ զինվոր և 700 մարտակառք: Խեթա-հայասական հակամարտություններում որոշակի կարգավորիչ դեր ուներ Հայասայի հարավային հարևան Իսուվան, որը մ.թ.ա. XIII դարի կեսերին վերածվել էր Խեթական տերության քույր-թագավորության և միաժամանակ Հայկական լեռնաշխարհի արևմուտքում՝ նրա գլխավոր դաշնակցի:

Մ.թ.ա. XIII դարի վերջերից Ացցիի վերաբերյալ գրավոր աղբյուրներն ընդհատվում են: Մ.թ.ա. XIIդ. առաջին տասնամյակներում Խեթական տերությունը քայքայվեց (մ.թ.ա. շուրջ 1180թ.): Համատարած ճգնաժամի հետևանքով մեկը մյուսի հետևից քաղաքական ասպարեզից դուրս եկան Խեթական տերության հարևանությամբ գտնվող պետությունները, այդ թվում՝ Իսուվայի թագավորությունը: Հայասայում այդ դարաշրջանի քաղաքական զարգացումներն անհայտ են: Այն թերևս նույնպես զերծ չի մնացել ճգնաժամի բացասական հետևանքներից:

Բիաինիլի: Ուրարտական աղբյուրներում այդպես է կոչվում իրենց երկիրը, որը որոշ չափով համապատասխանում է ասորեստանյան Ուրարտու, ավելի վաղ՝ Նաիրի երկրանուններին: Բիայնիլին պիտի որ լիներ Ուրարտուի պատմական կորիզը, ուրարտական կայսրության ոստանը: Գիտության մեջ ընդունված է կարծել, որ Bia(i)nili անվանումը, որը տեքստերում հանդիպում է սովորաբար թեք հոլովաձևերով (Biaina, Bianaiddi, Biane, Biainaue ևն), պահպանվել է հայկական Վան, սեռական հոլովի Վանայ տեղանվան մեջ (ուրարտական սեպագրում b-ն կարող է ընթերցվել v կամ w)¹⁴²: Տեսականորեն հնարավոր է, բայց ոչ պարտադիր, որ այն ծագում է ինչ-որ *բիա(հ)* կամ *վիա(նի)* ցեղանունից, որն էլ իբր ուրարտացների ինքնանվանումն է: Ընդհանրապես ուրարտերենի կրողների՝ «ուրարտացիների» ինքնանվանումն անհայտ է¹⁴³:

¹⁴² Տե՛ս օրինակ, Хачикян 1985, 38, 134, КУКН, 501: Այս մեկնաբանության որոշ խնդրահարույց կողմերի վերաբերյալ տե՛ս Աղաբեկյան 2013, 242-243:

¹⁴³ Ուրարտական արքաների կոչումներից մեկն է «Šurili-ի արքա», որի

Դիաուխի: Այս երկիրը հիշվում է ուրարտական աղբյուրներում և տեղայնացվում Կարինի շրջանում՝ դեպի հյուսիս և հյուսիսարևելք, Եփրատի վերին և Ճորոխի միջին հոսանքներում, այսինքն՝ այնտեղ, որտեղ ժամանակին գտնվել է Հայասան (ըստ ավանդական տեղայնացման): Երկրի անվանումը պահպանված է համարվում հետագա հայկական Տայք նահանգի անվան մեջ (հուն.՝ Τάοχοι, վրաց.՝ Тао)¹⁴⁴: Դիաուխին, ի տարբերություն շրջակա երկրների, մեկ միասնական թագավորություն էր. հիշվում են մի քանի արքաների անուններ: Երկրի հզորության մասին պատկերացում կարող է տալ այն, որ Ուրարտուի Մինուա արքան Դիաուխին անվանում է «հզոր»¹⁴⁵: Սա միակ դեպքն է, երբ ուրարտական աղբյուրը հակառակորդ երկիրն անվանում է այդպես. նույնիսկ ժամանակի հզորագույն «գերտերություն» Ասորեստանի մասին նման մակդիր երբեք չի օգտագործվել: Մ.թ.ա. VIII դ. կեսերից հետո այլևս չի հիշատակվում: Ավելի ուշ մոտավորապես նույն շրջանում հիշվում է Կուլխա երկիրը, որը նույնացնում են հետագա Կողքիս/Կուլխիդայի հետ (այն զբաղեցրել է Դիաուխիի որոշ տարածքներ):

Ինչպես ասվեց, Նաիրի երկրների շարքում առանձնանում էր հզորագույն Դայենի (հաճախ ներկայացվել է որպես Դայանի/Դայանևի) երկիրը, որը հաճախ նույնացնում են Դիաու(ե)խին: Այս նույնացումը վիճարկվում է (Դայենին կարող է տեղայնացվել Ծոփքից մինչև Վանա լիճ ընկած տարածքում)¹⁴⁶: Անկախ դրանից, ակնհայտ է, որ Եփրատի և Ճորոխի վերին հոսանքների շրջանում

հիման վրա Ի. Դյակոնովը վերականգնում է šuri- ցեղանունը, տե՛ս Дьяконов 1988, 59-60. Diakonoff 1992, 53. Petrosyan 2002, 180: Այլ կարծիքներ շուրի տերմինի վերաբերյալ տե՛ս Wilhelm 1993, 135 ff. Payne, Ceylan 2003, 197-199: Ներկայումս Šurili-ի հավանական թարգմանությունը ենթադրվում է «տերություն», տե՛ս Գրեկյան 2016ա, 431, գրականությամբ:

¹⁴⁴ Այս երկրի մասին տե՛ս հատկապես Меликишвили 1950. 1954, 58-61. 1959, 175-181. Меликишвили, Лордкипанидзе 1989, 192-205: Այլ մեկնաբանություններ տե՛ս հմմտ. Դ. Սարգսյան 2003. Դումիկյան 2011: Թեև թվում է, թե երկրի հիմնական տարածքները գտնվել են հետագա Տայքից արևմուտք, բայց նշենք, որ Արգիշթի I-ի՝ ներկայիս թուրք-վրացական սահմանից ոչ հեռու հայտնաբերված մի արձանագրության մեջ, ի թիվս այլոց, խոսվում է Դիաուխիի դեմ հաղթանակի մասին, տե՛ս Salvini 2006, 75:

¹⁴⁵ КУКН 53, 2.

¹⁴⁶ Կարազյոզյան 1978. Slattery 1987. Քոսյան 2013, 52-53, ծան. 19, գրականությամբ:

գոյություն է ունեցել մի պետական միավոր՝ թագավորություն, որը մինչև Ուրարտուի ձևավորումը եղել է հզորագույնը և առավել կազմակերպվածը Հայկական լեռնաշխարհում:

Էթիունի/Էթիուխի: Դիաուխիից արևելք, ըստ ուրարտական աղբյուրների, գտնվում էր Էթիունի կամ Էթիուխի երկիրը (Etioni, Etiuhi): Այն զբաղեցնում էր մեծ տարածքներ՝ մոտավորապես հետագա Մեծ Հայքի կենտրոնական Այրարատ նահանգը¹⁴⁷: Ուրարտական արքաները, սկսած առաջիններից մինչև վերջինները, մշտական թշնամության մեջ են եղել այդ երկրի հետ: Ի հակադրություն Դիաուխիի, որն Արգիշթի I-ից հետո այլևս չի հիշատակվում, Էթիունին հիշատակվում է թշնամական երկրների շարքում Ուրարտուի անկման նախօրեին (մ.թ.ա. VII դ. կեսերին): Այս երկիրը, ի հակադրություն Ալզիի, Իսուվայի, Հայասայի և Դիաուխիի, դեռևս չէր միավորվել որպես մեկ միասնական թագավորություն: Աղբյուրները հիշում են նրա բազմաթիվ «երկրներ» (Էրիախի, Ուազա, Ուդուրի Էթիունի ևն), շատերն իրենց «արքաներով»: Բայց արդեն Սարգուրի II-ի տարեգրության մեջ հիշվում է մի անձ որպես «Էթիուխիի արքա», այսինքն՝ հնարավոր է, որ երկիրն այդ ժամանակ (մ.թ.ա. VIII դ. կես) արդեն միավորվել էր մեկ արքայի իշխանության տակ: Էթիունիի սկզբնական իրադրությունը հիշեցնում է մի քանի դար առաջ Ասորեստանի արքաների կողմից հիշվող Նաիրի երկրների վիճակը իրենց բազում արքաներով: Այսինքն՝ լեռնաշխարհի քաղաքական զարգացումը, ինչպես և տնտեսականն ու մշակութայինը, սկսվում էր հարավից և արևմուտքից՝ Հին Արևելքի զարգացած կենտրոնների հետ սահմանակից շրջաններից, և դանդաղ շարժվում արևելք ու հյուսիս: Ինչպես ժամանակին Ուրարտուն էր ձևավորվել Ասորեստանի դեմ պայքարում, այդպես էլ Էթիունին էր ձևավորվում Ուրարտուի դեմ պայքարում: Սևանա լճի արևմտյան ափին հիշվում է Ս(e) duri Etiuhi երկիրը, որը մի քանի «թագավորությունների» միություն էր և պիտի որ էթնիկապես ու քաղաքականապես կապված լիներ Էթիունիի հետ:

¹⁴⁷ Էթիունիի վերաբերյալ տես Меликишвили 1950. 1954, 56-57. Խանզադյան 1979, 120-132. Арутюнян 1985, 262-263. Պետրոսյան 1997, 143-147. Петросян 2006, 188-190:

Հին երկրների պատմական ժառանգորդության խնդիրը

Հայկական անվանաբանության մեջ պահպանվել են մ.թ.ա. II-I հազարամյակներից հայտնի բազմաթիվ տեղանուններ (Ալզի-Աղծ-նիք, Ծուփանի-Ծոփք, Դիաուխի-Տայք, Կադմուխի-Կադմեանք, Էն-զիտե-Անծիտ, Աբիլիանիխի-Աբեղեանք, Ուելիքունի-Գեղաքունի, Ծուլուկու-Ծղուկ ևն)¹⁴⁸։ Անվանումների պահպանվածությունը կարևոր նյութ է տալիս այդ շրջանների պատմության վերաբերյալ։

Իսկ ինչ է տեղի ունեցել այն դեպքերում, երբ հնագույն տեղանունը չի պահպանվել։ Կարելի է նկատել, որ նոր անվանումով կոչված երկիրը կամ մարզը երբեմն պահպանել է իր հիմնական էությունը և մնացել մոտավորապես նույն սահմաններում և նույն քաղաքական դերում։ Եվրոպայի պատմության մեջ նման երևույթի մի վառ օրինակ է Գալլիա-Ֆրանսիա անցումը։ Երկիրը փոխեց իր անվանումը իրենում նոր հաստատված և իշխող գերմանական ցեղի՝ ֆրանկների անունով (սկզբնապես միայն Հյուսիսային Գալլիան), բայց իր բնակչության մեծամասնությամբ, մշակութային ժառանգորդությամբ և լեզվով շարունակեց հին, ռոմանականացած Գալլիայի ավանդույթը։ Գալլիա-Ֆրանսիա անվանափոխությունը պայմանավորված էր էթնիկական նոր տարրի՝ ֆրանկների ներգաղթով։

Բայց արդյոք միշտ է այդպես։ Հայտնի է, որ միևնույն ցեղը կամ ժողովուրդը այլևայլ պատճառներով տարբեր լեզուներում կոչվում է տարբեր անվանումներով։ Այսպես՝ Միտտաննի պետությունը հին եգիպտացիները կոչում էին Մարյաննու, Նախրին կամ Միտտաննի, խեթերը՝ Խուրի, իսկ ասորեստանցիները՝ Խանիգալթատ։ Սրանք համաժամանակյա անվանումներ են։ Բայց երբեմն երկրի տարբեր լեզուներով անվանումները հանդես են գալիս ոչ միաժամանակ։ Գերմանացիներն իրենց կոչում են Deutsch, երկիրը՝ Deutschland (ստուգաբանորեն՝ «ժողովուրդ» արմատից), հռոմեացիները՝ Germania, անհայտ ծագումով, թերևս ինչ-որ ցեղանունից, ֆրանսիացիները՝ Allemagne գերմանական մի ցեղի՝ ալլեմանների, ֆինները՝ Saksa՝ մեկ այլ ցեղի՝ սաքսոնների ցեղանունով, սլավոնները՝ немца (ռուս.)՝ «համր» արմատից, որպես անհասկանալի խոսող՝ համր, ի հակադրություն հասկանալի խոսող սլավոնների։ Սրանց մի մասը

¹⁴⁸ Այս և բազմաթիվ այլ պահպանված տեղանունների վերաբերյալ տես հատկապես Арутюнян 1985։

համաժամանակյա չեն. ասենք՝ Գերմանիա ձևն ավանդված է հնից, Սաքսան՝ ուշ: Ահա և Վրաստանի օրինակը: Վրացիներն իրենց կոչում են *քարթվել-ի*, երկիրը կոչվել է նախ՝ Քարթլի, հետո՝ Սաքարթվելո (նույն *քարթ*- արմատից), հույներն ու հռոմեացիները՝ Իբերիա, հայերը՝ Վիրք, հետո՝ Վրաստան: Նոր լեզուներով Վրաստանը կոչվում է պարսկերեն՝ Գորջեսթան (հնում՝ Գուրջան, Գուրջեստան, հմմտ. թուրք. Գյուրջիսթան), ռուսերեն՝ Գրուզիա, անգլերեն՝ Ջորջիա ևն: Կարելի է կապ ենթադրել հայ. Վիրք և հուն. Իբերիա ձևերի միջև, իսկ նոր լեզուների անվանումների կապն ակնհայտ է (բոլորը հանգում են իրան. *գորջ* ձևին): Բայց ի հակադրություն Գալլիայի և Ֆրանսիայի հայտնի պատմության՝ ոչ մի հիմք չկա, ելնելով հիշյալ անվանումների ավանդման ժամանակագրությունից, ենթադրելու, թե Գերմանիայում առաջ ապրել են գերմանները, հետո՝ ալեմանները, դոյչերը և սաքսերը, իսկ Վրաստանում սկզբնապես ապրել են վիր/իրբերները, իսկ հետո երկրին տիրել են քարթվելներն ու «գորջերը»:

Միանգամայն նման մի երևույթի ենք հանդիպում Հայաստանի պատմության մեջ Ուրարտու-Հայաստան անցման ժամանակ: Անկախ էթնիկական և քաղաքական ժառանգորդության վերաբերյալ եղած տեսակետներից, դա ակնհայտորեն նույն երկիրն է, որը շարունակել է գոյատևել որպես նույն լեռնաշխարհի մեծ մասն ընդգրկող թագավորություն, համադրելի քաղաքական դերով, որը ժառանգել է նախորդ դարերի իր բնակչությունը՝ հիմնականում միևնույն էթնիկական զանգվածը (անկախ որոշ քանակությամբ նոր գաղթականության հնարավորությունից, ինչպիսիք սկյութներն էին), շարունակական պատմությամբ: Ուրարտուի առաջին արքաներ Սարգուրի I-ը և Իշպուինին ասուրերեն արձանագրություններում իրենց երկիրն անվանում են Նաիրի, զուգահեռ ուրարտերեն տեքստում՝ Բիաինիլի, իսկ համաժամանակյա ասորեստանյան տեքստերում այն կոչվում է Ուրարտու: Երկրի այս հին անվանումը պահպանվել է երկար ժամանակ՝ Ուրարտուի անկումից շատ հետո. մ.թ.ա. VI դարից պարսկերեն սեպագիր Արմինա, էլամերեն Խարմինույա կոչվող երկիրը, այսինքն՝ Հայաստանը, բաբելական տեքստերում մինչև մ.թ.ա. IVդ. կոչվել է Ուրաշտու (Ուրարտուի բաբելական ձևով): Նույն երևույթը նկատվում է և Ֆրանսիայի դեպքում, որը երբեմն բարձր ոճով կոչվել է Գալլիա (հմմտ. արևմտահայ. Գաղղիա): Բայց չնայած անվանումների այս հաջորդականությանը,

չափազանց միակողմանի և պարզունակ կլինե՞ր միայն օտարների կողմից տրվող անվանումների հերթագայության հիման վրա պնդել, թե Հայաստանը սկզբնապես բնակեցված է եղել ուրարտացիներով կամ ուրարտներով, որոնց փոխարինել են արմինացիները կամ արմենները՝ հայերը¹⁴⁹։ Մինչդեռ այդ մոտեցումը երկար ժամանակ իշխել է գիտության մեջ։

Այսպիսով, ակնհայտ է, որ չի կարելի երկրի և ցեղի՝ օտարների կողմից տրվող անվանումների հիման վրա միարժեք դատողություններ անել. այդ անվանումները կարող են տարբեր լինել այլևայլ պատճառներով, իսկ նրանց՝ տարբեր ժամանակներում ավանդված լինելը չի կարող համարվել երկրի էթնիկական կազմի փոփոխության միարժեք ցուցիչ։ Ավելի կարևոր է ինքնանվանումը, ինչպես վրացիների դեպքում՝ *քարթվել*-«վրացի», իսկ թե ինչու է տարբեր լեզուներում նույն երկիրը միևնույն բնակչությամբ կոչվել տարբեր ձևերով, այլ խնդիր է։ Սակայն նույնիսկ ցեղային ինքնանվանումը միարժեք ցուցիչ չէ։ Այն ևս կարող է փոխվել, իսկ երկրի էթնիկական բնույթը մնալ նույնը. օրինակ՝ ֆրանսիացիների, ռուսների, բուլղարացիների ներկա ցեղանունները համեմատաբար ուշ երևույթներ են, փոխառություններ (համապատասխանաբար՝ գերմանական, սկանդինավյան և թյուրքական ծագման), մինչդեռ այդ ժողովուրդները խոսում են ռոմանական և սլավոնական լեզուներով, այնպես, ինչպես իրենց նախնիները մինչ այդ՝ նոր ցեղանուններով կոչվելը։ Իսկ հին Գալլիան, դրան հակառակ, ռոմանականացվելուց հետո էլ, թեև խոսում էր այլ լեզվով, բայց շարունակվել էր կոչվել Գալլիա։ Այսպիսով, նման խնդիրները հատուկ քննարկում են պահանջում։

Պատմության ընթացքում երկրները հաճախ ունենում են մի կենտրոն, նախնական մի միջուկ, որի շուրջը հետագայում ձևավորվում են։ Հռոմեական կայսրության համար դա Հռոմն էր, Վրաստանի համար՝ Քարթլին Մցխեթա քաղաքով, Ռուսիայի համար՝ Կիևը, հետո՝ Մոսկվան ևն։ Հայկական լեռնաշխարհում մ.թ.ա. II-I

¹⁴⁹ Իմիջիայլոց, վրացերենում էլ Հայաստանը կոչվում է *Սոմխեթի*, հայերը՝ *սոմեխի*։ Եվ եթե հայտնի չլինե՞ր Հայաստանի պատմությունը, նույն տրամաբանությամբ, ըստ ավանդման ժամանակագրության՝ Ուրարտու, Արմենիա և Սոմխեթի անվանումների շարքի հիման վրա կարելի կլինե՞ր ասել, որ հին ուրարտացիներին փոխարինել են արմենները, սրանց էլ՝ սոմեխները։

հազարամյակներում գոյություն են ունեցել մի շարք պետական կազմավորումներ, այդ թվում՝ հզոր մի կայսրություն՝ Ուրարտուն, մի շարք թագավորություններ՝ Ալզին, Հայասան, Իսուվան, Դիաուխին, և հզոր ցեղային կազմավորումներ՝ Նաիրին, Էթիունին ևն։ Հայկական լեռնաշխարհի նման լեռնային և լայնածավալ երկրամասի բնակչությունը, հատկապես իրարից հեռու գտնվող տարածքներում, տարբերվել է և՛ էթնիկապես, և՛ մշակութային ու քաղաքական զարգացման մակարդակով՝ միայն Ուրարտուի ժամանակ ներգրավվելով մեկ ընդհանուր, բայց և հեղհեղուկ պետականության ներքո։ Սակայն Ուրարտուի երկդարյա գոյությունը, չնայած արքաների անդուլ ջանքերին, բավարար չէր լեռնաշխարհի՝ իրարից շատ տարբեր երկրամասերի միասնականացման և տնտեսական-քաղաքական ու մշակութային համահարթեցման համար։

Մեզ շատ քիչ բան է հայտնի Հայաստանի՝ Ուրարտուին անմիջապես հաջորդող դարաշրջանի պատմության վերաբերյալ։ Որտեղ է եղել նրա կենտրոնը, որտեղ են նստել նրա առաջին տիրակալները։ Այդ մասին հնարավոր է ասել հետևյալը։ Մ.թ.ա. I հազարամյակում Հայկական լեռնաշխարհում առկա էին քաղաքական և էթնոմշակութային միայն երեք շրջաններ, որոնք կարող էին հավակնել հետագա հայկական պետականության սիրտը լինելու՝ Բարձր Հայքը և մերձակայքը՝ արևմուտքում, Այրարատը՝ կենտրոնում, և Վանի շրջանը (Վասպուրականը)՝ հարավում։

Բարձր Հայք

Ստրաբոնի բերած լեգենդից կարելի է եզրակացնել, որ Ակիլիսենեն է եղել հայոց սկզբնական օրրանը, որտեղից նրանք տարածվել են Հայկական լեռնաշխարհում և մերձակայքում։ Քսենոփոնի «Կյուրոպեդիայում» (III.1.34-3.1) որպես մ.թ.ա. VIդ. կեսի հայոց արքայի հիմնական ներքին հակառակորդներ հանդես են գալիս խալդայները¹⁵⁰ (հայ.՝ Խաղտիք)։ Ժամանակին խալդայներին նույնացնում

¹⁵⁰ «Կյուրոպեդիայում» Կյուրոս Մեծ արքայի Հայաստան կատարած այցելության վերաբերյալ տեղեկությունը, որը վիճարկվում էր այդ երկի ոչ վավերական պատմական աղբյուր համարվելու պատճառով, վերջերս իր հաստատումը գտավ նոր բաբելական ժամանակագրության մի տեքստի ճշգրտված ընթերցման շնորհիվ։ Ըստ այդ ճշգրտման՝ մ.թ.ա.

էին ուրարտացիների՝ ուրարտական տերության իշխող վերնախավի հետ: Այս տեսակետը մերժվեց և ներկայումս չի շրջանառվում (Ուրարտուի վերնախավի էթնիկական ծագման վերաբերյալ տես էջ 113-121): Անկախ խալդայների էթնիկական պատկանելության խնդրից, Քսենոփոնի տվյալների հիման վրա կարելի է ենթադրել, որ հնագույն հայոց կենտրոնը մոտ է եղել Խաղտիքին, այսինքն՝ գտնվել է Բարձր Հայքում (բայց միայն տեսականորեն, որովհետև Քսենոփոնը չի ասում, որ այդտեղ է եղել նաև երկրի կենտրոնը): Հերոդոտոսը (I.72, 180) ևս հայերին հիշում է Եփրատի և Հալիսի վերին հոսանքներում, այսինքն՝ նույն տարածքներում և ավելի արևմուտք (բայց ոչ միայն այնտեղ):

Խոսելով հայոց հետագա պատմության մասին՝ Ստրաբոնը նշում է, որ Օրոնտես (= Երվանդ) արքայից հետո, այսինքն՝ մ.թ.ա. II դարի սկզբին, երկիրը երկու թագավորությունների է բաժանվում՝ Անտիոքոս Մեծի զորավարներ Արտաշեսի և Զարիադրեսի միջև (XI.14.15): Նրանք, արքաներ դառնալով մեկը՝ Այրարատում, մյուսը՝ Ծոփքում, ընդարձակում են իրենց տիրույթները՝ գրավելով, ի թիվս այլոց, Կարինը և Դերջանը խալյուրներից ու մոսյունոյկներից, իսկ Ակիլիսենեն՝ կատաոնացիներից (XI.14.5. Կատաոնիան Արևելյան Կապադոկիան էր, Մալաթիայի շրջանը և մերձակայքը): Այսպիսով, ըստ Ստրաբոնի, Ակիլիսենեն հայոց օրրանն էր, բայց հենց ինքն էլ գրում է, որ հայերն Ակիլիսենեն հետագայում գրավել են կատաոնացիներից մ.թ.ա. երկրորդ դարասկզբին: Այն միացվել է սկզբում Ծոփքի հայոց թագավորությանը (հեղինակը հիշում է, որ Ակիլիսենեն սկզբնապես ենթակա է եղել Ծոփքին՝ XI.14.12), ապա Տիգրան Մեծի օրոք անցել Մեծ Հայքին (XI.4.5, 12, 15): Ստացվում է, որ այս տարածքները հայերից անցել են կատաոնացիներին և հետո միայն վերամիավորվել հայոց պետություններին¹⁵¹:

Հայոց հնագույն պատմության կարևոր հարցերից է մ.թ.ա. II հազարամյակի Հայկական լեռնաշխարհի հզորագույն պետական

547-ին Կյուրոսի արշաված և նվաճած երկրի անվան առաջին նշանը պետք է ընթերցել Ս (մնացած նշանները չեն պահպանվել), այսինքն՝ այդ երկիրը Ուրաշտուն է՝ Հայաստանի բաբելական անվանումը, տես Oelsner 1999/2000, 378 ff. Rollinger 2003, 314-316. Stronach 2007: Հայաստանի արքան և նրա որդի Տիգրանն էլ համապատասխանում են Խորենացու Երվանդ Սակավակյացին և նրա որդի Տիգրան Երվանդյանին:

¹⁵¹ Այս հարցի վերաբերյալ տես և Տիրացյան 1962, 10-12:

կազմավորման՝ Հայասա-Ացցիի հետագա ճակատագիրը: Ինչպես տեսանք, երկիրը մ.թ.ա. XIII դարից հիշվում է միայն Ացցիի անունով, իսկ նույն դարավերջից չի հիշատակվում նաև վերջինս: Բայց դրա փոխարեն մ.թ.ա. XII դարից, այսինքն՝ խեթական կայսրության անկմանն անմիջապես հաջորդող դարաշրջանից, ասորեստանյան աղբյուրները Հայկական լեռնաշխարհում հիշում են Դայենի հզոր երկիրը՝ Նաիրի լայնատարած երկրների առաջատարին: Ուրարտուի առաջին արքա Արամուի ժամանակներում (մ.թ.ա. IXդ.) այն լեռնաշխարհի հզորագույն երկիրն էր Ուրարտուից հետո: Հետագա ուրարտական աղբյուրները հիշում են Դիաուխի երկիրը՝ նույնպես հզորագույնը տարածաշրջանում, որը հաճախ, թեև վիճելիորեն նույնացնում են Դայենիի հետ: Դիաուխին ի վերջո կարողանում են հաղթել և թերևս զրկել պետականությունից Մինուան և Նրա որդի Արգիշթի I-ը (մ.թ.ա. VIIIդ.): Դիաուխի ժառանգներն են համարվում Քսենոփոնի նկարագրած տառքները (Τάοχοι)՝ անկախ մի ցեղ Հայաստանում (մ.թ.ա. Vդ.): Դա արդեն ակնհայտորեն վաղ հայկական հոգնակի *տայոք ձևն է. մի ցեղանուն, որը պահպանվել է Տայք (սեռ. հոլ.՝ Sawng) նահանգի անվան մեջ:

Մեր գիտելիքները այդ հին պետական և ցեղային կազմավորումների սահմանների վերաբերյալ չափազանց կցկտուր և սահմանափակ են, իսկ նրանց սահմաններն էլ իրենց հերթին միշտ փոփոխական և հեղիեղուկ են եղել: Այսպես՝ Հայասայի արևելյան սահմանները մեզ անհայտ են կամ վիճելի, իսկ ուրարտական աղբյուրների տեղեկությունները կապված են, ընդհակառակը, Դիաուխիի հարավային և արևելյան սահմանների հետ: Պատմականորեն հայտնի Տայք նահանգը հավանաբար զբաղեցրել է Դիաուխիի միայն արևելյան մասը: Ընդհանրապես տեղանունների տեղաշարժը միանգամայն բնական և հաճախ հանդիպող երևույթ է: Անկախ ամեն ինչից կարելի է կարծել, որ Հայասան և Դիաուխին (և թերևս նաև Դայենին) տեղայնացած են եղել միևնույն տարածքներում կամ առնվազն նշանակալի չափով համընկել են¹⁵²:

Ի. Դյակոնովը գտնում է, որ Հայասան, որը չի հիշատակվում խեթական ուշ աղբյուրներում, պիտի քայքայված լիներ շատ ավելի վաղ, քան խեթական կայսրության անկումը: Հետագայում նրա տարածքում ձևավորվել է Դայենի/Դիաուխի խուռիական թագավորությունը, իսկ

¹⁵² Дьяконов 1982a, 51-52.

հետո վերջինիս հյուսիսային մասը զբաղեցրել են վրացական ցեղերը¹⁵³ (Հայասայի և Դիաուխիի աշխարհագրական համապատասխանությունը մինչև վերջերս առանձնապես չէր վիճարկվում): Սակայն երկրի չհիշատակվելը խեթական աղբյուրներում հարյուր տոկոսանոց կռվան չէ ասելու համար, որ այն քայքայվել էր: Դիաուխիի սկզբնապես խուռիական, ապա քարթվելական լինելը իրականում ավելին չէ, քան տեսական հնարավորություն: Նույնիսկ անկախ այս ամենից, Դիաուխիի՝ Հայասայի պետականության և հին բնակչության գոնե մասնակի ժառանգորդ չլինելը ոչ մի հիմնավոր կռվան չունի:

Հայկական նախաքրիստոնեական դիցարանի աստվածները կրում են հիմնականում իրանական և դրանց զուգահեռ հունական անուններ: Այդ աստվածների գլխավոր տաճարների մեծ մասը կենտրոնացած էին Բարձր Հայք նահանգի երեք հարևան՝ Դարանաղի, Եկեղյաց և Դերջան գավառներում, այսինքն՝ անտիկ աղբյուրների Ակիլիսենեում: Դրանք էին մեծ աստվածներ Արամազդի և Անահիտի, ապա և Միհրի, Բարշամինի և Նանեի տաճարները: Վերլուծությունը ցույց է տալիս, որ այդ օտար, համեմատաբար ուշ փոխառված անունների տակ Հայաստանում շարունակվել է տեղական հին աստվածների պաշտամունքը¹⁵⁴: Ընդ որում՝ այդ աստվածների կերպարները և համակարգը որոշ չափով համադրելի են տեղի հնագույն պետության՝ Հայասայի աստվածների կերպարների և համակարգի հետ¹⁵⁵:

Արամազդի պաշտամունքի կենտրոն Անի ամրոցում է եղել հայ հեթանոս Արշակունի արքաների գերեզմանոցը (Ագաթանգեղոս 785. Փավստոս Գ.Ժա, Դ.իդ. Խորենացի Գ.Ժ, իե): Ակիլիսենե-Եկեղիքը կարևորագույն կրոնական կենտրոն մնաց նաև քրիստոնեության առաջին փուլում. այնտեղ՝ Բարշամինի պաշտամունքին նվիրված Թորդան ավանում թաղվեցին Հայաստանում քրիստոնեություն տարածող Տրդատ III-ը և Գրիգոր Լուսավորիչը, ապա և նրանց հաջորդ որոշ արքաներ և կաթողիկոսներ: Եկեղիքը դարձավ Գրիգոր Լուսավորչի տոհմի տիրույթը¹⁵⁶:

¹⁵³ Дьяконов 1968, 210–211.

¹⁵⁴ Պետրոսյան 2004. Petrosyan 2007a:

¹⁵⁵ Петросян 2002, 138 сл. Պետրոսյան 2004. Petrosyan 2007a:

¹⁵⁶ Եկեղյաց գավառի՝ հեթանոսությունից քրիստոնեություն ժառանգորդության վերաբերյալ տե՛ս Հակոբյան 2001:

Իհարկե, Մեծ Հայքում կային նաև համապետական նշանակության պաշտամունքային այլ կենտրոններ՝ առաջին հերթին հին մայրաքաղաք Արմավիրը, իսկ հետո՝ Բագարան, Բագավան և Արտաշատ քաղաքները Այրարատում և Քարքե լեռան նշանավոր տաճարական համալիրը Տարոնում՝ նվիրված Վահագնին, Անահիտին և Աստղիկին: Դրանք մասամբ ծագում են հին, տեղական պաշտամունքներից, մասամբ էլ երկրորդային են, մայրաքաղաքի՝ Արարատյան դաշտում գտնվելու արդյունք:

Ինչը կարող էր պայմանավորել Մեծ Հայքի պետական պաշտամունքի հիմնական կենտրոնների տեղայնացումը երկրի հեռավոր մի ծայրամասում՝ հեռու երկրի կենտրոն Այրարատից և լեռնաշխարհի նախորդ դարաշրջանի հզոր պետության՝ Վանի թագավորության կրոնական կենտրոններից: Խորենացին (Բ.Ժբ, Ժդ) դա բացատրում է այսպես: Արտաշես արքան արևմտյան արշավանքների ընթացքում Հայաստան է ուղարկում աստվածների հելլենիստական արձաններ իրենց քրմերի հետ, որոնք հանգրվանում են Դարանա-դյաց Անի ամրոցում: Արտաշեսի մահից հետո քրմերը չեն ուզում գնալ Հայաստանի խորքերը՝ իբր աստվածները դեմ են դրան: Եվ Տիգրան արքան հաստատում է պաշտամունքները Բարձր Հայքում: Այս մեկնաբանությունը ակնհայտորեն բռնազբոսիկ է: Ինչպես ասվեց, քննությունը որոշակի կապ է բացահայտում հայասական և հայ աստվածների կերպարների և նրանց պաշտամունքների տեղայնացման միջև: Իսկ Արամազդի պաշտամունքի կենտրոն Անի-Կամախը դեռևս մ.թ.ա. II հազարամյակի կեսից եղել է ամպրոպի աստծու նշանավոր կենտրոն (խեթ.՝ Կումմախա), ընդ որում՝ Հայաստանից դուրս՝ ավելի արևմուտք: Եվ Արամազդը վերափոխված անունով շարունակել է տեղի հին ամպրոպի աստծու պաշտամունքը¹⁵⁷: Դժվար է պատկերացնել, որ երկրի հիմնական կրոնական կենտրոնը տեղայնացվել է օտարերկրյա քրմերի քմահաճույքով, այնտեղ, որտեղ արդեն դարեր առաջ հիշվում է նույն գործառության հնագույն աստծու պաշտամունքը: Նույնը կարելի է ասել նաև Բարձր Հայքի մյուս կրոնական կենտրոնների մասին:

Ասվածի հիման վրա կարելի է ենթադրել, որ Մեծ Հայքի պետականությունը էթնիկական, մշակութային, կրոնական և քաղաքական ակունքներ է ունեցել Փոքր Հայքում և Բարձր Հայքում՝

¹⁵⁷ Պետրոսյան 2006ա, 11-16:

Ակիլիսեսեն-Եկեղիքում: Այդ շրջանի պատմության մեջ ոչ մի նշանակալի բան չկա, քան այն, որ մ.թ.ա. II հազարամյակի կեսից հետո և I հազարամյակի սկզբին այդտեղ են գտնվել Հայկական լեռնաշխարհի առավել աչքի ընկնող պետական կազմավորումները՝ Հայասայի, ապա Դիաուխի թագավորությունները:

Այս եզրակացության համար որոշ նախադեպային հնարավորություն է տալիս ուրարտական նյութը: Ուրարտական առաջին երկու մեծ աստվածների պաշտամունքային կենտրոնները գտնվում էին ուրարտական տերության բուն տարածքներից դուրս՝ լեռնաշխարհի ծայր հարավում՝ Արդինի/Մուծածիրում և Կումենում: Քննությունը ցույց է տալիս, որ ուրարտական մյուս կարևոր աստվածների պաշտամունքային կենտրոնները ևս հիմնականում գտնվել են նույն շրջանում՝ հետագա հայկական Կորճայք նահանգի և մերձակա տարածքներում¹⁵⁸: Սրա բացատրությունը պարզ է. լեռնաշխարհի հարավում՝ նշված շրջանում է գտնվել Ուրարտուի իշխող էթնիկական տարրի հին կենտրոնը: Ուրարտական արքայատոհմը ծագում էր հավանաբար Արդինի/Մուծածիր քաղաքից, որի աստվածը՝ Խալդին էլ դարձավ տերության գերագույն աստվածը: Ավելին՝ ուրարտական արքաները թագադրվում կամ գոնե հաստատվում էին իրենց կոչման մեջ իրենց ուստանում՝ Արդինի/Մուծածիրում¹⁵⁹: Նրանք և նրանց բարձր աստիճանավորները պարբերաբար այցելում էին այդ քաղաքը և նրա տաճարը՝ ակնհայտորեն հետևելով ծիսական ավանդությանը: Դա հայտնի էր նաև ասորեստանցիներին, որոնք քաղաքի գրավումը ներկայացնում են որպես կորստաբեր հարված Ուրարտուի արքայի և թագավորության համար: Հեռանալով իրենց բուն տարածքներից և նոր կայսրություն ստեղծելուց հետո էլ Ուրարտուի իշխող վերնախավն այդ ձևով էր պահպանում իր հին հայրենիքի հիշողությունը:

Այրարատ

Էթիունի երկիրը, ի հակադրություն Դիաուխի, չկործանվեց Վանի արքաների հարվածներից, այլ կարողացավ գոյատևել մինչև

¹⁵⁸ Grekyan 2006.

¹⁵⁹ АВИАУ 49 (309), 330-331. Հմայակյան 1990, 75-76:

Ուրարտուի անկումը: Ուրարտական վերջին հզոր արքա Ռուսա Արգիշթորդին այն հիշում է թշնամական երկրների շարքում: Ուրարտուից հետո Էթիունի անվանումն այլևս չի հանդիպում գրավոր աղբյուրներում: Իսկ նույն երկրամասը հայկական դարաշրջանում կոչվել է Այրարատ: Ազգածին ավանդության մեջ Այրարատը հանդես է գալիս որպես «հայկական տիեզերքի» կենտրոն: Հայոց ազգածին նահապետները, սկսած Հայկի անդրանիկ որդի Արամանյակից, ապրում և գործում են հիմնականում Արարատյան դաշտում: Ըստ ավանդական պատմության՝ առաջին հայկյանների մայրաքաղաք Արմավիրը մնացել է մայրաքաղաք նաև առաջին հայ արքաների համար, մինչև հաջորդ մայրաքաղաքների կառուցումը, որոնք ևս գտնվել են Արարատյան դաշտում (Երվանդաշատ, Արտաշատ, Վաղարշապատ, Դվին): Ելնելով հին երկրամասերի ժառանգորդության մասին վերն ասվածից՝ պետք է կարծել, որ Այրարատը անկախ հնարավոր էթնիկական որոշ փոփոխություններից շարունակել է Էթիունի էթնիկական, քաղաքական և մշակութային պատմությունը:

Այսպիսով, ավանդական պատմության մեջ Այրարատն է հանդես գալիս որպես Հայաստանի ու հայոց պետականության կենտրոն՝ սկսած Հայկի որդի Արամանյակից մինչև մեր օրերը: Սա նշանակում է, որ մեր նախնիները Հայաստանը որպես այդպիսին համարել են ստեղծված և ձևավորված Այրարատ կենտրոնով, և հին, ավանդական նահապետների Հայաստանը նույնանում է պատմական Էթիունիին:

Վան-Վասպուրական

Ըստ Ս. Երեմյանի՝ հետուրարտական Հայաստանի առաջին Երվանդունի արքաների կենտրոնը սկզբնապես եղել է Տուշպա-Վանը¹⁶⁰: Ահա բերվող փաստարկները. ա. Վանա լճի արևելյան Հայոց ծորգավառը (որտեղ Հայկը հաղթել էր Բելին) կոչվել է նաև Երվանդունիք, այսինքն՝ Երվանդունի արքայական տոհմանունով, բ. Հայաստանը, ըստ «Կյուրոպեդիայի», ընդարձակ երկիր էր՝ Մարաստանից

¹⁶⁰ ՀԺՊ, 437-439: Այս հարցերի շուրջ տեն նաև Տիրացյան 1958. 1966: Երվանդունիների արքայատոհմի հնարավոր ուրարտական ակունքների վերաբերյալ տեն Պետրոսյան 2008ա, 171-173:

մինչև Խաղտիք, այսինքն՝ տարածքով մոտավորապես համընկնում էր Ուրարտուին և կարող էր կենտրոն ունենալ հենց Տուշպա-Վանը, գ. XVIIIդ. երկու ձեռագրում Վանը կոչվել է նաև Երուանդավան: Սրանք միայն կողմնակի տվյալներ (այն էլ հիմնականում ուշ) և տեսական դատողություններ են, ուղղակի տեղեկություններ չկան: Իրականում, ինչպես հեշտ է նկատել առանց նույնիսկ խոր քննության, այս փաստարկները ոչ մի կերպ չեն հիմնավորում դրույթը: Այն վերին աստիճանի վարկածային կարծիք է միայն:

Ի հակադրություն Բարձր Հայքի և Այրարատի՝ Վանի շրջանը և մերձակա տարածքները համահայկական պետական կամ կրոնական կենտրոններ չեն ունեցել: Մեզ հայտնի պատմական ժամանակներում ոչ մի համահայկական արքա երբեք հիմնական նստավայր չի ունեցել և չի թաղվել այդ շրջանում, և ոչ մի համահայկական պետական գլխավոր հեթանոսական կենտրոն չի գտնվել այդտեղ: Մյուս կողմից ակնհայտ է Վանի և Վասպուրականի հսկայական դերը հայոց պետականության և մշակույթի մեջ: Վանի շրջանի՝ հզոր պետականության կենտրոն լինելու արձագանքը հասնում է մինչև միջնադար և ի հայտ է գալիս տեղի հզորագույն տոհմի՝ Արծրունիների որոշակի կենտրոնախույս քաղաքականության մեջ, հատկապես մ.թ. I հազարամյակի վերջին՝ Վասպուրականի Արծրունիների թագավորության ժամանակ (Վան մայրաքաղաքով), երբ նրանք հրաժարվում էին նույնիսկ ընդունել հայոց կենտրոնական՝ Բագրատունյաց թագավորության առաջնությունը: Վանի շրջանը միշտ հայտնի է եղել իր մշակույթով և արհեստներով. նույնիսկ Խորիրդային Հայաստանում և սփյուռքում XXդ. առաջին կեսին գրողների, նկարիչների և այլ արվեստագետների մի նշանակալի մասը վանեցիներ էին:

Հայ առասպելաբանության մեջ էլ Վանի շրջանն ունի իր առանձնահատուկ տեղը: Վանա ժայռի վրա է գտնվում «Մհերի դուռը»՝ ժայռափոր մի «դարպաս», որտեղ մտնում և որտեղից պետք է երկրի վրա արդարություն հաստատվելուց հետո դուրս գա «Սասնա ծռեր» էպոսի վերջին հերոսը՝ Փոքր Մհերը: Այդ «դարպասն» իրականում ժայռի հարթեցված մակերեսին փորագրված ուրարտական մի հսկայական արձանագրություն է, որտեղ ներկայացված է ուրարտական ողջ դիցարանը՝ մի քանի տասնյակ աստվածներ, բազում այլ սրբություններ և նրանց զոհաբերություններ մատուցելու

կարգը: Այն նվիրված էր Խալդիին (այդօրինակ «Խալդիի դարպասները» ուրարտական պաշտամունքի մի կարևոր տարրն էին կազմում), ինչը մի շարք այլ հանգամանքների հետ ցույց է տալիս, որ էպոսի Միերի կերպարը ծագում է Խալդիից¹⁶¹: Ընդհանրապես, եթե Բարձր Հայքը հայոց հեթանոսական աստվածների կենտրոնն էր, Այրարատը՝ «ազգածին նահապետների» գործունեության վայրը, ապա Հայաստանի հարավը՝ Վասպուրականը, Սասունը և Տարոնը, հայոց էպիկական ավանդույթի կենտրոններն էին: Քննությունը ցույց է տալիս, որ «Սասնա ծռերի» մյուս հերոսները ևս ծագում են Հայաստանի հարավի հին աստվածներից: Այսպես՝ Սասունի էպոսի առաջին հերոսը՝ Սանասարը, որն ամպրոպային աստծու վիպական ժառանգն է, ծագում է Շուբրիայի (Սասուն և մերձակայք) ամպրոպի աստված Թեշուբիից, նրա կինը և եղբայրը՝ Թեշուբի կնոջ և եղբոր կերպարներից ևն¹⁶²:

Այսպիսով, Վանի շրջանի և մերձակայքի հայ բնակչությունը թեև պահպանել էր հնագույն պատմական ավանդույթի հետքեր, բայց այդ երկրամասը երբեք համահայկական պետական և կրոնական կենտրոն չի ընկալվել, իսկ տեղի առասպելական կերպարները ծագում են ոչ հայկական՝ ուրարտական, խուռիական ակունքներից:

Երկու կենտրոնների հարաբերությունը

Այսպիսով, հայոց պատմական ավանդությունը հայ էթնիկական հանրույթի ձևավորման և հնագույն Հայաստանի պատմական կենտրոն է համարում Այրարատը, ուրարտական տերմինով՝ Էթիունին, մինչդեռ ավանդույթի մյուս էական ատրիբուտ հանդիսացող գլխավոր պաշտամունքները գտնվել են Բարձր Հայքում՝ այնտեղ, որտեղ սովորաբար տեղայնացվում է Հայասան ապա, Դիաուխին:

Ուրեմն, կարելի է կարծել, որ հայոց էթնիկական և պետական ժառանգորդությունը խարսխված է երկու՝ Էթիունիի և Հայասան-Դիաուխիի ավանդույթների վրա (անկախ այդ երկու երկրամասերի հին բնակչության իրար հետ ունեցած ազգակցության հնարավորությունից): Ընդ որում՝ նկատելի է, որ Այրարատը պահպանել է

¹⁶¹ Дьяконов 1983б. Петросян 2004. Petrosyan 2006.

¹⁶² Petrosyan 2002, 21. Петросян 2002, 24-25.

ժողովրդական ավանդույթը. այդտեղից է ծագած-արարված համարվել Հայաստանը, այդտեղ են ապրել հայ առաջին նահապետները, այստեղ են կառուցվել հայոց առաջին և հետագա՝ համարյա բոլոր մայրաքաղաքները ևն, մինչդեռ օտար՝ հունական առասպելն է, որ Բարձր Հայքում է տեղայնացնում հայոց օրրանը, որին ուղղակի համահունչ է հետագայում Մեծ Հայքի պետականության և հասարակության վերնախավի որոշ կարևոր ավանդույթների տեղայնացումը նույն տարածքներում:

Ինչպես կարող է բացատրվել այդ երևույթը: Երկու կենտրոնների առկայությունը հասկանալի կդառնա, եթե ընդունենք, որ հայոց ազգածին ավանդության մեջ հայոց առաջին նահապետների շարժումը (և դրան համապատասխան ցեղային շարժումը) եղել է ոչ թե Բաբելոն-Կորդուք-Հարք-Այրարատ, ինչպես, ակնհայտորեն, իրենց աղբյուր Մար Աբասին հետևելով պատմում են Խորենացին և Սեբեոսը, այլ Բարձր Հայք (Հայասա)-Հարք-Այրարատ երթուղով (Հարքը համարում ենք միջանկյալ հանգրվան ոչ միայն ըստ ազգածին ավանդության, այլ օբյեկտիվ հանգամանքներով. ինչպես կտեսնենք, հին աղբյուրներն այդ շրջանում են հիշում մի շարք պարզորոշ հայկական տեսք ունեցող տեղանուններ, տես ստորև, էջ 126-130): Մոտավորապես այդպես են պատկերացրել հայոց նախապատմության այս կարևոր փուլը որոշ նախորդ ուսումնասիրողներ (միայն Էթիունի-Այրարատի հայոց կենտրոն դառնալն ավելի ուշ են թվագրում): Այս հարցում էական է հայ ցեղանվան և Հայասայի համահնչյունությունը, որն ամենակարևոր փաստարկն է Հայասայի՝ հայերի օրրան լինելու օգտին:

Բայց այստեղ ամեն ինչ միարժեքորեն պարզ չէ: Բանն այն է, որ Էթիունի-Այրարատյան կենտրոնը, ըստ ավանդության, ակնհայտորեն հին է. այն սկսվում է հայոց տիեզերքի ու ժողովրդի ձևավորումից և շարունակվում մինչև վերջ, մինչդեռ Բարձր Հայքի պաշտամունքային կենտրոնները և արքայական գերեզմանները հայտնի են միայն Արտաշիսյան և Արշակունյաց դարաշրջաններից (մ.թ.ա. II դ. - մ.թ. V դ.): Այսպիսով, դրանք կարող են ուշ՝ երկրորդային զարգացումների արդյունք լինել: Անհասկանալի է մնում նաև, թե ինչո՞ւ ժողովրդական հիշողության մեջ չեն պահպանվել Բարձր Հայքի՝ հայոց հնագույն օրրան լինելու գոնե հեռավոր հիշողություններ, և ինչո՞ւ Բարձր Հայքում՝ հին աստվածների պաշտամունքային

այդ կարևորագույն կենտրոնում, չեն պահպանվել հին վիպական ավանդույթներ:

Այսպիսով, կրկնենք, որ հայոց ավանդական էթնիկական նախապատմությունը կենտրոնանում է Այրարատում: Մյուս՝ բարձրիայքյան կենտրոնի գոյությունը լոկ վարկած է՝ հենված հիմնականում հայ-Հայասա համահնչունության, հունական լեգենդի և որոշ քիչ թե շատ հավանական ենթադրությունների վրա:

Ուրարտական տերությունը

Հայոց ազգածագման և նախապատմության հարցերն ուղղակիորեն առնչվում են Ուրարտուի՝ Հայկական լեռնաշխարհն առաջինը մեկ թագի ներքո միավորած հինարևելյան պետության գոյության հետ (մ.թ.ա. IX-VII դդ.)¹⁶³: Ուրարտական արձանագրությունների լեզուն չափազանց նման է Հյուսիսային Միջագետքում, Հայկական լեռնաշխարհի հյուսիսում և Փոքր Ասիայի արևելքում մ.թ.ա. III-II հազարամյակներում լայնորեն տարածված մեկ այլ հին լեզվի՝ խուռիերենին, որի բարբառների հետ էլ կազմում է խուռաուրարտական լեզուների ընտանիքը, և ակնհայտորեն հայերենը չէ¹⁶⁴: Դա է այն հիմնական պատճառը, որ XIX-XX դդ. գիտության մեջ ձևավորվեց հայերի՝ Հայկական լեռնաշխարհ ուշ ներգաղթի դրույթը:

Ըստ լայնորեն տարածված, բայց և վարկածային մի կարծիքի՝ Հայկական լեռնաշխարհը վաղ բրոնզի դարաշրջանից՝ մ.թ.ա. IV-III հազարամյակներում եղել է խուռաուրարտական ցեղերի

¹⁶³ Ուրարտուի պատմության և մշակույթի վերաբերյալ տե՛ս Ղափանցյան 1940. Пиотровский 1944. 1959. Меликишвили 1954. Арутюнян 1970. Zimansky 1985. Salvini 1995. Գրեկյան 2016ա ևն:

¹⁶⁴ Սկսած ուրարտական տեքստերի առաջին գիտական նկարագրությունների ժամանակից, փորձեր են արվել դրանք հայերեն կարդալու (Մորդոման, Սանտալճյան, Սուրեն Այվազյան, Սարգիս Այվազյան), որոնք գիտական աշխարհում ընդունելություն չեն գտել: 2000-ին Գ. Զահուկյանը հրատարակեց մի հոդված, որտեղ փորձում էր հնագույն հայերենով իմաստավորել ուրարտական որոշ տեքստերի ներածական մասը (առանց հետևություն անելու, որ ուրարտերենը հայերեն է): Այս փորձը ևս, չնայած Զահուկյանի բարձր հեղինակությանը, ընդունելություն չգտավ մասնագետների շրջանում:

քննարկումը¹⁶⁵։ Խուռիական ցեղերը, սկսած գոնե մ.թ.ա. երրորդ հազարամյակի կեսերից և թերևս ավելի վաղ, թափանցում են Հյուսիսային Միջագետք ու Սիրիա և իրենց պետությունները ստեղծում այնտեղ¹⁶⁶։ Այդ ընթացքում Հայկական լեռնաշխարհում կտրուկ փոխվում է հնագիտական մշակույթը. հին բնակչությունը լեռնաշխարհից կարծես դուրս է մղվում նոր էթնիկական տարրի՝ միջինբրոնզեդարյան մշակույթները կրող ցեղերի ներգաղթի հետևանքով։ Իսկ մ.թ.ա. առաջին հազարամյակի սկզբին խուռիերենին ազգակից լեզվով արձանագրություններ թողած մի հանրույթ իր իշխանության տակ է միավորում Հայկական լեռնաշխարհի նշանակալի մասը մի պետության մեջ, որն ասորեստանցիներն անվանում էին Ուրարտու։ Այդ հանրույթը, ելնելով ասորեստանյան անվանումից, գիտության մեջ ընդունված է կոչել «ուրարտացիներ», իսկ լեզուն, որով կազմվել են երկրի արձանագրությունները՝ «ուրարտերեն» (ուրարտական տեքստերում, ինչպես ասվել է, երկիրն իր կենտրոնական շրջանի անունով կոչվում է Biainili, իսկ «ուրարտացիների» ինքնանվան վերաբերյալ կարելի է միայն դատողություններ անել)։

Ուրարտուն կայսրություն էր, որն առաջին անգամ Հայկական լեռնաշխարհի նշանակալի տարածքներ միավորեց մեկ իշխանության ներքո։ Ինչպես ամեն մի հին կայսրություն, այն բաղկացած էր աշխարհագրորեն, տնտեսապես, էթնիկապես և մշակութային առումով անհամասեռ երկրամասերից¹⁶⁷։ Այն միավորում էր Եփրատից

¹⁶⁵ Կովկասից մինչև Հայկական լեռնաշխարհն ընդգրկող վաղ բրոնզեդարյան Կուր-արաքսյան հնագիտական մշակույթի կրողների խուռաուրարտական ծագման վարկածն առաջարկել է Չ. Բըրնեյն (Burney 1958, 166), որը լայնորեն ընդունվել է այլ ուսումնասիրողների կողմից։ Չի բացառվում այդ մշակույթում նաև այլ էթնիկական խմբերի, հատկապես հնդեվրոպացիների վաղ ներկայությունը։ Այս հարցերի շուրջ տես Gelb 1944, 70. Дьяконов 1968, 20-23. Burney, Lung 1971, 44, 47-51. Burney 1977, 132. 1989. 1990. 1997. Гамкрелидзе, Иванов 1984, 893-894. Mallory, Adams 1997, 29-30, 340, 342. Kassian 2009-10, 423 ff. ՀՀԵՊ 390 ևն։ Իմիջիայլոց, կարծիք կա, որ այդ մշակույթի որոշ դրսևորումներ ձևավորվել են երկու՝ տեղական և արևելակենտրոնական Անատոլիայից ծագող բաղադրիչների համադրությամբ (Kiguradze, Sagona 2003, 93), որը տեսականորեն հնարավոր է համադրել այդ մշակույթի էթնիկական բաղադրիչների հետ։

¹⁶⁶ Salvini 1998. ՀՀԵՊ 389-390։

¹⁶⁷ Zimansky 2012. Հին աշխարհի կայսրությունների տիպաբանության վերաբերյալ տես Дьяконов, Якобсон 1982, 8-11։

մինչև Վան, Ուրմիա և Սևան լճերը հսկայական տարածքներ ընդգրկող մի շարք ցեղային կազմավորումներ՝ ամեն մեկն իր ուրույն, իրարից տարբեր աշխարհագրական դիրքով, տնտեսությամբ, մշակույթով, լեզվով և կրոնով, որոնք նվաճվել էին ուժով՝ Վանի արքաների արշավանքների ընթացքում (ամենամեծ տարածքները երկիրն ունեցել է Սարգուրի II-ի ժամանակ՝ մ.թ.ա. VIII դ. կեսերին): Կայսրությունը մեծապես վերափոխեց և համահարթեցրեց այդ երկրամասերը. բնակչության հսկայական խմբեր գերեվարվում և տեղափոխվում էին լեռնաշխարհի մի ծայրից մյուսը, ամենուրեք ստեղծվում էին ամրոց-քաղաքներ արքային ենթարկվող կայսերական կայազորներով, նրանց կից այլ կառույցներ՝ ջրանցքներ, ջրամբարներ, ճանապարհներ, ամենուրեք հաստատվում էր պետության գերագույն աստված Խալդիի պաշտամունքը, կառուցվում էին միատիպ տաճարներ և այլ պաշտամունքային կառույցներ:

Ուրարտուի քաղաքական պատմությունը, որը հիմնականում հայտնի է Վանի արքաների թողած մեծաքանակ արձանագրությունների շնորհիվ, պատերազմների և նվաճումների պատմություն է: Արքաներն իրենց թագադրությունից անմիջապես հետո կազմակերպում և ղեկավարում էին ռազմական արշավանքներ: Պատերազմների մի մասն ուղղված էր արտաքին ուժերի՝ հատկապես հարավային հզոր հարևան Ասորեստանի դեմ: Կռիվներ են մղվել նաև Հայկական լեռնաշխարհից դուրս ցեղամիությունների և մանր թագավորությունների դեմ հարավում, արևմուտքում և արևելքում: Բայց կար մի առանձնահատկություն. այդ արշավանքների նշանակալի մասն ուղղված էր հենց Հայկական լեռնաշխարհի կամ մեր պատկերացումներով՝ իրենց իսկ երկրի՝ Ուրարտուի տարբեր երկրամասերի, արձանագրություններում «արքաներ» կոչվող առաջնորդներով ղեկավարվող «երկրների»՝ իշխանությունների, ցեղերի ու ցեղախմբերի դեմ:

Վան-Տուշպայի արքաները, ըստ արձանագրությունների, մշտապես հաղթում էին այդ երկրներին և մեծ քանակությամբ գերիներ ու ռազմավար տանում իրենց հետ: Արքան իր իշխանության ընթացքում նույն երկրի դեմ կարող էր դուրս գալ մի քանի անգամ: Որոշ երկրների դեմ հետագա արշավանքների հիշատակություններ չկան. այդ երկրները, հնարավոր է, որ ընկճվել, կորցրել են ինքնուրույնությունը և ինտեգրվել կայսրության կազմում: Բայց նվաճված և բազմիցս վերանվաճված շատ երկրներ, հատկապես նրանք,

որոնք ավելի հեռու էին գտնվում պետության կենտրոնից՝ Վան-Տուշպայից, մինչև վերջ այդպես էլ չմիավորվեցին ու չինտեգրվեցին կայսրության մեջ որպես լոյալ նահանգներ կամ գավառներ:

Նվաճումը ձևավորվում էր գրաված երկրների ռազմավարական կարևոր վայրերում ամրոց-քաղաքների կառուցմամբ, որոնք երբեմն բնակեցվում էին լեռնաշխարհի այլ՝ հեռավոր ծայրամասերից բերված մարդկանցով: Հին կայսրություններում հենց քաղաքներն էին բանակի և վարչակազմի հետ համատեղ ձևավորում պետության բնականոն կենսագործունեությունն ապահովող հիմնական մեխանիզմը¹⁶⁸: Քաղաք-ամրոցների շուրջը ստեղծվում էին այգիներ, հատկապես խաղողուտներ, ջրանցքներ, պետության կենտրոնի և մյուս ամրոցների հետ կապվող ճանապարհներ են: Ամրոցների ռազմական ուժն ուղղված էր հենց տեղական նվաճված բնակչության և հետո միայն ավելի հեռու գտնվող անկախ և կիսանկախ ցեղերի դեմ: Ամրոցներում կյանքն անցնում էր իրոք կայսերական՝ ուրարտական հունով, իսկ ամրոցներից դուրս տեղական բնակչությունը շարունակում էր իր հին ավանդական մշակույթը և կենցաղը:

Այսպիսով, այն կայսրությունը, որ մենք հասկանում ենք Ուրարտու ասելով, թեև մեկ հզոր իշխանությանը ենթակա, բայց ոչ միատարր, հեղհեղուկ մի կառույց էր, որը միավորված պահելու և միասնականացման համար մեծ ջանքեր էր պահանջում Վան-Տուշպայի արքաներից: Վանա և Ուրմիա լճերի միջև ձգվող միջնաշխարհից դուրս ուրարտական տիրապետությունը փաստորեն զբաղեցնում էր լեռնաշխարհի գերազանցապես հարթավայրային և երկրագործական գոտիներն ու այդ գոտիներն իրար կապող «միջանցքները»: Դրանից դուրս ընկած ողջ տարածքը՝ հատկապես Նախալեռնային և Բարձրլեռնային շրջաններում, իրականում ուրարտական տիրապետության տակ չէին գտնվում: Այդ շրջաններում ուրարտական իշխանություններն ունեին միայն սահմանափակ մուտք, գերազանցապես ռազմական արշավանքների ժամանակ¹⁶⁹:

Հայկական լեռնաշխարհի բնակչության թիվը Ուրարտուի դադառալից շատ վարկածային կերպով ենթադրվել է 6-7 միլիոն (ելնելով «Սարդուրյան տարեգրության» մի տեղեկությունից)¹⁷⁰: Ե. Գրեկյա-

¹⁶⁸ Дьяконов, Якобсон 1982, 10.

¹⁶⁹ Գրեկյան 2016, 11:

¹⁷⁰ Дьяконов 1988, 60 сл. Diakonoff 1991, 19, n. 55.

նը, օգտագործելով նոր մեթոդաբանություն, հենվելով հնագիտական և գրավոր աղբյուրների վրա, Ուրարտուի բնակչությունը ենթադրում է շուրջ 1 միլիոն, իսկ Հայկական լեռնաշխարհի ողջ բնակչությունը՝ 1.5-1.75 միլիոն մարդ: Ընդ որում՝ ենթադրվում է, որ երկրի բնակչության ճնշող մասը ձևավորվել է գերեվարությունների արդյունքում¹⁷¹:

Մեզ հասած ուրարտական աղբյուրների տվյալներով՝ գերեվարվածների ընդհանուր թիվը կազմել է շուրջ 630 հազ. մարդ: Որոշ դեպքերում գերիների քանակը չի նշվում, և ելնելով միջինացված տվյալներից՝ նրանք թիվը պետք է հասցվի 830 հազարի¹⁷²: Հաշվի առնելով մեր տեղեկությունների թերի լինելը՝ կարելի է կարծել, որ երկրի պատմության ընթացքում գերիների ընդհանուր թիվը կազմել է շուրջ մեկ միլիոն մարդ: Ուշադրություն է գրավում այն հանգամանքը, որ գերիների մեջ տղամարդիկ կազմել են բավական փոքր թիվ (ըստ պահպանված տվյալների՝ ընդհանուր քանակի մոտ 4 տոկոսը): Փոխարենը գերեվարվածների ճնշող մասը կազմել են կանայք և պատանիները¹⁷³:

Ըստ Ե. Գրեկյանի աշխատության դեռևս անտիպ մի հատվածի՝ եղած տեղեկությունների հիման վրա կարելի է որոշակի կարծիք կազմել երկրի իշխող էթնիկական տարրի՝ «ուրարտացիների» (ուրարտախոս հանրույթի) քանակի մասին: Ելնելով երկրի ամրոցների անձնակազմի, բանակի, ծառայողների, ազնվականության վերաբերյալ տվյալներից և հաշվի առնելով հին աշխարհի այլ երկրների որոշ համադրելի փաստեր՝ կարելի է, իհարկե, շատ վարկածային կարգով ենթադրել, որ նրանք կազմում էին 120-150 հազար մարդ, այսինքն՝ պետության բնակչության 12-15 տոկոսը:

Ինչպես ասվել է, Ուրարտու տեղանվան նախնական ձևերն են համարվում մ.թ.ա. երկրորդ հազարամյակի վերջերից հիշվող Uruatri/ս-ն և Uraṭri-ն՝ տեղայնացած Հայկական լեռնաշխարհի ծայր հարավում՝ Կորդվաց Արարատ լեռան շրջանում և հարակից տարածքներում¹⁷⁴: Ուրարտախոս տարրի երկու առավել սրբազան կենտրոնները ևս գտնվում էին Հայկական լեռնաշխարհի ծայր

¹⁷¹ Գրեկյան 2016, 11:

¹⁷² Գրեկյան 2016, 27:

¹⁷³ Տվյալներ կան, որ արքաները երբեմն ոչնչացրել են գրաված տարածքների չափահաս՝ զենք կրելու ունակ արական բնակչությանը, տես Գրեկյան 2016գ:

¹⁷⁴ Меликишвили 1947. Пиотровский 1959, 43-46. Арутюнян 1970, 17.

հարավում՝ Ուրմիա լճից հարավ-արևմուտք և Վանա լճից հարավ։ Առաջինը Արդինի քաղաքն էր, որն ասորեստանյան արձանագրություններում կոչվում է այլ անունով՝ Muṣaṣir/Muzaṣir (Մուծածիր կամ Մուզածիր), գերագույն աստված Խալդիի պաշտամունքի կենտրոնը (ներկայիս Ռովանդուզի շրջանում), որը հավանաբար նաև երկրի իշխող արքայատոհմի օրրանն էր¹⁷⁵։ Մյուսը Կումենուն էր, խուռիական անունով՝ Կումմեն, տերության երկրորդ գլխավոր աստծու՝ փոթորկի ու ամպրոպի աստված Թեյշեբայի կենտրոնը (Կորդվաց Արարատի շրջանում)¹⁷⁶։ Այստեղ՝ լեռնաշխարհի ծայր հարավում, պետք է լիներ ուրարտական էթնիկ հանրույթի առաջին կենտրոնը։ Այդ կենտրոնի տեղաշարժը հյուսիս՝ Վանի շրջան, պետք է տեղի ունեցած լիներ բավական ուշ¹⁷⁷։ Ուրարտական տերության գոյության դարաշրջանի մեծագույն մասում Արդինին և Կումենուն գտնվում էին երկրի սահմաններից դուրս¹⁷⁸։ Ուրարտական դիցարանի երրորդ մեծ աստվածն էր արևի աստված Շիվինին, որի պաշտամունքի կենտրոնն էր Վան-Տուշպան։ Հեշտ է ենթադրել, որ Շիվինին մեծ աստվածն էր Վան-Տուշպայի շրջանի հին բնիկների, որոնց՝ թերևս մ.թ.ա. առաջին հազարամյակի սկզբին տիրել էին հարավային՝ Արդինիից և Կումենուից եկած նվաճողները¹⁷⁹։

Այսպիսով, Ուրարտուում էթնիկական և մշակութային միասնություն չի եղել։ Հայաստանի հնագիտությունն ուսումնասիրող ամեն մի ուսանող ծանոթանում է վաղերկաթեդարյան Հայաստանի երկու՝ իրարից շատ առումներով չափազանց տարբեր հնագիտական մշակույթների՝ այսպես կոչված «տեղական» և «ուրարտական» համալիրների հետ։ «Տեղական» մշակույթի խնդիրը պարզ է. այն օրգանապես շարունակում է Հայաստանի ներկայիս տարածքների առավել հին՝ ուշ բրոնզի և վաղ երկաթի առաջին փուլի մշակույթները։ Ներկայումս, երբ մեզ մատչելի է դարձել նաև Արևմտյան Հայաստանի հին հնագիտության ընդհանուր պատկերը, կարելի է ասել, որ բացի

¹⁷⁵ Տե՛ս օրինակ Меликишвили 1948. 1954, 159-165. Дьяконов 1968, 140, прим. 154. 1983а, 174-175, прим. 78. Zimansky 2001, 24. Պետրոսյան 2006, 48-50։

¹⁷⁶ Меликишвили 1954, 165-168. Մուծածիր և Կումենու երկրների մասին տե՛ս նաև Radner 2012։

¹⁷⁷ Տե՛ս Меликишвили 1947, 29 և մյուս հղված աշխատություններում։

¹⁷⁸ Տե՛ս օրինակ, Salvini 1987, 403-404.

¹⁷⁹ Պետրոսյան 2002. 2010։

ծայր հարավային և հարավարևմտյան շրջաններից, համարյա ողջ Հայկական լեռնաշխարհի մինչուրարտական և ուրարտականին համաժամանակյա «տեղական» մշակույթը նույնական է ներկայիս Հայաստանի Հանրապետության տարածքների նշված «տեղական», այսինքն՝ էթիոնյան մշակույթի հետ: Իսկ «ուրարտականը» բոլորովին այլ է. այն նույնպես ի հայտ է գալիս Ուրարտուի ողջ տարածքում, բայց միայն բուն «ուրարտական» հուշարձաններում, այսինքն՝ ամրոց-քաղաքներում, և բոլոր չափանիշներով նշանակալիորեն տարբերվում է «տեղականից»¹⁸⁰: Այն պետք է ստեղծված լիներ լեռնաշխարհի ծայր հարավային և հարավարևմտյան շրջանների մշակույթների հիման վրա, ասորեստանյան կայսերական մշակույթի նշանակալի ազդեցությամբ:

Պ. Զիմանսկին ներկայացնում է մի շարք առանձնահատկություններ, որոնցով ուրարտական հնագիտական մշակույթը հանդես է գալիս որպես մի առանձնահատուկ երևույթ, «պետական համալիր»¹⁸¹: Այդ աշխատությունը թեև գրվել է երկու տասնամյակ առաջ, բայց չի կորցրել իր արժեքը: Ստորև ներկայացվում են նրա որոշ դրույթներ:

ա. Կայսրությունը ստեղծվեց շատ արագ, երեք սերնդի ընթացքում, ինչի հետևանքով լեռնաշխարհի տարբեր ցեղեր չէին կարող միասնական մշակութային հիմքի բերվել: Թեև ուրարտական սեպագիր արձանագրությունների լեզուն մեկն է՝ ուրարտերենը, ոչ մի օբյեկտիվ հիմք չկա կարծելու, որ այդ լեզուն լայնորեն խոսվել է կայսրության մեջ: Ընդ որում՝ այն անհետացել է կայսրության անկումից հետո: Ոչ մի հիմք չկա պնդելու, որ «ուրարտական» կոչվող հնագիտական նյութը ստեղծվել է երկրում խոր արմատներ ունեցող և իրեն միասնական համարող բնակչության կողմից:

բ. Ուրարտական հնագիտությունը հիմնականում կայսերական ամրոցների հնագիտություն է: Ամրոցները ստեղծվել են պաշտպանելու և իշխանություն իրականացնելու մերձակա տարածքների վրա: Ամրոցները եղել են նաև պաշտամունքային և ռազմական կենտրոններ, արքայական նստավայրեր: Բնակչությունը

¹⁸⁰ Տիրացյան, Արեշյան 1990: Հեղինակները գտնում են, որ տարբերությունն այնքան նշանակալի է, որ դրանք չեն կարող վերագրվել մեկ էթնոսի կամ թեկուզ մեկ էթնոսի տարբեր ճյուղերի:

¹⁸¹ Տե՛ս հատկապես Zimansky 1995 և նույն հեղինակի այլ աշխատություններում:

գերազանցապես ապրել է անպաշտպան փողք բնակավայրերում: Ուրարտական կայսրության բազմազանությունը հենց այդ բնակավայրերի և ամրոցների տարբերության մեջ է:

գ. Ուրարտական կառույցները ճանաչելի են ողջ կայսրության մեջ ստանդարտ ճարտարապետական ձևերից և շինարարական ավանդույթից: Օրինակ՝ ողջ կայսրության մեջ հում աղյուսների չափը միասնական է: Ամեն ինչ ցույց է տալիս ճարտարապետական պլանավորման կենտրոնացված բնույթը:

դ. Գիրը հիմնականում կապված է կենտրոնական իշխանության հետ: Քարի վրա փորագրված արձանագրությունները պատմում են արքաների արշավանքների և ձեռնարկումների մասին: Վարչական արձանագրությունները նույնպես կապված են արքունիքի և հաճախ հենց արքայի հետ: Դրանցից շատերը կնքված են արքայի կամ մեկ այլ բարձր իշխանավորների կնիքով:

ե. Աչքի զարնող փայլեցրած կարմիր խեցեղենը՝ ուրարտական մշակույթի կարևոր ցուցիչներից մեկը, չի հանդիպում Ուրարտուի սահմաններից անդին: Այդ խեցեղենը բնութագրական է հատկապես ամրոցների պահեստների համար: Մինչդեռ, լեռնաշխարհի ուրարտական դարաշրջանի հնավայրերի խեցեղեն մնացորդների մեծագույն մասը՝ թերևս 95%-ը, պարզ, չդեկորացված, դարչնագույն խեցեղեն է:

զ. Ուրարտական կրոնի տարբերակիչ հատկանիշներն են գերագույն աստված Խալդիի պաշտամունքը, ժայռափոր որմնախորշերը և առանձնահատուկ աշտարակաձև տաճարները: Այդ համալիրն իր նշված ատրիբուտներով ի հայտ է գալիս մ.թ.ա. IX դ. վերջին՝ Իշպուիների արքայի ժամանակ: Այն չունի հայտնի նախատիպեր, հայտնվում է միանգամից, անսպասելիորեն և անհետանում կայսրության հետ: Ակնհայտ է, որ այն չէր կարող խոր արմատներ ունենալ երկրի հիմնական բնակչության մեջ:

է. Եթե Ուրարտուն մշակութապես միասնական լիներ, կարելի կլիներ ակնկալել թաղման ծեսի մի ընդհանուր համալիր, մինչդեռ առկա է նշանակալի բազմազանություն: Կիրառվել է դիաթաղում և դիակիզում, գերեզմանների տարբեր ճարտարապետությամբ բազմասնյակ ժայռափոր դամբարաններից մինչև դիակիզման սափորներով դամբարանադաշտեր: Սրանցից ոչ մեկն առանձնահատուկ ուրարտական չէ. շատերն ունեն զուգահեռներ Ասորեստանում (որտեղ միայն դիակիզումն ավելի քիչ էր տարածված):

Այսպիսով, Ուրարտուում համեմատաբար մի փոքր իշխող խումբ կարողացել է իր ճնշող ներկայությունն ապահովել հին տեղական մշակութային ավանդույթներ ունեցող բնակչության մեջ: Ուրարտական կայսերական մշակույթի (ամրոցային ճարտարապետություն, տաճարներ, արձանագրություններ, խեցեղեն) արագ տարածումը և անհետացումը կայսրության ստեղծման և անկման հետ ցույց են տալիս, որ այն ընդամենը եղել է իշխանությունից կախված մի «պետական հավաքածու», մակերեսային, ոչ խորքային ծածկոց:

Չնայած տարածաժամանակային և մշակութային մեծ տարբերություններին, Ուրարտուն, ըստ Պ. Զիմանսկու, որոշ առումներով համադրելի է հարավամերիկյան ինկաների կայսրության հետ¹⁸²: Իրադրությունն ավելի պարզ պատկերացնելու համար հնարավոր է ներկայացնել ևս մեկ պատմական գուգահեռ: Ռուսական կայսրությունը XIX դարում գրավեց Հյուսիսային Կովկասը, կառուցեց ամրոցներ, քաղաքներ ևն: Եթե Ռուսաստանը հետ քաշվեր կամ կործանվեր, կայսերական մշակույթի որոշ մնացորդներ Կովկասում գուցե և մնային, բայց բնակչությունը կվերադառնար իր հին կենսաձևին՝ լեռնային գյուղեր, փոքր ֆեոդալական տիրույթներ ևն, քանի որ այնտեղ կմնային նույն բնակիչները, իսկ կայսրություն և կայսերական մշակույթ այլևս չէր լինի: Այս նույնը որոշ չափով ճիշտ կլիներ ոչ միայն Ռուսական կայսրության այլալեզու գավառների, այլև հենց ռուսական էթնիկական տարածքների համար. եթե կայսրությունը հետ քաշվեր, մարդիկ կվերադառնային իրենց ավանդական, ոչ կայսերական կենսակերպին (առանց ֆրանսախոս արիստոկրատիայի, նահանգապետերի, ոստիկանապետերի, նրանց նստավայրերի, գորանոցների ևն)¹⁸³:

Ամփոփելով կարելի է ասել, որ «ուրարտական» հուշարձանները և մշակույթը ճնշող մեծամասնությամբ ստեղծվել են պետական իշխանությունների կողմից: Վանի առաջին արքաներն ուժով

¹⁸² Համադրելի են համարվում լեռնային երկրներում ճանապարհների և կից բնակավայրերի ու վարչական կենտրոնների ցանցի ստեղծումը, պետական ստանդարտ խեցեղենի՝ միայն այդ կենտրոններում գտնվելը, բանվորական ուժի՝ պետության կողմից կիրառման ձևերը, բարիքների կուտակումը և պահեստավորումն այդ կենտրոններում և ամրոցներում, ամրոց-բնակավայրերի ստեղծումը նոր վայրերում և դրանց լքումը պետության անկումից հետո:

¹⁸³ Պետրոսյան 2013ա:

են գրավել Հայկական լեռնաշխարհի տարբեր շրջանները և ուժով պահել իրենց իշխանության տակ: Հաջորդ արքաները նույնպես անընդհատ արշավանքներ են կազմակերպել լեռնաշխարհի՝ առաջին արքաների կողմից վաղուց ի վեր «նվաճված» երկրամասերի դեմ: Ամենուրեք հիմնվել են քաղաքներ և ամրոցներ, որոնք բնակեցվել են պետությանը լոյալ, թեև էթնիկապես ոչ միասեռ, հաճախ լեռնաշխարհի այլ շրջաններից բերված բնակչությամբ: Այդ կենտրոններում են տեղայնացած «ուրարտական» պետական մշակույթի հուշարձանները՝ խեցեղենից մինչև տաճարներ, իսկ մնացած բնակչությունը գտնվել է ուղղակի վերահսկողությունից դուրս, շարունակել իր հին, ուրարտական-պետականից էականորեն տարբերվող մշակույթն ու կենսակերպը և իշխանությունների նկատմամբ հաճախ ունեցել է թշնամական կեցվածք: Կայսրության անկումից հետո անհետացել են նաև պետության կարևոր ատրիբուտները՝ ամրոց-քաղաքները, տաճարները, գիրը ևն: Կայսրությունները հաստատուն չեն. նրանց փլուզումից անմիջապես հետո ստեղծվում է նորը¹⁸⁴:

Ուրարտական պետական մշակույթին դժվար է միարժեքորեն ինչ-որ էթնիկական հիմքեր վերագրել: Թերևս առկա է լեռնաշխարհի հարավի և հարավարևմուտքի ներդրումը, բայց ակնհայտ է, որ այն ստեղծվել է ասորեստանյանի հզոր ազդեցությամբ: Համակողմանի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ուրարտական պետությունը, կրոնը, գիրը և պետության մյուս ատրիբուտները ստեղծողները հավանաբար եղել են չափազանց փոքրաթիվ. ուրարտերեն խոսող մի հանրույթ կազմել է կայսրության կորիզը, իսկ հիմնական բնակչությունը բաղկացած է եղել այլ տարրերից¹⁸⁵: Կայսրությունում իշխող և հպատակ խավերի միջև շփումը նվազագույն էր: Երկրի բնակչության հիմնական մաս կազմող ժողովուրդը չի ինտեգրվել պետական համակարգի մեջ, հաղորդակից չի դարձել տերունական մշակույթին, նրանց շրջանում չի տարածվել իշխողների լեզուն: Պետական համակարգից դուրս մնացած այդ զանգվածը հետագայում լրացրեց այն վակուումը, որն առաջ եկավ համակարգի փլուզումից հետո¹⁸⁶:

¹⁸⁴ Дьяконов, Якобсон 1982, 10.

¹⁸⁵ Zimansky 1995, տես և Zimansky 2001. Zimansky, Stone 2003. Drews 2001, 275. Պետրոսյան 2006. 2013ա. Գրեկյան 2016ա:

¹⁸⁶ Գրեկյան 2016ա, 446:

ԳԼՈՒԽ III

ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԻ ԷԹՆՈԼԵԶԿԱԿԱՆ
ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ Մ.Թ.Ա. II-Ի ՀԱԶԱՐԱՄՅԱԿՆԵՐՈՒՄ

Սկսած մ.թ.ա. III հազարամյակից, Հայկական լեռնաշխարհին հարևան երկրների, իսկ մ.թ.ա. I հազարամյակից նաև ներքին՝ ուրարտական սեպագիր աղբյուրները հիշում են լեռնաշխարհի բազում երկրներ, ցեղեր ու ցեղախմբեր: Այսինքն՝ երկիրը բարդ էթնիկական կազմ ուներ և բազմալեզու էր: Հայկական լեռնաշխարհի նման լայնատարած լեռնային երկիրը մինչև մեկ պետության մեջ միավորվելը չէր կարող լեզվական առումով միատարր լինել (այդպիսի լեռնային երկրի լավ օրինակ է Դաղստանը, ուր համեմատաբար փոքր տարածքի վրա խոսում են իրար ազգակից և ոչ ազգակից մի քանի տասնյակ լեզուներով՝ ավարերեն, լեզգիերեն, դարգիներեն, լակերեն, թաթասարաներեն, կումիկերեն ևն, մինչդեռ պետական լեզուն կայսերականն է՝ ռուսերենը): Հիշենք Նաիրիի բազում «արքաներին»՝ ցեղային առաջնորդներին, ապա՝ Էթիունին, որը նույնպես մի շարք ցեղային իշխանություններ ընդգրկող միավորում էր: Իսկ Ուրարտուն, իրոք, բազմացեղ մի կայսրություն էր: Ավելի ուշ՝ մ.թ.ա. 400թ., Քսենոփոնը Հայաստանում նույնպես հիշում է մի շարք ցեղերի՝ հայերին, կարդուքներին, քալդայներին, տաոքներին (այլ կերպ գրվում են կարդուխներ, խալդայներ, տաոխներ), որոնց մի մասը հայտնի է արդեն ուրարտական աղբյուրներից (ասենք՝ խալդայները համապատասխանում են ուրարտական աղբյուրների Խալխտու, իսկ տաոքները՝ Դիաուխի երկրների բնակիչներին):

Հայկական լեռնաշխարհի հնագույն լեզվական իրադրության վերաբերյալ մենք կարող ենք դատողություններ անել միայն երկրի անվանաբանության հիման վրա. այնտեղ բնակվող ցեղերի լեզուներից միայն որոշ անուններ՝ տեղանուններ, անձնանուններ և դիցանուններ են պահպանվել հին աղբյուրներում: Ցեղի էթնոլեզվական պատկանելության ամենաէական կռվանը կարող է լինել անձնանունների՝ որևէ լեզվին պատկանելը: Մինչաքեմենյան Հին Արևելքում կրոնական պաշտամունքները եղել են բացառապես համայնքային՝ սահմանափակված տվյալ համայնքի տարածքում,

և պաշտամունքն էլ իրականացվել է համայնքի լեզվով: Չեն եղել տարբեր էթնիկական խմբեր ընդգրկող մեծ կրոններ և դրանց համապատասխան դավանաբանական անձնանուններ: Անձնանունները սովորաբար որոշակի իմաստ են ունեցել մարդկանց մայրենի լեզվում. բացառության կարգով հանդիպում են հին, ենթաշերտային լեզվի անուններ¹⁸⁷:

Մ.թ.ա. III հազարամյակից մեզ հասած տեղեկությունները թույլ չեն տալիս Հայկական լեռնաշխարհի լեզվական իրադրության վերաբերյալ քիչ թե շատ միարժեք հետևություններ անել: Ստորև կխոսվի այն լեզուների մասին, որոնք, դատելով մ.թ.ա. II-I հազարամյակներից մեզ հասած աղբյուրների (խեթական, ասորեստանյան, ուրարտական ևն) նյութից, կարելի է ասել, որ այդ ժամանակներում տարածված են եղել Հայկական լեռնաշխարհում (բացի հայերենից, որի հետքերը կքննվեն առանձին): Պետք է նշել, որ տվյալները թերի են, և հավանական է, որ լեռնաշխարհում խոսել են նաև մեզ անհայտ լեզուներով: Մեր դատողությունները հենված են լեռնաշխարհի՝ ավանդված անվանումները քիչ թե շատ հայտնի լեզուների տվյալների հետ համադրության վրա¹⁸⁸:

¹⁸⁷ Дьяконов 1968, 242, прим. 136. 1983, 15.

¹⁸⁸ Ե. Գրեկյանը դեռևս անտիպ մի աշխատության մեջ հնարավոր բոլոր աղբյուրներից հավաքել է Ուրարտուի և մերձակա տարածքների 265 անձի անուն (158-ը ուրարտական աղբյուրներից, 38-ը՝ ասորեստանյան տեքստերից և 43-ը՝ լեռնաշխարհի հարավային՝ Ուրարտուին սահմանակից գոտուց): Անունների մի մասը կրկնվում է, մի մասը կապ չունի բուն Ուրարտուի հետ, մի մասն էլ թերի է՝ մեզ է հասել վնասված տեքստերից: Ինչևէ, այդ մեծաքանակ անունների միարժեք ստուգաբանությունը չափազանց բարդ խնդիր է, և հեղինակի՝ այդ թեմայով ձեռագիրն էլ դեռևս մշակվելու կարիք ունի: Աշխատության ավարտից և տպագրությունից հետո կարելի կլինի ավելի ճշգրիտ դատողություններ անել Ուրարտուի էթնիկական կազմի վերաբերյալ: Ընդ որում՝ պետք է հաշվի առնել, որ արձանագրություններում գրանցված տարբեր լեզուներով անունների քանակական հարաբերությունը չի կարող ճշգրիտ արտահայտել երկրի բնակչության էթնիկական (տոկոսային) պատկերը, քանի որ, ասենք, պաշտոնյաների և իշխանավորների անունները, որոնք գոնե հիմնականում պետք է պատկանեին պետության իշխող էթնիկական խմբին, արձանագրություններում շատ ավելի հաճախ են հիշվում, քան բնակչության մյուս շերտերինը:

Սեմական լեզուներ

Լեռնաշխարհի հարավում խոսվել է սեմական լեզուներով՝ հատկապես ասուրերեն, որն աքքադերենի մի տարբերակն է, և արամեերեն: Հարևան երկրների բնակիչները այսպես թե այնպես ներթափանցում են իրար մեջ: Ուրարտուում, մինչև ուրարտական գրի ստեղծումը, օգտագործվել է ասուրերենը: Իսկ լեռնաշխարհի հարավում, ինչպես օրինակ՝ Արդինի/Մուծածիրում, ասորեստանյան ազդեցությունն առավել ուժեղ է եղել (այնտեղ ևս պահպանվել են տեղական արքայական ասուրերեն արձանագրություններ): Սեմական լեզուների խնդիրն այստեղ հատուկ քննելու կարիք չկա, որովհետև հայտնի է, որ լեռնաշխարհի հարավում ապրում էին սեմական ժողովուրդներ, որոնց պատմությունը, տարածվածությունը և անվանաբանությունը լայնորեն հայտնի է: Ուղղակի հետաքրքիր է նշել, որ ասորեստանյան Kaqqadanu «Մեծագլուխ» անունն է կրել մ.թ.ա. VIII դարավերջի ուրարտական բանակի գլխավոր զորավարը:

Խաթերեն և կասկերեն

Խաթերենը Փոքր Ասիայի հնագույն բնիկների՝ խաթերի լեզուն է, որն անհետացել է արդեն Խեթական տերության գոյության դարաշրջանում: Ի տարբերություն Փոքր Ասիայի մյուս հին՝ անատոլիական լեզուների՝ այն հնդեվրոպական չէ: Դատելով պահպանված անվանաբանությունից՝ Խեթական կայսրության հյուսիսարևելյան հարևանները՝ կասկա (սեպագիր՝ kaška) ընդհանուր անվանումով կոչվող ռազմաշունչ ցեղերը խաթերի մի ճյուղն են եղել, որոնց ներկայությունը հասել է նաև Հայաստան¹⁸⁹: Հայաստայի երկու աստվածներ՝ գաղափարագրով ավանդված Ս.GUR-ը և Տարումուն, ամենայն հավանականությամբ խաթական արմատներ ունեն (առաջինը խեթական աշխարհում ներկայացրել է խաթական Սուլիկատտե աստծու գաղափարագիրը, իսկ երկրորդը կարող է լինել Տարու դիցանվան մի տարբերակը կամ ածանցյալը)¹⁹⁰:

¹⁸⁹ Կասկերի վերաբերյալ տե՛ս ՀՀԵՊ 407-417: Նրանց և խաթերի ազգակցության վերաբերյալ՝ Zinger 2009:

¹⁹⁰ Zinger 2009. Պետրոսյան 2015բ:

Որոշ տվյալներ թույլ են տալիս կարծել, որ խաթերեն/կասկերենը տարածված է եղել նաև ավելի արևելյան շրջաններում: Քսենոփոնը Մշո դաշտավայրի գետը՝ Մեղրագետը, անվանում է Տելերոաս (Τηλεβόας. Անաբասիս IV.4.3): Այս անունն ակներևորեն համադրելի է teleb/p- արմատով հին փոքրասիական անունների հետ, որոնք պետք է կապված լինեն խաթական Teleb/pinus, Teleb/pi (կրճատ տարբերակ) դիցանվան հետ: Այս աստվածը հանդես է գալիս որպես ամպրոպի աստծու անհետացող որդի, որին կարողանում է գտնել միայն մեղուն (հմմտ. Մեղրագետ-մեղր-մեղու առնչությունը): Մեղրագետի շրջանը՝ Տարոն գավառը, հին հնչողությամբ՝ Տարան, միանգամայն համեմատելի է խաթական ամպրոպի աստված Տարուի անվան հետ, որի խեթական ձևն էր Tarawa (Նախաքրիստոնեական դարաշրջանում Տարոնը ամպրոպային հատկանիշներ ունեցող Վահագն աստծու պաշտամունքի կենտրոնն էր): Սա ցույց է տալիս, որ խաթերենը կամ նրա մի բարբառը հավանաբար հնում խոսվել է նաև Տարոնում¹⁹¹:

Խուռարարտական լեզուներ

Խուռիները հայտնվել են Հյուսիսային Միջագետքում և Փոքր Ասիայի հարակից տարածքներում, ինչպես ասվել է, մ.թ.ա. III հազարամյակի կեսից և ավելի վաղ, հնարավոր է, Հայկական լեռնաշխարհից: Ուրարտուի հարյուրավոր արձանագրությունների լեզուն ուրարտերենն է: Հավանական է, որ երկրում խոսել են նաև ուրարտերենին ազգակից բարբառներով (Գ. Մելիքիշվիլին գտնում էր, որ Արդինի/Մուծածիր քաղաքի շրջանում խոսվել է ուրարտերենի մի բարբառը)¹⁹²: Խուռիական տարր է ենթադրվում նաև լեռնաշխարհի այլ տարածքներում¹⁹³:

Այսպես թե այնպես, ուրարտերենի գոյությունն Ուրարտում ակնհայտ է: Հետաքրքիր է, որ չնայած ուրարտերենի՝ խուռիերենի հետ մերձավոր ազգակցությանը, ուրարտական անձնանունները նման չեն խուռիականներին: Ընդհանրապես, ուրարտական

¹⁹¹ Այս հարցի վերաբերյալ տես Petrosyan 2002, 144 ff. 2011, 393-394. Պետրոսյան 2015թ, 80-85:

¹⁹² Меликишвили 1948. 1960, 82-87.

¹⁹³ Меликишвили 1950.

Ան հոգևոր, Ան նյութական մշակույթը, իր տարբեր դրսևորումներով նշանակալիորեն տարբեր է խուռիականից¹⁹⁴: Ինչևէ, Հայկական լեռնաշխարհի հարավում մ.թ.ա. XIV-XIII դարից հայտնի տեղական արքաները կրում են խուռիական անուններ: Այսպես՝ հայտնի են այդ դարաշրջանի երկու խուռիական անունով արքա Ալզու երկրից (հայ.՝ Աղծնիք)՝ Antaratal և Ehlī-Teššub: Մ.թ.ա. XII-XI դդ. Հայկական լեռնաշխարհի հարավային Կադմուսի երկրի արքաները, ըստ ասորեստանյան արքա Թիգլաթպալասար I-ի արձանագրությունների, նույնպես կրում են խուռիական անուններ՝ կազմված խուռիական ամպրոպի աստված Թեշուբի անունից (Kali-Teššub, Kili-Teššub, Šadi-Teššub)¹⁹⁵: Հնարավոր է, որ նույն տարածաշրջանի Շուբրիա երկրում (Սասուն և մերձակայք) խուռիերենը խոսվել է ընդհուպ մինչև մ.թ.ա. VIII-VII դդ.: Այդ երկրի արքայական տան անդամները Սարգոն II-ի և Նրա որդի Ասարհադունի դարաշրջանում նույնպես կրում են տիպիկ խուռիական անուններ՝ Hu-Teššub, Ik-Teššub, [...]gi-Teššub: Դա որոշ չափով անսպասելի կարող էր համարվել, քանի որ խուռիերենի վերաբերյալ տեղեկություններ չկան արդեն խեթական կայսրության անկման դարաշրջանից: Բայց և այնպես, այս անունները հիշյալ երկրներում և նրանց իշխող վերնախավում խուռիերենի գոյության բավական վստահելի ցուցիչներ են (տեսականորեն դինաստիական անունները կարող են պահպանվել երկար ժամանակ, երկրի լեզվի փոփոխությունից հետո էլ, բայց դժվար է պատկերացնել այդպիսի բան կես հազարամյակի համար):

Հայկական լեռնաշխարհի հարավի Կումմե երկիրն արդեն մ.թ.ա. երկրորդ հազարամյակի սկզբից հայտնի է որպես խուռիական Թեշուբի, իսկ ուրարտական ժամանակներում՝ Թեյշեբայի պաշտամունքի կենտրոն: Այդ նույն արմատից կազմված անունով է կոչվել նաև Թեշուբի պաշտամունքի մյուս կենտրոնը՝ Kummannu/Kumminni-ն՝ հետագա Կումանա քաղաքը Կապադովկիայում: Խեթական աղբյուրները Հայկական լեռնաշխարհի արևմուտքում հիշում են Kummaḫa քաղաքը, որը թեև գտնվել է խուռիական մյուս կենտրոններից հեռու, բայց նույնպես հայտնի էր որպես ամպրոպի աստծու կարևոր կենտրոն¹⁹⁶: Այն նույնացվում է հետագա

¹⁹⁴ Вильхельм 1992, 76.

¹⁹⁵ Gelb 1944, 82-83. Меликишвили 1954, 91. Вильхельм 1992, 76. Radner 2012.

¹⁹⁶ Այս քաղաքների, նրանց պաշտամունքների և անունների ստուգաբանու-

հայկական Անի-Կամախի՝ հայոց նախաքրիստոնեական դիցարանի գերագույն աստծու՝ Արամազդի պաշտամունքի կենտրոնի հետ, ընդ որում՝ Արամազդը ևս հիշվում է որպես «ամպրոպային» աստված (Խորենացի Բ.ձգ): Իմիջիայլոց, Kummaḫa-ի հետ հնչմամբ (բայց ոչ տեղայնացմամբ) բացահայտորեն նույնական է ուրարտական աղբյուրների Qumaḫa-ն՝ հետագա Կոմմագենե երկիրը Հայաստանի հարավարևմուտքում (ուրարտերենը չի ընդունում կրկնակ բաղաձայններ): Խուռիական անձնանվան մի օրինակ է Kumaṛpi-ն՝ նույնանուն աստծու անունից՝ հայտնի մ.թ.ա. XIV դ., Իսուվայից¹⁹⁷:

Ինչպես ասվել է, ըստ Գ. Մելիքիշվիլի՝ Դայենի/Դիաուխի երկիրը նույնպես խուռիական էր, բայց այս տեսակետը վարկածային է: Ինչևէ, ուրարտական դարաշրջանում ևս, նույնիսկ լեռնաշխարհի հյուսիսում, կարելի է գտնել որոշ խուռիական անվանումներ, օրինակ Tarzuaini (Սևանի ավազան), համարյա նույնական Ուրմիա լճից՝ հարավից, այսինքն՝ խուռիական տարածքներից ավանդված Tarzu'anani տեղանվանը, պարզորոշ կերպով համարելի խուռիերեն taršuwani (= tarzuwani)՝ «մարդկություն» բառի հետ (հին ցեղանունների առավել հաճախ հանդիպող նշանակությունն է «մարդ»)¹⁹⁸:

Հնդիրանական (արիական) լեզուներ

Ինչպես ասվել է, խուռիների վերնախավն ունեցել է հնդիրանական ծագում (այսպես կոչված՝ «միտտաննիական» կամ «միջագետքյան արիացիներ»): Այն հարցին, թե երբ և որտեղից են Միջագետք եկել այդ արիացիները, գիտության մեջ միարժեք պատասխան չկա: Հնարավոր է, որ նրանք հնագույն ոստան են ունեցել Ուրմիա լճի շրջանում¹⁹⁹:

թյան վերաբերյալ տես Меликишвили 1954, 165-169. Պետրոսյան 2004ա. 2006ա, 8-16, 59-69. Petrosyan 2012:

¹⁹⁷ Kosyan 2010.

¹⁹⁸ Պետրոսյան 2010, 72, ծան. 34:

¹⁹⁹ Дьяконов 1970, 61. Schmit 1985. ՀՀԵՊ 417: Նույնիսկ կարծիք կա, որ այդ նույն շրջանում է գտնվել և հնդիրանական ցեղերի նախնական հայրենիքը, տես Sarianidi 1999 (սա համապատասխանում է հնդեվրոպական նախահայրենիքի Գամկրելիձե-Իվանովի տեղադրությանը):

Հնդիրանցիները Միջագետքում և հարակից տարածքներում հայտնվում են մ.թ.ա. XVII-XVI դարերից, խոտիական վերջին ներհոսքին զուգահեռ: Հնդիրանական անվանաբանությունը լավ հայտնի է, և այդ անունները հեշտությամբ տարբերակվում են հին մերձավորարևելյան անվանաբանության մեջ: Հնդիրանական որոշ անուններ ի հայտ են գալիս նաև Հայկական լեռնաշխարհի արևմուտքում, Հայաստանում և մերձակայքում՝ սկսած մ.թ.ա. II հազարամյակի կեսից (Uitarna, Lupakiutta, Arziutta, Šaummatari, Agni)²⁰⁰: Իրանական ծագում են ենթադրում Կումմուխ-Կոմմագենեի երկու անունների համար՝ Kundašpi և Kuštašpi՝ ավանդված համապատասխանաբար մ.թ.ա. IX և VIII դդ.²⁰¹:

Ուրմիա լճի հարավարևմուտքում Արդինի/Մուծածիր երկիրը թեև դուրս էր Ուրարտուի բուն տարածքներից, բայց ինչպես տեսանք, նշանակալի մի վայր էր երկրի համար, քանի որ այստեղ էր գտնվում Ուրարտուի գերագույն աստված Խալդիի պաշտամունքի կենտրոնը: Այս երկրի՝ Սարգոն II-ի ժամանակների արքայի անունը՝ Urzana, կարող է ստուգաբանվել իրանական հիմքով²⁰²:

Ինչպես ասվել է, Խալդիին նվիրված «դարպասը»՝ ուրարտական աստվածներին թվարկող Վանա ժայռի հսկայական արձանագրությունը, հայերեն կոչվում է «Մհերի դուռ»՝ «Սասնա ծռերի» Փոքր Մհերի անունից, ինչը ցույց է տալիս, որ էպոսի Մհերի հնագույն նախատիպը Խալդին է: Մհեր անունը ծագում է Մհիր դիցանունից, որը հնդիրանական Mitra/Miθra դիցանվան միջին իրանական ձևն է: Արդինի/Մուծածիրում Խալդիի կնոջ անունն ավանդված է Bagmaštu/Bagbartu ձևով, որը նույնպես հնդիրանական դիցանուն է հիշեցնում (հմմտ. հնդ. Bhaga դիցանունը և իրան. baga՝ «աստված», երկուսն էլ կապված Միտրա/Միթրա/Մհիր աստծու հետ)²⁰³: Մյուս կողմից Խալդիի կինը հիշվում է Ուրարտուում որպես Sarubani/ʾAruba(i)ni: Այս անունն էլ հիշեցնում է հնդկական Միտրայի հետ միասին հանդես եկող Վարունա աստծու անունը, որը պատմության մեջ առաջին անգամ հիշվում է մ.թ.ա. XIV դ., Միտտաննիի

²⁰⁰ Բոսյան 2006, Kosyan 2006a. 2010. 2014. Պետրոսյան 2015, 85-87:

²⁰¹ Грантовский 1970, 132 сл.

²⁰² Грантовский 1970, 298 слл. Դալալյան 2007, գրականությամբ. հմմտ. Меликишвили 1948, 40:

²⁰³ Грантовский 1970, 302 слл. իրան baga-ի և նրա՝ Մհիրի հետ կապի վերաբերյալ տես Eir III, 403-406:

արիական աստվածների ցանկում *Urwana-* և *Aruna-* տարբերակներով (ուրարտ. $b = v/w$)²⁰⁴: Թվում է, թե Խալդիի կերպարը ներդրվել է հնդկական Միտրա-Վարունա դիցաբանական զույգի մի տեղական տարբերակի վրա: Այսպիսով, այդ կերպարում կարծես ի հայտ են գալիս հնդիրանական դիցաբանական իրողություններ: Հնարավոր է համարվում, որ Արդինի/Մուծածիրն ինչ-որ ժամանակ եղել է իրանական ազդեցության տակ²⁰⁵ (իսկ ըստ արդեն հիշյալ կարծիքի՝ այստեղ է գտնվել արիացիների հնագույն ոստանը):

Մնում է ավելացնել, որ իրանական լեզվով են խոսել նաև Ուրարտուի պատմության վերջին շրջանում այստեղ հայտնված սկյութները:

Անատոլիական լեզուներ

Խեթերենի և լուվիերենի հետքերը Հայկական լեռնաշխարհի արևմտյան շրջաններում ի հայտ են գալիս մ.թ.ա II հազարամյակից: Հայկական լեռնաշխարհին առնչվող արդեն առաջին իսկ խեթական արձանագրության մեջ (մ.թ.ա. XV դարավերջ) հիշվում են տեղական առաջնորդների անուններ²⁰⁶, որոնց մի մասն անատոլիական տեսք ունի: Հետագայում Իսուվա երկիրը՝ հայ. Ծոփքը, դառնում է խեթերին վասալ մի թագավորություն խեթական ծագման արքայատնով: Այդօրինակ անուններից հիշենք *Šanta-*ն՝ լուվիական աստված *Šanta-*ի անունից, *Šantaziti*, լուվ. «Սանտա (աստծու) մարդ», նույն կաղապարով՝ *Walwaziti*, *Tarḫundaziti*, *Kalmaḫaziti*, ապա՝ *Muwatalli*, նույնական խեթական արքայական հայտնի անվան հետ, *Šiuša*, *Taraškuil*, *Urawalkui*²⁰⁷:

Գ. Զահուկյանը իր առաջին աշխատություններում անատոլիական էր համարում նաև Հայաստյի լեզուն, ընդ որում՝ առավել մոտ լուվիա-լիկիական խմբին²⁰⁸: Հետագայում նա փոխեց իր տեսակետը, բայց և այնպես գտնում էր, որ Հայաստյում ի հայտ են գալիս նաև

²⁰⁴ Հմայակյան 1990, 110–111, ծան. 87:

²⁰⁵ *Տեն Меликишвили* 1948. Burney 1993 ևն:

²⁰⁶ Kosyan 2006, 2010. Քոսյան 2014:

²⁰⁷ Այս անունների վերաբերյալ տես Laroche 1966, 123, 325, Kosyan 2010:

²⁰⁸ *Джаукян* 1964. Զահուկյան 1987, 338:

անատոլիական անվանումներ, օրինակ՝ Hugganna, (անձնանուն), Arhita, Dugamana (տեղանուններ) ևն²⁰⁹:

Խեթերենի դերը, նույնիսկ մայրաքաղաք Խաթուսասում, կայսրության վերջին շրջանում թուլանում է՝ տեղի տալով լուվիերենին, իսկ անկումից հետո, ըստ ամենայնի, խեթերենը շատ արագ դուրս է գալիս պատմության թատերաբեմից: Հայկական լեռնաշխարհի արևմուտքում (հատկապես Եփրատից արևմուտք) ձևավորվում են նոր՝ «ուշխեթական» թագավորություններ: Հարևան երկրների արձանագրություններում դրանք կոչվում են ընդհանրացնող անունով՝ Hatti (այսինքն՝ «խեթեր, խեթական երկրներ»): Ուրարտական արձանագրություններում նույն անունով Hate էր կոչվում այդ երկրներից հատկապես մեկը՝ Արածանիի և Եփրատի միախառնման վայրից արևմուտք ընկած Մելիդի (ուրարտ.՝ Մելիտեա, ներկայիս Մալաթիա) թագավորությունը: Այդ երկրներից հայտնի են բազմաթիվ հիերոգլիֆային լուվիերեն արձանագրություններ: Այդտեղ էթնիկական իրադրությունը խայտաբղետ էր. լուվիական առաջատար տարրի հետ կար և խեթական, խուռիական և արևմտասեմական բնակչություն, որին հետագայում ավելանում է փոյուզականը, այսինքն՝ այս դեպքում խեթական Hatti/Hate տերմինն ուներ ավելի շուտ աշխարհագրական, քան էթնիկական բնույթ²¹⁰: Այդ երկրներից մեկ հասած անունների բացարձակ գերակշիռ մասը խեթալուվիական է (օրինակ՝ Laparnas, Muwatilis խեթական հին արքայական անուններից, Iarris, Tarhūzas լուվիական նույնական դիցանուններից ևն)²¹¹:

Անատոլիական լեզուների՝ Հայկական լեռնաշխարհի արևմուտքում տարածված լինելը կասկած չի հարուցում: Առավել անսպասելի և հետաքրքիր է խեթերենին մոտ մի բարբառի հավանական գոյությունը լեռնաշխարհի հարավային և արևելյան շրջաններում²¹²: Ուրարտական դիցարանի երրորդ՝ արևի աստծու անունն էր Šiuini (Šiwini), որը պիտի փոխառված լիներ խեթերենին մոտ մի լեզվից, հմմտ. խեթ.՝ šiu- (šiuini, šiuanni, šiuana-)՝ «աստված», հնում՝ «արևի աստված», հմմտ. šiuatt-՝ «ցերեկ» < *dyeu-՝ լուսավոր երկնքի աստծու հնդեվրոպական անունից: Խեթերենում արևի աստվածը

²⁰⁹ Джаукян 1988, I, 74–76.

²¹⁰ Hawkins 1971, 152.

²¹¹ Косян 1994, 88–95.

²¹² Պետրոսյան 2010. Petrosyan 2010:

հանդես է գալիս խաթերենից փոխառյալ *īstanu-* անունով, այդ պատճառով էլ ուրարտական դիցանունը կարող էր փոխառվել ոչ թե խեթերենից, այլ մերձավոր մի բարբառից²¹³: Շիվինիի պաշտամունքի կենտրոնն էր մայրաքաղաք Վան-Տուշպան: Այս հիման վրա Վ. Իվանովը կարծիք է հայտնել, որ Վանի շրջանը կարող էր լինել խեթական ցեղերի այն հին բնօրրանը, որտեղից նրանք հետագայում տեղաշարժվել են արևմուտք²¹⁴:

Հայկական անվանաբանության մեջ *Šiwini* անվան հետ համադրելի են *սիւ/-սեւ-* հիմքով տեղանունները (և խեթական, և ուրարտական սեպագրում *s* հնչյունը հաղորդվել է *š*-ով, իսկ հայերենում *եւ* և *իւ* երկբարբառները հերթագայում են): Սրանցից առաջին հերթին նշենք Սևան ամրոցը Վանից 33 կմ արևելք (վանեցիների հավատալիքներում արևը մի հրեղեն պատանի է, որը քնում է Վանա լճի մեջ և ծագում Վանի արևելյան լեռներից)²¹⁵: Սևան անունով մյուս ամրոցը գտնվում էր Գեղամա լճի նույնանուն կղզու վրա. հետագայում այդ անունը անցել է լճին: Սևանա լիճը գտնվում էր Սյունիք, հնում՝ Սինիք/Սեմիք նահանգում, որի անունն անբաժանելի է թվում Սևանից²¹⁶ (*Šiuini*, Սեւան և Սինիք անվանումների հարաբերության համար հմմտ. խեթ. *šiuini*, *šiuanni* ձևերը): Սյունիքի արևելյան հարևան Արցախ նահանգը կոչվել է Փոքր Սինիք, իսկ նեղ իմաստով Սյունիքը Ծղուկն էր՝ ներկայիս Սիսիանը:

Սյունիքը հայ. *արև/արեգ* արմատով անվանումների առավել խիտ կենտրոնացման մի շրջան է, հմմտ. օրինակ Արևիք, Արևեաց

²¹³ Diakonoff 1971, 81. Дьяконов 1988a, 172. Վ. Իվանովը ուրարտական դիցանունը փոխառված է համարում նախագրային խեթերենից, տես Иванов 1980, 131, 136: Մյուս կողմից՝ այս դիցանունը համարվել է խուռիական արևի աստված *Šimigi*-ի ուրարտական զուգահեռը՝ տես Friedrich 1940, 217-218: Ըստ Ի. Դյակոնովի, դա բացառվում է, քանի որ խուռիերենում և ուրարտերենում չկան *-m/-w-* համապատասխանության դեպքեր, և քնիկ լինելու դեպքում *Šiwina*-ի փոխարեն կունենայինք *Šina* (*-iwi- > i* կանոնավոր սղմամբ): Որոշ ուսումնասիրողներ (Մ. Խաչիկյան, Մ. Սալվինի, Գ. Վիլհելմ) առանց հատուկ փաստարկներ ներկայացնելու Դյակոնովի առարկության դեմ շարունակում են պաշտպանել Յ. Ֆրիդրիխի տեսակետը, որը պետք է դիտվի որպես խուռաուրարտական ազգակցությունը շեշտելու ձգտման մի դրսևորում:

²¹⁴ Иванов 1980, 136. Гамкрелидзе, Иванов 1984, 896.

²¹⁵ Հարությունյան 2000, 44-45:

²¹⁶ Ալիշան 1893, 6. հմմտ. Адонц 1908, 421-423, прим. 4.

տուն, Արևիս, Արևաբուլ, Արևիկ տեղանունները (սրանցից առաջին երեքը ցեղանվան տեսք ունեն՝ «արևյաններ»)։ Սյունյաց տոհմում Արև անձնանունը հայտնի է հինգերորդ դարից։ Նույնարմատ անձնանունների մեծ մասը (Արևիկ, Արևհատ ևն) ևս Սյունիքից է²¹⁷։ Ըստ այդմ կարելի է կարծել, որ Սիւնիք < *Siw(i)niyā տեղանունը կապված է «արև, արևի աստված» նշանակության հետ։

Սևանա լճի արևելյան ափի, այսինքն՝ հավանաբար հետագա հայկական Արցախ նահանգի տարածքում գտնվող երկրներից Piruaini-ի²¹⁸ արմատը նույնական է խեթալուվիական «ծիավոր աստծու» Pirua-ի հետ²¹⁹։ Եթե այս ընթերցումը ճիշտ է, ապա պետք է կարծել, որ Արցախի նախաուրարտական դարաշրջանի բնակչության մեջ ևս եղել է անատոլիական տարրը։

Վանա և Սևանա լճերի շրջանների հին բնակչության էթնիկական պատկանելության մի կարևոր ցուցիչ կարող են լինել տեղի էնդեմիկ (միայն այդ լճերին բնորոշ) ձկների՝ Վանա *տառեխի* և Սևանա *իշխանի* անվանումները, որոնց երկուսի համար էլ հնարավոր է անատոլիական ծագումը²²⁰։

Ուրարտական տեքստերում իրենց երկիրը կոչվում է Bia(i)nili։ Բիաինիլին ներկայացրել է պետության կենտրոնական՝ Վան-Տուշպայի շրջանը, որը տեքստերում հակադրվում է թշնամական երկրներին։ Կարծում են՝ Bia(i)nili-ի Bia(i)na հոլովաձևից է ծագում Տուշպայի հետագա Վան անվանումը։ Բայց հնարավոր է մեկ այլ մեկնաբանություն։ Վանի շրջանի հյուսիսը՝ Վանա լճի հյուսիս-արևելյան ափերը, այն է՝ Գնունի գավառը, վաղ միջնադարում եղել է

²¹⁷ Տե՛ս ՀՀՏԲ և ՀԱՆԲ համապատասխան բառահոդվածներում։

²¹⁸ УХН, 329, прим. 7. КУХН, 296. Salvini 2002, 56, n. 93.

²¹⁹ Այս աստծու վերաբերյալ տե՛ս Haas 1994, 412 ff.

²²⁰ *Տառեխը* նույնական է հուն. τάριχος-ին («աղած, չորացրած կամ ծխահարված ձուկ»)։ Վերջինս կարող է առնչվել թաղման մի տերմինի՝ ταρχύω-ի հետ, որը ծագեցվում է անատոլիական ամպրոպի աստծու Tarḫu- անունից (ենթադրվում է կապ թաղման ծեսի հետ)։ այս բառերի վերաբերյալ տե՛ս ՀԱԲ Դ, 377. DELG, 1094-1095. Nagy 1990, 131 ff., 139, n. 70, Иванов 1990a, 6-7, և հատկապես Լыбидьский 2007։ Այդ բառն ունի բարբառային տարբերակներ և քիչ հավանական է, որ նոր փոխառություն լինի հունարենից։ *իշխել* և *իշխան* բառերի համար հմմտ. խեթ. iṣḫa-, eṣḫa-՝ «տեր, իշխան», տե՛ս Հովհաննիսյան 1990, 224-225, որտեղ հիմնավորվում է բառի անատոլիական և մերժվում առավել ընդունված իրանական ստուգաբանությունը։

արքայական մատուցականների՝ Գնունի իշխանական տոհմի տիրույթը (այս շրջանը հայտնի է եղել որպես գինեգործության կարևոր կենտրոն): Այս տոհմանուն/տեղանունը ծագում է հայ. *գինի* բառից, *-ունի* ածանցով՝ *Գինի-ունի* > *Գնունի* (Խորենացի Բ.ը): Տեղանվան հիմքը՝ *Bia(i)ni*-ն (հնարավոր է կարդալ՝ *Viayno-*, *Viaəno*, *Viāno-*) կարելի է դիտել հայ. *գինի* բառի խեթական ստուգաբանական զուգորդի՝ *wiyana-*-ի ուրարտական հաղորդումը, *-li* հոգնակերտով՝ որպես «խաղողի/գինու երկիր»²²¹ (ուրարտերենում *b-*ով հաղորդվում են նաև *v* և *w* հնչյունները, բառավերջի ձայնավորը դառնում է *ə*, այսինքն՝ *ը*, և հաղորդվում որպես *i/e*. ըստ այդմ, *biani*-ն և *biaini*-ն կարող էին լինել տեղական *wiyana*-ի և *viāna*-ի արտացոլումները): Եթե այդպես է, ուրեմն Գնունիքն ուղղակի թարգմանությունն է հին Բիաինիլի:

Խեթական տեսք ունի նաև հայոց առաջին մայրաքաղաքի՝ Արմավիրի անվանումը: Այն ավանդված է միայն հետուրարտական ժամանակներից, բայց պետք է որ շատ հին լինի (ուրարտական ժամանակներում Արմավիրը եղել է Արգիշթի I-ի կառուցած Արգիշթիխինիլի քաղաքի արբանյակ քաղաք-ամրոցը): Հին **Armawira*-ի առաջին մասի համար հմտ. *Arma*՝ «լուսին, լուսնաստված», հայտնի խեթերենում, լուվիերենում, լիկիերենում ու լիդիերենում: Երկրորդ մասը համադրելի է խեթ. *pir/per*, լիդ. *bira*՝ «տուն», կրոնական ոլորտում՝ «աստծու տուն, տաճար» բառերին, որտեղ *b/p*-ն այդ դիրքում կանոնավոր կերպով վերածվել է *w-*ի (*b/p* > *w* արտասանությունը բնորոշ է հին արևելափոքրասիական լեզուներին, այդ թվում՝ ուրարտերենին ու հայերենին)²²²:

Ըստ ավանդության (Խորենացի Ա.ժբ. Սեբեոս Ա)՝ Արմավիրը հիմնել և իր անունով է կոչել Հայկի թոռ Ար(ա)մայիսը: Ակնհայտորեն նույնական *Αρμαίς* անունը՝ հունական հաղորդմամբ, հայտնի Արևմտյան Փոքր Ասիայից՝ Լիկիայից, համարվում է կապված անատոլիական լուսնաստծու հետ²²³: Հատկանշական է, որ լուսնաստվածը՝ որպես այդպիսին, հայոց հին ավանդույթում հիշվում է միայն

²²¹ Ս. Պետրոսյան 1999, 188:

²²² Պետրոսյան 2010. 2014դ. Պետրոսյան, Տիրացյան 2012. Petrosyan 2012b:

²²³ Howink ten Cate 1961, 132. հայ և լիկիական անունների համեմատությունը տես Ջահուկյան 1981, 53. նույն անունը հայտնի է և հունագիպոտական ավանդույթում, որի վերաբերյալ այս առնչությամբ տես Петросян 2002, 83, 108, 196:

Արմավիրի առնչությամբ. լեգենդար արքա Վաղարշակը «մեհեան շինեալ յԱրմաւիր՝ անդրիս հաստատէ արեգական և լուսնի և իւրոց նախնեացն» (Խորենացի Բ.ը)²²⁴: Անվան երկրորդ մասի՝ «տուն (= տաճար)» մեկնաբանության համար հմմտ. Խորենացու տեղեկությունը՝ Արամայիսը կառուցում է Արմավիրը որպես իր «տուն բնակութեան»: Արմավիրի բլրի լանջին բացահայտվում է նախաուրարտական դարաշրջանի մի տաճարային համալիր²²⁵: Այն կարող էր նվիրված լինել լուսնաստծուն, որի անունով էլ պիտի կոչվեր և՛ բլուրը, և՛ հետագայում նրա վրա և շուրջը ձևավորված քաղաքը:

Այսպիսով, Վանից մինչև Սևան և Արարատյան դաշտ ընկած տարածքներում հնում եղել է հավանաբար անատոլիական, խեթերին ազգակից մի տարր: Այս տարրը չէր կարող ծագած լինել արևմտյան Խեթական կայսրության բնակիչներից. արևի աստծուն՝ խեթերենում չպահպանված անունը, լեռնաշխարհի հարավի ու արևելքի հնագիտության մեջ արևմտյան՝ Խեթական տերության հետ իրական կապերի բացակայությունը ցույց են տալիս այդ խեթալեզու տարրի տեղական հին արմատները: Ավելացնենք, որ որպես խոսվող լեզու խեթերենն արևմուտքում անհետացել էր Ուրարտուի ձևավորումից մի քանի դար առաջ:

Բալկանյան և արևմտափոքրասիական կապեր

Հայկական լեռնաշխարհի հյուսիսում և հյուսիս-արևելքում, ըստ Ստրաբոնի (XI.5.2. XI.14.14), դեռևս հին ժամանակներում ապրել են թրակյան ցեղեր: Եվ արդեն մ.թ.ա. II հազարամյակից այստեղ ի հայտ են գալիս հավանական բալկանյան անվանումներ: Լեզվական առումով բալկանյան անունների՝ Հայկական լեռնաշխարհում տարածված լինելու վերաբերյալ առավել մանրամասն գրել է Գ. Զահուկյանը, որը քննադատաբար օգտվել է նաև այլ գիտնականների վերլուծություններից: Թրակյան տարրը նա տեսնում էր և՛ հայասական, և՛ ուրարտական անվանաբանության մեջ: Այսպես՝ նա հնարավոր էր համարում հայասական Arniya, Paraya, Gašmiaha տեղանունների, Terittitunni դիցանվան և որոշ այլ անունների թրակյան ծագումը, թեև

²²⁴ Այս մասին տես և Тревер 1953, 104–106:

²²⁵ Карапетян и др. 2004, 268–274.

ներկայացրել է դրանց մեկնաբանության նաև այլ հնարավորություններ²²⁶։ Ուրարտական անվանաբանության մեջ նա՝ որպես թրակյան, բերում է *Dišini* անձնանունը և *išpilibria* ու *U(e)duri Etiuhi* տեղանունները, որոնցից առաջինը համեմատում է թրակ. *Diuzenes* անձնանվան, երկրորդի երկրորդ մասը՝ թրակ. *βρία*՝ «քաղաք», իսկ երրորդի առաջին մասը՝ *βεδυ*՝ «ջուր» բառերի հետ²²⁷ (այս ստուգաբանություններն առաջարկված են եղել նախորդ հետազոտողների կողմից, իսկ ինչպես կոեսնենք ստորև, *Dišini*-ն հայկական անուն է)։

Հայասայի առաջնորդների և արքաների անուններից երկուսի լավագույն զուգահեռները Բալկաններից են՝ մակեդոնա-փոյուգական ավանդույթից։

Midaš/Mitaš. Հայասայի և մերձակա տարածքներում խեթերի դեմ ապստամբած մի առաջնորդի անունն է (Հայասա անվանումը չի հիշվում արձանագրության մեջ. այն թվագրում են Հայասայի դարաշրջանից առաջ՝ մ.թ.ա. XVդ. վերջով)²²⁸։ Նույնական է Փոյուգիայի արքա Միդասի անվանը (մ.թ.ա. VIIIդ.)։

Karanniš (ավելի հազվադեպ կարդում են նաև *Lanniš*). համադրելի է Մակեդոնիայի արքա *Κάρανος*-ի անվանը (հմմտ. մակեդ. *κόραννος*՝ «արքա», հուն. *κάρανος*՝ «առաջնորդ», հնդեվրոպական ստուգաբանությամբ)։ Ըստ լեգենդի՝ Միդասը բրիզների արքան էր Մակեդոնիայում, որն իր ցեղակիցներով անցել էր Փոքր Ասիա և հիմնել Փոյուգիան։ Նրան դուրս էր բռնել Կարանոսը և հիմք դրել այն դինաստիային, որի ներկայացուցիչն էր Ալեքսանդր Մակեդոնացին (Հեթորդոտոս, VII.73. Պլուտարքոս, «Ալեքսանդր» II. Հուստինոս VII.1.11)²²⁹։

Գ. Զահուկյանը բերում է հայասա-մակեդոնական նաև այլ անվանաբանական զուգահեռներ՝ *Hugganaš* – *Γυγαία*, (անձնանուն), *Barraya* – *Βέρ(ρ)οια*, *Halimana* – *Almana*, *Arniya* – *Ἀρνισσα* (տեղանուններ)²³⁰։

²²⁶ Զահուկյան 1970, 79–81. 1976, 106–107. 1987, 338–339. 1988, 153. Джаукян 1984a. 1988, 73. տե՛ս և երեմյան 1968. Ս.Պետրոսյան 1977. 1979. 1979ա. Պետրոսյան 1991. Петросян 2002, 150–158, 163–168։

²²⁷ Զահուկյան 1987, 435։

²²⁸ Այս ապստամբության թվագրության վերաբերյալ տե՛ս Քոսյան 2000, 161–164։

²²⁹ Djahukian 1961, 372. Джаукян 1964, 41–42. Զահուկյան 1976, 93. տե՛ս և DELG, 496։ Այս անունների վերաբերյալ ավելի մանրամասն տե՛ս Պետրոսյան 1997, 82–86. Петросян 2002, 165, прим. 534։

²³⁰ Զահուկյան 1970, 73–81։

Ապստամբ Միդաս/Միտասի և փոյուզացի Միդասի անունների նույնությունը բացատրվել է տարբեր ձևերով²³¹: Այդ անունը տեղայնացվում է Հայկական լեռնաշխարհի արևմուտքում (մ.թ.ա. XVդ.), Փոյուզիայում (մ.թ.ա. VIIIդ.), ապա և որպես լեգենդար արքա՝ Բալկաններում (մ.թ.ա. IXդ.): Իմիջիայլոց, փոյուզացի Միդասի կերպարը չափազանց առասպելականացած է²³², և նրա նրանում, գոնե տեսականորեն, կարող էին պահպանվել նաև պատմական պախխուվացի Միդասի հիշողությունները: Առանց այս փաստերը մանրամասն քննարկելու կարելի է եզրակացնել, որ Հայաստանի և շատ ավելի ուշ դարաշրջանի Մակեդոնիայի իշխանավորների անունների նույնությունը արդյունք է այդ երկրների բնակիչների (գոնե մի մասի՝ իշխող տարրի) էթնիկական նույնության կամ մերձավոր ազգակցության: Մակեդոնիայի լեգենդար պատմության անուններն ու դեպքերը տեսականորեն կարող են նույնիսկ արձագանքը լինել հենց արևելյան իրողությունների, որոնց հիշողությունը Բալկաններ է հասել Միտասի ցեղի՝ դեպի արևմուտք գաղթի հետևանքով, որը հունական լեգենդում փոխել է իր ուղղությունը:

Ինչևէ, միարժեք եզրակացություններ անելը դժվար է: Հնարավոր է, որ Միդասի անունն անատոլիական է. Mita(i)s հիերոգլիֆային լուսնիերենում նշանակում է «արքայի ծառա» և այդ անունը փոյուզական մեկ այլ արքայանվան հետ (Կուրտիս/Կուրտիյաս = Գորդիոս) հանդես է գալիս նաև հիերոգլիֆային լուսնիական անվանացանկում²³³: Հայաստանի արքաներից Խուկկաննասի անունը նույնպես բացահայտ անատոլիական տեսք ունի՝ հմմտ. խեթ. *ḫuḫḫa-*, լիկ. *xuga*՝ «պապ»²³⁴: Այս նույն արմատն է երևում նաև մակեդոնական *Γυγαία* անվան մեջ²³⁵, այսինքն՝ անատոլիական ազդեցություն կարող էր լինել նաև մակեդոներենի վրա:

Բերված տեղանվանաբանական կապերն իհարկե ենթադրական են: Բայց թվում է, թե կարելի է գտնել փոյուզերենին, հունարենին ու մակեդոներենին ազգակից լեզվով գոնե մեկ իրական

²³¹ Дьяконов 1968, 114. Diakonoff 1984, 160-161. Sevin 1991, 97. Քոսյան 2000, 161-164, ընդարձակ մատենագիտությամբ. 2004, 75-77. Kosyan 2006. 2010:

²³² Грейвс 1992, 215 слл. տես և Моисеева 1984.

²³³ Косян 1994, 38, 95-97. Kosyan 2010:

²³⁴ Զահուկյան 1970, 136. Джаукян 1988 I, 74:

²³⁵ Զահուկյան 1970, 43:

տեղանուն Հայասայի շրջանում: Պախխուվացի Միդաս/Միտասի ապստամբության մասին պատմող արձանագրության մեջ հիշվող Պախխուրա (Paḫḫura) տեղանունը կարելի է պահպանված համարել Բյուրակն լեռների Պախր անվան մեջ (այդպես է կոչվում նաև շղթայի ամենաբարձր լեռը): Լեռնաշղթայի անվանումները՝ Պախր, Բյուրակն («10000 աչք՝ աղբյուր»), թրք. Բինգյոլ («1000 լիճ») թույլ են տալիս Պախխուրա տեղանունը մեկնաբանել որպես հնդեվրոպական՝ *bḥḡgʰu- «շատ, խիտ, գեր» (հմտ. հուն. πᾶχυς՝ «հաստ, խիտ», հայ. < իրան. բազում) և խաթ. ura(i) «աղբյուր» (փոխառություն ինչ-որ մի հնդեվրոպական, բայց ոչ անատոլիական լեզվից, քանի որ *wer- «ջուր» արմատը բացակայում է այդ լեզուներում)²³⁶: Այսպիսով, այն կարող է մեկնաբանվել որպես «շատ/բազում աղբյուր (ունեցող)»: Այս ստուգաբանությունը հաստատվում է Պախր լեռան լանջին գտնվող Բազմաղբյուր գյուղի անվամբ²³⁷, որը հին տեղանվան հայերեն թարգմանությունը պիտի լիներ:

*Bḥḡgʰu- > paxu- զարգացումը կարող էր բնորոշ լինել հունարենին մոտ որևէ «կենտոմային» լեզվի (որպիսիք են փոյուգերենն ու մակեդոներենը), որտեղ *ḡ-ն պետք է վերածվեր a-ի, իսկ բաղաձայնները փոխվեին «Գրասմանի օրենքի» համաձայն: Պախխուրայի հետ գրեթե համընկնող «Պախխուրինա լեռների երկիրը» (հմտ. Պախր լեռները) վկայված է մ.թ.ա. XIII դարից Փոքր Ասիայի արևմուտքում, Տարուխսա և Վիլուսա (նույնացնում են հետագա Տրոյայի և Իլիոնի հետ) տեղանուններից անմիջապես առաջ (KUB XIII 11.18):

Մ.թ.ա. XII դ. սկզբից ասորեստանյան աղբյուրները տեղեկություններ են հաղորդում Mušku ցեղի մասին, որը երկու այլ ցեղերի հետ միասին տարածքներ է գրավում Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմուտքում Ծոփքում, Աղձնիքում և հարավային հարակից շրջաններում: Այս մուշքերին գիտության մեջ տարբեր ծագում են վերագրել, բայց նրանք ամենայն հավանականությամբ եղել են փոյուգացիների մի ճյուղը (տես ստորև): Պախխուվացի Միդասը, Պախխուրա տեղանունը և բերված մնացած անունների գոնե մի

²³⁶ Гамкрелидзе, Иванов 1984, 882.

²³⁷ ՀՀՏԲ I, 780. Պախխուվայի և Պախխուվայի տեղայնացումների վերաբերյալ տես Քոսյան 2004, 75-77:

մասը կարող էր լինել այդ շրջաններում ավելի շուտ հաստատված մուշքերի կամ նրանց մերձավոր ազգակիցների լեզվից:

Ուրարտուի վերնախավի էթնիկական ծագումը

Ինչպես տեսանք, Ուրարտուի իշխող տարրի՝ «ուրարտացիներ» օրրանը գտնվել է Հայկական լեռնաշխարհի ծայր հարավում: Վանի շրջանը՝ ուրարտական տերության կենտրոնը, սկզբնապես բնակեցված է եղել ամենայն հավանականությամբ խեթալեզու բնակչությամբ, իսկ ուրարտախոս հանրույթն այնտեղ է անցել ուշ՝ թերևս մ.թ.ա. առաջին հազարամյակի սկզբին:

Ուրարտական դիցարանի ամենաբնորոշ առանձնահատկությունը նրա վառ արտահայտված եռամաս կառույցն է: Այն գլխավորում են գերագույն աստված Խալդին, ամպրոպի ու փոթորկի աստված Թեյշեբան և արևի աստված Շիվինին: Այս եռյակը համադրելի է հատկապես հնդեվրոպական «եռամաս գաղափարախոսության» և եռամաս դիցարանների հետ²³⁸: Ընդ որում՝ եռաֆունկցիոնալ ստորաբաժանման սկզբունքը բնորոշ չէ բոլոր հնդեվրոպական դիցարաններին. օրինակ՝ հին ասատուխական՝ խեթալուվիական ավանդույթում այն դժվար է բացահայտել: Խուռիական դիցարաններից էապես տարբեր²³⁹, այդքան ընդարձակ ու մանրամասնորեն կանոնակարգված կառույցը ակնհայտորեն ոչ թե խուռաուրարտական մի ցեղի համայնքային պարզ կրոնի արտահայտություն է, այլ պետականորեն ուղղորդված որոշակի աստվածաբանական մտքի գործունեության արդյունք²⁴⁰: Այն ընդգրկել է լեռնաշխարհի տարբեր շրջանների աստվածներ և քաղաքական պատվերով ձևավորված պետական՝ կայսերական կրոնի մի դրսևորում է:

Խալդին սկսում է հիշվել Իշպուինի արքայի արձանագրություններում, որի քաղաքական կամքով էլ հավանաբար ներդրվել և պետության գերագույն աստծու կարգավիճակ է ստացել նրա պաշտամունքը²⁴¹:

²³⁸ Պետրոսյան 2002. 2006, 5-10:

²³⁹ Խուռիական դիցարանների վերաբերյալ տես օրինակ Вильхельм 1992, 87-99. տես և Laroche 1976. Lambert 1978. Diakonoff 1981. Archi 2013.

²⁴⁰ Ուրարտուի կրոնի՝ պետական լինելու վերաբերյալ տես Salvini 1989, 82. Հմայակյան 1990:

²⁴¹ Salvini 1987, 405. 1989, 83, 85. 1995, 39.

Իսկ Խալդի, Թեյշեբա, Շիվինի եռյակով առաջնորդվող կայսերական կանոնակարգված դիցարանը ձևավորվել և համակարգվել է թերևս Իշպուինի և Մինուա արքաների համատեղ կառավարման դարաշրջանում:

Ուրարտուի իշխող արքայատոհմը հավանաբար ծագում էր Խալդիի պաշտամունքի կենտրոնի շրջանից (այլ կերպ անբացատրելի կլիներ պետության տարածքից դուրս գտնվող այդ քաղաքի աստծու գերագույն հռչակումը)²⁴²: Արքայատոհմի անունները չեն ստուգաբանվում ուրարտերենով և զուգահեռներ չունեն այլ հինարևելյան ավանդույթներում: Նրանց մի մասը կրկնվում է մի քանի անգամ՝ չորս Սարդուրի, երկու Արգիշթի, չորս Ռուսա (պետք է հաշվի առնել, որ սեպագրում ինչ-որ տառերում է s, իսկ s-ն՝ թերևս c հնչյունը): Ընդ որում՝ Rusa անունն ակնհայտորեն ուրարտական չէ. ուրարտերենում, ինչպես նաև խուրիերենում, հայերենում և խեթերենում բառը չի կարող սկսվել r-ով²⁴³: Ստորև ներկայացվող առաջին երկու անունները պարզորոշ զուգահեռներ ունեն բալկանյան անվանաբանության մեջ, երրորդը համեմատելի է բալկանյան անվանաբանական մի մոդելի հետ, իսկ մյուսները ենթադրական ստուգաբանություններ են²⁴⁴:

Minua-ն (սեպագիր Meinua/Menua, էրգատիվ հոլովում՝ Menuaše) ուղղակի նույնական է հունական Μινύας-ին, մինյուացիների (արգոնավորդներ) ցեղի էպոնիմին²⁴⁵ (անվան հնագույն հնչողությունն է Minuas, որը դասական հունարենում դարձել է Minūas, ապա նոր հունարենում՝ Minias): Այս անունը հնարավոր է մեկնաբանել հնդեվրոպական «մարդ» տերմինով (ցեղանունների և համապատասխանաբար՝ էպոնիմների ամենահին և ամենահաճախ հանդիպող նշանակությունն է «մարդ»)²⁴⁶:

²⁴² Այս մասին տես Меликишвили 1954, 368:

²⁴³ Այդ անունն, ուրարտերենում հնարավոր չէր անխաթար արտասանել. ասորեստանցիները, ովքեր լսել էին բանավոր ուրարտերենում, տառադարձել են որպես Ursa, տես Хачикян 1985, 143, прим. 77:

²⁴⁴ Ուրարտական անունների մի շարք արևմտյան զուգահեռներ (ոչ բոլորն ընդունելի) առաջարկել են Պ. Կրեչմերը և Ռ. Այսլերը, տես Lehmann-Haupt 1931, 902-903.

²⁴⁵ Պետրոսյան 1997, 96-100:

²⁴⁶ Никонов 1970, 15-16. Μινύας-ի հնդեվրոպական բնույթի մասին կարող է վկայել այն հանգամանքը, որ հունական առասպելաբանության մեջ

Argišti-ի համար հմմտ. հուն. 'Αργήσῃς' «սպիտակ, փայլուն» և 'Αργεστής' «արագ»՝ իբրև քանու մակդիր կամ առասպելաբանական անվանում (ուրարտ. չե-ն համապատասխանում է հայ. ստ-ին)²⁴⁷, հմմտ. հնդեվրոպական *h₂(e)rg'-/arg'-՝ «փայլուն», «արագ»²⁴⁸: Հաշվի առնելով ուրարտերենում *q*-ի առանձնահատուկ՝ թերևս խիստ քմայ-նացված հնչյունը և ուղղագրության առանձնահատկությունները (որն արտահայտվում է միջձայնավորային դիրքում և *ṛ*-ի ու ձայնավորի միջև *q*-ի՝ երբեմն ոչ պարտադիր առկայությամբ)²⁴⁹ Արգիշթին կարելի է պատկերացնել որպես *Ար(յ)իստը* և համեմատել հունարեն ἄριστος՝ «լավագույն, առաջին, ամենաազնվական» բառի հետ:

բնիկ հնդեվրոպական համարվող հազվագյուտ նմուշներից մեկն այդ արքայի և նրա նախորդների վեպն է (Պավսանիաս IX.34 հտն. տես Vian 1960): Հնդեվրոպական նշված «մարդ» տերմինի վերաբերյալ տես Mallory, Adams 1997, 366-367: Այս արմատով է կոչվում առաջին մարդը որոշ հնդեվրոպական առասպելներում, որոնց հիման վրա և վերականգնվում է հնդեվրոպական տիեզերածնության և մարդածնության առասպելը. տես Lincoln 1981, 69 ff. Հնդկական առասպելաբանության մեջ Մանուն առաջին մարդն է, որ փրկվում է ջրհեղեղից: Հատկա-նշական է, որ Հովսեպոս Փլավիոսի մոտ Μινύας-ը հանդես է գալիս որպես երկրանուն ջրհեղեղի լեռան, այսինքն՝ Նիբուր/Ջուդի դադի շրջանում (Ant. Jud. I.3.6, ըստ Նիկողայոս Դամասկոսցու): Սա կարծես հաստատում է ուրարտական հին հայրենիքի՝ Նիբուր լեռան շրջա-նում գտնվելու դրույթը: Պ. Կրեչմերը ուրարտ. Minua-ն համեմատել է Կրետեի առասպելական արքա Մինոսի անվան հետ (հղումը՝ ըստ Пиотровский 1944, 47), որը նույնպես, չնայած որոշ հնչյունաբանական դժվարություններին, հնդեվրոպական մարդածնության առասպելի համատեքստում լավագույնս համապատասխանում է *manu-ին, տես Lincoln 1991, 40, 47, n. 69: Այս հարցերի շուրջ տես Петросян 2002, 194-199. Պետրոսյան 2006, 51: Իմիջիայլոց, Մինուայի հայկական ստուգա-բանությունը (տես Ջահուկյան 1986, 55) միայն մտահայեցողական է և հաշվի առնելով նրա որդու տիպիկ բալկանյան անունը՝ քիչ հավա-նական:

²⁴⁷ Ջահուկյան 1987, 430-431:

²⁴⁸ Այս ստուգաբանությունն առաջարկել է Ռ. Այսերը. հղվում է ըստ Lehmann-Haupt 1931, 902: Մինուա և Արգիշթի անունների վերաբերյալ տես Պետրոսյան 1997, 95-102: Ἀργήσῃς-ն Էսքիլոսի «Պարսիկներում» հիշ-վում է որպես պարսկական անուն (Грантовский 1970, 308, 314), բայց այն պարսկերենով չի ստուգաբանվում և թերևս կարող է վկայել պարսիկնե-րի և Ուրարտուի իշխող վերնախավի հին կապերի մասին:

²⁴⁹ Меликишвили 1960, 46-47. Хачикян 1985, 30, 36. 20106, 152.

Sarduri. կարող է ներկայացվել որպես Sardorə (ուրարտերենում վերջին վանկը հնչել է թույլ՝ որպես *ը*, իսկ *օ*-ն սեպագրում հաղորդվել է *ու*-ով): Հավանաբար կապված է ուրարտական Sardi դիցուհու անվան հետ: Հնարավոր է համադրել դիցանուն + *dōro- հնդեվրոպական անձնանվանական կաղապարին. հմմտ. հուն. Ապոլլո-դորոս, Արտեմիդորոս, հայ. Աստվածատուր (Sardodōro- > Sardorə, կրկնվող վանկի սղմամբ և վերջին վանկի թուլացմամբ)²⁵⁰:

Հնդեվրոպական ստուգաբանություններ են առաջարկվել արքայատոհմի նաև մյուս անունների համար՝ Aramu²⁵¹, Išpuini, Inušpua²⁵², Rusa²⁵³, Erimena²⁵⁴: Սրանով ուրարտական արքայացանկը սպառնում է (հայտնի է արքայատոհմի ևս մի քանի անուն, բայց սահմանափակվում ենք միայն թագադրված արքաների անուններով): Այս ստուգաբանությունները, իհարկե, վարկածային են, բայց և այնպես, գոնե Մինուայի, Արգիշթիի և Սարգուրիի համար հավանական է հնդեվրոպական՝ հունարենին, մակեդոներենին ու փոյուգերենին մերձավոր ծագումը: Սարգուրի I-ի հայրանունն է Lutipri, որը մեկնաբանվում է խուռաուրարտական հիմքերով՝ ուրարտ. lutu՝ «կին» + խուռ. ipri՝ «տեր»: Ըստ Ն. Ադոնցի՝ Lutipri-ն Արամուի մականունն էր, որն իմաստով նույնական է Ռուսա I-ի Uedipri մականվանը՝ ուրարտ. uedi(ani)՝ «կին» + ipri²⁵⁵: Հնարավոր է հետևյալ զուգադրությունը: Խուռիական Միտտաննի թագավորությունում բոլոր

²⁵⁰ Այս անվան մասին տե՛ս Дьяконов 1958, 38, 50. УХН, 440. van Loon 1966, 8, n. 29. Պետրոսյան 2006, 52-53. Գրեկյան 2010:

²⁵¹ Պետրոսյան 2002, 33-34. 2014q, 228-230. Петросян 2002, 47 слл. Արամուի համար առաջարկված է նաև «արամեացի» մեկնաբանությունը (տե՛ս van Loon 1966, 7, n. 24. Salvini 1987, 399-400. 1995, 26), որը, կարծում են, հավանական չէ, տե՛ս Radner 1998, 132. Петросян 2002, 79:

²⁵² Джаукян 1963, 28, 100.

²⁵³ K.F. Lehmann-Haupt 1931, 902. Միայն մտահայեցողական է ուրարտ. Rusa-ի իրանական մեկնաբանությունը որպես rōšan-՝ «լուսավոր», իբրև վերջին -n-ի՝ որպես ուրարտական հոդ գիտակցմամբ և անկմամբ, տե՛ս Զահուկյան 1987, 435:

²⁵⁴ Lehmann-Haupt 1931, 684, 902: Այս անվան վերաբերյալ տե՛ս և Фрайданк 1976, 87-88. Զահուկյան 1987, 441:

²⁵⁵ Ադոնց 1972, 194, տե՛ս և КУХН 485, 491: Այս ստուգաբանություններն առաջարկել է Պ. Կրեչմերը, տե՛ս Lehmann-Haupt 1931, 901: Հետաքրքիր է, որ այդ խուռաուրարտական ձևերը պիտի լինեին ուրարտերենից որոշակիորեն տարբերվող մի բարբառից կամ քարացած արխաիզմների:

հայտնի արքաները կրել են հնդարիական գահանուններ: Բայց գոնե մեկ արքա ունեցել է նաև խուռիական անուն: Դա բացատրվում է արքայատոհմի հնդիրանական ծագմամբ: Արքաները կարող էին ունենալ նաև խուռիական անձնանուններ, բայց գահանունները միայն հին դինաստիական էին²⁵⁶: Նման մի սովորույթ կարող էր լինել և Ուրարտուում, որը ցույց է տալիս արքայատոհմի ոչ ուրարտալեզու ծագումը:

Ինչպես տեսանք, Հայկական լեռնաշխարհի արևմուտքում բալկանյան լեզվական տարրի հետքերը նկատելի են արդեն Խեթական կայսրության ժամանակներից՝ մ.թ.ա. երկրորդ հազարամյակի կեսերից: Իսկ լեռնաշխարհի հարավում բալկանյան կապերով էթնիկական տարրն առաջին անգամ հիշվում է մ.թ.ա. XII դ. ասորեստանյան աղբյուրներում: Թիգլաթպալասար I-ը (մ.թ.ա. 1114-1076թթ.) պատմում է, որ իր գահակալման տարում 20000 մուշքեր իրենց հինգ արքաներով, որոնք հիսուն տարի առաջ նվաճել էին Ալզի (հայ.՝ Աղձնիք) և Պուրուլումզի (չի տեղայնացվում) երկրները, գրավում են Կադմուխի երկիրը (Նիբուր/Ջուդի լեռան արևմուտքում): Թիգլաթպալասարը պարտության է մատնում մուշքերի 12000-անոց զորքը, մնացածին տեղահանում և վերաբնակեցնում, իսկ նրանց երկիրը՝ միացնում Ասորեստանին: Այդ ընթացքում 4000 կասկեր (ուրիշ անունով՝ ապիշլացիներ) և ուրումացիներ՝ «Խաթե (խեթական) երկրի անհանգիստ/անհնազանդ զորքեր», որոնք գրավել էին «Սուբարտուի քաղաքները», առանց կռվի հպատակվում են արքային²⁵⁷: Ընդ որում՝ այս մուշքերն ասորեստանյան աղբյուրներում հիշվում են ավելի վաղ՝ XII դ. առաջին քառորդից²⁵⁸:

Մուշքերի ծագման և սկզբնական տեղայնացման վերաբերյալ կան տարբեր կարծիքներ²⁵⁹: Հիշյալ դեպքերից դարեր անց՝ մ.թ.ա.

²⁵⁶ Տե՛ս, օրինակ, Дьяконов 1970, 41. Ավետիսյան 2002, 21-22: Այս երևույթն ի հայտ է գալիս նաև Խեթական թագավորության վերջին շրջանում:

²⁵⁷ Grayson 1976, №№ 18, 67, 93. АВИИУ, №№ 2, 10, 11, 12, 13. ՀԺՊՔ 102, 104. տե՛ս և Дьяконов 1968, 123-124:

²⁵⁸ Radner 2006, 147-148.

²⁵⁹ Մուշքերի վերաբերյալ տե՛ս Melink 1965. Хааз 1980, 398. Маккуин 1983, 55. Sevin 1991, 96-97. Քոսյան 1996, Քոսյան 1998, 33-45. Քոսյան 1999ա, 162-166. Röllig 1993-1997. Wittke 2004. Bryce 2009, I-li. Kopanias 2015: Նրանց ցեղանվան, արևմտյան կապերի և Հայկական լեռնաշխարհում թողած հետքերի վերաբերյալ՝ Петросян 2002, 150-154, 167:

VIII դ. վերջին, ասորեստանյան աղբյուրներում մուշքեր են կոչվել փոյուզացիները, ինչը տեղի է տվել հակասական մեկնաբանությունների: Ըստ այդմ՝ գիտական գրականության մեջ փոյուզացիներին կոչել են «արևմտյան», իսկ ավելի վաղ Հայկական լեռնաշխարհ թափանցածներին՝ «արևելյան» մուշքեր: Ըստ Ի. Դյակոնովի՝ արևելյան մուշքերը հայերի լեզվական նախնիներն էին՝ հնագույն հայերը, որոնք, գաղթելով Բալկաններից, սկզբնապես հիմնվել են Հայկական լեռնաշխարհի հարավարևմտյան շրջաններում²⁶⁰ (տե՛ս ստորև, էջ 151-164. այս տեսակետը չի ընդունվել մասնագետների կողմից): Կարծիք կա, որ նրանց անվանումը կապվում է Արևմտյան Փոքր Ասիայի Մյուսիա երկրի (հուն.՝ Μυσία, Μυσοί, հետագայում՝ Μοισία, լատ.՝ Moesia), հայ. -ք հոգնակերտով²⁶¹, բայց դա միայն տեսական հնարավորություն է:

Հայկական ավանդույթում մուշքերի ցեղանվան հիշողությունն է համարվում Արամ նահապետի տոհմակից Մշակը, որը Կապադովկիայում կառուցում է Մաժակ քաղաքը: Ուլխեթական դարաշրջանից հետո Կապադովկիան փոյուզական երկիր էր դարձել, և Մշակի (*Մուշ-ակ*)՝ փոյուզական էպոնիմ շատ հավանական է: Ըստ այդմ՝ Մշակի և Արամի ազգակցությունը կարող է ակնարկել նաև Արամի փոյուզական կապերը (Արամը հաճախ համարվել է ուրումացիների էպոնիմ, տե՛ս ստորև, էջ 154): Սեպագիր mušku/i ցեղանվան հետ նույնական է անտիկ աղբյուրների մոսքերի հուն.՝ μόσχοι ցեղանունը Պոնտոսում (սեպագրում *o*-ն հաղորդվել է *no*-ով, *u*-ն՝ *z*-ով), որոնց հետ են կապում հետագա *մեսխի* ցեղանունը և Մեսխեթի երկրանունը Վրաստանի հարավ-արևմուտքում²⁶²: Ուրումացիների ցեղանվան հետ կարող են առնչվել սեպագիր աղբյուրների Ուրմե և «Ներքին Ուրումու» երկրները, որոնցից առաջինը վստահաբար տեղայնացվում է Մուշի շրջանում, իսկ երկրորդը նույնացվում է նրան կամ տեղայնացվում մերձակայքում²⁶³: Ըստ

²⁶⁰ Дьяконов 1968, 224.

²⁶¹ Дьяконов 1968, 222-223. Diakonoff 1992.

²⁶² Մուշք, մոսք և մեսխի ցեղանունների հարաբերության վերաբերյալ տե՛ս Дьяконов 1968, 218-224. հմմտ. Меликишвили 1954, 410 сл. Меликишвили, Лордкипанидзе 1989, 393 слл. Kavtaradze 1997, 353-354:

²⁶³ Арутюнян 1985, 210-212. ըստ մեկ այլ կարծիքի, «Ներքին Ուրումուն» տեղայնացվում է լեռնաշխարհի ծար հարավում, տե՛ս Liverani 1992, 40-41.

այդմ, կարելի է կապ ենթադրել Մուշ տեղանվան և ուրումացիների հետ հանդես եկող մուշքերի ցեղանվան միջև: Հետաքրքիր է, որ այդ կարծիքն արդեն արտահայտվել է՝ հենված միայն Մուշ-մուշքու անվանումների համահնչունության վրա²⁶⁴: Մինչդեռ այդ կապն այդպես ուղղագիծ չէ. սեպագիր *mušku*-ն, դատելով մոսքերի ցեղանունից, հնչել է *moskho* կամ *mōskho*-, որոնցից երկրորդից, **skh > ʒ* զարգացմամբ, կարող էր ծագել Մուշ, սեռ. հոլ. *Մշոյ* անվանումը (հմմտ. և Արճէշ < *Aršašku* տեղանունը նույն շրջանում, տես ստորև)²⁶⁵: Ըստ այդմ՝ մուշքերի և ուրումացիների մի գաղթականություն է եղել նաև Մուշի շրջանում:

Ասվածի հիման վրա կարելի է ձևակերպել հետևյալ վարկածը: Մինչև մ.թ.ա. առաջին հազարամյակի սկիզբը Ուրարտուի ապագա կենտրոնը՝ Վանի շրջանը (և ավելի հյուսիս-արևելք ընկած տարածքները), բնակեցված է եղել անատոլիական՝ խեթերենին մոտ լեզվով խոսող բնակչությամբ: Ուրարտերենը հավանաբար խոսվել է Վանա լճից հարավ ընկած շրջաններում: Խեթական կայսրության կործանման դարաշրջանում (մ.թ.ա. շուրջ 1200թ.) մի քանի ցեղ, ներխուժելով Հայկական լեռնաշխարհի հյուսիսային և հյուսիսարևմտյան շրջաններից (հավանաբար՝ կասկերի ու մոսքերի երկրներից), գրավել են լեռնաշխարհի հարավային և արևմտյան տարածքները (Ծոփք, Աղձնիք, Կորդուք), իսկ Թիգլաթպալասարը նրանցից շատերին վերաբնակեցրել է նաև հարևան շրջաններում: Այդ ցեղերից մուշքերը եղել են փոյուզացիների մի հատվածը կամ գոնե նրանց մերձավոր մի ցեղ: Հնարավոր է, որ նրանց ազգակից լինեին նաև ուրումացիները: Նոր եկած ռազմաշունչ տարրը, ինչպես հնդեվրոպական ցեղերի մյուս հայտնի գաղթերի դեպքում, իշխող դիրք է գրավել տեղի հին բնակչության մեջ: Այդ եկվորներից սերված արքայատոհմով առաջնորդվող մի զանգված մ.թ.ա. IXդ. վերջին տասնամյակներում իր իշխանությունը տարածել է Հայկական լեռնաշխարհի նշանակալի մասի վրա՝ ստեղծելով Ուրարտական կայսրությունը²⁶⁶:

²⁶⁴ Стен, опинял, Дьяконов 1968, 222 ру., Diakonov 1984, 115 ff., 195 n. 87. Diakonov 1992. Զառուկյան 1970, 78:

²⁶⁵ Петросян 2002, 151-153. **skh > ʒ* անցման համար տես Джаукян 1984, 158-160.

²⁶⁶ Այս վարկածի վերաբերյալ տես Պետրոսյան 1991. 2003b, 266-269. Петросян 2002, 53, 102, 196. 2004, 52-54. 2006, 43-69:

Արդեն Արդինիում և Կումենուում, հնարավոր է, նրանք կորցրել են իրենց լեզուն, բայց ինչպես հաճախ է պատահում նման դեպքերում, պահպանել են դինաստիական անունները: Նրանց և ուրարտերենի կրողների հարաբերությունը կարող է պատկերացվել այնպես, ինչպես եղել է արիացիների և խուռների հարաբերությունը Միտտանիում, սկանդինավցի-վարյազների և սլավոնների կամ թյուրք-բուլղարների և սլավոնների հարաբերությունը Հին Ռուսիայում և Բուլղարիայում:

Առավել ակնառու են հետևյալ համեմատությունները: 911թ. Ֆրանսիայի հյուսիսարևմտյան մի մարզ անցնում է սկանդինավյան վիկինգներին՝ նորմաններին, և սկսում կոչվել Նորմանդիա: Հետագայում նորման նվաճողները յուրացնում են ֆրանսերենը և լուծվում տեղական բնակչության մեջ (ինչպես Ռուսիայում): 1066թ. Նորմանդիայի դուքսը նվաճում է Անգլիան, որից հետո այնտեղ մի քանի դար իշխում են նորմանդա-ֆրանսիական ֆրանսախոս նվաճողները: Մեր տարածաշրջանի պատմության մեջ նման մի օրինակ է պարնացիների քոչվոր ցեղի ներխուժումը Պարթևք, վերջիններիս հետ ծուլվելը, ապա իրենց արքայատոհմի (Արշակունի) իշխանության տարածումը ողջ Իրանի ու մերձակա երկրների վրա:

Այս վարկածը որոշ չափով վերադարձ է դեպի Կ. Լեման-Հաուպտի և Պ. Կրեչմերի դրույթները, դրանց նորացված մի տարբերակը²⁶⁷: Ուրարտուի արքայատոհմը և վերնախավը ծագեցնելով համեմատաբար ուշ Հայկական լեռնաշխարհ թափանցած նվաճողներից՝ հատկապես մուշքերից, մենք ելնում ենք ոչ միայն վերջիններիս բալկանյան կապերից, այլև այն հանգամանքից, որ պատմության ընթացքում ամենուրեք սովորաբար գերիշխող դիրքեր են գրավում վերջին դարաշրջանի եկվորները:

Մնում է ավելացնել, որ այս վարկածով նոր՝ ավելի հավանական մեկնաբանություններ կարող են ստանալ մի շարք պատմական

²⁶⁷ Ըստ Լեման-Հաուպտի՝ ուրարտացիները՝ Ուրարտուի իշխող տարրը, հնդեվրոպական մի ցեղ էր, ծագումով Արևմտյան Փոքր Ասիայից՝ Լիկիայից և մերձակայքից, որը շատ ընդհանրություններ ուներ հույների և որոշ այլ ցեղերի հետ (կրետացիներ, էտրուսկներ): Գալով արևմուտքից՝ նրանք տիրել էին Հայկական լեռնաշխարհի հին բնակչությանը (տես, օրինակ, Леманн-Гаупт 1936): Ըստ Կրեչմերի՝ Ուրարտուի արքայատոհմը փոյուզական ծագում ուներ, որն ընդունվել է նաև այլոց կողմից (հղ. ըստ Пиотровский 1944, 47-48. 1959, 49), տես և Hall 1920, 458, n. 1:

փաստեր՝ հունական աղբյուրներում արմեններին մշտապես փոշու-
գական-բալկանյան ծագում վերագրելը (որպես ուրարտական վեր-
նախավի փոշուգական կապերի արձագանք), հունա-ուրարտական
և հայ-բալկանյան մի շարք բառային²⁶⁸, անվանաբանական²⁶⁹ զու-
գահեռներ են:

Հնագույն հայերի ներկայությունը Հայկական լեռնաշխարհում

XXդ. գիտության մեջ երկար ժամանակ կարծում էին, որ հայե-
րենը շատ ուշ է հայտնվել Հայկական լեռնաշխարհում և մերձակայ-
քում, և հայերենից կատարված փոխառությունները լեռնաշխարհի
հին լեզուներում (խուռիերեն, խեթերեն, լուվիերեն, ուրարտերեն)
անհնարին էին համարվում: Հետագայում այդ հարցի վերաբերյալ
այլ մոտեցում ձևավորվեց՝ այդպիսի փոխառությունները սկսեցին
հնարավոր համարվել: Հայկական տարրի՝ հին Մերձավոր Արևել-
քում ներկայության լեզվական հետքերի վերաբերյալ գրել են բազ-
մաթիվ գիտնականներ: Մինչև այժմ այդ հարցում առավել նշանա-
կալի են մնում Գ. Զահուկյանի աշխատանքները, ուր գիտական
մակարդակով քննվում են հայերենի փոխառությունները հին սե-
պագրական լեզուներից, ցույց է տրվում, որ ուրարտերենում և որոշ
այլ հին լեզուներում էլ փոխառություններ կարող են լինել հնագույն

²⁶⁸ Ամենաակնառու հայ-ուրարտա-հունական զուգահեռներն են հայ. *աւել*,
յաւելուլ, ուրարտ.՝ *abili-d(u)-*, հուն.՝ ὀφελμα, ὀφέλλω (ընդ որում՝ հայերե-
նում և հունարենում «ավելու գործիք» և «ավելացնել» իմաստներով),
հայ.՝ *բուրգն*, ուրարտ.՝ *burgana(ni)*, հուն.՝ πύργος (մերձավոր իմաստե-
րով): Սրանց պետք է ավելացնել հայ-բալկանյան ընդհանուր արմատե-
րը, օրինակ՝ *ալիւր*, *աղաւրիք*, *աղուես*, *դամբան*, *թեղի*, *կաղին*, *կամուրջ*,
մոզի, *սին* ևն (տե՛ս Զահուկյան 1987, 296-306. Martirosyan 2007. 2013):
Շատ հետաքրքիր է *արքայ* բառը, վաղնջական տեսք ունեցող *արքունիք*
ածանցյալով, հունարեն մերձավոր նշանակությամբ զուգահեռներով
(տե՛ս EDG 145-146), որը կարող էր ուղղակի փոխառություն լինել ուրար-
տական վերնախավի լեզվից (ուրարտերենում այդ բառը չկա՝ հմմտ. *eri-*
eli՝ «արքա»), հմմտ. Martirosyan 2010, 148-149:

²⁶⁹ Հմմտ., օրինակ, ազգածին ավանդության հունարենատիպ Կադմոս,
Կարդոս անձնանունները և Հայաստանի հարավի Տավրոս, Առնոս, Ար-
տոս, Գրգոս տեղանունները:

հայերենից, և որ հայերենով կարող են ստուգաբանվել Հայկական լեռնաշխարհի և մերձակա երկրների բազում հին անվանումներ²⁷⁰։ Շատ կարևոր են նաև Ի. Դյակոնովի փաստարկները հնագույն հայերի՝ Հայկական լեռնաշխարհում հին ներկայության օգտին և հայերենի՝ ուրարտերենի վրա ունեցած ազդեցության վերաբերյալ²⁷¹, քանի որ նա բոլորից լավ էր ծանոթ տարածաշրջանի հին ժողովուրդների մշակույթներին ու լեզուներին և հույժ քննադատորեն էր վերաբերվում այլ հեղինակների՝ հայ-ուրարտական լեզվական առնչությունների վերաբերյալ բերած փաստարկներին։ Նշանավոր մասնագետներից ուրարտերենի՝ հայերենից կատարված հնարավոր փոխառությունների վերաբերյալ գրել է նաև Բ. Պիոտրովսկին²⁷²։

Թվում է, թե կա հայերենի՝ Հայկական լեռնաշխարհում և մերձակայքում վաղուց գտնվելու մեկ այլ՝ շատ կարևոր փաստարկ, որի մասին քիչ է խոսվում։ Հայերենի հարուստ հնչյունաբանությունը (եռաստիճան պայթականներ՝ *բ, պ, փ, դ, տ, թ, գ, կ, ք*, այդ թվում՝ սուլականներ և շփականներ՝ *ծ, ծ, ց, ջ, ճ, չ* ևն) շատ տարբեր է հնդեվրոպական նախալեզվից և մյուս հնդեվրոպական լեզուներից, այդ թվում՝ իրեն առավել մերձավոր հունարենից և հնդիրանականներից։ Մինչդեռ այն նույնական կամ համարյա նույնական է իր հարևան քարթվելական լեզուների հնչյունաբանությանը։ Մի կողմից ակնհայտ է, որ հայերենի հնչյունաբանական համակարգը ձևավորվել է հնդեվրոպական հիմքի վրա կանոնավոր ձևափոխությունների արդյունքում (ասենք՝ *gh' > ծ, *g' > ծ, *sk > ց ևն), բայց մեծ տարբերությունը մերձավոր ազգակից լեզուների և նույնականությունը հարևան լեզվի համակարգին կարող է բացատրվել մեկ պարզ իրողությամբ՝ հարևանի հետ երկար ժամանակ կողք կողքի ապրելով։ Այդ ընդհանրությունները կարող են ունենալ հին արմատներ, ասենք՝ երկու լեզուների վրա եղել է մեկ ընդհանուր ենթաշերտի ազդեցությունը՝ սկսած վաղբրոնզեդարյան կուր-արաքսյան ընդհանուր մշակույթի դարաշրջանից կամ խաթա-կասկյան լեզուներից, բայց դրանք տեսական հնարավորություններ են։ Հայերենի հնչյունաբանությունը բոլորովին նման չէ խուռիականին, իսկ

²⁷⁰ Джаукян 1963, 133. 1985, 369. 1988. Զահուկյան 1986. 1987, 312-321, 417-474, 1988, 148-161. 1992, 34-38, 53-59. Djahukian 1990, 1992:

²⁷¹ Дьяконов 1967, 135. Diakonoff 1985a. Diakonoff 1992.

²⁷² ՀԺՊ, 420:

Նմանությունն ուրարտականին (որի վերականգնումը սեպագրի հիման վրա շատ թերի է) ավելի փոքր է, քան քարթվելականներին²⁷³: Քարթվելական լեզուները տարածված են միայն մեր տարածաշրջանում, ոչ հեռու Կովկասից, և համեմատական քննությունը ցույց է տալիս, որ վերջին հազարամյակների ընթացքում նրանց հնչյունաբանությունը շատ չի փոխվել (ընդ որում՝ սվաներենը առանձնացել է մայր լեզվից մ.թ.ա. երրորդ հազարամյակի վերջին, իսկ վրացերենն ու մեգրելա-զաներենը բաժանվել են իրարից մ.թ.ա. առաջին հազարամյակի սկզբին)²⁷⁴: Ըստ այդմ՝ հայերենը պետք է շփվեր քարթվելական լեզուների հետ մեր տարածաշրջանում և բավական հին ժամանակներից²⁷⁵:

Հայերենի՝ Հայկական լեռնաշխարհում տեղայնացնելու համար առաջին հերթին անհրաժեշտ է քննել լեռնաշխարհի անվանաբանությունը: Մինչև մ.թ.ա. առաջին հազարամյակը մեր տեղեկություններն աղքատ են և վերաբերում են միայն հարավային ու արևմտյան շրջաններին: Ուրարտական աղբյուրներն են, որ հիշում են հսկայական քանակությամբ անուններ (մարդիկ, աստվածներ, ցեղեր, բնակավայրեր, երկրներ, գետեր, լեռներ): Տեղանունների մի նշանակալի մասը նաև բավական ճշգրիտ տեղայնացվում է, շատերն էլ ներկայացնում են հայկական հայտնի տեղանունների հին ձևերը:

Մեր նպատակի համար էական է հետևյալ հարցը՝ արդյոք հայերեն կրողներ եղել են Հայկական լեռնաշխարհում մինչուրարտական դարաշրջանում (մ.թ.ա. IXդ.), թե՞ նրանք հայտնվել են այդտեղ ուրարտական պետության գոյության կամ կործանման ժամանակներում, ինչպես կարծել են որոշ հետազոտողներ: Եվ եթե եղել են, ապա ո՞ր տարածքներում: Եթե ցույց տրվի, որ ուրարտերենում թեկուզ մեկ փոխառություն կա հայերենից, և ուրարտական աղբյուրներում հիշվող Հայկական լեռնաշխարհի որոշ հատուկ անուններ

²⁷³ Խուռիերենի և ուրարտերենի հնչյունաբանության վերաբերյալ տես Дьяконов 1958. Хачикян 1985, 33–44. 2010, 120. 2010a, 130–131. 2010a, 151–153. Wilhelm 2008, 84–87. 2008a, 107–110:

²⁷⁴ Klimov 1998, IX, 29:

²⁷⁵ Հայ-քարթվելական լեզվական առնչությունների վերաբերյալ տես Աճառյան 1940, 205–217. Ղափանցյան 1961, 62–101. Զահուկյան 1987, 586–599: Քարթվելական նախալեզվում հնարավոր է գտնել մեկ հայկական արմատի փոխառությունը (*gvel- «օձ»), որը կարող է ժամանակագրվել մ.թ.ա. երրորդ հազարամյակով, տես Петросян 1987, 65. 2014, 51. Petrosyan 2016:

հայկական ծագում ունեն, ապա կարելի է ասել, որ հնագույն հայերենը խոսվել է ուրարտերենի հարևանությամբ, Հայկական լեռնաշխարհի տվյալ մասերում:

Ստորև ներկայացվում են միայն մի քանի առավել հավաստի օրինակներ:

Բառեր

ա. Հայերեն *ել* (*լ*) շաղկապը ծագում է հնդեվրոպական **epi*-ից: Շաղկապի բնիկ հայկական ծագումը կասկածից վեր է: Այն փոխառվել է ուրարտերենում, ուր հանդես է գալիս *eue*, *e'a* (կարդալ՝ *ewa*), *eia*, *eai* գրություններով²⁷⁶ (վերջին երկու ձևը ուրարտերենին բնորոշ զարգացման արդյունք է): Հայտնի է ուրարտական ամենաառաջին իսկ արձանագրություններից, մ.թ.ա. IX դ. վերջին քառորդից: Այսինքն՝ ուրարտերենը հայերենի հետ շփման մեջ է գտնվել մինչ այդ ժամանակը: Ցույց տալու համար, որ այս շաղկապը փոխառված է հայերենից, Ի. Դյակոնովը նշում է, որ ուրարտերենին ազգակից խուռիերենում դրա զուգահեռը չկա և չէր կարող լինել: Խուռիերենը՝ որպես էրգատիվ լեզու, չունի ոչ ածանցյալ շաղկապներ: Միանգամայն նույն պատկերն է շումերերենում, ուր նույնպես սկզբնապես չկար «և» իմաստով շաղկապը, բայց նոր շումերերենը փոխառել է այն հարևան լեզվից՝ աքքադերենից²⁷⁷:

բ. Ուրարտ. *mei/mi* ժխտական մասնիկն ակնհայտորեն փոխառված է հայ. նույնիմաստ *մի*-ից: Վերջինս կանոնավոր հայկական արտացոլումն է հնդեվրոպական *mē*-ի՝ հմմտ. սանսկրիտ, հին պրսկ.՝ *mā*, հուն.՝ *μή*, ալբան.՝ *mo* նույնիմաստ ձևերը²⁷⁸:

գ. Ուրարտ. *ulguše*՝ «կյանք, ողջություն, կենդանություն». հաշվի առնելով ուրարտական սեպագիր գրչության առանձնահատկությունները՝ պետք է կարդալ *olyosa*, ընդ որում՝ վերջավորությունն ուրարտական վերջածանց է: Ծագում է հայ. *ողջ* «ամբողջ, կենդանի» բառի նախնական **olyo*- ձևից²⁷⁹:

²⁷⁶ КУКН 442.

²⁷⁷ Diakonoff 1992, 52-53.

²⁷⁸ ՀԱԲ Գ, 316. Дзякян 1963, 124. Martirosyan 2010, 468-469. մասնիկի՝ հայերենից փոխառված լինելու վերաբերյալ տես հատկապես Yakubovich 2010, 164.

²⁷⁹ Diakonoff 1985, 603.

դ. Aršibi-ni (կարդալ՝ *arciwi-*) ուրարտական թագավոր Մի-նուայի՝ 22 կանգուն թռիչք կատարած «չեմպիոն» ձիու անունն է՝ «արծիվ» ենթադրյալ նշանակությամբ, ըստ հայերեն համահունչ *արծուի*, հնում՝ *արծիւի*՝ «արծիվ» բառի²⁸⁰ (բառավերջի -ni-ն ուրարտական ածանց է, իսկ արագընթաց ձիու համեմատությունը արծվի հետ հայտնի է այլուրեք): Քանի որ այս անունը տարաբնույթ մեկնաբանությունների է արժանացել, անհրաժեշտ է այստեղ դրան մանրամասն անդրադառնալ: *Արծուի* բառը համեմատվում է հնդեվրոպական լեզուների հետևյալ բառերի հետ՝ հնդ. *ṛjipya-*՝ արծվի և առասպելաբանական հովատակի մակդիր, ավետ. *ərəzifia-*՝ «արծիվ», հուն. *aigypios* < **argipios*՝ «անգղ, գիշանգղ»: Ինչպես նշում է հարցին մանրամասն անդրադարձած ականավոր հնդեվրոպաբան Բ. Վոտկինսը, բառի հնչյունաբանությունը և մակդիրների համակարգը վկայում են, որ հայերեն բառը բնիկ է՝ ժառանգված հունա-հայ-արիական բարբառային գոտուց (հմմտ. հնդեվր. *g'-*ի, հայ. *ḡ-*ի, հուն. *γ-*ի, ավետ. *z-*ի և հնդ. *j-*ի համապատասխանությունը): Արտաշես արքայի մասին հին բանաստեղծության մեջ (Խորենացի Բ.Ծ) հանդիպում ենք *արծուի սրաթև* բառակապակցությանը, որտեղ ականարկվում է բառի ծագումը հնդեվրոպական «սուր» և «թև» արմատներից «արագ թռչող» նշանակությամբ, հմմտ. լատ. *accipiter*՝ «ճուռակ»՝ որպես նույնանման մի բարդություն²⁸¹: Նկատենք,

²⁸⁰ КУКН 136.

²⁸¹ Watkins 1995: 171: Իմիջիայլոց, *արծուի սրաթև* բառակապակցությունը հանդես է գալիս նաև Գրիգոր Մագիստրոսի մոտ (ՆՀԲ Ա, 756): Դյակոնովը տարբեր աշխատություններում *aršibi-*ի համար հնարավոր էր համարում և՛ հայկական, և՛ խուռաուրարտական (որպես բնիկ հյուսիսկովկասյան) ծագումը, տե՛ս Diakonoff 1985, 602. Дьяконов, Старостин 1988, 184: Ինչևէ, այսպիսով, ուրարտ. *aršibi-*ն, ինչպես և քարթվելական ու հյուսիս-կովկասյան լեզուների զուգահեռ տերմինները (վրաց.՝ *arciw-*, չեչեն.՝ *ärzu*, բացբ.՝ *arc'ib*, լակ.՝ *b-arzu*, ևն), պետք է ի վերջո հանգեն հայերենին: Իմիջիայլոց, ուրարտ. *Aršibini-*ն չի կարող լինել խուռաուրարտական փոխառություն ձիու հնդկական (միտոաննիական) պաշտամունքից, ինչպես կարծել են ոմանք, քանի որ հայ-ուրարտական բառագիտական և անվանաբանական համընկնումներում ուրարտ. *š-*ն համապատասխանում է միայն *ḡ-*ին՝ հ.-ե. **g'-*ի կանոնավոր հայկական արտացոլմանը (*z* և *j*, այսինքն՝ *q* և *g* պարունակող հնդիրանական ձևերը ականադրորեն տառադարձված կլինեին սեպագիր *zi-ni*): Ըստ այդմ՝ զարմանք է պատճառում արևմտյան գիտության մեջ այդ պարզ

որ *aršibi*- «արծիվը» կարծես աստվածացված է եղել Ուրարտուում, հմմտ. ուրարտ. *Aršibedini* դիցանունը²⁸²:

Ե. Ուրարտ. *qaburza-ni/qapurza-ni*՝ «կամուրջ» բառը, ավանդված Արգիշթի II-ի մի արձանագրության մեջ²⁸³, ներկայացնում է հայ. *կամուրջ* բառի ակնհայտ հնագույն տարբերակը: Հայերեն բառի զուգահեռն է հուն. նույնիմաստ *γέφυρα*-ն: Ըստ Հ. Աճառյանի՝ հայ և հույն բառերի համեմատությունը ցույց է տալիս, որ հայ. *կամուրջի* հնագույն ձևը պետք է լիներ **կաւուրջ(ա)*՝ *ւ*-ի փոխարեն *մ*-ն կարող է ինչ-որ անծանոթ ձայնական օրենքի կամ ժողովրդական ստուգաբանության արդյունք լինել (նաև կարծիք կա, որ եղել են արմատի երկու՝ *b*-ով և *m*-ով տարբերակներ)²⁸⁴: Բառի-*ջ(ա)* վերջավորությունը՝ բնորոշ միայն հայերեն ձևին, պետք է ծագի հնդեվրոպական **-yā* ածանցից (**gʷəbur-yā* նախաձևից. ձայնորդից հետո *-y-* > *ջ* անցման համար հմմտ. **(s)olyo-* > *ողջ*): Ուրարտ. *qaburza-n* (կարդալ՝ *կավուրջա*) նույնական է հնագույն հայ. **կաւուրջա*-ին և պետք է փոխառված լիներ նրանից (*ջա* և *վա* վանկերը սեպագիր *za*-ով և *ba*-ով հաղորդելու համար հմմտ. ուրարտ. *Zabaḫa* = Ջավախք տեղանունը): Նկատենք, որ բառը պետք է փոխառված լիներ հայերենից ավելի ուշ, քան *ulguše*-ն (**y* > *ջ* փոխակերպումից հետո): Այսինքն՝ հայերենը և ուրարտերենը շփման մեջ են գտնվել հավանաբար բավական երկար ժամանակ:

Տեղանուններ

ա. *Aršana* (կարդալ՝ *Արծանիա*), Արածանի գետանունն է՝ առաջին անգամ վկայված մ.թ.ա. IXդ. կեսի ասորեստանյան մի աղբյուրում²⁸⁵ (անունը վերաբերում է գետի ստորին հոսանքին. հայտնի է նաև մի նույնանուն բնակավայր Վանա լճից հարավ-արևմուտք): Բացահայտ հայկական տեսք ունի. հմմտ. **h₂(e)rgʷ-/argʷ-*՝ «փայլուն, սպիտակ», արմատի միայն հայերենին բնորոշ *արծ-* (հմմտ. *արծաթ, արծնել*) արտացոլմամբ, *-անի* < **-a-niyā* բարդ ածանցով (*Արածանի*

ստուգաբանությունը հետևողականորեն մերժելու ձգտումը, տես Schmitt 2012, 126:

²⁸² Զահուկյան 1986, 49:

²⁸³ Salvini 2008, 545-546.

²⁸⁴ ՀԱԲ Բ, 502-503. տես և Martirosyan 2007, 97-99. 2010, 351-353. 2013, 114:

²⁸⁵ Арутюнян 1985, 44-45.

ձևը հետագա զարգացման արդյունք է, հին Արծանիայից՝ հմմտ. հին հուն. Ἀρσανίας ձևը): Իմիջիայլոց, *arg'- արմատով հայտնի են հնդեվրոպական մի շարք գետանուններ²⁸⁶: Արգիշթի II-ի հիշյալ արծանագրության մեջ Արածանու վերին հոսանքը կոչվում է Aršia(ni)²⁸⁷. Այս անվանումն ակնհայտորեն ներկայացնում է *arg'-ի *-iyā ածանցով տարբերակը: Ըստ այդմ՝ գետն իր ամբողջ երկարությամբ կոչվել է *arg'- արմատի երկու ածանցյալներով՝ վերին հոսանքներում Արծիա, ստորինում՝ Արծանիա:

Արևմտյան Եփրատը տարբեր լեզուներով և տարբեր դարաշրջաններում կոչվել է խեթ.՝ Mala, ուրարտ.՝ Meli(a), հուն.՝ Melas²⁸⁸, որը կարող է համադրվել հնդեվրոպական *mel-՝ «մուգ, սև» հիմքին, հմմտ. գետի ներկայիս թուրք. Karasu՝ «Սև ջուր» անվանումը: Սա հաստատվում է նաև այն իրողությամբ, որ Արածանիի հիմնական վտակ Մեղրագետը ևս հնում կոչվել է համանման մի ձևով՝ Մեղ (հմմտ. *mel-), իսկ ներկայումս՝ Karasu: Այս անվանումներն, ակնհայտորեն արտացոլում են սևի և սպիտակի հակադրության առասպելաբանական և տիեզերաբանական որոշակի պատկերացումներ՝ տեղայնացած Արածանի գետի երկայնքով²⁸⁹:

Իրականությունը, ինչպես հաճախ լինում է, բարդ է և ոչ միարժեք: Այս անվանումներում բաղադրվել են (իրար են խառնվել) երկու համահունչ հնդեվրոպական արմատներ՝ *meli-՝ «մեղր» և *mel-՝ «սև»: Մեղ գետը, ինչպես ասվեց, հետագայում հիշվում է Մեղրագետ անունով: Իսկ Վերին Եփրատ-Mala-ի և Արածանիի միախառնման վայրից արևմուտք գտնվող երկիրը և քաղաքը՝ սեպագիր աղբյուրների Melid, Melitiya, Melitea-ն, ներկայիս Մալաթիան, ստուգաբանվում է հենց *meli(t)-՝ «մեղր» հիմքով: Ընդ որում՝ նրա ենթադրյալ «կայսերական» անվանումը՝ Mıdduwa-ն, նույնպես կապված է մեղրի

²⁸⁶ Krahe 1962, 31-32:

²⁸⁷ CTU I, 545-546.

²⁸⁸ del Monte, Tischler 1978, 537. Дьяконов 1968, 161, прим. 228, 235, прим. 118. Аветисян 1984, 24-25. հմմտ. և ուրարտական աղբյուրների Meluiani տեղանունը Եփրատի արևմտյան ափին:

²⁸⁹ Այս գետանունների ստուգաբանության և հարակից էթնոլեզվական ու առասպելաբանական հարցերի շուրջ տեսն. Петросян 2002, 199-201. Հայկական լեռնաշխարհի ջրանունների, այդ թվում և այստեղ հիշյալների վերաբերյալ՝ Զիհանյան 1991. Martirosyan 2010, 670-671, 680:

հետ (հնդեվրոպական *medhu-՝ «մեղր, մեղրային խմիչք») ²⁹⁰: Տարոնում հիշվում է Մեղտի գետանունը, որը ևս տեսականորեն կարող է կապվել քննարկվող արմատների հետ: Այսինքն՝ Արածանի գետի ամբողջ երկայնքով ի հայտ են նաև գալիս գունային՝ սև/սպիտակ և «մեղրային» անվանումները: Ընդ որում, բոլոր այդ անվանումները և արմատները հնդեվրոպական են:

բ. Պատմությանը հայտնի առաջին ուրարտական արքա Արամուի «արքայական քաղաք» Aršašku(ոս)-ն կարելի է նույնացնել հետագա հայկական Արճէշին ²⁹¹: Վանա լճի հյուսիսային ափին, և ստուգաբանել որպես հնդեվրոպական *argʷesk(h)o-, նույն *argʷ-՝ «սպիտակ, փայլուն» արմատի մի ածանցյալը (*-sk(h)o- ածանցով): Այս ձևը, ըստ հայերենի օրինաչափությունների, պիտի ունենար հետևյալ զարգացումը. *argʷesk(h)o- > *Արծեսքո- > Արծեշո- > Արճէշո- > Արճէշ, սեռ. հոլովում՝ Արճիշոյ, որտեղ ծ-ն ճ է դարձել վերջին շ-ի պատճառով (հմմտ. ծանօթ/ճանաչ կրկնակ ձևը, ծ-ի ճ դառնալու համանման մեխանիզմով՝ վերջին չ-ի պատճառով), իսկ ե-ն է է դարձել շ-ից առաջ (հմմտ. էշ > *ekʷo-, ե-ի համանման զարգացմամբ): Նկատենք, որ ասուր. Aršašku-ն հնագույն հայերեն *Արծեսքո-ի համարյա ճշգրիտ սեպագիր հաղորդումն է փոքր սխալով (e-ի փոխարեն՝ a), ինչը բնորոշ է օտարալեզու անվանումների տառադարձմանը (հմմտ., օրինակ, սեպագիր Էնզիտ – հայ. Անձիտ, հայ. Եկեղեց – հուն. Ակիլիսենե համապատասխանությունները):

²⁹⁰ HED 6, 100-101.

²⁹¹ Արծաշկուն տեղայնացվում է տարբեր վայրերում՝ Արճեշում, Արծկեում, Վանի մոտ, Ուրմիա լճի շրջանում, Մուծածիրում ևն: Քաղաքի այս տեղայնացման մասին տես Karagезян 1976. Петросян 2002, 79: Ներկայումս լայն շրջանառություն ունի Մուծածիրի տեղայնացումը (Salvini 1995, 26-27): Մի կողմ թողնելով այլ դատողությունները՝ կարելի է ասել, որ Արծաշկուի և Արճեշի ստուգաբանական կապը առավել հավանական է դարձնում այդ քաղաքների նույնացումը: Այդ շրջանում են կենտրոնացած արծ՝ «փայլուն, սպիտակ» արմատով հին տեղանունները՝ Արծանիա, Արծիա, Արծկե, Արճեշ, Արճակ: Բացի այդ, Ե. Գրեկյանի հաղորդման համաձայն, ասորեստանյան աղբյուրում հիշվող Արծաշքուի մերձակա լեռ Adduri-ն (որի վրա է ապաստանում Սալմանասարից հետապնդվող Արամուն) կարող է համապատասխանել ուրարտական աղբյուրների Eiduru-ին՝ Սիփանին: Այսպիսով, Արծաշքուն պետք է գտնվեր Սիփանից ոչ հեռու, որը նորից հիմնավորում է Արծաշքու-Արճեշ համապատասխանությունը, տես Պետրոսյան 2006, 13-14:

Հայերենում հնդեվրոպական *sk-ի կանոնավոր զարգացումն է g-ն, ուստի Գ. Զահուկյանը նման դեպքերում շ-ի համար կանխադրում է *skh- նախատիպը: Հնարավոր է, որ այստեղ գործ ունենք հայերենի հնագույն բարբառային մի դրսևորման հետ, որն ի հայտ է գալիս Վանա լճի շրջանի որոշ տեղանուններում (հմմտ. *Բաղեշ < Բաղաղեշ, Մուշ < Mōskho*, մուշքերի ցեղանունից) և թույլ հետք է թողել հետագայում ընդհանրացած լեզվի վրա. հմմտ. համեմատաբար հազվագյուտ *-էշ/-աշ* վերջածանցը, որը կարելի է համարել առավել տարածված *-g* տարրով ածանցի բարբառային տարբերակը (օրինակ՝ *գեղեցկուղեշ, մատղաշ, թթուաշ* բառերում):

Արճեշը եղել է Վանա լճի հյուսիսային ծոցի, ապա և ողջ լճի անվանումը ևս, հմմտ. հուն. Ἀρσῆ(σ)ήν (Ստրաբոն XI.14.8), արաբ. Arjīš՝ «Վանա լիճը»: Լճի հյուսիսում մեկ այլ քաղաք կոչվում էր Արծակ, *-ակ* նվազական ածանցով, նույն արմատից (հետագայում՝ Արծկե, թուրք.՝ Ադըլջևազ): Ապա Վանա լճից արևելք գտնվող փոքր լիճը կոչվում էր *Արճիշակ > Արճակ* (Արճեշի նվազականը): Այսինքն՝ հնդեվրոպական *arg-՝ «փայլուն, սպիտակ» արմատի հայկական արտացոլումը հանդես է գալիս որպես Վանա լճի հյուսիսի տարածքների բնորոշիչ (որպես որոշակի տիեզերաբանական պատկերացումների արձագանք): Այսպիսով, Ուրարտուի այդ վաղ «արքայական քաղաքը» կարող էր անվանումը ստացած լինել իր հնագույն հայ բնակիչների կողմից:

գ. Alia. Արճեշից մի քանի կիլոմետր հյուսիս-արևելք ընկած բնակավայրի անվանումն է: Գտնվել է Վանա լիճը թափվող Աղի գետի հովիտն ընդգրկող գավառում, որը կոչվել է հենց Աղիովիտ՝ «Աղի (գետի) հովիտ»²⁹²: Փաստորեն, Աղի անվան հին ձևն է, *-iyā ածանցով (հնդեվրոպական *sal-՝ «աղ» արմատի հայերեն զարգացմամբ), որը գետից անցած պիտի լինի բնակավայրին: «Աղի ծով» է կոչվում Վանա լիճը Խորենացու մոտ (Ա.Ժբ): «Աղի» անվանումը բնորոշ է ոչ միայն ծովերին ու լճերին, այլև որոշ գետերի և աղբյուրների, որոնց ջրերը, ըստ երևույթին, բնութագրվել են աղային խառնուրդներով²⁹³:

²⁹² Բ. Հարությունյան 2001, 239;

²⁹³ Гамкребидзе, Иванов 1984, 674, прим. 2. Իմիջիայլոց, ըստ Ստրաբոնի (XII.3.12), այդ նույն արմատի հետ է կապված նաև Հալիս գետի անվանումը (գետին մերձակա աղի հանքերի պատճառով):

Ե. Tuaraşinieի հսկի «Տուարածիական դաշտավայր/հովիտ»։ համապատասխանում է հայկական Տուարածատափին, Արածանի գետի վերին հոսանքների շրջանում, Հարթ գավառից հյուսիս։ Ավանդված է մ.թ.ա. VIII դ. երկրորդ քառորդին։ Հնարավոր է, որ համապատասխանում է ասորեստանյան մի աղբյուրի Tuarizu-ին (մ.թ.ա. VIII դ. կես)²⁹⁴։ Հասկանալի է հայերենով՝ հմմտ. *տուարած* «տավար արածեցնելը», *տուարածատափ* «արջառ արածեցնելու տեղ»։ Կազմված է *տուար*՝ «արջառ» և *արածիլ*՝ «խոտ ճարակել» բառերից, որոնցից գոնե վերջինն անկասկած բնիկ հայկական ծագում ունի՝ հնդեվրոպական *treg-ից²⁹⁵։

Անձնանուններ

ա. Aramu (տարբերակներ՝ Arame, Arama). Ուրարտուի առաջին հայտնի արքայի անունն է։ Նույնական է հայոց երկրորդ էպոնիմ Արամի անվանը (վերջին ճանաչվորի օրինաչափ անկումով)։ Ինչպես ասվել է, Արամ նահապետը ամպրոպի աստծու վիպականացած տարբերակն է, իսկ Նրա անունն այդ աստծու անուն/մականունն է՝ «սև, թուփ» նշանակությամբ։ Տարածաշրջանի հին լեզուներում աստվածների անունները կամ մականունները տրվել են նաև մարդկանց, հաճախ արքաների. հմմտ. խեթ. Telepinus, Arnuwandas, լուվ. Tarhünzas, Runtiyas, ասուր. Ašur, խուռ. Kumarpi դիցանուններին նույնական անձնանունները։ Ուրարտուի «սպիտակ» արքայական քաղաքի և «սև» անունով արքայի անունների այսպիսի հարաբերությունը, ինչպես քննված գետանունների դեպքում, արտացոլում են որոշակի առասպելաբանական պատկերացումներ։

Հաշվի առնելով Ուրարտուի արքայատոհմի և իշխող տարրի հնդեվրոպական, հավանական մուշքական ծագումը՝ կարելի է կարծել, որ Արամուն ևս, որն ասորեստանյան աղբյուրներում «ուրարտացի» է կոչվում, եղել է այդ նույն ցեղի ներկայացուցիչ։ Սակայն այդ անունը կարող է լինել նաև հայկական, իսկ արքայական քաղաք Արծաշքուի հայկական ստուգաբանությունը որոշակի հավանականություն է տալիս կարծելու, որ Նրա արքան կարող էր

²⁹⁴ Арутюнян 1985, 185–186.

²⁹⁵ Այս մասին տես և Զահուկյան 1988, 155, ծանոթ. 52։ Իմիջիայլոց, որոշ կասկածներով երբեմն համադրում են նաև ուրարտ. Խսի և հայ. *հովիտ* բառերը։

հայկական ծագում ունենալ: Ընդհանրապես, կարծիք կա, որ Արամուից հետո արքայատոհմը փոխվել է²⁹⁶, և այդ նոր արքայատոհմի անուններն են, որ պետք է լինեն մուշքական/բալկանյան:

բ. Diuṣini/Tiuṣini (*Դիուծինի* կամ՝ *Տիուծինի*. սեպագիր di-ն կարող է ընթերցվել և փ) ²⁹⁷. որպես ողջ էթիունի ցեղամիավորման արքա հիշվող միակ անձի անունն է (մ.թ.ա. VIII դ. կես): Համադրելի է հնդեվրոպական, մասնավորապես՝ բալկանյան *deiwo- (կամ՝ *dhes)՝ «աստված» + *g'en-՝ «ծին, տոհմ» անձնանվանական մոդելին (հուն.՝ Διογένης, Θιογενεις, թրակ.՝ Δωξενι, Diuzenus, թերևս և կելտ.՝ Divogenos)²⁹⁸, հմմտ. և հին հնդ. deva-jana՝ «աստվածների տոհմ», devaja՝ «աստծուց ծնված», որը ցույց է տալիս այդ մոդելի նաև հնդիրանական կապերը:

Այս անունը զարմանալիորեն երբեմն թրակյան է համարվել²⁹⁹, բայց ուրարտ. ֆ-ն համապատասխանում է միայն հայ. ծ-ին³⁰⁰՝ հնդեվրոպական քմայնացած ց'-ի միայն հայկական արտացոլմանը, ինչը մատնանշում է անվան հայկական ծագումը³⁰¹: Հնդեվրոպական *ց'-ի թրակյան արտացոլումը այլ թրակյան բառերի ու անունների հունական և լատինական տառադարձություններում չ և z է (հմմտ. թրակ. aiz-՝ «այծ», bzas՝ «բուծ», arzas՝ «արծ-, սպիտակ» և հենց zenis, zen, *g'en- արմատից): Եթե թրակյան հիշյալ անվան մեջ լինել ծ հնչյունը, ապա հունարենում և լատիներենում այն կարող էր արտացոլվել որպես Διοσενι, Diusenēs, այսինքն՝ s-ով, հմմտ., օրինակ, Արածանիի հուն. Ἀρσανίας՝ *Արսանիաս* ձևը:

Այսպիսով, քննարկված անվանումներում էական է ուրարտ. սեպագիր ֆ-ի հանդես գալը, որը համապատասխանում է հայ. ծ-ին, հնդեվրոպական *ց'-ի միայն հայերենին բնորոշ արտացոլմանը և կարող է դիտվել որպես բերվող անվանումների հայկական ծագման ցուցիչ: Աչքի է զարնում, որ հայերենով պարզորոշ ստուգաբանվող անվանումները տեղայնացված են հիմնականում Վանա

²⁹⁶ Меликишвили 1954, 202. Salvini 1995, 35.

²⁹⁷ Дьяконов 1958, 32.

²⁹⁸ Բալկանյան անունների վերաբերյալ տես Гиндин 1981, 42, 77. կելտականի համար՝ MacCulloch 2009, 450:

²⁹⁹ Ս. Պետրոսյան 1977, 31-32. Զահուկյան 1988, 162:

³⁰⁰ Дьяконов 1958, 36. Զահուկյան 1987, 430-431:

³⁰¹ Петросян 2002, 189-190:

լճի հյուսիսում և Արածանի գետի վերին հոսանքների շրջանում, թեև ընդգրկում են նաև այլ տարածքներ դեպի հարավ, հյուսիս և արևմուտք: Դա ցույց են տալիս, որ հայալեզու տարրը եղել է այդ տարածքներում մ.թ.ա. IX դ. առաջ՝ ավելի վաղ, քան Ուրարտական պետության ձևավորումը (գետանունները լեզվի ամենահին տարրերից են և կարող են առաջին անգամ գրավոր ավանդված լինելուց շատ ավելի հին լինել): Հատկանշական է, որ ըստ հայկական ազգածին ավանդության՝ Հայկի առաջին հանգրվանը՝ «նախնական Հայաստանը», եղել է հենց Արածանիի վերին հոսանքների շրջանում՝ Հարքում (որը հնում ավելի մեծ է եղել և ընդգրկել է նաև որոշ հարևան գավառներ)³⁰²: Ուրեմն Հայկի՝ Արածանիի շրջանում հաստատվելն արտացոլում է մինչուրարտական ժամանակների իրողությունը:

Այս տվյալները հիմք են տալիս հավանական համարելու ուրարտական արձանագրություններում նաև այլ հայերեն բառերի և անվանումների գոյությունը, ինչպես և նախաուրարտական ժամանակներում հնագույն հայերի տարածվածությունը լեռնաշխարհի նաև այլ շրջաններում³⁰³:

³⁰² Адонц 1908, 312. Բ. Հարությունյան 2001, 231-235:

³⁰³ Հայկական լեռնաշխարհի բազում հին անվանումների հայերեն ստուգաբանություններ տես Զահուկյան 1986. 1987, 443-445. 1988. Джаякян 1988, I, II. Djahukian 1990. 1992:

ԳԼՈՒԽ IV

ՀԱՍԳՈՒՅՆ ՀԱՅԵՐԻ ՆՈՒՅՆԱՅՄԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՎԱՐԿԱԾՆԵՐԸ

Հնդեվրոպական նախահայրենիքը և հայերենը

Հայերենը հնդեվրոպական լեզու է՝ ազգակից Հնդկաստանից մինչև Արևմտյան Եվրոպա տարածված բազմաթիվ լեզուների (հնդիրանական, թուսարական, հունարեն, իտալյան, կելտական, գերմանական, սլավոնական, բալթյան և այլն): Այդ լեզուների նախնին՝ հնդեվրոպական մայր լեզուն կամ «նախալեզուն», պիտի խոսվելիս լիներ նախապատմական ժամանակներում, ինչ-որ սահմանափակ մի տարածքում՝ «նախահայրենիքում»: Այդ տարածքը տեղայնացնելու լուծումները փնտրվել են առասպելաբանական, լեզվաբանական, մարդաբանական, գենետիկական և հնագիտական տվյալների հիման վրա: Գիտության զարգացման նախնական էտապում այն տեղայնացվել է Արարատ լեռան լանջերին (ըստ Աստվածաշնչի)³⁰⁴, այսինքն՝ Հայկական լեռնաշխարհում, իսկ հետագայում այլևայլ հիմնավորումներով՝ հնդեվրոպական լեզուների տարածման համարյա բոլոր տարածքներում, Հնդկաստանից ու Միջին Ասիայից մինչև Արևմտյան Եվրոպա և Նույնիսկ հյուսիսային բևեռից մինչև Ատլանտյան, Խաղաղ և Հարավային օվկիանոսներ՝ այն ժամանակագրելով մ.թ.ա. 100000-1600թթ.³⁰⁵:

Տարածաժամկային այսօրինակ լայն ընդգրկումը, որը գիտության զարգացման հետ որոշակիորեն նեղացել է, արդեն ցույց է տալիս խնդրի դժվարությունը: Ինչևէ, XIX և XX դդ. ևս առավել նախապատվելի և ընդունված են եղել նախահայրենիքի տարբեր տեղայնացումներ, բայց Հայկական լեռնաշխարհը և մերձակա տարածքները դրանց թվում չեն եղել:

³⁰⁴ Այդ տեսակետն արտահայտվել է 1767-ին հնդեվրոպաբանության նախակարապետ Զ. Փարսոնսի կողմից, որը Եվրոպայի և Ասիայի ազգակից լեզուները կապում էր Նոյի որդի Հաբեթի ժառանգների հետ, տես Mallory 1989, 10, Mallory, Adams 1997, 291:

³⁰⁵ Այս հարցերի վերաբերյալ տես Mallory 1989. Mallory, Adams 1997, 290-299. 2006, 442 ff. Мэллори 1997:

Ներկայումս առավել ընդունված են նախահայրենիքի տեղայնացման երկու տեսակետներ՝ կենտրոնաանատոլիական և պոնտոկասպյան (Կովկասից հյուսիս, Դնեպրից մինչև Վոլգա)³⁰⁶: Ասվածը բոլորովին էլ չի նշանակում, թե դրանցով սպառվում են շրջանառվող վարկածները:

Ամենից երկար ժամանակ առավել հավանական է համարվել նախահայրենիքի տեղայնացումը ժամանակակից Ուկրաինայի և Հարավային Ռուսաստանի տարածքներում³⁰⁷: Լայնորեն տարածված էր և ներկայումս էլ որոշ փոփոխություններով տարածված է Մ. Գիմբուտսի՝ 1958-ին առաջ քաշված «կուրգանային» նախահայրենիքի տեսությունը (ռուս. курган՝ «դամբանաբլուր» բառից, ըստ տեղաբնիկների թաղման ծեսի), ըստ որի՝ նախնական հնդեվրոպական հասարակությունը ծագել է մերձվոլգյան տափաստաններում և տարածվել արևմուտք՝ հայտնվելով Դանուբի ստորին հոսանքների և ավելի արևմուտք գտնվող տարածքների ոչ հնդեվրոպական նստակյաց հողագործների շրջանում: Տեղաշարժը տեղի է ունեցել երեք փուլով՝ մոտավորապես մ.թ.ա. 4500-3000թթ.: Տափաստանային անասնապահներն օգտագործել են ձիեր և անվավոր փոխադրամիջոցներ: Նրանց մշտական ճնշման տակ նվաճված տարածքներում ձևավորվել են հայրագիծ և հայրիշխանական հասարակություններ, որոնք հանգուցյալներին թաղում էին կուրգան-դամբանաբլուրներում և պաշտում արևային ու ռազմական արական աստվածությունների: Հնդեվրոպական ներգաղթողները կազմել են նոր ստեղծվող հասարակությունների իշխող վերնախավը: Նրանց ազդեցությամբ Հին Եվրոպայի խաղաղասեր բնակչությունը վերափոխվել է և ընդունել նոր իշխողների լեզուն, կրոնը և հասարակության կառույցը³⁰⁸: Այս տեսությունը, որը որոշակիորեն մշակվել է հետագա ուսումնասիրողների կողմից, մինչև այժմ ունի առավել շատ հեղինակավոր կողմնակիցներ:

³⁰⁶ Mallory, Adams 2006, 460-463.

³⁰⁷ Այսպես՝ Յ. Տիշլերը բերում է 1851-1992թթ. տարբեր գիտնականների կողմից առաջ քաշված հիսուն տեղայնացումներ, որոնցից ամենահաճախ հանդիպողը հարավային Ռուսաստանն է, տես Tischler 2002, 477-478:

³⁰⁸ Տես Gimbutas 1965. 1973. 1985, 1991. Mallory 1989 և նույն հեղինակների այլ աշխատությունները նույն թեմայով, Anthony 2007, 7, 83 ff. Anthony, Ringe 2015:

1970-ականների սկզբներին խորհրդային լեզվաբաններ Թ. Գամկրելիձեն և Վ. Իվանովը առաջ են քաշում հնդեվրոպացիների՝ Հայկական լեռնաշխարհի հարավից և Հյուսիսային Միջագետքի ու Սիրիայի հարակից տարածքներից, իսկ բրիտանացի հնագետ Ք. Ռենֆրյուն՝ հարավ-կենտրոնական Փոքր Ասիայից ծագելու վարկածները, որոնք 1980-ականներին ներկայացվում են մենագրություններով: Գամկրելիձե-Իվանովի վարկածը հենվում է լեզվաբանական, մշակութաբանական և պատմական հսկայական նյութի վրա: Առաջնային դեր է վերագրվում հնդեվրոպական մայր լեզվի և սեմական ու քարթվելական լեզուների հին կապերին, որոնք, ըստ հեղինակների, տեղայնացնում են հնդեվրոպական նախահայրենիքը այդ լեզուների տարածման շրջաններից ոչ հեռու, այսինքն՝ Հայկական լեռնաշխարհում և մերձակայքում, մ.թ.ա. շուրջ 5000թ.³⁰⁹: Այստեղից նրանց մի մասը շարժվել է դեպի Բալկաններ, իսկ մյուսը՝ Միջին Ասիայով Ռուսաստան և Ուկրաինա, որտեղ և ձևավորվել է նրանց «երկրորդային նախահայրենիքը»: Ք. Ռենֆրյուն հենվում է հիմնականում հնագիտական նյութի և դիտարկումների վրա: Ըստ նրա՝ հին հնդեվրոպացիները Փոքր Ասիայի հարավ-կենտրոնական շրջանների հին երկրագործական բնակիչներն էին (Չաթալ հյույուք ևն, մ.թ.ա. շուրջ 7000թ.), որոնք հետագայում դանդաղորեն տարածվել են այլ շրջաններ՝ իրենց հետ տանելով երկրագործական հմտությունները (այս մոտեցումը միանգամայն նոր էր և հակադրվում էր հնդեվրոպացիների՝ ռազմիկ-նվաճողներ լինելու լայնորեն ընդունված տեսակետին)³¹⁰:

Ժամանակի ընթացքում վարկածների հեղինակները ճշտում և լրացնում են իրենց տեսակետները: Ք. Ռենֆրյուն, ելնելով «հնդխեթական վարկածից»³¹¹, հարավ-կենտրոնական Փոքր Ասիան

³⁰⁹ Гамкrellидзе, Иванов 1984.

³¹⁰ Renfrew 1987.

³¹¹ Այդ վարկածի համաձայն անատոլիական և մյուս հնդեվրոպական լեզուների մայր լեզուն՝ նախահնդխեթերենը, սկզբից բաժանվել է երկու ճյուղի՝ անատոլիական և բուն հնդեվրոպական: Առաջինի ժառանգներն են վկայված անատոլիական լեզուները (խեթերեն, լուվիերեն, լիդիերեն, լիկիերեն ևն), որոնք ակնհայտորեն ազգակից են հնդեվրոպական ընտանիքին, բայց և որոշակիորեն տարբերվում են մյուսներից, իսկ երկրորդն, ավելի ուշ նորից ճյուղավորվել է, ինչի հետևանքով սկիզբ են առել մյուս հնդեվրոպական լեզուները:

ենթադրում է որպես, այսպես ասած, «նախա-նախահայրենիք»: Այստեղից հնդեվրոպացիների նախնիները գաղթել են դեպի Բալկանյան թերակղզի, որն էլ դիտվում է որպես հնդեվրոպական «երկրորդային» նախահայրենիք (թվագրվում է մ.թ.ա. 5000 թվականով): Փոքր Ասիայում են մնացել միայն անատոլիական լեզուների կրողները³¹²: Այս տեսակետը առավել հիմնավորված կերպով փաստորեն կրկնում է Գամկրելիձե-Իվանովի տեսության՝ Ի. Դյակոնովի քննադատության մեջ ներկայացրած ենթադրությունը³¹³:

Գամկրելիձեն և Իվանովը, շարունակելով պնդել իրենց հին՝ հայաստանյան և հյուսիսմիջագետքյան տեղայնացման վարկածը, որոշակի նորություններ և փոփոխություններ են մտցնում մի շարք հարցերում: Հնդեվրոպական, սեմական և քարթվելական ընդհանրություններին նրանք ավելացնում են նորերը, բերում հնդեվրոպական, հյուսիսկովկասյան, խուռաուրարտական և շումերական ընդհանրություններ (հիմնականում ըստ Ստարոստինի և Ուիթակերի)³¹⁴, ներկայացնում հնդեվրոպական անվանաբանության նոր փաստեր հինարևելյան գրավոր լեզուներում, քննարկում հնդեվրոպացիների գաղթերում նաև ջրային ճանապարհորդությունների հնարավորությունը: Իվանովը, հնդեվրոպական միասնության դարաշրջանը շարունակելով թվագրել շուրջ մ.թ.ա. 5000 թվականով, կարծում է, որ անհրաժեշտություն չկա անատոլիական լեզուների՝ մյուսներից անջատման չափազանց վաղ թվագրության³¹⁵: Նա գտնում է, որ երկրագործական արտադրող տնտեսությունն արդեն բավական տարածվել էր իր առաջավորասիական օրրանից, երբ հնդեվրոպացիները, որոնք գտնվում էին այդ տարածաշրջանում և յուրացրել էին այն, սկսում են ինտենսիվորեն տարածվել, ինչը հանգեցնում է այդ տնտեսության երկրորդային բուռն տարածման նոր էտապին³¹⁶:

Ի միջի այլոց, Գ. Զահուկյանը, որը քննադատորեն էր վերաբերվում Գամկրելիձեի և Իվանովի տեսությանը³¹⁷, իր վերջին աշխատություններում նույնպես հակված էր հնդեվրոպական

³¹² Renfrew 1998. 2001. 2003. Belwood, Renfrew 2002.

³¹³ Дьяконов 1982 I, 18-19. II, 24. 1994, 25, 358. Diakonoff 1985.

³¹⁴ Տե՛ս հատկապես Gamkrelidze, Ivanov 1990. Ivanov 2007, 128:

³¹⁵ Ivanov 2001. 2007. Иванов 2004.

³¹⁶ Ivanov 2007.

³¹⁷ Джаукян 1982. Զահուկյան 1987, 74-75:

Նախնական հայրենիքը տեղայնացնելու ինչ-որ տեղ Առաջավոր Ասիայում³¹⁸:

Ռ. Գրեյը և Ք. Ատկինսոնը, համահեղինակների հետ վերաքննելով լեզուների պատմական ազգակցության գլոտոքրոնոլոգիական մեթոդը, մեծ քանակությամբ լեզուների հիմնական բառամթերքի հիման վրա, օգտագործելով հաշվողական մաթեմատիկայի և կիրառական վիճակագրության նոր մեթոդներ, հնդեվրոպական լեզուների բաժանման և ժամանակագրության նոր մոդել են առաջարկում, որի համաձայն այդ լեզուներն իրարից բաժանվել են ավելի վաղ, քան սովորաբար ենթադրվել է (մ.թ.ա. 7500-6000թթ.)³¹⁹: Այս ժամանակագրությունը վկայում է Ռենֆրյուի տեսության օգտին, որը, ինչպես տեսանք, հնդեվրոպական միասնությունը ժամանակագրում է շուրջ 7000թ. մ.թ.ա.: Ըստ հեղինակների՝ հնարավոր են հնդեվրոպական ժողովուրդների տարածման հետևյալ փուլերը. ա. նախնական՝ Փոքր Ասիայից Հունաստան և Բալկաններ, երկրագործության տարածման հետ, մ.թ.ա. շուրջ 6500թ., և բ. մոտավորապես ըստ կուրգանային վարկածի՝ դեպի Եվրոպայի մնացած մասերը և արևելք՝ Իրան ու Կենտրոնական Ասիա: Իսկ ըստ հեղինակների վերջին հոդվածի՝ հնդեվրոպական լեզուների բաժանումը տեղի է ունեցել երկու ուղղություններով. անատոլիական ճյուղը մնացել է տեղում, արևմտյանները գնացել են արևմուտք, արևելյանները՝ արևելք³²⁰: Ինչպես տեսնում ենք, հիշյալ վարկածների միջև հնարավոր են ընդհանուր եզրեր՝ հնդեվրոպական գոնե «երկրորդային հայրենիքի» տեղայնացումը Բալկաններում և Սև ծովի հյուսիսում ու մերձակայքում³²¹:

Ներկայումս համաշխարհային ճանաչում է ստացել Հ. Պեդերսենի կողմից առաջարկված և հետագայում խորհրդային գիտության մեջ Վ. Իլլիչ-Սվիտիչի կողմից զարգացված, այսպես կոչված, լեզուների ազգակցության նոստրատիկ տեսությունը, որը ցեղակցություն է սահմանում Եվրոպայի, Ասիայի և Աֆրիկայի մի շարք

³¹⁸ Ջահուկյան 1987, 73-76. Ջահուկյան 1992, 22-26, հմմտ. Джаякян 1967, 38-39:

³¹⁹ Gray, Atkinson 2003, Atkinson, Gray 2006. Gray et al. 2011. տես և Cavalli-Sforza, Piazza 2006:

³²⁰ Bouckaert et al. 2012.

³²¹ Նման պատկեր է ուրվագծվում նաև որոշ գենետիկական ուսումնասիրությունների արդյունքում, տես Cavalli-Sforza 2000, 159-163. Cavalli-Sforza et al. 1994, 264-265. Stone et al. 2006, 200, Cavalli-Sforza and Piazza 2006:

լեզվաընտանիքների միջև՝ հնդեվրոպական, աֆրո-ասիական (որի մեջ է մտնում սեմականը), քարթվելական, ուրալյան, ալթայան, դրավիդյան ևն)³²²։ Ա. Դոլգոպոլսկին, ժամանակակից նոստրատիկ լեզվաբանության առավել ակնառու ներկայացուցիչը և վերջին՝ ամենաընդգրկուն բառարանի հեղինակը, նույնպես հնդեվրոպական նախահայրենիքի մերձավորարևելյան՝ Ռենֆրյուի տեղայնացման կողմնակից է³²³։

Հայագիտության համար կարևոր է հայերենի՝ հնդեվրոպական լեզուների շարքում ունեցած տեղի, մայր լեզվից նրա բաժանման և Հայկական լեռնաշխարհի հասնելու ուղիների հարցը։ Բավական ընդունված է ենթադրել, որ հետհնդեվրոպական դարաշրջանում եղել է հունա-հայ-հնդիրանական միասնության մի փուլ, երբ այդ լեզուների նախորդը, բաժանվելով հնդեվրոպական մայր լեզվից, որոշ ժամանակ զարգացել է առանձին։ Այնուհետև այդ լեզվից առանձնացել է արիական ճյուղը, ապա, որոշ ժամանակ անց, մնացածը կիսվել է հունական և հայկական ճյուղերի³²⁴։ Ըստ Գ. Զահուկյանի՝ հայերենի՝ որպես առանձին լեզվի սկզբնավորումը սկսվել է մ.թ.ա. III հազարամյակի սկզբից³²⁵։ Մոտավորապես նույն ժամանակն է առաջարկել և Ֆ. Կորտլանդտը (Գիմբուտասի տեսության «երրորդ ալիքը»)՝³²⁶։ Ըստ Գամկրելիձեի և Իվանովի, Յ. Տիշերի, Ատկինսոնի և Գրեյի՝ հայերենի անջատումը տեղի է ունեցել ավելի վաղ։ Ինչ վերաբերում է հայերենի տարածման ուղիներին, ըստ Գամկրելիձե-Իվանովի՝ հայերենը փաստորեն մնացել է կամ փոքր տեղաշարժ կատարելով՝ վերահաստատվել իր նախահայրենիքում։ Ռենֆրյուի վարկածի վերջին տարբերակի շրջանակներում հայերենը՝ որպես ոչ անատոլիական լեզու, պետք է սկզբնապես անցած լիներ Բալկաններ, հետո միայն վերադառնար հետ։ Իսկ ըստ պոնտ-կասպյան վարկածի՝ հայերենը տեսականորեն կարող էր Հայաստան հասնել

³²² Иллич-Свитыч 1971-76: Արևմտյան գիտության մեջ նման, բայց տարբեր մի տեսություն տես Greenberg 2000:

³²³ Dolgopolsky 1987, n. 5, 11-12. 1988. 1993. 2008, 3: Իմիջիայլոց, նոստրատիկ լեզուների նախահայրենիքը հաճախ տեղայնացնում են Հայկական լեռնաշխարհի հարավում և մերձակայքում (մ.թ.ա. 15000), տես Bomhard 1996, 67. Bomhard 2008, 221 ff.:

³²⁴ Specht 1944. Гамкрелидзе, Иванов 1984, 898-900. Martirosyan 2013:

³²⁵ Զահուկյան 1987, 25:

³²⁶ Kortlandt 1990.

և Բալկանների, և Կովկասի վրայով (թեև երկրորդ ուղին համարյա չի քննարկվում):

Այսպիսով, հնդեվրոպական նախահայրենիքի և լեզուների տարածման ուղիների վերաբերյալ կան տարբեր տեսակետներ, որոնք բոլորն էլ դեռևս մնում են վարկածային: Ակնհայտ է, որ ժամանակակից գիտությունը դեռևս հնարավորություն չունի ճշգրտորեն և միարժեքորեն լուծելու այդ խնդիրները: Դա ապագայի, գիտնականների հաջորդ սերունդների գործն է: Իմիջիայլոց, նույն չլուծված պատկերն ենք տեսնում նաև այլ լեզուների նախահայրենիքների տեղայնացման գործում³²⁷:

Հայոց ազգածագման խնդրում երբեմն էական դեր է վերագրվել հնդեվրոպական նախահայրենիքին: Երկար ժամանակ համարյա բոլոր ուսումնասիրողները, հայերին (ավելի ստույգ՝ հայերի լեզվական նախնիներին) Հայկական լեռնաշխարհի բերելով Բալկաններից, բացահայտ կամ ոչ բացահայտ ելնում էին ոչ միայն հին հունական աղբյուրների՝ հայերին բալկանյան կամ փոյուզական ծագում վերագրելու փաստից, այլև հնդեվրոպական նախահայրենիքի եվրոպական տեղայնացման վարկածներից: Հետագայում հայոց ազգածագման հարցը, հատկապես Հայաստանում, հաճախ քննարկվել է Գամկրելիձե-Իվանովի վարկածի շրջանակներում³²⁸:

Մինչդեռ Գամկրելիձե-Իվանովի վարկածը երբեք լայն ընդունելություն չի ունեցել հարցին իրազեկ քիչ թե շատ նշանավոր գիտնականների շրջանում, հատկապես Արևմուտքում: Վարկածի հանդեպ ԽՍՀՄ-ում որոշ դրական կարծիք ձևավորվեց 1980-ականներին, որը շուտով մարեց: Ընդհակառակը, շատ գիտնականներ իրենց խիստ անհամաձայնությունն են արտահայտել այդ տեսության դեմ: Նրանք, բարձր գնահատելով հեղինակների էրուդիցիան, ընդունելով հնդեվրոպական և հինմերձավորարևելյան լեզուների շփումների մասին վկայող լեզվաբանական փաստարկները, անհնար են համարում նախահայրենիքի հայաստանյան տեղադրությունը և գտնում են, որ այդ փաստերը կարող են բացատրվել այլ կերպ: Ընդ որում՝ տեսության հատկապես հնագիտական մասն է

³²⁷ Mallory, Adams 2006, 444.

³²⁸ Гамкредидзе, Иванов 1984, 913, прим. 3. 968-969, прим. 2.

համարվում առավել թույլը³²⁹: Նույնիսկ նրանք, ովքեր համակրանքով և ըմբռնումով են վերաբերվում Գամկրելիձե-Իվանովի տեսության դրույթներին (հատկապես լեզվաբանական), հնդեվրոպական նախահայրենիքի հարցում հստակ արտահայտել են իրենց անհամաձայնությունը և անգամ տարակուսանքը (օրինակ՝ Դոլգոպոլսկի, Դրյուս, Բիրնբաում և այլք)³³⁰: Ինչևէ, այդ վարկածը ներկայումս շրջանառվում է որպես անատոլիական վարկածի տարբերակ³³¹ և Վիկիպեդիայում ներկայացված է որպես «Հայկական վարկած»: Իսկ Զ. Մելորին վերջերս Ռուսաստանում հրատարակված իր մի հոդվածում հիշում է այն որպես շրջանառվող երրորդ վարկած՝ այն կոչելով «մերձավորարևելյան»³³²:

Ընդհանրապես հնդեվրոպական լեզվով խոսող որևէ ժողովրդի ազգածագման հարցը միարժեքորեն չտեղայնացվող հնդեվրոպական նախահայրենիքի հետ սերտորեն կապելը պարզունակեցնում է խնդիրը: Ավելին՝ որևէ վարկածի կառուցումը հնդեվրոպական նախահայրենիքի կոնկրետ տեղայնացման հիման վրա, ինչ-որ ենթադրյալ փոքր կամ մեծ տեղաշարժերով, կարող է արժեզրկել այն: Այսպես՝ Ուկրաինայի և հարավային Ռուսաստանի՝ գոնե երկրորդային հնդեվրոպական նախահայրենիք լինելը դժվար է վիճարկել³³³: Բայց դրանից չի բխում, որ ուկրաինեների գոյությունը Սև ծովի հյուսիսային ափերին և ռուսերենինը՝ Վոլգյան տափաստաններում հնարավոր է ուղիղ գծով հասցնել մինչև նախապատմական ժամանակներ: Պատմական ժամանակներում՝ մ.թ.ա. առաջին հազարամյակում, այսինքն՝ նախահայրենիքի դարաշրջանից հազարամյակներ անց, այդ տարածքներում տարածված էին այլ հնդեվրոպական՝

³²⁹ Sēn Gimbutas 1985. Черных 1988, 48 сл. Mallory 1989, 182. Сафронов 1989, 24-27: Վերջին ժամանակներս նշանավոր մասնագետներից միայն լեզվաբան Ս. Ստարոստինն է փաստարկներ ներկայացրել նախահայրենիքի այդ տեղադրության օգտին, տես Старостин 2007, 821-827, իսկ հնագիտական աշխատանքներից նշենք Григорьев 1999. 2003. Grigoriev 2002:

³³⁰ Sēn արդեն հղված աշխատություններում, Drews 1988, 34, 152-154. Birnbaum 1999, 13-16 նն:

³³¹ Atkinson, Gray 2006, 91-92. Mallory, Adams 2006, 460 ff. Cavalli-Sforza, Piazza 2006. տես նաև Samuelian 2000. Պետրոսյան 2003ա:

³³² Mallory 2013.

³³³ Ընդ որում՝ այդ հարցը որոշակի շահարկվում է մերձգիտական շրջանակներում, տես Шилов 1995. Раскоха 2007:

իրանական լեզուներով խոսող ցեղեր՝ սկյութներ, սարմատներ ևն: Իսկ սլավոնները ձևավորվել են այլուրեք և այդ շրջաններ անցել մ.թ.ա. I հազարամյակի կեսերին և ավելի ուշ:

Հնդեվրոպական Նախահայրենիքի դարաշրջանը սովորաբար թվագրում են մ.թ.ա. չորրորդ հազարամյակից ավելի վաղ ժամանակներով: Ցանկացած ոչ հայաստանամերձ տեղայնացում տեսականորեն չի բացառում հայերի լեզվական Նախնիների՝ Հայկական լեռնաշխարհում գտնվելը վաղնջական, Նախապատմական ժամանակներից: Միևնույն ժամանակ հայաստանյան և հայաստանամերձ տեղայնացումները ևս տեսականորեն չեն բացառում հայերի լեզվական Նախնիների ձևավորումն այլ տարածքներում և ուշ վերադարձը տարածաշրջան³³⁴:

Հայ ժողովրդի և հայոց լեզվի պատմության մասին աշխատություններում հեղինակները հաճախ ընդունել են հայերի լեզվական Նախնիների բալկանյան ներգաղթի վարկածը (Մարկվարտ, Մանանդյան, Աճառյան, Դյակոնով և այլք), ոմանք էլ շեշտել հայերի տեղական արմատները (Պիոտրովսկի, Ղափանցյան): Բայց հնագիտական նյութը հուշում է ևս մեկ հնարավորություն: Էնեոլիթից հետո՝ մ.թ.ա. չորրորդ հազարամյակի կեսերից մինչև երրորդ հազարամյակի կեսերը, Հայկական լեռնաշխարհում և հարակից շրջաններում ծաղկում է վաղբրոնզեդարյան կուր-արաքսյան մշակույթը: Նրա բնորոշ հատկանիշներն են վառ արտահայտված սոցիալական շերտավորման բացակայությունը և խաղաղ, երկրագործական կացութաձևը բնակավայրերում: Մ.թ.ա. երրորդ հազարամյակի կեսերից սկզբում Վրաստանի տարածքում, ապա և Հայաստանում, սկսում են ի հայտ գալ նոր իրողություններ՝ ռազմաշունչ գաղափարախոսությամբ մարդկանց ներհոսք, սոցիալական վառ արտահայտված շերտավորում, առաջնորդների ճոխ թաղումներ կուրգաններում (այսպես կոչված՝ Մարտկոփ-Բեդենի և վաղ թռեղքյան մշակույթներ): Շուտով հայտնվում են այլ եկվորներ, հիմնահատակ կործանվում է ողջ հին մշակույթը, վերանում են բնակավայրերը, և երկար դարեր լեռնաշխարհում տիրապետող է դառնում (կիսա) քոչվորական կենցաղը: Այս ներգաղթողները շատ առումներով համապատասխանում են հնդեվրոպացիների վերաբերյալ հայտնի պատկերացումներին: Ընդ որում՝ որոշ փաստեր՝ բնակավայրերի

³³⁴ Զահուկյան 1987, 75:

բացակայություն, կուրգանային թաղումներ, փայտակերտված-քային դամբարաններ ևն, կարող են ակնարկել ներգաղթողների գոնե մի մասի սկզբնական տարածքը՝ հնդեվրոպացիների կուրգանային/տափաստանային նախահայրենիքը: Ովքեր էին նրանք՝ խեթերի, միտտանիական արիացիների, հայերի լեզվական նախնիները, թե՛ այլ ցեղեր, դժվար է ասել: Բայց փաստերը, որոնք այս դիտանկյունից լրջորեն չեն դիտվել հայագիտության մեջ, անհրաժեշտ է քննել³³⁵:

Ավանդական բալկանյան վարկածը

Ըստ մ.թ.ա. Vդ. պատմիչ Հերոդոտոսի (VII.73)՝ հայերը Փրսյճոն *ἄπιοκοι*՝ «փոյուգիական վերաքնակիչներ» էին և զինվում էին փոյուգների նման, իսկ Եվդոքսոս Կնիդացու (մ.թ.ա. IVդ.) մի հատվածի համաձայն՝ *Ἀρμένιοι το γένος εκ Φρυσίας, και τῇ φωνῇ, πολλά φρυσίζουσι*՝ «հայերը ծագումով Փոյուգիայից են և խոսքի մեջ շատ են փոյուգաբանում» (ըստ Vդ. հեղինակ Ստեփանոս Բյուզանդացու «Էքնիկա» աշխարհագրական բառարանի): Այդ տեղեկությունները կրկնվում են՝ հասնելով մինչև ավելի ուշ միջնադար³³⁶:

Ըստ Հերոդոտոսի՝ փոյուգացիները սկզբնապես բնակվել են Բալկաններում՝ մակեդոնացիների հարևանությամբ (Հերոդոտոս VII.73. հմմտ. Ստրաբոն VII.3.2): Փոյուգական թագավորությունը Փոքր Ասիայի կենտրոնական շրջաններում գոյություն է ունեցել մ.թ.ա. VIII-VIIդդ. (խեթական կայսրության անկումից դարեր անց)³³⁷: Բայց ըստ Հոմերոսի՝ փոյուգները բնակվել են Փոքր Ասիայում շատ ավելի վաղ ժամանակներից՝ դեռևս մինչև մ.թ.ա. XIIIդ. թվագրվող

³³⁵ Այս և վերևում արծարծված այլ հարցերի վերաբերյալ առավել մանրամասն տե՛ս Պետրոսյան 2014ե: Միջին բրոնզի մշակույթների հնդեվրոպական բնույթի մասին տե՛ս Burney 1958, 78. 1977, 154. Burney, Lang 1971, 94-96. 188. Арешян 1973. 1988. Արեշյան 1987. Areshyan 1988. Оганесян 1988. 1990. Kohl 2007, 113 ff.

³³⁶ Այդ մասին տե՛ս Ադոնց 1972, 306-307, 316-318. Մանանդյան 1944, 12-15. Пиотровский 1959, 122-123. Дьяконов 1968, 204-206. Greppin 1984. Մատթեոսյան 1991. Բարսեղյան 1996, 4-9:

³³⁷ Փոյուգացիների վերաբերյալ հին հունական աղբյուրների մանրամասն տեսությունը տե՛ս Моисеева 1985:

տրոյական պատերազմը (Տրոյայի արքա Պրիամոսն օգնում է նրանց ամազոնուհիների դեմ պատերազմում՝ «Իլիական» III.189): Ինչպես տեսանք, փոյուզացիները, որոնց պետք է նույնացնել սեպագիր աղբյուրների մուշքերի հետ, արդեն ապրել են Փոքր Ասիայում մինչև Խեթական կայսրության կործանումը³³⁸:

Փոյուզացիների բալկանյան ծագումը և հայերի նախնու՝ արգոնավորդ Արմենոսի Թեսալիայից գաղթելու վերաբերյալ հայերի ծագման հունական լեգենդը որոշ չափով համահունչ են, բայց ոչ նույնական: Ըստ լեգենդի՝ Արմենոսը Հայաստան է հասել ծովով, ուղիղ Թեսալիայից, առանց Փոյուզիա մտնելու, և հաստատվել Ակիլիսենե-Եկեղիքում ու մերձակայքում: Այս երկու տվյալների համապատասխանեցումը հնարավոր է միայն գիտական վերակազմության մեջ: Ինչևէ, սրանք հին և ուղղակի տվյալներ են հայոց ազգածագման վերաբերյալ, և իհարկե պետք է հաշվի առնվեն ժամանակակից ուսումնասիրություններում: Բայց և անհրաժեշտ է քննադատաբար մոտենալ դրանց: Հին հեղինակների տեղեկությունները շատ չեն տարբերվում ավանդականներից, հաճախ հիմնված են հենց ավանդական տվյալների վրա, և կարելի է ասել, որ ավանդականի ու պատմականի միջև միջին մի դիրք են գրավում: Բայց ի հակադրություն ազգածնության առասպելների և լեգենդների, որոնք արտացոլում են ժողովուրդների առասպելական պատկերացումներն իրենց և հարևանների ծագման մասին, սրանք հենվում են նաև հեղինակի անձնական պատկերացումների և դիտարկումների վրա, որտեղ մեծ է սուբյեկտիվ գործոնի դերը:

Եվ արդյոք հին հույն հեղինակները կարո՞ղ էին ճիշտ պատասխաններ տալ ժողովուրդների և լեզուների ցեղակցության ու վաղ տեղաշարժերի հարցերին: Հայերենի՝ անկախ հնդեվրոպական լեզու լինելու փաստը բացահայտվել է միայն XIX. վերջին քառորդին³³⁹, իսկ մինչ այդ, նույնիսկ մասնագետ լեզվաբանների կողմից հայերենը համարվել է իրանական լեզու: Եվ կարո՞ղ է հույն հեղինակի տեղեկությունն այն մասին, որ հայերը խոսելիս «փոյուզաբանում» են, համարվել լեզվական ազգակցության փաստարկ: Չէ՞ որ առաջներում հայերը «թուրքաբանել» են այնպես, որ ժամանակին մի եվրոպացի ուսումնասիրող հայերենը դասակարգել է թուրքական

³³⁸ Kopanias 2012.

³³⁹ Hübschman 1877. 1897. Հյուբշման 1985:

լեզուների թվում³⁴⁰, իսկ հիմա էլ Հայաստանում «ռուսաբանում» են: Հին հույն հեղինակները ճանաչում էին հատկապես լեռնաշխարհի արևմուտքի հայերին, որտեղ իրոք եղել է փոյուզական ազդեցություն: Փոքր Հայքը և Մելիտեան եղել են Կատանիայի (Արևելյան Կապադովկիա) կազմում, որտեղ խոսվել է փոյուզերեն, այնպես որ, նույնիսկ տեղի հին ժողովուրդը անցել է փոյուզերենի (Ստրաբոն XII.1.2): Բացի այդ, ինչպես տեսանք, այդ շրջանում կարծես փոյուզերենի մի բարբառի հետքեր են նկատվում մ.թ.ա. երկրորդ հազարամյակի կեսերից:

Հին հեղինակը կարող էր նկատել ոչ թե բառերի և քերականական ձևերի ժառանգական ազգակցությունը, որը ժամանակակից լեզվաբանական կրթություն չունեցող դիտորդի համար գործնականում անհնար է (օրինակ՝ ինչպես կարող էր Եվդոքսոսի նման օտարականը ընկալել հայ. *գետ* և փոյուզ. *թédv*՝ «ջուր», հայ. *եղբայր* և փոյուզ. *բրաթεբ* բառերի ընդհանուր ծագումը), այլ ընդհանուր բառերը և, թերևս, լեզուների ինտոնացիոն նմանությունները, որոնք ազգակցության չափանիշներ չեն: Այսինքն՝ հնարավոր է, որ հայերի «փոյուզաբանելու» տեղեկությունը, եթե այն իրոք ինչ-որ մի հիմք ունի, հայտնվել է մի քանի ընդհանուր՝ թերևս միջերկրական կամ փոքրասիական հին լեզուներից ծագող ենթաշերտային բառերի ու մշակութային տերմինների³⁴¹ և/կամ արեալային բնույթի արտասանական առանձնահատկությունների հիման վրա:

Հայերի՝ փոյուզական գաղթականներ լինելը հիշվում է հետևյալ համատեքստում: Խոսելով պարսկական տարբեր բանակներում ժողովուրդների՝ տարբեր ձևերով զինված լինելու մասին՝ Հերոդոտոսը պատմում է, որ պափլագոնացիներին նույնական էին զինված լիգիացիները, մատիենները, մարիանդինները, սիրիացիները, իսկ սրանց շատ նման հանդերձանք ունեին փոյուզացիները և հայերը (VII.73-74): Այս ժողովուրդները հարևաններ են և ոչ լեզվական ազգակիցներ, և նման հանդերձանք կրելը միևնույն մշակութային գոտուն պատկանելու հետևանք է և ոչ ցեղակցության միարժեք ցուցիչ:

Ընդհանրապես հին հույն հեղինակների տեղեկությունները այլ դեպքերում ևս ժողովուրդների լեզվական ցեղակցության ճշգրիտ

³⁴⁰ Աճառյան 1951, 273:

³⁴¹ Հայերենում այդօրինակ բառերի վերաբերյալ տես հատկապես Martirosyan 2008:

պատկեր չեն ներկայացնում: Հերոդոտոսից դարեր անց, երբ հույները շատ ավելի լավ էին ճանաչում Փոքր Ասիայի ժողովուրդներին, մեծ աշխարհագրագետ, փիլիսոփա և պատմաբան Ստրաբոնը, որը ծնունդով էլ Ամասիայից էր (Պոնտոսում, ոչ հեռու Հայաստանից) և Հայաստանի իրականությանը լավատեղյակ, գրում է, թե հայերը, ասորիներն ու արաբները, հարևան լինելով, մեծ ցեղակցություն են հանդես բերում լեզվի, կյանքի ու մարմնի նկարագրի կողմից, և վկայակոչում է *արմեն*, *արամեացի* և *արաբ/էրեմբ* ցեղանունների նմանությունը (I.2.34. XVI.4.27): Այս տվյալը չի հղվում հայոց ազգածագման ուսումնասիրություններում, քանի որ հայերենը հնդեվրոպական, իսկ ասորերենն ու արաբերենը՝ սեմական լեզուներ են: Եվ եթե հայերենը սեմական լեզու լիներ, այդ դեպքում հաճախ կհիշվեր Ստրաբոնի խոսքը, իսկ Հերոդոտոսի և Եվդոքսոսի տվյալները կդիտվեին որպես հին հեղինակների անընդունելի մտքեր:

Այսպիսով, ժողովուրդների ծագման, հին գաղթերի և լեզուների ազգակցության վերաբերյալ հին հույն հեղինակների տեղեկությունները չեն կարող միարժեքորեն վավերական համարվել: Իսկ փոյուզերեն արձանագրությունների նյութը թույլ է տալիս պնդել, որ այն շատ մերձավոր ազգակից է հունարենին. այդ երկու լեզուները ծագում են հավանաբար մ.թ.ա. III հազարամյակի վերջին Բալկաններում խոսված մի նախնի լեզվից³⁴²: Նկատենք, թե փոյուզերենի հիշյալ *βρατερε* (*բրատերե*)՝ «եղբայր» բառը որքան ավելի մոտ է հունարեն իր համապատասխանությանը՝ *φράτηρ*-ին (*փրատեր*՝ «հասարակության անդամ» իմաստով): Հայերենը հնդեվրոպական լեզուների շարքում առավել մերձավորություն է ցուցադրում որոշ բալկանյան լեզուների՝ հատկապես հունարենի և, այդպիսով, նրան մերձավոր ազգակից փոյուզերենի և մակեդոներենի հետ (հմմտ. և հունա-հայ-հնդիրանական հետհնդեվրոպական հանրույթի տեսակետը)³⁴³: Բայց հայ-փոյուզական մերձավորությունը,

³⁴² Brixhe 2004, 780. Лигорнио, Лубоцкий 2013, 181.

³⁴³ Հայերենի ու բալկանյան լեզուների առնչությունների և հնդեվրոպական մյուս լեզուների մեջ գրաված տեղի վերաբերյալ տես Ջահուկյան 1970. 1987, 86-204, 296-311. 1992, 19-53. Martirosyan 2013: Կան նաև ավելի քիչ ընդունելություն գտած տեսակետներ. ըստ Քլաքսոնի՝ հայերենն ավելի մոտ չէ հունարենին, քան հնդիրանական լեզուներին (Clackson 1994), իսկ Ֆ. Կորտլադտը հավանական է համարում հայերենի առավել մերձավոր կապերը թրակերենի ու ալբաներենի հետ (Kortlandt, Beekes 2003, 74, 86,

այսպիսով, ավելին չէ, քան հայ-հունականը: Իմիջիայլոց, ժամանակին հնդեվրոպական լեզուների ընտանիքում վերականգնում էին «թրակափոյուզական լեզուների» խումբը, որի մեջ էին մտցնում և հայերենը: Այդպես է իր մի շարք աշխատություններում հայերենը ներկայացրել հայ ժողովրդի ծագման հարցերի վերաբերյալ բոլորից շատ գրած հեղինակը՝ Ի. Դյակոնովը: Նա նաև փորձել է ցույց տալ, որ փոյուզերենն ավելի մոտ է հայերենին, քան կարծել են³⁴⁴: Բայց հետագա ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ թրակերենի և փոյուզերենի միջև հատուկ մերձավորություն չկա, և «թրակափոյուզական» լեզուների գաղափարը մերժվեց: Այսպիսով, ժամանակակից գիտությունը մերժում է և՛ փոյուզերենի ու հայերենի հատուկ մերձավորության, և՛ թրակափոյուզական միասնության տեսակետները³⁴⁵:

Հայերենի բալկանյան ծագման ժամանակակից կողմնակիցներն իրենց դրույթը ներկայացրել են գիտական պատկերացումների հետ որոշակիորեն համապատասխանեցված: Այսպես, ըստ Ի. Դյակոնովի, հայերենը ոչ թե փոյուզական բարբառ է, այլ թրակափոյուզական խմբի առանձին լեզու (այդ խմբի գոյությունը, ինչպես տեսանք, մերժվում է): Եթե Հերոդոտոսի՝ հայերի փոյուզական գաղթականներ լինելու դրույթը դիտվի բառացի՝ սխալ է, սակայն կարող է ընդունվել, եթե դիտվի որպես վկայություն առ այն, որ հայերը եկել են Հայկական լեռնաշխարհի հարևան արևմտյան տարածքներից, որոնք բնակեցված են եղել փոյուզացիներով (իսկ մինչ փոյուզացիները՝ խեթերով)³⁴⁶: Մոտավորապես նույն կարծիքին են եղել նաև շատ այլ՝ հայ և ոչ հայ ուսումնասիրողներ:

Հայերի փոյուզական ծագման գաղափարը որոշ չափով համահունչ է, թեև ոչ նույնական, արգոնավորդ Արմենոսի՝ Բալկաններից Հայաստան հասնելու ավանդությանը: Հունարենում հայերը կոչվում են Ἀρμένιοι, և տեսականորեն չի բացառվում, որ *արմեն* ցեղանունը սկզբնապես վերաբերել է մի ուրիշ, ասենք՝ փոյուզական ցեղի, որը հետագայում է միայն լուծվել հայերի մեջ և պարսկերենում ու հունարենում դարձել հայոց անվանումը: Ընդհանրապես, այս երկու՝

140, 152-153):

³⁴⁴ Дьяконов 1976. Нерознак 1976. Diakonoff, Neroznak 1985.

³⁴⁵ Sté Brixhe 2004, 780:

³⁴⁶ Дьяконов 1968, 204-209. Дьяконов 1983 а, 155, прим. 29, 173-174.

հայ և արմեն ցեղանունների հարաբերությունը պարզ չէ. կարելի է միայն ենթադրություններ անել: Այս համատեքստում կարող է դիտվել նաև ազգածին ավանդության մեջ փոյուզացիների էպոնիմ Մշակին արմեն ցեղանվան էպոնիմ Արամին տոհմակից համարվելը: Հետաքրքիր է, որ Նույնքան անհասկանալի է Հայկական լեռնաշխարհի հնագույն պատմության մեջ իրար հերթագայող երկու երկրանունների՝ Հայասայի և Ացցիի հարաբերությունը, որը դեռևս միարժեք լուծում չի ստացել: Կարող են այդ երևույթները կապված լինել իրար հետ՝ դժվար է ասել:

Հայասայի որոշ իշխանավորների (Միդաս, Կարաննիս) մակերդոնա-փոյուզական անուններ ունենալը համահունչ է Ուրարտուի իշխող էթնիկական տարրի՝ վերևում առաջարկված փոյուզա-մուշքական ծագման վարկածին: Ինչպես տեսանք, տարածաշրջանում համեմատաբար ուշ հայտնված բալկանյան ակունքներով հնդեվրոպական տարրը, ինչպես և հնդեվրոպացիների այլ գաղթերի դեպքում, կարող էր իր իշխանությունը տարածել տեղի մյուս ցեղերի վրա:

Արմենոսն արգոնավորդ էր, իսկ արգոնավորդներն Այա-Կոլխիդա են նավում Փրիքսոսի հոգու հետևից (Պինդարոս Pyth. IV), որի սրբարանը գտնվել է մոսքերի երկրում՝ Հայաստանի, Իբերիայի և Կոլխիդայի միջև (Ստրաբոն I.2.39. XI.2.17-18): Փրիքսոսը կարող է դիտվել որպես փոյուզացիների էպոնիմ, իսկ մոսք ցեղանունը, ինչպես ասվել է, հենց փոյուզացիների անվանումն է: Ուրեմն, արգոնավորդների առասպելում կարծես ի հայտ է գալիս փոյուզական տարրը: Արգոնավորդները կոչվել են միսյուացիներ, իրենց լեգենդար նախնի Միսյուաս արքայի անունից: Այդ անունն է կրում և Ուրարտուի Միսուա արքան, և այդ անունը կարող է համարվել ուրարտական էպոնիմ: Նույն Միսյուաս ձևը հանդես է գալիս որպես Կորդվաց Արարատ լեռան շրջանի, այսինքն՝ Ուրարտուի իշխող հանրույթի հնագույն հայրենիքի մի երկրանուն (տես վերը, էջ 56, 114-115):

Ըստ այդմ՝ հույն հեղինակների բերած տեղեկությունները կարող են միանգամայն նոր մեկնաբանություն ստանալ: Բայց պետք է շեշտել այս դատողությունների վարկածային բնույթը: Եվ հայոց ազգածին ավանդության մեջ ութ ազգածին նահապետներից չորսի՝ Ար(ա)մանյակ/Արմենակի, Ար(ա)մայիս/Արմայիսի, Հարմայի և

Արամի անուններում առկա է *ար(ա)մ*- տարրը: Դա մեծ հավանականությամբ ցույց է տալիս, որ այդ տարրով բնորոշվող ցեղը հայկական է եղել:

Արիմների վարկածը

Հայոց ազգածագման վերաբերյալ առաջին համալիր գիտական աշխատությունների հեղինակը Յ. Մարկվարտն է, որի տեսության առանցքային մի մասն է կազմում *արմեն* ցեղանվան քննությունը (Նախորդ հեղինակները զբաղվել են հիմնականում հարցի լեզվական կողմով): Ըստ Մարկվարտի, այն կարող էր ծագել **arm-*, **arim-* կամ **arum-* նախաձևերից, ուրարտական *-ini* վերջավորությամբ (հմմտ. ուրարտ. *Urme* տեղանունը, որը նման մի ածանցյալ կարող էր առաջացնել): Այդ արմատը նա համադրում է «Իլիականում» (II.781-783) հիշվող Զևսի և Տիփոնի կռվի վայրի հետ՝ εἰν Ἀρίμοις (հոգնակի ներգոյական՝ «Արիմներում»): Հին և նոր հեղինակները այդ Արիմները կամ Արիման տեղայնացրել են տարբեր վայրերում. դրանցից մեկն է համարվել Կապադովկիայի Արգայոս հրաբուխը՝ Փոքր Ասիայի ամենամեծ և սրբացված լեռը³⁴⁷: Արիմները ենթադրվում են մի ցեղ՝ հայերի նախնիները, որոնք Բալկաններից տեղափոխվել են Փոքր Ասիա և հաստատվել Արգայոս լեռան շրջանում, հետո անցել Հայաստան: Խորենացու մոտ Արամ նահապետը հաղթում է իր վերջին հակառակորդին այնտեղ, որտեղ հետագայում պիտի կառուցվեր Մաժակ/Կեսարիա քաղաքը, այսինքն՝ հենց Արգայոս լեռան շրջանում: Այնտեղ նա կուսակալ է թողնում իր տոհմակից Մշակին և տեղի բնակիչներին հրամայում է խոսել հայերեն, ինչի պատճառով հույներն այդ երկրամասը կոչում են *Պռոտին Արմենիան*՝ «Առաջին Հայք» (հուն. Πρώτη Ἀρμενία-ի հայցական հոլովածն է): Ըստ Մարկվարտի՝ հնագույն հայերի **արիմո* ցեղանվան անվանադիր հերոսը դարձել է Արամ՝ Աստվածաշնչի համանուն

³⁴⁷ Partsch 1888, 111 ff. Ընդհանրապես Արիման արդեն հնուց տեղայնացվել է բազմաթիվ վայրերում, հիմնականում՝ Կիլիկիայում, բայց և այլուր՝ Սիրիա, Փոքր Ասիա, Հունաստան, Կովկաս և Սիցիլիա, տես Vian 1960, 19-23. Fox 2008, 288-298: Վերջին հեղինակը, քննելով բոլոր տարբերակները, այն տեղայնացնում է Կիլիկիայում (Կոռիկոս), ուր արդեն խեթական ժամանակներից հիշվում է Erimma տեղանունը:

կերպարի (արամեացիների նախնու) և ուրարտական առաջին արքա Արամուի անունների ազդեցությամբ, իսկ *հայ* անվանումը ուշ ձև է՝ ստեղծված Հայաստանում³⁴⁸:

Մարկվարտը քննադատորեն էր մոտենում հույն հեղինակների տեղեկություններին հայերի՝ փոյուզացիներ լինելու վերաբերյալ և գտնում էր, որ վաղնջահայերը Բալկաններից Փոքր Ասիա են հասել ավելի վաղ՝ նախապատմական հեռավոր ժամանակներում: Հայերենի բալկանյան ծագումը նա հիմնավորում էր հայերենում բալկանյան զուգահեռների գոյությամբ: Նա նշում էր նաև հայերենում մեծաքանակ ոչ հնդեվրոպական բառերի առկայությունը և գտնում, որ հայերը ձևավորվել են տարբեր էթնիկական խմբերի միաձուլումից:

Մարկվարտի և լեզվական, և պատմական, և առասպելաբանական մի շարք վերլուծություններ կրկնվել ու զարգացվել են հետագա աշխատություններում (Մ. Աբեդյան, Ն. Ադոնց, Հ. Մանսնոյան, Բ. Պիոտրովսկի, Ի. Դյակոնով, Ս. Երեմյան, Վ. Բընդջյանու, Գ. Սարգսյան, Ա. Պետրոսյան և այլք): Ոմանք ընդունել են *արիմ-արմեն* կապը, իսկ Կապադովկիայի «Առաջին Հայք» կոչումը երբեմն հիմք է ընդունվել այդ երկրամասը հայերի նախնական մի օրրան համարելու համար: *Արմեն* ցեղանվան համար առաջարկվել են մի շարք ստուգաբանություններ³⁴⁹: Բ. Պիոտրովսկին փորձել է ճշգրտել Մարկվարտի կարծիքը՝ ցեղանունը բխեցնելով ոչ թե Ուրմե, այլ Արմե երկրանունից, որը հայտնի էր դարձել ուրարտական արձանագրություններից և տեղայնացվում էր Սասունի շրջանում, իսկ Ի. Դյակոնովը հետազայում ցեղանունն իմաստավորել է որպես ուրարտ. *arme-ni* «Արմե երկրի բնակիչ»³⁵⁰: Այս մեկնաբանությունը ներկայումս պետք է հնացած համարվի. Արմե երկրի տեղայնացումը Հայկական լեռնաշխարհում չի հաստատվում³⁵¹:

³⁴⁸ Markwart 1919, 67-68. 1928, 215 sqq.

³⁴⁹ Զահուկյան 1987, 285-288. Պետրոսյան 2014q:

³⁵⁰ Дьяконов 1968, 234-235, прим. 114.

³⁵¹ Արմե երկրի և Նրա Նիխրիյա քաղաքը ներկայումս տեղայնացվում են հայկական լեռնաշխարհից դուրս, հարավ-արևմուտքում, տե՛ս Röllig 1997, 289. Miller 2012, 358 f. Forlanini 2006, 163 ff. n. 90: Այսպիսով, Արմեի նույնացումը Շուբրիային և դրա վրա կառուցվող և հայոց ազգածագման տեսությունները պետք է վերանայվեն, տե՛ս Գրեկյան 2016, 103-104:

Մարկվարտի տեսության կարևոր մի թերությունն այն է, որ որպես ելակետ է ընդունվում ոչ թե հայերի ինքնանվանումը, այլ օտարների կողմից տրվող անվանումը (այլանուն): Մինչդեռ պատմական ժամանակներում հայերն իրենց կոչել են միայն հայ, և թեև հնարավոր է, որ հայերի նախնիների որոշ հատվածներ երբևէ կոչվելին արմեն կամ նման ձևերով, բայց և այնպես, հայերի ծագման խնդիրը քննարկելիս՝ որպես ցեղի նույնացման գործոն, առաջնային պետք է լինի հայ ցեղանունը (տես վերը, էջ 76)³⁵²: Այդ մոտեցումը ներկայումս չի վիճարկվում. հայոց ազգածագման ժամանակակից վարկածները հիմնվում են հայ ցեղանվան՝ սեպագիր աղբյուրների հին ցեղատեղանունների հետ նույնացման տեսակետների վրա: Իսկ այն, ինչ ասվում է արմեն ցեղանվան մասին, թեև շատ հետաքրքիր է, բայց և շատ վարկածային:

Ժամանակակից գիտության դիրքերից մեթոդաբանորեն ճիշտ չի կարող համարվել հայագիտության արշալույսից մինչև հիմա հատկապես արևմտյան հրատարակություններում շրջանառվող այն միտքը, թե հայերի առաջին հիշատակությունն ի հայտ է գալիս Դարեհ I-ի բեհիսթունյան արձանագրության մեջ *Արմինա* և *արմինիյա* ձևերով (մ.թ.ա. VI դ.): Միայն եվրոպական լեզուներով, որտեղ հայերին կոչում են հունարեն *արմեն* ցեղանվան տարբերակներով, կարող է հարթ հնչել, թե «արմենների» մասին առաջին տեղեկությունը կապվում է պարսկերեն *Արմինա* և *արմինիյա* ձևերի հետ: Այդ մոտեցումը միանգամայն անընդունելի է. հայերը պատմության ընթացքում իրենց կոչել են միայն *հայ* ցեղանունով, իսկ *արմեն* ձևը օտարների կողմից տրվող անվանում է, որը կարող էր սկզբնապես նշանակել մեկ այլ ցեղ, իսկ հետո անցնել հայերին: Կարելի էր, թերևս, ասել, որ այստեղ առաջին անգամ հնարավոր է նույնացնել հայերին, բայց դա ևս միարժեք չէ: Հետազոտողների մեծ մասը գտնում է, որ Դարեհ I-ի դեմ ապստամբած «արմինացիները» հայերն էին, բայց ինչպես տեսանք, հնարավոր են նաև այլ տեսակետներ³⁵³:

³⁵² Հայերի ծագման հարցում *հայ* ցեղանունից ելնելու մասին տես նաև Дьяконов 1983 а, 167:

³⁵³ Արմենների հնարավոր ոչ հայկական ծագման վերաբերյալ տես Տաշյան 1934, 343. Струве 1946. Դ. Սարգսյան 1991. Kroll et al. 2012, 448-449. Roaf 2012, 208, n. 3:

Խաթիի վարկածը

Հայ ձևը ծագում է խեթերի Hatti անվանումից: Վերջինս ծագումով նախախեթական է և խեթերին է անցել Փոքր Ասիայի հին բնիկներից՝ խաթերից³⁵⁴: Այն հայերենին բնորոշ օրինաչափություններով կարող էր դառնալ *հայ* (**hax̥* > *haj*, հմմտ. հնդեվրոպական **ph₂tēr* > *hax̥* անցումը): Վարկածն առաջադրել է Պ. Ենսենը 1898-ին (տե՛ս ստորև): Այն կրկնվել է Հ. Աճառյանի, ապա Հ. Տաշյանի կողմից³⁵⁵, որոնք հետագայում Հայաստանի վերաբերյալ աղբյուրների և հայասական վարկածի ի հայտ գալուց հետո, անցան վերջինիս կողմը³⁵⁶: Հետագայում այս վարկածի եռանդուն ջատագովն էր Ի. Դյակոնովը, որը պաշտպանել է այն հայոց նախապատմությանը նվիրված իր մենագրության մեջ և բազում այլ աշխատություններում:

Սա հարցի՝ ցեղանվան ծագմանն առնչվող մասն է: Ինչ վերաբերում է պատմական հայեցակետին, Ենսենը հայերին համարում էր խեթերի լեզվական ժառանգներ, որն ընդունելի չէ: Վաղուց արդեն պարզված է, որ խեթերենը և «հիերոգլիֆային խեթերենը» (որը նույնպես այդ համատեքստում քննարկվում է գրքում), ավելի ճիշտ տերմինով՝ լուվիերենը, հայերենից շատ տարբեր հնդեվրոպական լեզուներ են: Իսկ Դյակոնովը մանրամասն մշակել է հայերի ազգածագման և նախապատմության խնդիրը:

Ինչպես ասվել է, Ասորեստանի արքա Թիգլաթպալասար I-ը (1114–1076թ. մ.թ.ա.) պատմում է, որ իր գահակալման տարում հաղթում և հպատակեցնում է Հայկական լեռնաշխարհի հարավարևմտյան շրջաններ թափանցած («արևելյան») մուշքերի զորքը և նրանց հետ որպես «խեթական երկրի անհնազանդ զորքեր»

³⁵⁴ Նոր ժամանակներում գիտական գրականության մեջ մեզանում ընդունված այդ տերմինները վերցված են ռուսական ձևերից (хетты, хатты), որոնք ավելի ճշգրիտ են ու հաջող, քան եվրոպական լեզուներից վերցված *հիթիթներ*, *հաթեր* ձևերը (սեպագիր Կ-ի ճիշտ համարժեքը *խ*-ն է. անհասկանալի է, թե ինչու *հիթիթ*, երբ գործ ունենք *-իտ* ածանցի հետ, հմմտ. *սեմիտ*): Նշենք, որ Աստվածաշնչի հայերեն թարգմանության մեջ խեթերը կոչվում են *քետացի* (Ծանոթ. Ժ.15, 20 և այլուր):

³⁵⁵ Աճառյան 1901, 235. Տաշյան 1920, 36–37, 83:

³⁵⁶ Տաշյան 1934, 339–343. Աճառյան 2004, 25:

հիշվող կասկերի և ուրումացիների ցեղերին³⁵⁷: Դյակոնովը գտնում է, որ այդ մուշքերը հենց վաղնջահայերն են: Խեթական կայսրության անկումից հետո Արևմտյան Եփրատի և Արածանիի միախառնման տեղից արևմուտք ընկած տարածքների «ուշխեթական» երկրներն իրենց տարալեզու բնակչությամբ կոչվել են խեթական Կատի տերմինով: Մուշքերը կարող էին հասած լինել նաև այդ տարածքներ, ինչի հետևանքով և այդ անվան ուրարտական տարբերակը՝ Կաթ-ն, դարձել է մուշքերի՝ ուրարտացիների կողմից տրվող անվանումը: Հետագայում այդ անվանումն անցնում է մուշքերին, և ուրարտացիները, յուրացնելով մուշքերի լեզուն՝ հայերենը, դարձնում են այդ տերմինն իրենց ինքնանվանումը *hat'iyos* ածանցյալ ձևով (այսինքն՝ հնդեվրոպական **(i)yos* ածանցով), որից և պիտի առաջանար *հայ* ցեղանունը³⁵⁸: Այս մուշքերը, պայմանականորեն՝ «արևելյան մուշք»-վաղնջահայերը համարվում են փոյուզացիներին ազգակից, բայց ոչ նույնական բալկանյան մի ցեղ: Բալկաններում և Արևմտյան Փոքր Ասիայում հայտնի «թրակա-փոյուզական» *mos-* ցեղանունը (հմմտ. անտիկ աղբյուրների *Μοσία/Moesia* երկրանունը) կարող էր տարածվել ազգակից բոլոր ցեղերի վրա, իսկ մուշքերի ցեղանվան *ք-*ն ենթադրվում է հայերենի *ք* հոգնակերտը (տես վերը, էջ 118):

Ըստ հեղինակի՝ խեթական կայսրության գոյության դարաշրջանում հայերի այդ բալկանյան նախնիները չէին կարող անցնել ողջ Փոքր Ասիայով առանց հետք թողնելու տարածաշրջանի գրավոր

³⁵⁷ Grayson 1976, 12, 18, 66, 67, 92, 93, АВИИУ, №10, 11, 12, 13:

³⁵⁸ Տես, օրինակ, Դյակոնով 1956, 77-78. Дьяконов 1968, 234-236. 1981, 51 слл. 1983a, 172-173 (հաշվի առնելով մեկ անգամ վկայված սեպագիր *Ha-a-te* գրությունը, հեղինակը հաճախ օգտագործում է *Hâte*, *hât'iyos* ձևերը, երկար *â*-ով): *Hatio* ձևը՝ որպես խեթերի ցեղանունից ձևավորված *հայ* ձևի նախատիպ, առկա է արդեն Պ. Ենսենի մոտ՝ Jensen 1898, 3-4, 109. Ենսեն 1898, 227-228 (տես և Յենսեն 2012): Անհրաժեշտ է ճշտել, որ քննարկվող դարաշրջանի համար ճիշտ կլիներ կանխադրել **hat'iyos-* (**haphiyon-*) նախաձևը, քանի որ վերջին *-s*-ն հնագույն հայերենում կարող էր արդեն ընկած լինել: Ինչ վերաբերում է Դյակոնովի բերած **hatyos*-ին, ապա և հայերենով գրված *հատիյոս*-ին, դրանք ուղղակի սխալ վերակազմություններ են, որոնցից *հայ-ո* ձևը չէր կարող առաջանալ (**-ty-* > *-y-* զարգացում չկա հայերենում, իսկ հայկական «բաղաձայնների տեղաշարժը» **t* > *t'*, որին պիտի հաջորդեր *-t'i-* > *-y-* անցումը, արդեն պետք է վաղուց տեղի ունեցած լիներ):

աղբյուրներում. այդ գաղթը պիտի տեղի ունեցած լիներ կայսրության անկումից հետո և Ուրարտուի կազմավորումից առաջ³⁵⁹: «Արևելյան մուշքերը» պիտի լինեին ավանգարդը հայ-փոյուզական ցեղերի, որոնք խեթական կայսրության անկումից հետո Բալկաններից անցան Փոքր Ասիա և հաստատվեցին Հայկական լեռնաշխարհի արևմուտքում: Այստեղ՝ Կապադոկիայում, հին Թեգարամա (հետագայում՝ Թիլ Գարիմու) երկրամասում նրանք ստեղծում են իրենց նախնական ուստանը, որի արծագանքն է Հայկի Թորգոմյան ծննդաբանությունը:

Հայկական լեռնաշխարհի այլ շրջաններում նրանց տարածվելու գործում էական է եղել ուրարտական արքաների կիրառած գերիների տարաբնակեցման քաղաքականությունը: Հայաստանի պատմական կենտրոնի՝ Այրարատի և Արարատյան դաշտի «հայացման» առթիվ հատկապես նշվում է Արգիշթի I-ի կողմից նորակառույց Էրեբունի ամրոցում 6600 «ռազմական մարդկանց» բնակեցումը Խաթե և Ծուփանի (Մալաթիա և Ծոփք) երկրներից, որոնք, ըստ հեղինակի, մասամբ կամ լրիվ հայերենի կրողներ պիտի լինեին: Սկզբնական շրջանում վաղնջահայերը քանակապես նշանակալիորեն զիջել են Հայկական լեռնաշխարհի տեղաբնիկներին, բայց պատմական հանգամանքների բերմամբ նրանց լեզուն դարձել է ընդհանուր հաղորդակցության միջոց, և մյուս էթնոսները ծուլվել են նրանց մեջ³⁶⁰: Իր վերջին հոդվածներից մեկում հեղինակը գրում է, որ հայերը կազմել են Ուրարտուի ռազմական դասը, ինչը թեև վարկածային է, բայց և զուրկ չէ հավանականությունից³⁶¹:

Դյակոնովի վարկածը, ինչպես և մյուսները, ունի մի շարք ուժեղ և թույլ կողմեր:

ա. Ուժեղ կողմերից ամենանշանակալին սուբյեկտիվ է. սա միակ վարկածն է, որ մշակվել է իր ժամանակի գիտության բարձր

³⁵⁹ Дьяконов 1968, 203-209. 1983a, 168-169.

³⁶⁰ Дьяконов 1968, 230. Дьяконов 1983, 17, прим. 20. Дьяконов 1983 a, 174.

³⁶¹ Diakonoff 1991: 19f. 1992, 53. Ուրարտական բանակի էթնիկ կազմի վերաբերյալ տես Գրեկյան 2016ա, 260-263, որտեղ նշվում է, որ պետության գոյության վերջին շրջանում բանակը հիմնականում պիտի բաղկացած լիներ ոչ ուրարտացիներից և հավանական է համարվում Դյակոնովի տեսակետը:

մակարդակով, տարբեր հայեցակետերից և լայնությամբ ու խորությամբ ներկայացնում է հայոց ազգածագման ու նախապատմության հարցերը պատմական, լեզվական, որոշ չափով նաև հնագիտական և այլ տվյալների հիման վրա:

բ. Վարկածը համահունչ է հայերի՝ փոյուզացիներին ազգակից լինելու վերաբերյալ հին հունական տվյալներին:

գ. Մուշքու ցեղանունը համադրելի է Արամ նահապետի՝ Կապադովկիայում կուսակալ Նշանակված Մշակի անվան հետ, ինչը կարող է դիտվել հայկական ավանդության մեջ այդ ցեղի հիշողության արտահայտություն: Սա որոշ չափով համահունչ է մուշքերի հետ Հայկական լեռնաշխարհի թափանցած ուրումացիների և կասկերի «Խաթի երկրի մարդիկ», այսինքն՝ «կապադովկիացի» բնութագրին և «արևելյան մուշքերի» ենթադրյալ նախնական տեղայնացմանը Կապադովկիայում: Միայն թե, ըստ ավանդության, Արամը Հայաստանից է անցնում Կապադովկիա, իսկ ըստ այս վարկածի՝ հայերը Կապադովկիայից են եկել Հայաստան: Կարծիք կա նաև, որ Արամ նահապետն էլ խորհրդանշում է ուրումացիներին, որն ավելի դժվար է հիմնավորել (անբացատրելի է անունների այդ աստիճան տարբերությունը)³⁶²:

դ. Ուրարտական աղբյուրների Խաթե երկրի (ժամանակակից Մալաթիա) տարածքը որոշ ժամանակ, թեև ոչ ի սկզբանե, եղել է Փոքր Հայքի կազմում, որը կարող է դիտվել որպես «նախնական Հայաստան» (տե՛ս ստորև, էջ 171-173):

ե. Արածանի գետանունը՝ առաջին անգամ վկայված մ.թ.ա. IXդ. կեսի ասորեստանյան աղբյուրում Aršana ձևով, գետի ստորին հոսանքների համար, ինչպես տեսանք, բացահայտ հայկական տեսք ունի՝ հնդեվրոպական *arg-՝ «փայլուն, սպիտակ» արմատի միայն հայերենին բնորոշ *արծ*- ձևից: Սա ցույց է տալիս, որ հայալեզու տարրը եղել է այս շրջանում (Ծոփքում) մ.թ.ա. IXդ. առաջ:

³⁶² Արամի և Մշակի՝ ուրումացիների և մուշքերի էպոնիմներ լինելու վերաբերյալ տե՛ս, օրինակ, Капанцян 1956, 147. Մանանդյան 1984, 559 (բայց նույն աշխատության մեջ (էջ 535) հեղինակն ուրումացիներին համարում է արամեացիներ). van Loon 1966, 26, n. 131. ՀԺՊ I, 234, 237. Գ. Սարգսյան 1988, 59: Ինչևէ, ուրումացիների էթնիկական պատկանելության հարցը մնում է բաց, տե՛ս Дьяконов 1968, 224-227:

Վարկածի թույլ կողմերից են.

ա. սեպագիր *h*-ի և *հայ*. *h*-ի նույնացումը,

բ. հայերենում *-ti- > -y- անցումը մ.թ.ա. XIIդ. հետո ժամանակագրելը (որի համար կռվաններ չեն բերվում),

գ. *հայ* ցեղանվան փոխառված համարելը, երբ այն լավագույնս մեկնաբանվում է հնդեվրոպական հիմքով,

դ. հայերի ենթադրյալ *հաթի(j)n*- ցեղանվան բացակայությունը ուրարտական աղբյուրներում,

ե. նոր տվյալների համաձայն մուշքերն առաջին անգամ ասորեստանյան աղբյուրներում հիշատակվում են Նինուրտա-ապալ-էկուրի (մ.թ.ա. 1191-1179թթ.) ժամանակներում³⁶³, այսինքն՝ Խեթական կայսրության փլուզումից (մ.թ.ա. շուրջ 1178) առաջ, ինչը ժխտում է մուշքերի՝ կայսրության փլուզումից հետո Բալկաններից ներգաղթի թեզը,

զ. մուշքերի՝ որպես «Խաթի երկրի մարդիկ» չհիշվելը,

է. մուշքերի հետ բացահայտորեն նույնանուն անտիկ աղբյուրների մոսքերի՝ հայերին հարևան, բայց տարբեր մի ցեղ լինելը,

ը. ուշ ուրարտական աղբյուրում (KYKH 414) իրարից տարբեր Խաթի և Մուշքի երկրների հիշատակությունը (այսինքն՝ նույնիսկ Ուրարտուի անկման անմիջապես նախորդող դարաշրջանում մուշքերը *հաթիյո* չէին կոչվում),

թ. Վերին Եփրատի շրջակայքում նշված դարաշրջանից հայտնի անվանումներում հայերեն անձնանունների բացակայությունը,

ժ. որոշակի հակասությունը հայոց ազգածագման ավանդության տվյալներին, որտեղ Հայկական լեռնաշխարհի հարավարևմտյան շրջանները (Նաև Եփրատից արևմուտք) չեն հիշվում որպես հայոց ազգածության կենտրոն, այլ ընդհակառակը, այնտեղի հայկականացումն է համարվում երկրորդային (Արամի արշավանքի հետևանքով),

ժա. հնագույն հայերենի կրողների տեղայնացումը Մալաթիայում, ապա Մեծ Հայքի արևմտյան շրջաններում բացառում է նրանց երկրատեսակետի շփումը (արևմտա)քարթվելական լեզուների հետ, ինչը շատ հավանական է հայերենի և այդ լեզուների ընդհանուր հնչյունաբանության և փոխադարձ փոխառությունների համատեքստում:

³⁶³ Radner 2006, 149.

Այս թույլ կետերը տեսականորեն մասամբ հաղթահարելի են, և հեղինակն անդրադարձել է դրանց մի մասին: Բայց որոշ հարցեր հատուկ պարզաբանման կարիք ունեն: Նախ, *հայ* < Խաթի կապին հակասում է *հայ* ցեղանվան հավանական բնիկ հայերեն ստուգաբանությունը: Հայոց անվանադիր նախնիների կերպարները, ինչպես ասվել է, մեկ միասնական առասպելաբանական համակարգի փոխկապակցված անդամներ են, և նրանց անուններն էլ լավագույնս ստուգաբանվում են հնդեվրոպական հիմքերով: Եթե ճիշտ է *հայ* < Խաթի ստուգաբանությունը, ապա վաղնջահայերը պիտի փոխառած լինեին «խեթ» նշանակությամբ ցեղանունը, հետո միայն այն վերաիմաստավորեին իրենց լեզվի ենթադրյալ **հաթի*- < **poti*- («տեր») բառով, որի ժառանգն է Հայկ նահապետի անունը: Դժվար է պատկերացնել, որ ազգածին ավանդության կերպարային համակարգը, որտեղ հակառակորդների կերպարները գործառության համապատասխանում են իրար որպես հակադիր «հայելային անդրադարձներ»³⁶⁴ (հմմտ. հայոց տիրակալ Հայկի կերպարը՝ հակադրված նույնիմաստ անունով բաբելոնյան տիրակալ Բելին), կարող էր ստեղծվել փոխառված մի անվան երկրորդային իմաստավորման՝ «ժողովրդական ստուգաբանության» հիման վրա:

Հայ < *hatti*- ստուգաբանության համար անհրաժեշտ է որոշակի նախապայմաններ կանխադրել: Ասենք՝ *hatti*-ի տեղական հնչողությունը եղել է *հաթի*, կամ մ.թ.ա. XII դ. հայերենում չի եղել *խ* հնչյունը, և տեղական *խատտի*-ն այդ ժամանակների հայերենում ընկալվել է որպես *հաթի*: Բայց խեթ. սեպագիր *Hatti*-ն այլ հին լեզուներով ևս հաղորդվել խ-ով՝ հմմտ. եգիպտ. *ḥt*, ուգարիտ. *ḥt/ḥtj*, եբրայերեն *ḥittī*³⁶⁵: Հին հունարենում, ուր չկար *խ*, Խաթիի առաջին հնչյունը հաղորդվել է *ք*-ով և *կ*-ով՝ *Χετταῖος* և *Κήτειος*³⁶⁶ (հմմտ. և սեպագիր *Ḫilaku* = հուև. *Kilikēs*, ուրարտ. *Ḫaliṣu* = հայ. Խաղտիք = հուև. *Χαλδαῖοι* *քալ-դայյներ* համապատասխանությունները), ինչը ցույց է տալիս, որ այն *հ* չէր: Ըստ Գ. Զահուկյանի՝ վաղ հնագույն հայերենը մ.թ.ա. XII դ.,

³⁶⁴ Petrosyan 2007, 306.

³⁶⁵ RLA 3, 1957-1971, 155. HEG I, 222-224, 229.

³⁶⁶ Այս անվանումների վերաբերյալ տես Ենսեն 1898, 231. RLA 3, 155. HEG 1, 223: Հունական հնագույն ավանդություն, սկսած տրոյական էպոսից, խեթերի վերաբերյալ հիշողությունների շուրջ տես Гиндин, Цымбурский 1996, 271-302:

թերևս շատ ավելի վաղուց, պիտի որ ունենար *խ* հնչյունը³⁶⁷: Ըստ այդմ՝ հայերը պետք է այդ անվանումը փոխառեին *խ*-ով ձևով: Այստեղ, ինչպես և հայասական վարկածում, որոշակի շփոթ է առաջացել սեպագիր *ք*-ն լատինական *h*-ի միջոցով տառադարձելու պատճառով: Ինչևէ, հայերենում կան սեպագիր *ք*-ի հետ և՛ *խ*-ի, և՛ *հ*-ի համապատասխանության դեպքեր: Ըստ Ջ. Գրեպինի, որը հատուկ քննել է այդ հարցը, խեթ. *ք*-ի և հայ. *հ*-ի համապատասխանության դեպքերում բառերն ունեն ընդհանուր ծագում (հնդեվրոպական կոկորդայինից), իսկ խեթ. և խուռաուրարտ. *ք*-ի և հայ. *խ*-ի համապատասխանության դեպքերում հայերեն բառերը փոխառված են³⁶⁸: Եթե դա այդպես է, ապա *հայ* ձևը փոխառված չի կարող լինել *hatti*-ից³⁶⁹: Մնում են տեսական հնարավորություններ, ասենք՝ ինչ-որ մի ուրարտական բարբառում *խ*-ն արտասանվել է *h*, որից և հնագույն հայերենում ընդհանրացել է *հաթի*- ձևը³⁷⁰:

Ի. Դյակոնովն ինքն էլ է նշում սեպագիր *ք*-ի և հայերեն *հ*-ի համապատասխանության կասկածելի լինելը, բայց հատկապես՝ որպես իր կողմից մերժվող *հայ* < *Hayaša* ստուգաբանության հակափաստարկ, որն ուղղակի բացահայտ կողմնակալության տպավորություն է թողնում³⁷¹: Բայց արդարությունը պահանջում է ասել, որ իր մենագրության մեջ նա գրում է.

*Այդ լեզվաբանական դժվարության պատճառով Հայք տերմինի՝ Խաթեից ծագումը չի կարող դեռևս վերջնականապես ապացուցված համարվել [...], և հնարավոր են այլ ստուգաբանություններ*³⁷²:

³⁶⁷ Ջահուկյան 1987, 25, 228, 346:

³⁶⁸ Greppin 1995, 313-315:

³⁶⁹ Հետաքրքիր է, որ, չնայած դրան, Ջ. Գրեպինը կրքոտ պաշտպանում է *հայ* < *Hatti* մեկնաբանությունը, տես Drews 2001, 80 և մեր գրախոսությունը՝ Պետրոսյան 2003ա, 209-210:

³⁷⁰ Այդպիսի մի հնարավորություն կարելի է ենթադրել ուրարտական *Hal-di* դիցանվան՝ միայն մեկ արձանագրության մեջ հանդիպող *Aldi* տարբերակի հիման վրա: Այս հարցի վերաբերյալ տես Дьяконов 1958, 42. Меликишвили 1960, 84, 86. КУКН, 476. հմմտ. և Դարեհ I-ի բեհիսթունյան արձանագրության մեջ (3.14) հիշվող Բաբելոնում ապստամբած հայ Արախայի հոր անունը՝ Հալդիտա:

³⁷¹ Джаукян 1964, 66. van Loon 1987, 231.

³⁷² Дьяконов 1968, 211, 236-237, прим. 119.

Հետագայում հեղինակը նորից է փորձել ճշգրտել իր տեսակետը, այսինքն՝ նա ինքն էլ վստահ չէր իր իրավացիության մեջ³⁷³:

Այժմ՝ հետխեթական Խաթիի մասին: Խեթական կայսրության անկումից հետո Կատի տերմինը ասորեստանյան, ուրարտական և բաբելոնյան սեպագիր աղբյուրներում մինչև մ.թ.ա. VIII դ. հանդես է գալիս որպես Եփրատի և Արածանու միախառնման շրջանից արևմուտք և հարավ-արևմուտք ընկած ուշխեթական երկրների անվանում: Ուրարտական աղբյուրների Կատե-ն **haxp̥iḫn*-ն չէ, այլ ուշխեթական երկրներից մեկը՝ Մելիդ-Մելիտեան: Այդ երկրների պատմությունն ավարտվում է մ.թ.ա. 708թ. Կումմուխի (հետագա Կոմմազենե) կործանմամբ: Խաթին միայն այլանվանում էր և նշված երկրների արձանագրություններում չի կիրառվել: Արձանագրությունները գրված են հիերոգլիֆային լուվիերենով, բայց շրջանի հին բնակչությունը խառն էր՝ լուվիական, խուռիական, արևմտասեմական՝ ամորեական ու արամեական: Խաթի տերմինը նեղ առումով ունեցել է աշխարհագրական և ոչ էթնիկական կամ լեզվական նշանակություն³⁷⁴: Անտիկ

³⁷³ Մենագրությունից տասներեք տարի անց հրատարակված աշխատության մեջ նա գրում է, որ *hax* ցեղանունը պիտի փոխառվեր մ.թ.ա. II հազարամյակի լուվիերենից. այնտեղ իբր պահպանվել էր հին հնդեվրոպական կոկորդային հնչյունը, որը հայերենում արտացոլվել է որպես *h* (Дьяконов 1981, 55, прим. 98): Այս մեկնաբանությունը, անկախ իր լեզվաբանական մասի կասկածելի բնույթից, ենթադրում է, որ Կատի-ն եղել է ուշխեթական Մելիդ-Մալաթիայի բնակիչների ինքնանվանումը, որի համար ոչ մի հիմք չկա: Երկու տարի անց նա հայերի ցեղանունը նորից բխեցնում է ուրարտ. Կատե-ից (Дьяконов 1983a, 172): Իր վերջին՝ հետմահու տպագրված հոդվածում նա նորից *hax* ցեղանունը հանգեցնում է *Hat(t)i*-ին՝ նշելով, որ այդ ձևը պիտի փոխառված լիներ անատոլիականից, քանի որ հայերենում հնդեվրոպական կոկորդային *H-*ն վերածվում է զրոյի (Дьяконов 2005, 278. իրականում կան օրինակներ, ուր հնդեվրոպական կոկորդայինի տեղում հայերենում ունենք *h*՝ հմմտ., օրինակ՝ *hax*. *hax* < **h₂en* - «տատ», *hax* < **h₂euH* - «պապ»): Դա, բացի ոչ ճշգրիտ լինելուց, ապացուցային արժեք և նույնիսկ գործի հետ կապ չունի և ընդամենը անհաջող փորձ է *hax* > *hax* ստուգաբանության *h* > *h* անցումը բացատրելու համար (տարբերակելու համար իր կողմից մերժվող *hax* > *hax* ստուգաբանությունից): Այլ հեղինակներ ևս անդրադարձել են սեպագիր *h*-ի և *hax*. *h*-ի համապատասխանության դժվարություններին, տես Տաշյան 1920, 83, ծան. 1. Дзяукян 1964, 64-66. Kitazumi 2013. Simon 2013, 127:

³⁷⁴ RLA 3, 152-159.

դարաշրջանում Արևելյան Կապադովկիան (ներառյալ Մելիտեան) կոչվում էր Կատաոնիա: Երկրամասի հին բնակչության ժառանգները պիտի լինեին կատաոնացիները, որոնք այդ ժամանակ խոսում էին կապադովկիացիների հետ նույն լեզվով (փոյուգերեն), բայց հնում եղել էին առանձին ժողովուրդ և հակադրվել կապադովկիացիներին (Ստրաբոն XII.1.2):

Ըստ Դյակոնովի՝ մուշք-վաղնջահայերը Խաթի երկրանվամբ պիտի կոչվեին ուրարտացիների կողմից՝ որպես այդ երկրի մարդիկ, հետո իրենք սկսեին իրենց այդպես կոչել՝ հավելելով իրենց *-(i)yo- ածանցն այդ ցեղանվանը: Բայց ուրարտական արքա Ռուսա Արգիշթորդու արձանագրություններում Խաթեի և մի շարք այլ երկրների հետ միասին հիշվում է Muškini երկրանունը, որտեղից նա գերիներ է վերաբնակեցրել Վանի շրջանում³⁷⁵: Դյակոնովը Մուշքինին նույնացնում է Փոյուգիայի հետ³⁷⁶, բայց հաշվի առնելով այդ դարաշրջանի իրողությունները՝ անհավանական է, որ Ուրարտուն իր անկման նախօրեին Մելիդիի հզոր թագավորության վրայով արշավեր Փոքր Ասիայի խորքերը և գերիներ բերեր Փոյուգիայից³⁷⁷: Մուշքինին թվարկվում է Հայկական լեռնաշխարհում գտնվող երկրների շարքում և այլ մասնագետների կողմից էլ տեղայնացվում Հայկական լեռնաշխարհի արևմուտքում ինչ-որ տեղ³⁷⁸: Եթե այդ ցեղը մ.թ.ա. VIIդ. կեսերին ուրարտերենում դեռ muški էր կոչվում և բացահայտորեն տարբերակվում Խաթեից, ուրեմն այլևս չէր կարող Խաթե (ապա՝ Խաթեի մի ածանցյալով) կոչվել, քանի որ Խաթի երկրներն իրականում արդեն վերացել էին, իսկ Ուրարտուն պիտի վերանար շուտով:

«Արևելյան մուշքերի» առանձնացումն «արևմտյան մուշքերից»՝ փոյուգացիներից, ընդամենը մի վարկած է միայն: Ինչպես տեսանք, սեպագիր mušku/muški-ն եղել է հավանաբար փոյուգացիների ինքնանվանումը, և ըստ այդմ՝ «արևելյան մուշքերը» պիտի լինեին նրանց մի հատվածը:

³⁷⁵ КУКН 414. Salvini 2001, 258, 261.

³⁷⁶ Diakonoff, Kashkai 1981, 59.

³⁷⁷ Քոսյան 1999, 247, 250:

³⁷⁸ Арутюнян 1985, 146-147: Մուշքերի երկրի մասին մանրամասն տե՛ս Քոսյան 1999ա, 162-167: Դատելով Մուշ քաղաքանվան և մուշքերի ցեղանվան (muskho/mōskho) միջև վերնում նշված հավանական կապից՝ Մուշքինին կարող է տեղայնացվել Մուշում և հարակից շրջաններում:

Կարևոր է և Հայկական լեռնաշխարհում կամ մերձակայքում հայերի նախնական օրրանի՝ «նախնական Հայաստանի» տեղայնացման հարցը: Ի. Դյակոնովը նշում է, որ հին ավանդությունը «Վերին Եփրատի ավազան» է համարում հայոց նախահայրենիք: Իրականում այդպես են կարծել ուսումնասիրողները, իսկ հայկական ավանդությունը Հայկի ոստանն է համարում Հարք գավառը, այսինքն՝ Արածանիի (Արևելյան Եփրատի) վերին հոսանքների շրջանը: Միայն Ստրաբոնի բերած լեգենդում է, որ հայերի նախնական տարածք է համարվում Եփրատի (այսինքն՝ Արևմտյան Եփրատի) վերին հոսանքների շրջանը: Սրանք տարբեր տարածքներ են, ընդ որում՝ երկուսն էլ շատ հեռու ուրարտական աղբյուրների Խաթե երկրից՝ Մալաթիայից (որտեղից, ըստ հեղինակի, հայերի նախնիները պիտի յուրացնեին իրենց «խեթական» ցեղանունը)³⁷⁹: Դյակոնովը «արևելյան մուշքերի» երկիր է համարում Իշուա և Ալզիի երկրները, իսկ հայերենի տարածման սկզբնական շրջան է դիտում Սասունից մինչև վերին Եփրատի ավազանը գետի երկու կողմերում՝ խեթական աղբյուրների Պախխուվա, Ցուխմա, Թեգարամա, Իսուվա, Մալդիյա, Ալզի և ուրարտական աղբյուրների Արմե երկրների տարածքները, այսինքն՝ պատմական Ծոփքն իր շրջակայքով, որտեղի *Խաթե*, *Արմե*, *Սուխմու* տեղանուններում ի հայտ են գալիս *հայ*, *արմեն*, *սումեխի* ցեղանունների նախատիպերը³⁸⁰: Այստեղ շատ տեսակետներ ժամանակի ընթացքում փոխվել են՝ Խաթի > *հայ* ստուգաբանությունը միայն ենթադրական է, Սուխմուի և *սումեխի* կապը՝ անընդունելի³⁸¹, իսկ Արմե երկիրը, ինչպես ասվել է, տեղայնացվում է այլուրեք: Հեղինակի կողմնակալության դրսևորում կարող է դիտվել այն, որ չի հիշվում Ծոփքից քիչ հյուսիս՝ հենց Վերին Եփրատի ավազանում գտնվող Հայասան:

Դյակոնովի տեսության թերևս ամենաթույլ կետն այն է, որ հեղինակը հայերենով քիչ թե շատ հուսալիորեն ստուգաբանվող

³⁷⁹ Այս երկրամասերի կենտրոնների հեռավորությունն իրարից՝ Մանազկերտից և Երզնկայից Մալաթիա ուղիղ գծով կազմում է համապատասխանաբար մոտ 370 և 170 կիլոմետր (Մանազկերտից Երզնկա՝ 240 կմ): Հայկական լեռնաշխարհի մասշտաբներով սրանք հսկայական հեռավորություններ են, և այդ կենտրոնները երբեք չեն կարող համարվել մեկ միասնական շրջանի մասեր:

³⁸⁰ Дьяконов 1968, 215-216, 227-229. 1981, 53.

³⁸¹ Զահուկյան 1987, 288:

անուններ չի բերում հայերի այդ ենթադրյալ լայնածավալ բնօր-
րանից և մերձակայքից: Ինչպես ասվել է, այդ դարաշրջանից մեզ
հասած տեղեկություններից մարդկանց լեզվական պատկանելու-
թյան միակ էական կռվանը կարող է լինել նրանց անունների որևէ
լեզվին պատկանելը: Իսկ հայկական տեսք ունեցող անուններ այդ
տարածաշրջանից հայտնի բազմաթիվ անձնանուններում չկան:
Ըստ անվանաբանական և պատմական տվյալների՝ մ.թ.ա. երկրորդ
հազարամյակի երկրորդ կեսից այստեղի բնակչությունը խուռիա-
կան և լուվիական էր: Ավելի ուշ, մինչև մ.թ.ա. VIII դ. Վերին Եփրատի
աջ ափի իշխողների անունները, այդ թվում և Մելիտեա-Մելիդում,
մեծագույն մասով լուվիական էին, իսկ Վանա լճից հարավ-արև-
մուտք՝ խուռիական: Եվ, հաշվի առնելով այն ժամանակների իրո-
ղությունները, լուվիական և խուռիական անուններ ունեցող իշխող-
ները հենց լուվիական և խուռիական ծագում պիտի ունենային³⁸²:
Դրանից հետո Եփրատից արևմուտք ի հայտ են գալիս մի քանի
նոր անուններ, որոնք պիտի կապվեն նոր էթնիկական տարրի հետ:
Սրանց մի մասը համադրելի է հունական ավանդությունից հայտնի
փոյուզական անունների հետ³⁸³:

Գրելով իր կողմից որպես հայկական հնագույն տարածքներ
առանձնացված շրջանի անվանումներում հայկական տարր տեսնե-
լու դժվարության մասին՝ Դյակոնովը նշում է, որ տեղի անվանա-
բանությունը շատ թերի է հայտնի, և տեսականորեն հնարավոր է,
որ լուվիական ու խուռիական անուններ կրեին նաև հայերը, ապա
բերում է մեկ-երկու օրինակ, որոնք, դարձյալ տեսականորեն, կա-
րող են հայկական լինել կամ հայկական մաս ունենալ, բայց այդ

³⁸² Հիերոգլիֆային լուվիերեն արձանագրություններից հայտնի է Վերին
Եփրատի շրջանի և մերձակայքի ուշխեթական իշխանավորների ավելի
քան երկու հարյուր անձնանուն, որոնց ճշող մեծամասնությունը պար-
զորոշ խեթալուվիական է, շուրջ մեկ տասնյակը՝ խուռիական, տե՛ս Косян
1994, 88-97: Իսկ մուշքերի տարածման տարածքներում (Շուպրիա, Կադ-
մուխի և մերձակայք) մ.թ.ա. XI-VII դդ. արքաների անունները խուռիական
են, տե՛ս Gelb 82-83: Այս հարցերի շուրջ տե՛ս նաև Дьяконов, 1968, 84-88,
228-229, 242-243:

³⁸³ Այդ անուններն են՝ Կուրտիս/Գուրդի, Միտաս, Ասխուս/Սախուս, Իշկալ-
լու, Մուզալլու, որոնցից առաջին երեքը համեմատվում են փոյուզ. Գոր-
դիոսի, Միդասի և Ասկանիոսի հետ, իսկ մյուս երկուսի մասին դժվար է
որևէ բան ասել, տե՛ս Բոսյան, 1998, 35-45, 55-59, Բոսյան 1999, 241:

ստուգաբանությունները չափազանց մտահայեցողական են և անհամոզիչ³⁸⁴: Ոչ մի իրական՝ լեզվական հիմք չկա նաև Էրեբունիի 6600 վերաբնակիչներին հայկական ծագում վերագրելու համար (առավել հավանական է նրանց անատոլիական՝ լուվիական ծագումը)³⁸⁵:

Բայց այդ դեպքում որտեղ են թաքնվել հայերը: Որևէ շրջանում հայալեզու տարրի բացահայտման համար չկա այլ ճանապարհ, քան հայկական անվանումների ցուցադրումը, իսկ ընդհանուր դատողությունները երբեք չեն կարող համոզիչ համարվել: Դյակոնովի տեսության համար լուրջ կռվան կարող էին լինել Խաթե երկրի՝ Մալաթիայի շրջանի, հետագայում որոշ ժամանակ Փոքր Հայքի կազմում գտնվելը և Արծանիա գետանվան հայկական ծագումը: Բայց սկզբնական Փոքր Հայքը գտնվել է Հայասա-Ացցիի արևմտյան և ավելի արևմուտք ընկած տարածքներում և չի ընդգրկել Մալաթիան, իսկ մ.թ.ա. IXդ. Արծանիա անվանումը, ինչպես կոտեսենք, կարող է կապվել, օրինակ, Հայասայից և/կամ ավելի արևելքից մ.թ.ա. XIIIդ. ներգաղթած տարրի հետ, և այսպիսով, կռվան համարվել ոչ միայն Դյակոնովի, այլև հաջորդ երկու՝ Հայասայի և Էթիունիի վարկածների համար:

Վաղ երկաթի դարաշրջանի սկզբում պատմական Ծոփքի և մերձակա տարածքներում ի հայտ են գալիս նախորդ փուլից էապես տարբերվող և ինքնատիպ «անդրկովկասյան» տիպի խեցեղենով բնութագրվող նոր իրողություններ, ընդ որում՝ տեղի հին հնագիտական հուշարձանները կործանվել են հրդեհներից: Եփրատի արևելյան ափին՝ Ծոփքի շրջանում, ուշբրոնզեդարյան մշակույթն ամբողջովին վերանում է և փոխարինվում նորով: Արևմտյան ափին՝ Մալաթիայում, ընդհակառակը, շարունակվում է հին՝ խեթական դարաշրջանի մշակույթը, իսկ նոր՝ գետի արևելյան ափը հեղեղած

³⁸⁴ Дьяконов 1968, 242-243. 1981, 58-60, прим. 115. 1983a, 164-165, прим. 53, 170, прим. 65: Այսպես՝ Թաբալի արքաներից մեկի հիշյալ iš(ik)kal- lu անունը մեկնաբանվում է իբրև հայ. **հսկեալ*, *հսկաւղ* (ըստ Ա. Փերի-խանյանի), Tumeiški տեղանվան վերջավորությունը, ինչպես և մուշքերի ցեղանվան վերջին ք-ն՝ որպես հայերենի ք հոգնակերտը: Միայն մեկական անձնանվան, տեղանվան ու ցեղանվան այսօրինակ կամայական և կիսատ մեկնաբանություններն իհարկե չեն կարող լուրջ կռվաններ համարվել, իսկ ակնհայտ հայկական անվանումներ, ինչպես տեսանք, Ուրարտուում կան այլուրեք:

³⁸⁵ Պետրոսյան 2006, 31-42. Н.Тирациян 2009:

խեցեղենն ի հայտ է գալիս շատ ավելի ուշ (մ.թ.ա. VIIIդ.): Այդ երևույթը, ըստ մի կարծիքի, կապվում է «արևելյան մուշքերի» և նրանց ուղեկից ցեղերի ներխուժման հետ³⁸⁶:

Այս տեսակետը մեզանում բավական քննարկվել է: Ասորեստանյան աղբյուրները, ինչպես տեսանք, այդ ներխուժողների մի մասին (բացի մուշքերից) անվանում են «Խաթի երկրի մարդիկ», այսինքն՝ արևմտյան ծագում են վերագրում, որը կարծես հակասում է նոր հայտնված խեցեղենի «անդրկովկասյան»՝ արևելյան ծագմանը: Ըստ Ա. Քոսյանի մանրամասն քննարկման՝ միակ հավանական ենթադրությունը, որը չի հակասում ասորեստանյան գրավոր աղբյուրի և հնագիտական նյութի համադրությանը, այն է, որ ներխուժողներն իրենց ներգաղթից առաջ տեղայնացած են եղել խթական ազդեցության գոտում՝ Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևմուտքում, այսինքն՝ Հայաստանում: Ընդհանրապես «անդրկովկասյան» տիպի խեցեղենը բնորոշ է պատմական Հայաստանի տարածքների մեծամասնությանը և Ծոփքում այն կարող էր հայտնվել, ասենք, ներկայիս Հայաստանի, Վան կամ Ուրմիա լճերի մերձակա տարածքներից: Ըստ Պ. Ավետիսյանի՝ ուշ բրոնզի վերջին Հայաստանի որոշ լեռնային շրջաններում (Արագած, Սևան) նկատվում է բնակչության թվաքանակի կտրուկ անկում և, հաշվի առնելով Ծոփքի վաղերկաթեդարյան նորեկների հնագիտական նյութի մեծ նմանությունը Արագածի և Սևանի ուշբրոնզեդարյան նյութին՝ չի բացառվում, որ այդ շարժումը կարող էր սկիզբ առնել ներկայիս Հայաստանի տարածքներից³⁸⁷:

Հնագիտական տվյալների այս մեկնաբանությունները բացառում են «արևելյան մուշքերի» ներգաղթը Բալկաններից և հաստատվելը Խաթե երկրում՝ Մալաթիայի շրջանում: Եթե այս տեսակետը ճիշտ է, ապա Դյակոնովի վարկածը մուշքերի՝ արևմտյան գաղթականներ լինելու վերաբերյալ, և այդպիսով՝ ողջ տեսությունը, կարելի է ասել, ամբողջապես ժխտվում է: Սակայն ներկայումս Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմուտքում վաղ երկաթի դարում նոր խեցեղենի ի հայտ գալը մուշքերի հետ կապելու կարծիքը մերժվում է (այդ խեցեղենի հայտնվելը տարածաշրջանում թվագրվում է

³⁸⁶ Sevin 1991, 96-97. Köroğlu 2003.

³⁸⁷ Քոսյան 1996, 1996, Kosyan 1997, 260-262, Քոսյան 1999ա, 105-107, 157-167, 175-176, 189, հարցի գրականությամբ: Ավետիսյան 2004, 21-22:

մուշքերի՝ պատմականորեն հայտնի արշավանքից ուշ)³⁸⁸։ Եվ պետք է ասել, որ հնագիտական տվյալների հիման վրա դժվար է նման հարցերում միարժեք ընդհանրացումներ անել։

Ինչևէ, Դյակոնովի տեսության հիմնական կետերն ունեն հզոր հակափաստարկներ։ Հայ < Խաթի կապը նույնիսկ Դյակոնովի համար մնում էր կասկածելի։ Մուշք-մոսքերը հավանաբար կարևոր դեր են կատարել Հայաստանի և Վրաստանի նախապատմության մեջ, բայց նրանց՝ որպես հնագույն հայերի նույնացումը միայն մտահայեցողական է, անապացուցելի և երբեք, նույնիսկ վարկածի հրապարակման առաջին տարիներին, չի ընդունվել հարցին քիչ թե շատ իրազեկ գիտնականների կողմից։ Ներկայումս, գիտության զարգացմանը զուգընթաց, Դյակոնովի վարկածն իր ամբողջության մեջ դուրս է գալիս շրջանառությունից։ Այսպես՝ հավանական է թվում, որ մոսքերի երկիրը Պոնտոսում, իր հարևան խալդայների երկրի հետ միասին կարող էին բնակեցված լինել մուշք-փոյուզացիներով դեռևս մ.թ.ա. II հազարամյակում, որտեղից էլ մ.թ.ա. XII դարում նրանք անցել են հարավ։ Իսկ ինչ վերաբերում է հայոց նախապատմությանը, հարցի մշակմանը և որոշ տեսական դրույթներին, Դյակոնովի աշխատությունները պահպանում են իրենց արժեքը։ Մնում է նաև հայ ցեղանվան՝ Կատի-ից ծագելու վարկածը, որը, չնայած դժվարություններին, տեսականորեն չի կարելի բացառել։ Այն կարող էր ծագած լինել Կատի-ի բարբառային մի տարբերակից, բայց ոչ այնպես, ինչպես պատկերացնում էր Ի. Դյակոնովը, այսինքն՝ ոչ մուշքերի՝ այն յուրացնելու և ուրարտացիներին փոխանցելու միջոցով, այլ որևէ ուրիշ ճանապարհով (տես ստորև, էջ 199-200)։

Հայասայի վարկածը

Ըստ այս վարկածի՝ հայ ցեղանունը կապված է մ.թ.ա. XIV-XIII դդ. խեթական աղբյուրների Hayaša երկրանվան հետ։ Վերջինիս ճիշտ ընթերցումն է Խայասա, բայց առավել շեշտելու համար նրա կապը հայ ցեղանվան հետ՝ հայերեն գրականության մեջ այն հաճախ ներկայացվում է որպես Հայասա։ Ըստ առավել

³⁸⁸ Տես Summers 1994, 245-247. Roaf, Schachner 2005, 119 նն։

տարածված տեղայնացման՝ Հայասա-Ացցին ընդգրկել է հիմնականում հետագա Մեծ Հայքի հյուսիսարևմտյան տարածքները՝ Արևմտյան Եփրատի ակունքների և վերին հոսանքների շրջանը, ընդ որում, թե մինչև ուր են հասել երկրի արևելյան սահմանները՝ հայտնի չէ:

Հայասական վարկածի կողմնակիցներ են եղել Հայաստանի և հայոց լեզվի պատմությանը իրազեկ մասնագետների ճշող մեծամասնությունը և խնդրին անդրադարձած բազմաթիվ ականավոր գիտնականներ: Կayaša-հայ կապի տեսակետն առաջինն արտահայտել է Ն. Մարտիրոսյանը, ապա՝ Կ. Ռոթը, Գ. Ղափանցյանը, Պ. Կրեչմերը, Ա. Խաչատրյանը և այլք³⁸⁹, իսկ Գ. Ղափանցյանը ներկայացրել է վարկածը որպես մենագրություն³⁹⁰: Այս վարկածի (իր տարբեր ձևակերպումներով) կողմնակիցների թվում կարելի է նշել այնպիսի հեղինակավոր գիտնականների, ինչպիսիք են Հ. Աճառյանը, Հ. Տաշյանը, Հ. Մանանդյանը, Բ. Պիոտրովսկին, Գ. Մելիքիշվիլին, Ս. Երեմյանը, Վ. Գեորգիևը, Վ. Բընըցյանուն, Ս. Թումանովը, Գ. Զահուկյանը, Չ. Բըրնին, Դ. Լանգը, Վ. Իվանովը, Թ. Գամկրելիձեն, Գ. Սարգսյանը³⁹¹: Կարելի է ասել, որ հարցին իրազեկ նշանավոր մասնագետներից այդ տեսակետը չէր ընդունում միայն

³⁸⁹ Մարտիրոսյան 1924, 453. Roth 1927, 753. Капанцян 1931-33, 6, прим. 1. Kretschmer 1933 (հոդվածի համառոտ տարբերակն է՝ Կրեչմեր 1933, 429-432). Ա. Խաչատրյան 1933, 41-48: Հարցի պատմության վերաբերյալ տե՛ս Капанцян 1956, 11-18. Джаукян 1964, 10. 1988 I, 60-62. Բարսեղյան 1996, 156-173:

³⁹⁰ Капанцян 1947 (=Капанцян 1956, 5-265).

³⁹¹ Տաշյան 1934, 339-343. Աճառյան 2004, 25. Մանանդյան 1944, 32-33. Манандян 1956. Պիոտրովսկի 1945, 25-26. Пиотровский 1946, 33-35. 1959, 129. Меликишвили 1954, 85, 418. 1959, 171. Георгиев 1958, 171. 1960, 39. Երեմյան 1958. Бэнэцяну 1961. Toumanoff 1963, 59. Djahukian 1961. Джаукян 1964. 1988. Զահուկյան 1987, 282-285, 322-341. Burney, Lung 1971, 179. Иванов 1983, 30-33. Гамкредидзе, Иванов 1984, 913. Գ. Սարգսյան 1988, 51-52. 1992 նն: Այս վարկածի կողմնակիցներ են նաև բազմաթիվ այլ հեղինակներ՝ Ա. Ղարիբյանը, Ա. Աբրահամյանը, Բ. Առաքելյանը, Վ. Խաչատրյանը, Ս. Պետրոսյանը և այլք, տե՛ս Բարսեղյան 1996: Արժե նշել Հ. Աճառյանի առանձնահատուկ վերաբերմունքը խնդրին: Չնայած վերևում հղված աշխատանքում նա կարճ հիշում է Հայասան իբրև հայոց հին երկիր, բայց և այնպես այն քչերից էր, որ գիտակցում էր տեսակետի վարկածային բնույթը և մի տեղ նույնիսկ հումորով է հիշում Հայասա-հայ կապը, տե՛ս Աճառյան 1971, 769:

Ի. Դյակոնովը: Ստորև խուսափելով ավելորդ մանրամասներից՝ ներկայացվում են հարցի պատմության որոշ կարևոր դրվագներ³⁹²:

Հայասական վարկածի վերաբերյալ ամենամաքողական աշխատությունը մնում է Գ. Ղափանցյանի մենագրությունը, ըստ որի՝ «Հայասան հայերի օրրանն» էր³⁹³: Ղափանցյանը հայ և հարևան հին ու նոր ժողովուրդների պատմության, լեզուների ու մշակույթների վերաբերյալ բացառիկ գիտելիքների տեր էր, բայց շատ հարցերում լինելով Ն. Մառի դպրոցի հետևորդ՝ անընդունելի հայացքներ ուներ լեզվաբանության վերաբերյալ, ինչը նշանակալիորեն թուլացնում, իսկ որոշ կետերում նույնիսկ արժեզրկում է նրա աշխատությունը: Նա հայերենը համարում էր Հայաստանի լեզվի հաջորդը, բայց մերժում էր հայերենում հնդեվրոպական ժառանգության էական դերը: Հայասական տեղանունները, անձնանուններն ու դիցանունները նա մեկնաբանում էր առավելապես խուռիական, ավելի քիչ՝ տարածաշրջանի այլ հին լեզուների հիմքերով (ընդ որում ոչ հնդեվրոպական էր համարում նաև անատոլիական լեզուները): Ղափանցյանի այդ մեկնաբանությունները, դիտված լեզվաբանական ճիշտ դիրքերից, կարող են համարվել Հայաստանի ոչ հայկական բնույթի ապացույց³⁹⁴:

Հաջորդ սերնդի գիտնականները արդեն ճիշտ մեթոդաբանական հիմքի վրա, այսինքն՝ չվիճարկելով հայերենի հնդեվրոպական բնույթը, ընդունել են *հայ*-Հայասա անվանաբանական կապը, բայց հայասերենը համարել են հայերենից տարբեր տեղական մի լեզու, իսկ ոմանք էլ՝ հայերենի նախորդը, բայց դրա համար բավարար և համոզիչ փաստարկներ չեն բերել: Որոշ ուսումնասիրողներ համարել են հայերի հայասական և բալկանյան ծագման տեսակետները: Ասենք՝ ենթադրել են, որ հնագույն հայերը, գալով Բալկաններից, յուրացրել են Հայաստանի բնիկների ցեղանունը (Մանանդյան, Թումանով, Ջահուկյան, Բըրնի, Լանգ և այլք):

³⁹² Հայասական վարկածի պատմության մասին տես Բարսեղյան 1996. Shnirelman 2001:

³⁹³ Այս արտահայտությունը կրկնում է հայոց ազգածագման վերաբերյալ Յ. Մարկվարտի հոդվածի վերնագիրը՝ «Հայերի օրրանը» (Le berceau des arméniens), որով հեղինակը, թերևս, ցանկացել է բնորոշել հայասական վարկածը որպես նոր քայլ Մարկվարտից հետո:

³⁹⁴ Djahukian 1961. Джәүкян 1964, 11-14. Дьяконов 1968, 213. տես և Бэнэцяну 1961, 105-106. Ջահուկյան 1987, 322-323:

Վարկածի զարգացման և տարածման գործում առանձնահատուկ դեր են կատարել Գ. Զահուկյանի աշխատությունները: Ընդունելով Հայաստանի էական դերը հայ ժողովրդի ձևավորման գործընթացում՝ նա սկզբնապես եղած անվանաբանական նյութի քննության հիման վրա հայասերները համարում էր հնդեվրոպական, բայց ոչ հայերեն, այլ անատոլիական (խեթալուվիական) մի լեզու³⁹⁵: Վաղնջահայերին, սկսած մ.թ.ա. երկրորդ հազարամյակի սկզբից, նա տեղայնացնում էր Բալկանյան թերակղզում մինչև մ.թ.ա. XII դարը, երբ նրանք փոյուզացիների հետ անցել են արևելք, որտեղ իրենց են միաձուլել հայասացիներին, «հիերոգլիֆային խեթերին» (լուվիացիներին), ապա և ուրարտացիներին ու լեռնաշխարհի մյուս բնիկներին³⁹⁶: Սակայն 1987-ից նա փոխեց իր տեսակետը և հայասական անունների մի մասի համար հայկական մեկնաբանություններ առաջարկելով՝ միացավ Հայաստանի լեզուն հայերենը համարող ուսումնասիրողներին³⁹⁷:

Ստորև ներկայացնենք այս վարկածի ևս երկու տարբերակ.

ա. Մի շարք ուսումնասիրողներ *հայ* ցեղանունը կապում են բալկանյան Παίονες ցեղի հետ (հայկական *p- > h անցմամբ), որը, իմիջիայլոց, հիշվում է Տրոյայում հույների դեմ կռվողների թվում³⁹⁸: Վ. Գեորգիևը, ելնելով պայոնների փոյուզական ծագման դրույթից, նրանց ցեղանունը բխեցնում է հնդեվրոպական *pow-՝ «փոքր» արմատից (*rawyon- նախաձևից) և ենթադրում, որ այդ ցեղը կարող էր գաղթել Փոքր Ասիա և հիմք դնել Հայաստանին, որի շրջանի հետագա Փոքր Հայք անվանումը հիշեցնում է ցեղանվան ենթադրյալ «փոքր» իմաստը³⁹⁹: Գ. Զահուկյանը, թեև լեզվաբանորեն անընդունելի է համարում այս տեսակետը, բայց և այնպես հիշում է Երեմիա Մեղրեցու «Բառգիրք հայոցի» *հայ՝* «փոքր» բառը՝ որպես աջակցող մի կռվան⁴⁰⁰:

³⁹⁵ Djahukian 1961. Джаукян 1964. Զահուկյան 1976. 1987, 322-341:

³⁹⁶ Джаукян 1967, 331-332.

³⁹⁷ Զահուկյան 1987ա. 1992. 2003. Джаукян 1988 I, 46-53. Djahukian 1990:

³⁹⁸ Hommel 1904, 31. Իմիջիայլոց, նման մի վարկած կա թրակյան Παίτοι ցեղանվան առնչությամբ (տես Tomaschek 1893, 45), որը հետագայում կարծես չի կրկնվել:

³⁹⁹ Георгиев 1958, 171. 1960, 39.

⁴⁰⁰ Զահուկյան 1987, 283:

Վ. Գինդինը, ելնելով պայոնների ցեղանվան մեկ այլ՝ Օ. Տրուբաչովի մեկնաբանությունից (որը կրկնում է Ա. Մայերի տեսակետը), հավանական է համարում, որ նրանք հայերի նախնիներն էին, որոնք մ.թ.ա. XVդ. անցել են Տրոյայով և հիմք դրել Հայաստային⁴⁰¹:

բ. Հայաստական վարկածի հետ են կապվել հնագույն սեպագիր աղբյուրների՝ *հայ* ցեղանունը հիշեցնող որոշ անվանումներ: Վ. Իվանովը բերում է Էբլայի և Միջագետքի մ.թ.ա. երրորդ հազարամյակի արձանագրություններից հայտնի *Ha-a* (հնարավոր ընթերցումն է *haya*) անվանաբանական տարրը⁴⁰²: Այն հանդես է գալիս *Armi* և *Azi* անվանումների հետ (հմմտ. Հայկական լեռնաշխարհի հին անվանաբանության *Arme/Urme* և *Azzi* ձևերը), որը շեշտում է այդ կապը: Ա. Մովսիսյանը սրանց ավելացնում է շումերական հնագույն աղբյուրների *HA.A*-ն (տարբերակ՝ *A.HA*), որը հայտնի է որպես Հյուսիսային Միջագետքում և Հայկական լեռնաշխարհի հարավում տեղայնացվող Շուբուր կամ Շուբարի երկրի անվանումներից մեկը: Հեղինակը շումերական տեքստերի *Aratta* երկիրը նույնացնում է Հայկական լեռնաշխարհի հարավն ու հյուսիսային Միջագետքն ընդգրկող այդ երկրի հետ (նրանք երկուսն էլ կոչվել են գաղափարագիր *SU.KUR.RU* անվանումով): Հայոց անվանադիր նախնի Հայկի անունը և կերպարը համադրվում է շումերա-աքքադական *Haya/Ea* աստծու հետ, իսկ վերջինս պատկերվել է ուսերից դուրս եկող Եփրատ և Տիգրիս գետերով և պիտի տեղայնացվի նրանց ակունքներում՝ Հայկական լեռնաշխարհում: Ըստ այդմ՝ Շուբուրի և Արատտայի բնակիչները պետք է նույնացվեն որպես հնագույն հայեր: Հեղինակն ավելացնում է, որ շուբարացիների երկրի Շուբուր/Շուբարի անվանումը պահպանվել է Սասունի երկրամասի ասուր. *Šubria* (XI-VIIդդ. մ.թ.ա.) անվան մեջ, իսկ վերջինս ուրարտական աղբյուրներում կոչվում էր *Arme*: Այսպիսով, Շուբուրի անվանումները համադրելի են հայոց *հայ* և *արմեն* ցեղանուններին⁴⁰³: Պետք է ասել, որ այս

⁴⁰¹ Гиндин 1993, 82-85. Օ. Տրուբաչովը պայոնների ցեղանունը մեկնաբանում է որպես **pay(w)es*՝ «մարգագետնային (բնակիչներ)», որից և բխեցնում է *հայ* ցեղանունը՝ անհավանական համարելով նրա կապը Խաթի կամ Հայասա ձևերի հետ, տես Трубачев 2003, 162-163:

⁴⁰² Иванов 1983, 30-33. 1984, 67, 82-83, прим. 34. 1990, 187. Гамкрелидзе, Иванов, 913.

⁴⁰³ Մովսիսյան 2000, 7-8, 36-38, 40-47. 2013 նն:

տարբերակները շատ վարկածային են և ներկայումս չըջանառվում են առավելապես ոչ հույժ գիտական հրատարակություններում⁴⁰⁴:

Հայերի՝ Հայասայի դարաշրջանին հաջորդող պատմությունը, այսինքն՝ Հայասա-Հայք անցումը, որը միջարկվում է Ուրարտուի դարաշրջանով, Գ. Ղափանցյանը պատկերացնում էր այսպես: Խեթական պետության անկումը հանգեցնում է Հայասայի ուժեղացմանը: Ենթադրվում է հայասացի-հայերի էթնիկական առաջխաղացում Հայասայից դեպի Մալաթիա և, այսպիսով, ողջ Փոքր Հայքի տարածքների գրավումը, որտեղ նրանք իրենց են միաձուլում տեղի հին բնակչաթյունը: Մ.թ.ա. VIIդ. վերջին և ավելի ուշ նրանք սկսում են Մալաթիայից շարժվել դեպի հարավ-արևելք՝ Ծոփք, ապա Աղծնիք և ավելի հարավ-արևելք: Տեղական ցեղերի և պարսկական իշխանությունների հզոր հակազդեցության պատճառով նրանք մ.թ.ա. VIդ. սկսում են հաստատվել Ուրարտուի արևմտյան տարածքներում և, ի վերջո, յուրացնում ողջ լեռնաշխարհը: Եղել է նաև հայերի շարժում Հայասայից դեպի արևելք, որի հետևանքով մ.թ.ա. IVդ. հայացվել է Արարատյան դաշտը: Ուրարտուի հարավային շրջաններից հայերի այս շարժումը նա համադրում է Հայկի և նրա որդի Արամանյակի ավանդությունների հետ, այսինքն՝ այդ ավանդությունների հիմք հանդիսացած եղելությունները ժամանակագրում է հետուրարտական դարաշրջանով⁴⁰⁵:

Այս խնդիրը մշակվել է նաև մյուս հեղինակների աշխատություններում (Մանանդյան, Երեմյան, Սարգսյան և այլք), որոնք հիմնականում փորձել են հաշտեցնել եղած տարբեր տեսակետները: Մանանդյանը Մարկվարտի հետևությամբ հնագույն հայերենի կրողներ էր համարում Հոմերոսի արիմներին, իսկ Հայասան տեղայնացնում էր Վանա լճի մերձակայքում, որով այն նույնանում էր Հայկի ոստանին՝

⁴⁰⁴ Պայոնների և հայերի նույնացումը միայն մտահայեցողական է, հենված ցեղանունների հեռավոր նմանության և հայերի բալկանյան ծագման վարկածի վրա: Իվանովի նշած անվանաբանական տարրերի նշանակությամբ անհայտ է, իսկ նրանց կապը *հայ* ցեղանվան հետ՝ շատ վարկածային, հենված միայն հնչողության որոշ նմանության վրա: Արմեերկրի տեղայնացումը Հայաստանում, ինչպես նշվել է, ներկայումս չի ընդունվում, իսկ աքքադական *Ḫaya* (Խայա) դիցանունը մեկնաբանվում է սեմական *ḫyy*՝ «կյանք» արմատով, տես Roberts 1972, 20. Պետրոսյան 2014թ., 188, գրականությամբ:

⁴⁰⁵ Капанцяи 1956, 123 сл., 155 сл.

Հարքին: Երեմյանը վաղնջահայ-արիմներին նույնացնում էր ուրումացիների հետ, որոնք *հայ* են կոչվել Հայասայի անունով: Երկու հեղինակներն էլ հայերի կողմից Հայկական լեռնաշխարհի հիմնական մասի յուրացումը թվագրել են հետուրարտական ժամանակներով:

Գ. Սարգսյանը նույնպես շատ չի հեռանում նախորդ հետազոտողների դրույթներից: Նա նշում է, որ մասնագետները (Գ. Խալաթյանց, Գ. Ղափանցյան, Ս. Երեմյան, Բ. Պիոտրովսկի, Ի. Դյակոնով, Գ. Մելիքիշվիլի և այլք) Եփրատի վերին հոսանքի հովիտն առանձնացնում են որպես մ.թ.ա. II հազարամյակի երկրորդ կեսում հայ ժողովրդի կազմավորման բնօրրան: Այդ շրջանը Դյակոնովի կողմից նշված տարածքներն են՝ գումարած Հայասան, որոնք, բացի Հայասայից, թեև կոչվել են ուշխեթական թագավորություններ, բայց իրականում «էթնիկապես հագեցած են եղել հայկական տարրով»: Հայերը Հարք՝ Հայկի ոստան պիտի անցնեին Մալաթիայից և նրան հարակից տարածքներից: Դրա վկայությունն է Հայկին Թորգոմի որդի համարելը. վերջինս աստվածաշնչյան «Թորգոմի տան» (Կապադովկիա) էպոնիմն է: Մ.թ.ա. XIIդ. ուրումացիները (որոնց հետ է կապվում *արմեն* ցեղանունը) և մուշքերը գրավում են լեռնաշխարհի հարավարևմտյան շրջանները: Առաջանում է տարբեր անվանումներով հիշվող, բայց հայկական՝ դեպի լեռնաշխարհի կենտրոնը ձգտող մի մեծ էթնոլեզվական զանգված, որը բախման մեջ էր Ուրարտուի հետ (բախման ամենաեռուն կետը՝ «հայկական էթնոլեզվական զանգվածի բաստիոնն» է համարվում Տարոնը՝ Ուրմե երկիրը): Չի բացառվում հայկական կղզյակների առկայությունը նաև լեռնաշխարհի արևելքում, որոնցից հիշվում են Արգիշթի I-ի կողմից Էրեբունիում վերաբնակեցված 6600 գերիները (ենթադրաբար հայախոս): Հայկի՝ Բաբելոնից Հարք անցման ավանդությունը ճշտվում է որպես հայերի՝ Կապադովկիայից Հարք տեղաշարժ՝ ստեղծված մ.թ.ա. II հազարամյակի երկրորդ կեսին – I հազարամյակի սկզբներին, որպես արտացոլում պատմական իրողությունների: Հայկի ժառանգների կողմից լեռնաշխարհի արևելյան շրջանների յուրացումը ժամանակագրվում է մ.թ.ա. VIII-VIդդ. իրողություններով, որով և ավարտվում է հայ ժողովրդի կազմավորումը⁴⁰⁶:

Այս վերակազմությունը, ինչպես և նախորդները, հիմնականում մտահայեցողական է. ոչ մի լեզվական կամ այլ իրական հիմք

⁴⁰⁶ Գ. Սարգսյան 1988. Գ. Սարգսյան 1992:

չի բերվում ուշխեթական թագավորությունները և նրանց արևելյան հարևան երկրները (որոնց, բացի Ծոփքի արևմտյան հատվածից, դժվար է «ուշխեթական» համարել) հայկական տարրով հագեցած, Տարոնը և Ուրմեն՝ «հայկական բաստիոն», իսկ Էրեբունիի վերաբնակիչներին հայախոս համարելու համար. եթե դրանք լինեին, ապա հայոց ազգածագման խնդիրը շատ ավելի մոտ կլիներ իր լուծմանը: Չկան և հնագիտական հիմնավորումներ:

Վերջին անգամ Հայասա-Հայք ժառանգորդությանը մանրամասնորեն անդրադարձել է Վ. Խաչատրյանը, որը փորձել է հայասական վարկածը հաշտեցնել Հայկյանների ավանդության հետ: Ըստ հեղինակի՝ Հայկը եղել է մ.թ.ա. XIII դ. կեսի Հայասայի պատմական արքա, Արամանյակը Հայասայից տեղափոխվել է Այրարատ մ.թ.ա. 1085թ. ևն, այսինքն՝ ակնհայտ բանահյուսական, դիցաբանական հերոսները համարվում են պատմական դեմքեր և պատմական ժամանակագրություններ ստանում, ինչն անընդունելի է⁴⁰⁷:

Հայասական վարկածի օգտին կարելի է ներկայացնել մի քանի ուժեղ փաստարկ.

ա. Հերոդոտոսը պատմում է, որ Հալիս գետը հոսում է Հայկական (արմենական) լեռներից (I.72), իսկ Եփրատը՝ Արմենիայից (I.180): Ըստ այդմ՝ նա հայ-արմեններին տեղայնացնում է Եփրատի և Հալիսի վերին հոսանքներում, այսինքն՝ մոտավորապես նախկին Հայասա-Ացցիի տարածքներում և ավելի արևմուտք (բայց նաև այլուրեք Հայաստանում):

բ. Հայասա-Ացցիի տեղայնացումը Փոքր Հայքի նախնական սահմաններում (Եփրատ, Ճորոխ, Գայլ և Հալիս գետերի վերին հոսանքներ), որը, ի հակադրություն Մեծ Հայքի, կարող է դիտվել որպես «նախնական Հայաստան»: Փոքր Հայք անվանումը թերևս այնքան էլ հին չէ. առաջին անգամ ավանդված է հունական աղբյուրներից (սկսած մ.թ.ա. III դ.), բայց կարող է որոշ հին պատկերացումների վկայություն լինել: Հաճախ «Մեծ» մակդիրով են կոչվել ցեղի կողմից ավելի ուշ յուրացված տարածքները, իսկ «Փոքր» կոչումը անցել է այն նախնական շրջաններին, որտեղից սկիզբ է առել ցեղի ծավալումը. հմմտ. Փոքր Փոյուզիա, Փոքր Լեհաստան, Փոքր

⁴⁰⁷ Վ. Խաչատրյան 1998:

Ռուսիա են⁴⁰⁸ (բայց հմմտ. Փոքր Հայք՝ ասված Կիլիկիայի համար, որն ավելի ուշ է յուրացվել, և Փոքր Հայաստան՝ Արևելյան Հռիփլուղում):

գ. Հունական ավանդության համաձայն Հայասա-Ացցիի շրջանում Ակիլիսենետում են սկզբնապես հաստատվել արգոնավորդ Արմենոսի հետևորդները⁴⁰⁹:

դ. Այն երկիրը, ուր մեկնում են արգոնավորդները, հնագույն աղբյուրներում կոչվում է Άϊα (Այա). սա կարող է դիտվել որպես փաստարկ առ այն, որ տեղաբնիկների լեզվում երկրանունն ունեցել է (Հայա) և ոչ (Խայա) հնչողությունը և միայն խեթական սեպագրում է ներկայացվել («տառադարձվել») որպես Խայա-սա (տես ստորև):

ե. Հայկական նախաքրիստոնեական աստվածների մեծ մասի (Արամազդ, Անահիտ, Միհր, Նանե, Բարշամին) պաշտամունքները կենտրոնացած են նույն՝ Ակիլիսենեի շրջանում, Բարձր Հայքի երեք իրար հարևան՝ Դարանաղի, Եկեղյաց և Դերջան գավառներում: Հայոց նախաքրիստոնեական դիցարանի կառույցը և աստվածների կերպարները որոշ չափով համադրելի են հայասական պաշտամունքների հետ⁴¹⁰:

զ. Հին հայոց արքաների գերեզմանները գտնվել են Անի ամրոցում՝ Արամազդի պաշտամունքի կենտրոնում (Ագաթանգեղոս 785. Փավստոս Գ.Ժա. Խորենացի Գ.Ժ, իա): Պետք է ասել, որ Անի ամրոցը գտնվել է Հայասա-Ացցիի տարածքներից արևմուտք (հայերի հետագա տարածման հետևանք):

⁴⁰⁸ Трубачев 2003, 165-166. հմմտ. Капанцян 1956, 235. հմմտ. Gulbekian 1991:

⁴⁰⁹ Այս ուժեղագույն կռվանը շատ քիչ են հիշում հայասական վարկածի այն կողմնակիցները, որոնք դեմ են հայերի բալկանյան ծագման դրույթին: Գ. Ղափանցյանը և նրա հետևորդները Բ. Պիոտրովսկու հետևությամբ այս ավանդությունը ներկայացնում են որպես արհեստածին մի հնարանք, հունակենտրոն տրամադրությունների արտահայտություն, ինչն իհարկե պարզունակեցնում է խնդիրը: Մինչդեռ Արմենոսի հետևորդների՝ Ակիլիսենետում և մերձակայքում հաստատվելն է այն միակ հին և ուղղակի տվյալը, որը հայերի ծագումը կապում է այդ տարածքների հետ: Հետաքրքիր է, որ այդ գերբնադատական մոտեցումը քննադատվել է հայասական վարկածի հակառակորդ Ի. Դյակոնովի կողմից: Այս հարցի վերաբերյալ տես Պիոտրովսկի 1945, 26. Пиотровский 1959, 123. Капанцян 1956, 168-169. Дьяконов 1968, 206, прим. 40:

⁴¹⁰ Այս հարցի վերաբերյալ տես Петросян 2002, 139-147. Պետրոսյան 2003, 212-217. 2004, 206-208, 221-225. 2006ա. 2015. Petrosyan 2007a:

է. Հայերենի հնչյունաբանության նույնությունը քարթվելական լեզուների հնչյունաբանությանը և ակտիվ փոխազդեցություններն արևմտաքարթվելականի հետ. Մեծ Հայքի հյուսիս-արևմտյան շրջանը՝ Հայասայի ավանդական տեղայնացման վայրը, գտնվում է արևմտաքարթվելական ցեղերի բնօրրանի հարևանությամբ:

Թույլ կետերն են.

ա. հայ. *h*-ի և սեպագիր *h*-ի նույնացումը,

բ. սպասելի սեպագիր *ay*-ի (= **hajn*) փոխարեն *haya*- ձևը,

գ. *-(a)ša* վերջավորության չբացատրված բնույթը, տարածաշրջանի տեղանուններում ոչ տարածված լինելը և հայերենով չբացատրվելը,

դ. Հայասայի անվանաբանության մեջ հայկական տարրի ոչ բացահայտ լինելը,

ե. հայոց ազգածագման ավանդության մեջ Հայասայի հիմնական տարածքների դեր չունենալը և նույնիսկ չհիշատակվելը (եթե Հայասան չի ընդգրկել նաև Հայկի ոստան Հարքը Վանա լճի հյուսիս-սարևուտքում),

զ. հետխեթական դարաշրջանում *Haya(ša)*-ի հետ համադրելի ցեղատեղանունների բացակայությունը:

Հայասա-հայ կապի լեզվաբանական անհավանականության մասին, ինչպես ասվել է, բազմիցս գրել է Ի. Դյակոնովը, որին առանց նոր հիմնավորման կրկնել են այլ հեղինակներ (միայն վերջերս նույն՝ *h-ju* անհամապատասխանության հիման վրա այդ թեզի հիմնավորման նոր փորձ է կատարվել)⁴¹¹: Սակայն չնայած թվացյալ նույնությանը, նախաձայն *h*-ի համապատասխանությունը սեպագիր *h*-ին *hայ* < *Hatti* և *hայ* < *Haya(ša)* վարկածներում տարբեր են իրարից: Առաջին դեպքում *hայ* ցեղանունը փոխառված է համարվում *խաթի-*ից, իսկ երկրորդում ենթադրվում է, որ խեթերի համար օտար *hայ*-ցեղանունն է հաղորդվել որպես սեպագիր *hay-*, այսինքն՝ առաջին դեպքում օտարալեզու խեթական *ju*-ն է հայերենում արտացոլված համարվում որպես *h*, իսկ երկրորդում տեղական *h*-ն է խեթական

⁴¹¹ Kitazumi 2013. Simon 2013, 127.

սեպագրում ներկայացվել որպես *խ*: Ակնհայտ է, որ ավելի հավանական է, որ օտարալեզու *հ*-ն սեպագրում հաղորդվեր *ք*-ով, քան այն, որ օտարալեզու *խ*-ն հնագույն հայերենում ընկալվեր որպես *հ* (հիշենք օտարալեզու *հ*-ի *խ*-ով տառադարձումը ժամանակակից ռուսերենում): Եվ կարելի է ասել, որ եթե *հայ* և *Կայաճա* անվանումներն ինչ-որ կերպ կապված են իրար, ապա խեթական *Կայաճա*-ն է ծագում տեղական, հնարավոր է՝ հայկական *հայ*-ից:

Արգոնավորողների առասպելի վերլուծությունը կարծես հնարավորություն է տալիս պարզելու Հայասայի հին հնչողությունը: Այն երկիրը, ուր նավում են արգոնավորողները, կոչվել է Այա, որը հետագայում է միայն նույնացվել Կոլխիդայի հետ: Կոլխիդան, ինչպես այն ընկալվել է արդեն անտիկ ժամանակներում, ներկայիս Արևմտյան Վրաստանն է, Ռիոն գետի ավազանը, որն այլ կերպ կոչվել է Էգրիսի և Լազիկա, բայց հնագույն Կոլխիդան գրավել է ավելի հարավային և արևմտյան՝ նախկինում Դիաուխիին պատկանող տարածքները և գոնե մասնակիորեն համընկել հին Հայասայի հետ⁴¹²: Արգոնավորողների առասպելը թվագրվում է տրոյական պատերազմին նախորդող սերնդով (մ.թ.ա. XIII դ.), այսինքն՝ Հայասա-Ացցիի գոյության դարաշրջանով: Ըստ այդմ՝ թեև մինչև վերջերս ասվել է միայն վարկածային ձևով, առասպելաբանական Այան պետք է համապատասխանի պատմական Հայասային (և ինչպես կարող է միևնույն տարածքների՝ միևնույն դարաշրջանով թվագրվող երկու անվանումների այդպիսի նմանությունը պատահական լինել)⁴¹³: Խեթ. *Կայաճա*-ի և հուն. Այայի համադրությունը ցույց է տալիս, որ այդ երկրանվան արմատը պիտի լիներ *Հայա*-, ոչ *Խայա*-. *Հայ* ցեղանունը վերականգնվում է որպես **հայո*-, բայց հնարավոր է, որ *-ո* հիմքը ուշ երևույթ լինի:

⁴¹² Ըստ Գ. Մելիքիշվիլու՝ հնագույն Կոլխիդան (ուրարտ.՝ *Qulḫa*, վկայված մ.թ.ա. VIII դ.) գտնվել է Զորոխի ավազանում (Меликишвили 1959, 62-63. 1962, 324-325. Меликишвили, Лордкипанидзе 1989, 207, 219), այսինքն՝ այնտեղ, որտեղ դարեր առաջ եղել է Հայասան: Ըստ Դյակոնովի՝ Կոլխիդան մ.թ.ա. VIII դ. զբաղեցրել է Դիաուխիի տարածքները (Дьяконов 1982a, 51), իսկ Դիաուխին՝ Հայասայի նախկին տարածքները՝ (Дьяконов 1968, 120-121, 210-211):

⁴¹³ Այա երկրի և Հայասայի նույնացման վերաբերյալ տես Husing 1933, 51. Меликишвили 1954, 85. Toumanoff 1963, 57-58, հարցի գրականությամբ մեր հիմնավորումները տես Պետրոսյան 1997, 65-69, 2015ա. Петросян, 2002, 48-49. 2016: Պետրոսյան 2015ա. Петросян 2016:

Եվ հնարավոր է, որ Հայա-ն լինել *հայ* ցեղանունից կազմված երկրանուն (*yā ածանցով): Սա բացատրում է նաև -sa-ն որպես ածանց, ինչը նույնպես վարկածի խնդրահարույց հարցերից է:

Այս վարկածում ևս հայ հանրության իր անվամբ ի հայտ չի գալիս ուրարտական արձանագրություններում, որոնց ողջ հսկայածավալ անվանաբանության մեջ չկան սեպագիր *haya-*, *haya-* տարրով անվանումներ (խեթական դարաշրջանից հետո Հայասան չի հիշվում. այդ շրջանում ուրարտական աղբյուրները հիշում են Դիաուխի թագավորությունը): Ուրարտական աղբյուրներում չկա և ոչ մի տեղեկություն, որ ակնարկի Հայասայի բնակիչների կողմից լեռնաշխարհը յուրացնելու մասին: Եվ Ի. Դյակոնովը հայասական վարկածը բացառելու հիմնական կարևոր հիմքերից մեկն է համարում Հայասայի և Հայքի միջև պատմականորեն գրանցված կապերի բացակայությունը⁴¹⁴: Դա է գլխավոր պատճառը, որ Գ. Սարգսյանի՝ այս վարկածի պատմական մեկնաբանությունը, բացի «նախնական Հայաստանի» մեջ Հայասան ևս ընդգրկելուց, շատ կետերում համարյա նույնական է Դյակոնովի տեսությանը: Սա, իհարկե, չի նշանակում, որ չկան այլ մեկնաբանությունների հնարավորություններ⁴¹⁵:

⁴¹⁴ Дьяконов 1968, 210–211. 1983a, 172.

⁴¹⁵ Գ. Զահուկյանի աշխատություններում կա Հայասա–Հայք անցման մեկ այլ՝ անվանաբանական նյութի հիման վրա արտահայտված տեսակետ: Վանա և Ուրմիա լճերի հարավային շրջաններում հանդիպում են *ay-* բաղադրիչով սկսվող մի շարք անվանումներ (*Aya*, *Ayaqanani*, *Ayale*, *Ayusiaš*, *Ayašun*, *Ayduini*), որոնք տեսականորեն կարող են կապվել հայ ցեղանվան հետ, տե՛ս Զահուկյան 1988, 159–161 (նկատենք, որ անվանումների վերջին մասերը թողնված են հիմնականում առանց ստուգաբանության, իսկ *Ayadu–Ayduini*-ի *հայ + տուն* մեկնաբանությունը հույժ ենթադրական է): Ըստ հեղինակի՝ այս տվյալների հիման վրա կարելի է ենթադրել, որ հայկական ցեղերի՝ *հայ* ցեղանունով բնորոշվող խումբը տեղայնացվել է լեռնաշխարհի հարավում (ի հակադրություն *արմեն* ցեղանունով բնորոշվող խմբի, որը ըստ *Arme*, *Urme* անվանումների, տեղայնացվում է արևմուտքում): Արմե երկիրը, ինչպես ասվել է, ներկայումս տեղայնացվում է այլուրեք, բայց նույնիսկ անկախ դրանից այս միտքը խոցելի է. անվանաբանությունից հայտնի է, որ տեղանուններում որևէ ցեղանվան հանդես գալը այդ ցեղի լայն տարածվածության ցուցիչ չէ. օրինակ՝ «Ռուսական» կոչվող մի գյուղ կարող է լինել ինչ-որ տեղ Ղազախստանում և ոչ բուն Ռուսաստանում, ուր բոլոր գյուղերը ռուսական են, տե՛ս Никонов 1965, 40 (այս դրույթը մեզանում ծանոթ է Ի. Դյակոնովի մատուցմամբ, Дьяконов 1968, 15–16, прим. 13): Եթե այդ անուններն իրոք կապ ունեն *հայ*

Կարելի է վարկած առաջադրել, որ (Հ)այա երկրանունը պահպանվել է նաև Խեթական տերության անկումից հետո՝ մ.թ.ա. I հազարամյակում: Ուրարտական անվանաբանության մեջ Այա ձևի հետ համադրելի է Iyani/Igani երկրանունը (ուրարտական սեպագրում այս ձևերը նույնական են՝ Igani-ն կարող է կարդացվել Iyani): Այս երկիրը տեղայնացվում է Հյուսիսային Ծովակի (Չըլդր լճի) հարավ-արևմուտքում և հարակից շրջաններում, այսինքն՝ Տայք նահանգի արևելքում⁴¹⁶ և, այսպիսով, նախկին Հայաստյի արևելյան տարածքներում: Անուններին հաճախ հավելվող խուռաուրարտական -ni ածանցն առանձնացնելուց հետո մնում է Iya հիմքը, որը կարող էր արտացոլել նաև *էյա* և *Այա* արտասանությունը: Այսինքն՝ տեղական *հայա*-ն ուրարտական սեպագրով կարող էր ներկայացվել որպես *iya* և *iga*: Իյանին կարող էր լինել (արևելյան) մի հատվածը երբեմնի մեծ ու հզոր Հայաստյի՝ Այա երկրի, որը պահպանել էր նրա անվանումը:

Որոշ հնարավորություն կա խոսելու նաև այդ երկրի բնակչության էթնիկական ծագման մասին: Այսպես, Այա երկրի առասպելը և նրա անունները հնդեվրոպական են (Այա-Կոլխիդայի արքա Այետեսը և նրա դուստր Մեդեան համապատասխանում են հնդկական առասպելաբանության Յայատիին և Մադհավիին)⁴¹⁷: Ավելին՝ ուրարտական աղբյուրներում առավել

ցեղանվան հետ, ապա դրանք ցույց են տալիս, որ հայերն այդտեղի հին բնակիչների մեջ ուշ եկվորներ են (քանի որ ցեղանունից ստեղծված տեղանուններ կարող են լինել միայն օտար շրջապատում): Եվ հեղինակն էլ, բերելով հայասական անունների զուգահեռներ ուրարտական անվանաբանությունից (Hayaša – Ayduni, Azzi – 'Aza, Huggana – Huka, Baltaik – Baltulhi, Arhita – Arhi, Arniya – Arna, Duqqama – Duqama, Halimana – Ulmania, Elamunia, Alamun, Parraya – Parra), ենթադրում է, որ եղել է «Հայասայում և մերձակայքում գտնվող ցեղերի տեղաշարժ դեպի հարավ և արևելք՝ ընդհուպ մինչև Ուրմիա լճի հարավը»: Ըստ Ի. Դյակոնովի՝ տեղանունների այս նմանությունը կարող է բացատրվել ընդհանուր կուր-արաքսյան ենթաշերտով կամ այլ պատճառներով, օրինակ՝ Հայաստյի և Հայկական լեռնաշխարհի կենտրոնի ընդհանուր պատկանելությամբ խուռաուրարտական լեզուների խմբին, տես Дьяконов 1968, 210, прим. 50: Ինչևէ, անկախ որոշ ճշգրտումների կարիքից, այս համադրություններն արժանի են քննարկման:

⁴¹⁶ Арутюнян 1985, 84-85, 87.

⁴¹⁷ Պետրոսյան 1997, 89-93. Петросян 2016.

ակնհայտ հայկական անունով անձը՝ Դիուծինին, եղել է հենց Իգանի երկրից՝ Diuṣini-ni Iganiehi «Դիուծինի Իգանիացի» (թեև տեսականորեն հնարավոր է նաև, որ Իգանին Դիուծինիի հայր-անունն է)⁴¹⁸: Հատկանշական է, որ Իգանի երկրից հայտնի է ընդամենը երկու տեղանուն, որոնք ևս կարող են հայկական արմատներ ունենալ (ըստ Գ. Զահուկյանի)⁴¹⁹:

Հայասա-Հայք ժառանգորդությունն առավել ընդունելի կլիներ, եթե պարզվեր, որ Հայասան ընդգրկել է նաև Հայկի հանգրվան Հարքը, այսինքն՝ Վանա լճի հյուսիսը: Այս տեսակետի համար ևս կարելի է որոշ կռվաններ ներկայացնել՝ ա. Հայասայի քաղաքներից մեկը գտնվել է «ծովի մեջ», որը, ըստ որոշ հետազոտողների, կարող էր լինել Վանա լիճը⁴²⁰, բ. հնարավոր է հայասական Arhita տեղանվան համապատասխանությունը ուրարտական Arhi-ին⁴²¹ (Մուշից ոչ հեռու), իսկ վերջինս Գ. Սարգսյանը նույնացնում է հենց Հարքին⁴²²:

Ինչպես ասվել է, վերջերս Ա. Քոսյանը և Ռ. Ղազարյանը փորձել են վերահիմնավորել Հայասայի՝ Տարոնում և մերձակայքում տեղայնացումը: Նշվում է, որ Երզնկայի դաշտը, որտեղ սովորաբար տեղայնացնում են Հայասան, այնքան մեծ չէ, որպեսզի այստեղ հնարավոր լիներ տեղադրել Հայասայի նման հզոր մի քաղաքական միավոր (ընդ որում՝ դաշտի մի հատվածը գտնվել է խեթական վերահսկողության տակ): Մինչդեռ Տարոնի դաշտը իր հնարավորություններով և պատմական տվյալների լույսի տակ կարող էր լինել այդ թագավորության տարածքը: Խեթական տեքստերում Ացցիի

⁴¹⁸ КУКН 241 С, 51-52.

⁴¹⁹ Eratele և Maqaltuni, որոնց երկրորդ մասերը համադրելի են *հայ. տեղ և տուն* արմատների հետ, տե՛ս Զահուկյան 1988, 156:

⁴²⁰ Այդ քաղաքի՝ Վանա լճի շրջանում գտնվելու վերաբերյալ տե՛ս Forrer 1931, 17-18. Манандян 1984, 515. Haas 1986, 23: Այլ տեղայնացումների մասին տե՛ս Քոսյան 2004, 38-39:

⁴²¹ Джаукян 1964, 19.

⁴²² Գ. Սարգսյան 1988, 93, Գ. Սարգսյան 1992, 39: Համադրումը լրացվում է Պլինիոս Ավագի հիշատակած Archene գավառի և Հարքի նույնացմամբ (ըստ Մարկվարտի և Մանանդյանի): Այս նույնացումներն իհարկե շատ վարկածային են (հմմտ. հայ-Հayaša, բայց Հարք-Arhi-ta, և ոչ սպասելի Harki համապատասխանությունը), տե՛ս և Петросян 2002, 54, Պետրոսյան 2002, 251-253:

առնչությամբ հիշվող Խիմնովա և Ուտկունիսա տեղանունները համապատասխանում են ասորեստանյան համաժամանակյա տեքստերի՝ որպես Ուրուատրիի երկրներ հանդես եկող Խիմմե/Խիմնուա և Ուատկուն/Յատկուն/Ատկուն անվանումների հետ, ինչը թույլ է տալիս դրանց տեղայնացնել Հյուսիսային Միջագետքի հարևանությամբ: Սա ենթադրում է Հայաստանի և ասորեստանյան տեքստերի Ուրուատրի ու Նաիրի երկրների գոնե մասնակի համընկնում: Եթե դա այդպես է, ապա որոշակի պարզություն է մտցվում հայաստանյան վաղ ցեղային ու պետական կազմավորումների շարունակականության և ժառանգորդության հարցում: Նույնիսկ կարելի է ենթադրել, որ Հայասան և Ացցին էին այն նախնական միջուկը, որի վրա ձևավորվեց Ուրարտուն⁴²³:

Չնայած այս և բերվող այլ փաստարկներին, միևնույն է, Հայաստանի տեղայնացումը Բարձր Հայքում և մերձակայքում չի կարող ժխտված համարվել: Հայաստանյան վարկածի համար բերված բոլոր ուժեղ փաստարկները (Փոքր Հայքը որպես «Նախնական Հայաստան», Արմենոսի հետևորդների հաստատվելը Ակիլիսենեում, Այա երկրի համապատասխանությունը Հայաստանին, հայկական դիցարանի աստվածների մեծ մասի տեղայնացումը Եկեղյաց և հարևան գավառներում ևն) խոսում են Երզնկայի դաշտի և մերձակա տարածքների օգտին: Եվ չէ՞ որ Ուրարտուի արքաները միայն մեկ երկիր են կոչել «հզոր», և դա Դիաուխին է, որը գտնվել է Հայաստանի ավանդական տեղայնացման տարածքներում: Իսկ տեղանունների համապատասխանությունը (եթե նույնիսկ ընդունենք որպես անվիճելի փաստ) կարող է բացատրվել նույն ցեղի տեղաշարժերով, ընդհանուր ենթաշերտի գոյությամբ և, ի վերջո, Հայաստանի՝ մինչև Վանա լիճը տարածված լինելով:

Հայաստանյան վարկածում ևս էական թույլ կետերից է հայերենով հուսալիորեն ստուգաբանվող անունների բացակայությունը հնագույն հայերի այդ ենթադրյալ նախնական տարածքներում: Իհարկե, հայաստանյան անունների թիվը փոքր է, և եթե որևէ երկրում մի լեզվով ստուգաբանվող անունների առկայությունը կարող է համարվել այդ լեզվի ներկայության ցուցիչ, ապա բացակայությունը, խիստ ասած, այդ լեզվի բացակայության ապացույց չէ (օրինակ՝ ուշխեթական անվանաբանության մեջ խեթական

⁴²³ Քոսյան 2013. 2016, 116-121. Ղազարյան 2013:

տարրը մեծաքանակ չէ)⁴²⁴: Ինչևէ, այդ բացը լրացնելու փորձ է արվել Գ. Զահուկյանի վերջին աշխատություններում, բայց Հայաստանի և մերձակայքի անունների (հատկապես անձնանունների) առաջարկվող հայկական ստուգաբանությունները մտահայեցողական են և վիճելի⁴²⁵, մինչդեռ ակնհայտ են այլալեզու զուգահեռները⁴²⁶: Հայաստական անունների՝ այլ հեղինակների կողմից առաջարկված հայկական ստուգաբանություններն առավել կասկածելի են:

Ուսումնասիրողների համար երկար ժամանակ ելակետային է եղել հայերի արևմտյան՝ Բալկաններում, ապա Կապադովկիայում նախնական օրրաններ ունենալու դրույթը: Դրանցից առաջինի մասին բավարար խոսվել է, և այստեղ կանոնադաշտանք երկրորդին: Այդ գաղափարն իշխում է ոչ միայն Մարկվարտի և Դյակոնովի, այլև հայաստական վարկածի կողմնակիցների շրջանում (Ղափանցյան, Երեմյան, Սարգսյան), որոնք նույնպես հնագույն հայերին Հայաստանից տանում են արևմուտք՝ Մալաթիայի շրջանը, ապա նոր միայն

⁴²⁴ Гамкрелидзе, Иванов 1984, 913.

⁴²⁵ Ահա մի շարք ստուգաբանություններ հեղինակի՝ այդ թեմային նվիրված վերջին հոդվածից (Djahukian 1990, 26-27): Արական անձնանուններ՝ *Aiṣiya* – հայ. *այծ-ի*, *Aniya* – *հանի* «տատ, նախնի», *Mariya* – *մարի* «էգ թռչուն». դիցանուններ՝ *Terittutunni* – **եռտտուն* «եռապոչ», *Šilili*[...] – *սի-ղել* «սիրելի». տեղանուններ՝ *Azzi* – հմմտ. *ազ-* «չոր», *Ingalawa* – հմմտ. *ընկալ* կամ *անգղ*, *Arziya* – հմմտ. *արծ-նել*, *արծ-աթ*, *Lahirihila* – հմմտ. *հիւղ/խուղ* «խրճիթ»: Այստեղ հնարավոր չէ քննարկել այդ ստուգաբանությունները, բայց նշենք մի քանի նկատառում: Այսպես, սեպագիր ձ-ի և հայ. ծ-ի, չ-ի և զ-ի, i-ի և ու-ի համապատասխանությունները կասկածելի են. *Terittutunni*-ն առավել հիշեցնում է բալկանյան դիցանունները (հմմտ. հուն. *Τρίτων*, *Τιθωνός*, *Τιστός*, *Τισάν*), *Šilili*- ընթերցումը ենթադրական է (դիցանվան միայն *Ši-il-* հատվածն է պահպանվել), իսկ *Arziya*-ի Հայաստանում գտնվելը վիճելի է (տեղայնացումների և ընթերցումների ճշգրտումների վերաբերյալ տես Քոսյան 2004, Քոսյան 2005): Բոլոր ստուգաբանությունները կամայական են, քանի որ դրանց մեկնաբանության համար ոչ մի հիմք չկա: Ասվածը ոչ թե միարժեքորեն մերժում է այս ստուգաբանությունները, այլ շեշտում դրանց վարկածային բնույթը:

⁴²⁶ Այսպես՝ *U.GUR* և *Tarumuš* աստվածները հավանաբար խաթական են (Պետրոսյան 2015թ, 80-82), առաջնորդների և արքաների անուններից *Huggannaš*-ը համադրելի է անատոլիական լիկիերեն *xuga-* «պապ» բառի (Джаукян 1964, 45), իսկ *Karanniš*-ը և *Midaš/Mitaš*-ը՝ Մակեդոնիայի առասպելական արքաներ Կարանոսի և Միդասի հետ, տես վերը, էջ 110-111):

բերում եփրատից արևելք՝ Մեծ Հայք: Բայց, ինչպես տեսանք, Մալաթիայում և մերձակայքում հայերենի հետքեր չեն բացահայտվում: Հայկյանների ավանդության մեջ էլ Արամ նահապետը գրավում է Կապադովկիան արևելքից, իսկ մինչև Արամը արևմտյան տարածքները չեն հիշվում: Պատմական աղբյուրներում Մալաթիայի շրջանից դեպի արևելք բնակչության զանգվածային տեղաշարժեր չեն նշվում և հնագիտորեն չեն արձանագրվում (բացի ուրարտական արքաների կողմից գերեվարած բնակչության տարաբնակեցման դեպքերից):

Ի հաստատումն հայերի արևմտյան ծագման և «նախնական Հայաստանի»՝ Մեծ Հայքից ավելի արևմուտք գտնվելու՝ հիշվում է Հայկի Թորգոմյան ծննդաբանությունը⁴²⁷: Ինչպես ասվել է, Թորգոմը Աստվածաշնչի Բեթ Թոգարման է (հայ.՝ *Տուն Թորգոմայ*) Կապադովկիայում: Մինչդեռ հայերի՝ Աստվածաշնչի Թորգոմի հետ ունեցած կապն ուշ երևույթ է: Հովսեփոս Փլավիոսի (Iդ.) մոտ Թորգոմը փոյուզացիների նախահայրն է, իսկ հայերը ծագում են Արամի որդի Ուլոսից: Թորգոմը՝ որպես հայերի նախահայր, առաջին անգամ հանդես է գալիս միայն III-IVդդ. քրիստոնյա հեղինակների՝ Հիպպոլիտոսի և Եվսեբիոսի մոտ, որտեղից էլ այդ ծննդաբանությունը պիտի անցներ Մար Աբասին և հետագա հայ հեղինակներին (տես վերը, էջ 48-49):

Որպես մեկ այլ փաստարկ՝ նշվում է Կապադովկիայի՝ հունարեն «Առաջին Հայք» կոչումը, որը, կարծում են, կարելի է ընկալել որպես «Նախնական Հայաստան»⁴²⁸: Բայց Խորենացու հիշած «Առաջին Հայքը» հռոմեական նահանգի անվանում է՝ ստեղծված մ.թ. IVդ., և այն հնացնելու իրական հիմքեր չկան: Այսպիսով, չնայած հայերի թորգոմյան-կապադովկյան ծագման շուրջ եղած բավական նշանակալի գրականությանը, այդ տեսակետը հիմնված է Աստվածաշնչի մի ուշ մեկնաբանության և Արամի՝ Կապադովկիայում ունեցած ճակատամարտի առասպելի համադրության վրա, որը գալիս է հայերի արևմտյան ծագման դրույթը հաստատելու ձգտումից: Այս հարցում միակ իսկական կռվանը կարող է լինել շրջանի անվանաբանության

⁴²⁷ Նման տարբեր մեկնաբանություններ տես Յ. Մարկվարտի, Ն. Ադոնցի, Հ. Մանանդյանի, Ս. Երեմյանի և այլոց աշխատություններում. հարցի վերաբերյալ առավել խորությամբ տես Дьяконов 1981. Գ. Սարգսյան 1992. Քոսյան 1998:

⁴²⁸ ՀԺՊ, 233:

մեջ հայկական տարրի գոյությունը: Սակայն Կապադովկիայի պատմությունը և անվանաբանությունը բավական լավ հայտնի են, բայց ոչ մի դարաշրջանում հայերենով քիչ թե շատ հուսալիորեն ստուգաբանվող անուններ չկան ավանդված:

Այսպիսով, հայասական վարկածը ևս, չնայած աջակցող մի շարք ուժեղ փաստարկներին և մասնագետների շրջանում լայն տարածվածությանը, ունի մի շարք թույլ ու հակասական կետեր, որոնք խանգարում են միարժեք պատկերացնելու Հայասա-Հայք զարգացումը:

Նորից նշենք, որ եթե հաստատվի Հայասայի տեղայնացումը Վանա լճից մինչև Ծոփք ընկած տարածքներում՝ Տարոնում և մերձակայքում, ապա դժվարությունների նշանակալի մի մասը դուրս կգա շարքից: Ամենակարևորը՝ հայասական վարկածը կհամապատասխանեցվի ազգածին ավանդության տվյալների հետ, և Հայկի ուստանը՝ Հարքը, Վանա լճի հյուսիսում՝ «Նախնական Հայաստանը» կլինի Հայասայի կազմում: Եվ այստեղի ուրարտական դարաշրջանի հայկական տեղանունները՝ Արծիա, Արծանիա, Ալիա, Տուարածինի, կհամարվեն հին Հայասայի ժառանգություն: Այդ դեպքում ինչպես պետք է մեկնաբանվեն Եկեղիքի շրջանի համար եղած ուժեղ փաստարկները: Հնարավորություններից մեկն այն է, որ Հայասան տարածված լիներ Եկեղիքից մինչև Հարք: Եվ Հայկի նախապատմական շարժումը դեպի Հարք կարող է սկիզբ առած համարվել հենց Եկեղիքից, մոտավորապես ըստ Գ. Սարգսյանի առաջարկածի, միայն առանց Եփրատից արևմուտք ընկած տարածքները մտնելու, և ժամանակագրվել ավելի վաղ, ամենաուշը՝ նախաուրարտական դարաշրջաններով:

Էթիունյան վարկածը

Հայ ցեղանունը կապված է ուրարտական աղբյուրների Etiu-երկրանվան հետ (սերկայացված Etiuni կամ Etiuhi ածանցյալ ձևերով՝ «Էթիուական» (երկիր): Երկրի տարածքը հիմնականում համապատասխանում է Մեծ Հայքի Այրարատ նահանգին: Ցեղանվան հնարավոր նախատիպերից մեկը, ինչպես տեսանք, կարող էր լինել *hat'i(y)o-, անկախ վերջինիս ծագումից՝ հնդեվրոպական *poti-yo-ից, խեթ. hatti-ից կամ մեկ այլ ձևից: Սեպագրում չկան նշաններ

օ հնչյունի համար. այն հաղորդվել է որպես *ու*, և ընդհանրապես ուրարտ. սեպագիր *ու*-ն սովորաբար հաղորդում է *օ*-ն⁴²⁹ (Ի. Դյակոնովն իր գրքի անգլերեն տարբերակում Etio-ն տառադարձում է Etio)⁴³⁰: Սեպագրում չկան նշաններ նաև *հ*-ի համար, և այն կարող էր չհաղորդվել (ուրարտական սեպագրում *ի*-ի նաև *հ* հնչյունը հաղորդելն ընդհանրապես կասկածելի է)⁴³¹: Ուրարտ. *ե*-ն հնչել է հավանաբար, որպես լայն *է* կամ նույնիսկ *æ*: Դա է, թերևս, պատճառը, որ ուրարտ. նախաձայն *ե*-ին հայ-ուրարտական համընկնումներում սովորաբար համապատասխանում է հայ. *ա*-ն⁴³²: Ինչևէ, հնագույն հայերենում կամ գոնե նրա մի բարբառում *ա*-ն կարող էր ունենալ այնպիսի արտասանություն, որ ուրարտերենում ընկալվեր և հաղորդվեր որպես *է*: Այսինքն՝ հայ. **hawəhi(j)n*-ն ուրարտերենում կարող էր «տառադարձվել» հենց որպես *etio*:

Ընդ որում պարտադիր չէ, որ հայ. **-t'i-* > *-y-* անցումը տեղի ունենար էթիունիի առաջին հիշատակության դարաշրջանից՝ մ.թ.ա. IX դարավերջից հետո: Etio- ձևը՝ որպես լեռնաշխարհի մի նշանակալի մասին տիրող ցեղախմբի անվանում, կարող էր ուրարտերենին անցած լինել գրավոր վկայվելուց դարեր առաջ, երբ հնագույն հայերենում այն հնչում էր *hawəhi(j)n*-, և մնար ուրարտերենում այդ հին ձևով, մինչդեռ հայերենում կարող էր ուրարտական ժամանակներում արդեն *hawjn* ձևը ստացած լինել⁴³³:

⁴²⁹ Дьяконов 1958, 50, Хачикян 1985, 34.

⁴³⁰ Diakonoff 1984, 134, n. 21.

⁴³¹ Дьяконов 1958, 42, 52. Хачикян 1985, 41. հմտ. և ուրարտ. Abuni – հայ. Հաւ(ն)ունիք (Арутюнян 1985, 9-10) ու Arhi – Հարք (?) համապատասխանությունները, որոնք կարող են բացատրվել *հ*-ի՝ սեպագրում չարտացոլվելով:

⁴³² Հմտ. ուրարտ. euri՝ «տեր» – հայ. *արիորդ*՝ «տիրոջ դուստր» (Ղափանցյան 1961, 121-122, 134), Erimena-*արմեն* կամ *Արամանյակ*, տես Дьяконов 1958, 48-49, Զահուկյան 1987, 428, 431-432, 441: Ընդհանրապես, *е/а* տատանումը սովորական է այլալեզու անվանումների տառադարձման ժամանակ, այդ թվում՝ սեպագիր հաղորդումներում, հմտ. Հայկական լեռնաշխարհի տեղանուններից սեպագիր (ասորեստանյան) Enzite-ի և Kullimmeri/Qulmeri-ի համապատասխանությունը հայ. Անձիտին և Քղիմարին (կան և հակառակ օրինակներ): Նման փաստեր կարելի է գտնել այլուրեք, հմտ., օրինակ, հայ. Եկեղիք-Եկեղեցացի (հայց. հողով՝ Եկեղիս) և հուն. Ակիլիսենեի հարաբերությունը:

⁴³³ Ահա նման մի քանի օրինակ եվրոպական լեզուներից. գերմ.՝ *Ֆրանկ*-

Այսպիսով, ըստ այս վարկածի, հայոց երկիրը՝ ուրարտական ժամանակների Հայաստանը, ուրարտական աղբյուրներում հանդես է գալիս որպես Etiuni/hi: Վարկածն առաջ է քաշվել մեր կողմից 1983-ին և հիմնավորվել մի շարք աշխատություններում (հրատարակված 1984-ից)⁴³⁴: Մ.թ.ա. առաջին հազարամյակի սկզբին Էթիունին եղել է Հայկական լեռնաշխարհի կենտրոնական և հյուսիսային շրջաններն ընդգրկող ցեղերի ամենանշանակալի կազմավորումը՝ համադաշնություն (կոնֆեդերացիա): Ցավոք, Էթիունիի, ինչպես և լեռնաշխարհի մյուս նշանակալի ցեղամիավորումների պատմությունը դեռ սպասում է իր գրողին:

Ի տարբերություն լեռնաշխարհի արևմտյան և հարավային շրջանների՝ Էթիունիի, այսինքն՝ ներկայիս Հայաստանի հանրապետության տարածքը հնագիտորեն բավականաչափ ուսումնասիրված է: Երկրի՝ որպես հնագիտորեն ձևավորված մի շարունակական էթնոմշակութային հանրույթի մասին կարելի է խոսել սկսած մ.թ.ա. XVդ.:

Դատելով Վանի արքաների արձանագրություններից՝ Էթիունիի բաղկացուցիչ միավորները («թագավորությունները») նրանց արշավանքների արդյունքում բազմիցս նվաճվել են, ավերվել, իսկ բնակչությունը՝ գերեվարվել: Արդեն Իշպուինին և Մինուան մ.թ.ա. IXդ. վերջին հիշում են իրենց հակառակորդ ցեղերին օգնության եկած «Էթիուխիի արքաներին»⁴³⁵: Հաջորդ արքաները պատմում են իրենց նորանոր հաղթական արշավանքների մասին: Այդ տեղեկությունները միակողմանի են. անընդհատ հիշվում են միայն Վանի արքաների հաղթանակները և նվաճումները: Բայց և այնպես, որոշ

րայի՝ «Ֆրանկների թագավորություն», ռուս.՝ Ֆրանցիա, ֆրանս.՝ Ֆրանս, գերմ., անգլ.՝ Փարիս, ֆրանս.՝ Պարի, գերմ., անգլ., ֆրանս.՝ Պրագ, չեխ.՝ Պրահա, ռուս.՝ Վեյմար, գերմ.՝ Վայմար: Այս տարբերությունները բացատրվում են այն բանով, որ Ֆրանսիան առաջ կոչվել է Ֆրանցիա, ապա՝ Ֆրանս և Ֆրանս (ֆրանկ ցեղանունից), Փարիզը՝ Պարիս, Պարի և Պարի, Պրագան՝ Պրահա, Վայմարը՝ Վեյմար, մինչդեռ այլ լեզուներում, որտեղ տեղի չեն ունեցել այդ փոփոխությունները, պահպանվել են հնից փոխառված անվանաձևերը:

⁴³⁴ Պետրոսյան 1984. 1986. 1987. 1988. 1988ա. 1997, 143-147. 2000. 2003. 2006, 131-142. Петросян 1987, 70. 1990, 241-242. 1991. 1991a. 2002, 188-190. 2009, 96-101. Petrosyan 2002, 175-177. 2007c, 49-54:

⁴³⁵ КУКН, 31.

դեպքերում ի հայտ են գալիս հակադիր փաստեր⁴³⁶: Այսպես՝ Ռուսա I-ի ժամանակների (մ.թ.ա. շուրջ 730-710թթ.) ասորեստանյան հետախուզական մի աղբյուրի համաձայն՝

Էթինացիները երկու անգամ ապստամբել են նրա (Ռուսայի - Ա.Պ.) դեմ, նրանք ռազմական կորուստներ են պատճառում նրան, նրանք ավարառության են ենթարկել նրան: Երրորդ անգամ նրանք ելնում են նրա դեմ: Ուրսան (Ռուսան - Ա.Պ.) եկել է ուղիղ Տուրուշայից (Տուշայի ասորական անվանումն է), գնում է ևս մեկ անգամ էթինացիների դեմ:

Ըստ մեկ այլ՝ հատվածաբար պահպանված աղբյուրի՝ «Ուրարտուն ավերված է», որից հետո հիշվում են «էթունացիները», որոնք և, կարելի է կարծել, ավերել էին երկիրը⁴³⁷: Կասկած չկա, որ այս «էթինացիները» և «էթունացիները» (e-ti-ni-a-a, e?-tu?-na-a-a. երկրորդ տեքստը վնասված է) էթինացիներն են, որոնց անվանումն ասորեստանցիները փոխառել են ուրարտերենից: Այդ դարաշրջանում չկար նման անվանումով մեկ այլ երկիր կամ ցեղ, որ կարողանար մի քանի արշավանք կազմակերպել և ավերել այնպիսի հզորագույն մի երկիր, ինչպիսին էր Ուրարտուն: Սեպագիր Etia- հիմքն է ակնարկում և գրչության *etina-/etuna* տատանումը:

Թվում է, թե հայերի էթիունյան ծագման որոշ արձագանքներ աղավաղված հասել են մինչև ուշ ժամանակներ: Ըստ Խորենացու (Ա.ի, ք)⁴ Ասորեստանի թագավոր Տևտամոսը հայերի Զարմայր նահապետին եթովպացիների զորքով օգնության է ուղարկում Տրոյային,

⁴³⁶ Ըստ Արգիշթի I-ի տարեգրության մի հատվածի մեկնաբանություններից մեկի՝ էթինացիներն այդ հզոր արքայի ժամանակներում ողջ տերության միջով արշավել են մինչև լեռնաշխարհի ծայր հարավ և առևանգել Արդինի քաղաքի *aštiu-zi*-ն, որն իմաստավորվում է որպես «կուռք, աստված» և համեմատվում հայ. *աստուած* բառի հետ, տե՛ս Меликишвили 1979: Եթե ընդունենք այս մեկնաբանությունը, հնարավոր են նոր, հետաքրքիր վերակազմություններ Էթիունիի և լեռնաշխարհի հարավի առնչությունների վերաբերյալ, տե՛ս Զահուկյան 1986, 51-52. Պետրոսյան 1997, 146-147: Սակայն պետք է նշել, որ ներկայումս այս տեքստն այլ կերպ է մեկնաբանվում, տե՛ս КУКН, 178, 180, прим. 44:

⁴³⁷ Saggs 1958, 212, n. 3. 2001, 117, 147.

որտեղ և նա զոհվում է հեղինացի քաջերից, բայց հեղինակը կուգեր, որ նա զոհված լինելը հատկապես Աքիլլեսի ձեռքով (այստեղ Զարմայրը համապատասխանում է «Իլիականի» Մեմնոնին): Ինչո՞ւ պիտի հայոց նահապետը դառնար եթովպացիների զորքի առաջնորդ: Հնարավոր է, որ հայոց ցեղանվան ուրարտական etiu- և ասորեստանյան etina/etuna ձևերն ինչ-որ կերպ հասնելով ուշ հեղինակներին՝ վերաիմաստավորվել են Եթովպիա համահունչ անվամբ⁴³⁸:

Ինչպես նշել ենք, արդեն նախաուրարտական դարաշրջանում Հայկական լեռնաշխարհի սահմաններում տեղի են ունեցել գաղթեր, որոնց հետևանքով լեռնաշխարհի հարավային և արևմտյան որոշ շրջաններ կարող էին արդեն յուրացված լինել հյուսիսարևելյան ցեղերի՝ հնարավոր է՝ էթիունցիների կողմից⁴³⁹: Եթե դա այդպես է, ապա այդ տեղաշարժերը կարող էին ստեղծել Հայկական լեռնաշխարհի էթնիկական միավորման (հայացման) նախնական հիմքերը: Եվ հնարավոր է, որ արդեն նախաուրարտական դարաշրջանում լեռնաշխարհի որոշ՝ իրարից հեռու գտնվող տարածքներ էթնիկապես նշանակալի չափով նույնական էին: Եվ ինչպես բազմիցս շեշտել է Ի. Դյակոնովը, Հայկական լեռնաշխարհի հայացման գործում մեծ պիտի լինել Վանի արքաների՝ երկրի տարբեր շրջաններում նվաճված երկրամասերից գերեվարված մարդկանց վերաբնակեցնելու քաղաքականությունը: Ըստ Ե. Գրեկյանի հաշվարկների (քանավոր հաղորդում) Ուրարտուի պատմության ընթացքում արքաների գերեվարած մոտավորապես մեկ միլիոն մարդուց 700 հազարը եղել է լեռնաշխարհի ներքին շրջաններից: Ճիշտ է, գերիների մեծամասնությունը կազմել են կանայք և դեռահասները, բայց և այնպես, հաշվի առնելով երկրի բնակչության ընդհանուր թիվը (մոտ մեկ միլիոն), նրանք իսկապես ի զորու էին վերափոխելու վերաբնակեցված շրջանների էթնիկական պատկերը: Ընդ որում՝ լեռնաշխարհի հյուսիսային շրջաններից՝ հիմնականում Էթիունիից են տարվել ամենամեծ քանակությամբ գերիներ՝ շուրջ 300 հազար,

⁴³⁸ Петросян 1991, 114, Պետրոսյան 1997, 124 (այս միտքն առանց ինձ հղելու օգտագործում է Հ. Կարապյոզյանը՝ 1998, 215): Հետաքրքիր է, որ ըստ Դիոդորոս Սիկիլիացու (II.14.4) և Հուստինոսի (I.2.8)՝ Շամիրամ-Սեմիրամիսը գրավել է Եթովպիան, ինչն իհարկե չունի որևէ պատմական հիմք:

⁴³⁹ Ավետիսյան 2004. Բնակչության ավելի հին՝ դեպի արևմուտք տեղաշարժի հնարավորության մասին տես Yakar 1992, 514. տես և Zimansky 2001, 18:

գուցեն ավելի⁴⁴⁰: Ակնհայտ է, որ վերաբնակեցված գերիների նշանակալի մասը կազմող էթիունցիներն արդեն Ուրարտուի պատմության վերջին փուլում վերափոխել էին երկրի էթնիկական պատկերը հոգուտ իրենց: Էթիունցի գերիների թիվը, այսպիսով, բազում անգամներ գերազանցել է արևմուտքից բերվածներին (մասնավորապես Էրեբունիի՝ ուրարտական չափանիշներով ոչ շատ մեծաքանակ 6600 վերաբնակիչներին): Ուրարտուի անկումից քիչ առաջ Ռուսա Արգիշթոորդին (մ.թ.ա. շուրջ 685-645) Էթիունին հիշում է թշնամական երկրների շարքում (այդ թվում նշվում են Ասորեստանը, Խաթե-Մելիդը, Խալիտու-Խաղտիքը, Մուշքինին, Ծիլուկու-Սյունիքը և երկու այլուրեք անհայտ երկրներ), որտեղից նա գերիներ է վերաբնակեցրել Վանի շրջանում⁴⁴¹: Այսինքն՝ Էթիունին նորից բախման մեջ էր Վանի թագավորության հետ, և էթիունցիներ են բնակեցվել նաև պետության կենտրոնում:

Այսպիսով, Էթիունին, շատ անգամներ ենթարկվելով Վանի արքաների հարձակումներին և ծանր կորուստներ կրելով, ինքն էլ կարողացել է հակադրվել նրանց և մինչև Ուրարտուի անկումը պահպանել իր «հակաուրարտական» ինքնությունը: Ավելին՝ հենց ուրարտական արքաների վարած քաղաքականության հետևանքով արդեն բուն Էթիունիից դուրս, նաև նախկինում այլ էթնիկական կազմ ունեցող տարածքներում, նշանակալի թիվ են կազմել էթիունցիները:

Այրարատը Մեծ Հայքի կենտրոնական նահանգն էր, նրա միջնաբերդը, իշխող արքայատոհմերի ոստանը, երկրի քաղաքական, կրոնական, մշակութային կենտրոնը: Ազգածին ավանդության մեջ, ինչպես ասվել է, հայոց առաջին նահապետ Հայկը հաստատվում է Հարթ գավառում, բայց նրա ավագ որդի և ժառանգ Արամանյակը տեղաշարժվում է Այրարատ՝ Արարատյան դաշտ, որտեղ Հայկից հետո կենտրոնանում է հայոց տիեզերքի արարումը: Արարատյան դաշտի շրջակա լեռները կոչվում են Արամանյակի հաջորդների անուններով, իսկ ողջ նահանգն ու նրա կենտրոնը՝ վերջին ազգածին նահապետ Արա Գեղեցիկի անունով՝ «Դաշտն Արայի», որը և

⁴⁴⁰ Մի արձանագրության համաձայն Մինուա արքան Էթիունիից տարել է 50 atibi՝ «հիսուն բյուր»՝ կես միլիոն մարդ, տես Salvini 1980, 167. CTU I, A 5-2A₃-F₃: Այս թիվը համարվում է գրության սխալ՝ հիսուն հազարի փոխարեն: Ինչպե՞ս, դա ևս հսկայական թիվ է:

⁴⁴¹ КΥΚΗ 414. Salvini 2001, 258, 261.

զոհվում է այդտեղ: Սկսած լեգենդար պատմության այդ դրվագներից մինչև այժմ Այրարատը մնում է հայոց ոստան. այստեղ են գտնվել հայոց համարյա բոլոր մայրաքաղաքները՝ Արմավիրից մինչև Երևան:

Արա Գեղեցիկի հայր Արամ Նահապետը, ինչպես ասվել է, համապատասխանում է Ուրարտուի առաջին հայտնի արքա Արամուին (մ.թ.ա. շուրջ 860-840թ., անվան վերջին ձայնավորի կանոնավոր կորստով): Վերջինիս նշանավոր կենտրոնը՝ «արքայական քաղաք» Aršašku-ն, ինչպես տեսանք, կարող է նույնացվել հետագա Արճեշի հետ: Արամուից հետո Ուրարտուի արքայատոհմը, ինչպես և պետության կենտրոնը ամենայն հավանականությամբ փոխվել է⁴⁴²: Ուրարտուի հաջորդ հայտնի արքան է Սարդուրի I-ը՝ Լուրիպրիի որդին, որի մայրաքաղաքն էր Տուշպան (Վան): Արամուի և Արամի անունների նույնությունից և Արամուի «արքայական քաղաքի» հայկական անվանումից դատելով՝ նույնիսկ կարելի է կարծել, որ Արամուն հայկական ծագումով իշխող էր, որը կռվում էր Ասորեստանի արքա Սալմանասար III-ի դեմ Վանա լճի հյուսիսում Հայկի ոստանի շրջանում:

Ազգածին ավանդության մեջ որպես Ուրարտուի էպոնիմ հանդես է գալիս Ասորեստանի Շամիրամ թագուհին: Նա է, որ կառուցում է Վան քաղաքը, որը հայոց մեջ կոչվել է «Շամիրամակերտ», «Շամիրամի քաղաք»: Ուրարտական աղբյուրներում այն կոչվում է Դսփա, և Դսփուա դիցուի՝ արևի աստծու կնոջ պաշտամունքի կենտրոնն էր: Դարերի ընթացքում հին պաշտամունքներն անվանափոխվում են, բայց պահպանում իրենց բնութագրերը, այսինքն՝ Շամիրամի կերպարում պիտի պահպանված լինեին Տուշպուեայի հատկանիշները: Շամիրամը զոհվում է Վանա լճի ափին,⁴⁴³ իսկ առասպելաբանական տրամաբանությամբ՝ հերոսը դառնում է իր զոհված վայրի էպոնիմը: Նա է, որ հաղթում և նվաճում է Հայաստանը՝ Արայի երկիրը, որն «Արայի դաշտն» է՝ Այրարատը: Ավանդության՝ մեզ հասած տարբերակում Վանը կառուցվում է Արային հաղթելուց հետո, և ընդհանրապես պատմվում է Ասորեստանի և Հայաստանի հակադրության մասին, բայց հաշվի առնելով առասպելներում պատմական իրողությունների արտացոլման ոչ միարժեք բնույթը, որպես հակադրության կողմեր

⁴⁴² Меликишвили 1954, 202. Salvini 1995, 35.

⁴⁴³ Շամիրամի զոհվելու գրոյցների վերաբերյալ տե՛ս Աբեղյան Ա, 70-71:

կարող են դիտվել Վանի շրջանը՝ Արային հաղթած թագուհու ուտանը, և Այրարատը, ուրարտական անուններով՝ Բիաինիլին և Էթիունին: Ընդ որում հակադրությունն անձնավորված է ուրարտական մայրաքաղաքի և հայոց կենտրոնի դիցաբանական էպոսների կերպարներով:

Ինչպես ասվել է, Շամիրամի պատմական նախատիպն է համարվում Շամուրամաթ թագուհին՝ Ասորեստանի արքա Շամշի-Ադադ V-ի այրին, որն իշխել է մ.թ.ա. IX դ. վերջին, և Շամիրամի ու Արայի հակադրությունը պատմական համատեքստում կարող է դիտվել որպես այդ նույն ժամանակներում (մ.թ.ա. IX դարավերջ) Վանի թագավորության կողմից Էթիունիի նվաճման առասպելաբանական արտացոլումը: Ընդ որում՝ Արայի երկիրը (հմմտ. «դաշտն Արայի»)՝ վաղնջական Հայաստանը, միանշանակ համապատասխանում է ուրարտական աղբյուրների Էթիունիին:

Արան Հայկյան (այսինքն՝ ծագումով հայ) յոթերորդ իշխողն էր Այրարատում: Առասպելում այդ յոթ սերունդներով է կողավորվել հայոց պատմության ողջ նախաուրարտական փուլը: Ըստ ավանդության՝ Արայից հետո հայերն ընկնում են Ասորեստանի իշխանության տակ, որից դուրս են գալիս շատ սերունդներ անց, այդ երկրի կործանման արդյունքում (Խորենացի, Ա.իա): Ըստ արաբ պատմիչ Մասուդու գրի առած մի լեգենդի՝ Շամիրամից հետո հայերն են երկար իշխել Նինվեի արքաների վրա: Իրականում այդ դարաշրջանում Ուրարտուն էր իշխող դիրք գրավում տարածաշրջանում: Այս տվյալների հակասությունը կարող է վերանալ, եթե ընդունենք, որ Ուրարտուն հյուսիսցիների (հայերի) հետագա բանախյուսության մեջ նույնացվել է Ասորեստանին, իսկ հարավցիների մոտ՝ Հայաստանին⁴⁴⁴:

Ընդունված է կարծել, որ հայոց ավանդական պատմական հիշողության մեջ Ուրարտուի գոյությունը ջնջվել է: Իրոք, Խորենացու հաղորդած ավանդական պատմության մեջ չեն հիշվում Վանի հզոր

⁴⁴⁴ Մասուդու բերած լեգենդը և նրանում Ուրարտուի նվաճումների արտացոլման վերաբերյալ տես Տեր-Ղևոնդյան 1965: Հետաքրքիր է, որ Սիրիայի հյուսիսի քրիստոնյաների ժամանակակից բանախյուսության մեջ, որտեղ Շամիրամը հանդես է գալիս որպես իրենց թագուհի՝ հայոց Արամ արքան և Շամիրամը պատրաստվում են ամուսնանալ, բայց Արամը դավում է և զոհվում պատերազմում, տես Bohas 1994, 23 sqq.

արքաները, իսկ նրանց նվաճումներն ու կառույցները վերագրվում են Շամիրամին: Ուրեմն, ժողովուրդների ավանդական հիշողությունը իրական պատմության ճշգրիտ արտացոլումը չէ: Մանավանդ, եթե հաշվի առնենք, որ Խորենացին միշտ առավելություն է տալիս հունական աղբյուրներին, որտեղ Ուրարտուի գոյության մասին ակնարկ չկա: Իմիջիայլոց, նույնն է պատկերը նաև հունական ավանդության մեջ, որտեղ, օրինակ, Կրետեի հին, նախահունական դարավոր պատմությունն ու մշակույթը անձնավորվել են միայն Մինոս արքայի և նրա մերձավորների կերպարներով: Նույնկերպ հայկական ավանդության մեջ, գոնե այն մշակված տարբերակում, որը Խորենացին և Սեբեոսն են մեզ ավանդել, Ուրարտուն անձնավորվել է միայն Շամիրամի կերպարով, իսկ Ուրարտուի գերիշխանության դարաշրջանը ներկայացվել է որպես Ասորեստանի տիրապետության դարաշրջան: Սա նաև ակնարկ է առ այն, որ հայոց ավանդական հիշողության մեջ Ուրարտուն և նրա հզորության պահպանված մնացորդները չեն ընկալվել որպես հարազատ, հայկական մի բան, այլ վերագրվել են թշնամի Ասորեստանին:

Էթիունիի մի շարք անուններ կարող են մեկնաբանվել հնագույն հայերենով: Իհարկե, դա չի նշանակում, որ հայկական են բոլոր անունները. հնագույն հայերը, ըստ ավանդության, Էթիունի են անցել Վանա ծովի շրջանից և հաստատվել տեղական բնակչության մեջ, որոնց լեզվով պետք է լիներ երկրի անվանաբանության գոնե մի մասը⁴⁴⁵:

Տեղանուններ

Abilianի – համապատասխանում է հայ. Աբեղեանք գավառին. համադրվում է ուրարտ. *abili*՝ «ավելացնել» բառի հետ, որը հնդեվրոպական համատեքստում հայ-հունական ընդհանուր արմատ է (**h₃bhel-*)⁴⁴⁶, ուրարտերենին անցած հայերենից կամ Ուրարտուի իշխող տարրի՝ հունարենին մերձավոր լեզվից: Հնագույն հայերենում այն կարող էր հնչել *աբել-* (= *աբեղ-*), որից և ձևավորվել է տեղանուն՝ Abelia, ուրարտ. սեպագրում արտահայտված որպես Abilia (տեղանուններին բնորոշ հնդեվրոպական *-iyā ածանցով, որոնց

⁴⁴⁵ Էթիունիի անունների հայկական ստուգաբանություններ, տես Պետրոսյան 1984. 1988. Петросян 1991, 1991a ևն.

⁴⁴⁶ Martirosyan 2013, 110.

հավելվել են ուրարտ. -ni և -hi ածանցները): Տեղանունն ինչ-ինչ պատճառներով չի դարձել *Աւելեանք*, այլ հին ձևով քարացած պահպանվել է (տեղական բարբառային արտասանության դրսևորում):

Abuni – համապատասխանում է հայ. Հաւ(ն)ունիքին. հմմտ. հայ. *հաւ-ն*՝ «պապ» < *h₂euH- (հարևան գավառը ևս կոչվում է ազգակցության տերմինով՝ Որդունիք, հմմտ. *որդի*). հմմտ. և *հաւ-ու*՝ «թռչուն» (*h₂au-i-, հիմքի հետագա փոփոխմամբ *ու-ի*):

Erkuahi – երկիր Մասիսի շրջանում՝ հմմտ. հայ. *երկու* (ակնարկվում է Մասիսի երկգագաթ՝ «Երկվորյակ» լեռ լինելու հանգամանքը)⁴⁴⁷, տեղանվանակերտ -ա հիմքով (< *-ā), որին ավելացվել է ուրարտական երկրանուններին շատ բնորոշ *hi*-ն:

Ildarunia – նույնացվում է հայ. Հրազդան գետի հետ. հմմտ. alt-հնդեվրոպական գետանունների հիմքը⁴⁴⁸ և հայ. *առու*, ապա՝ Առուն գետանունը, *-iyā ածանցով:

Isteluani – հմմտ. հայ. Աստեղանի գյուղանունը նույն շրջանում, *աստղ* արմատից (*h₂stel- > astel- > *աստղ*): Տեղանունների նոոյնությունը հիմնավորվում է տեղայնացման նույնությամբ պատմական Շիրակի գավառում, Ախուրյան (Արփաչայ) գետի աջ ափին⁴⁴⁹: Որոշ չափով անհասկանալի է մնում վերջավորության *ու-ն* (սխալ հաղորդման հետևանք):

Ueliku-ni/hi – համապատասխանում է հայ. Գեղաքունիին (հետագայում՝ Գեղարքունիք). անվան արմատը համադրելի է հնդեվրոպական առասպելական օձ-վիշապի *wel- կոչման հետ (որի կանոնավոր արտացոլումը հայերենում պիտի լիներ *գեղ-*): Գեղարքունիքում և Գեղամա լեռներում են գտնվում վիշապ քարակոթողներն ամենամեծ քանակությամբ, այդ թվում և երկու ամենամեծ խմբերը՝ Գեղ լեռան գագաթին և Գեղի ամրոցի մերձակայքում: Իրենք՝ «վիշապները», և նրանց վրայի պատկերներն էլ պարզորոշ մեկնաբանվում են օձ-վիշապի կերպարի շրջանակներում: Հայ. Գեղաքունի

⁴⁴⁷ Մասիսն ամենայն հավանականությամբ ծագում է աքքադական առասպելաբանության սրբազան լեռան Mašu (Մասու) «Երկվորյակ» անվանումից, հնդեվրոպական *-iyā ածանցով՝ Masiyā > *Մասի*, հոգնակի՝ *Մասիք*, հայց՝ *Մասիս*, տե՛ս Петросян 2006:

⁴⁴⁸ Гамкрелидзе, Иванов 1984, 945.

⁴⁴⁹ Diakonoff, Kashkai 1981, 45. ՀՀՏԲ Ա, 343: Հետաքրքիր է, որ այդ գյուղի նոր, ձևափոխված անվանումը՝ Աստախան, համեմատվել է ուրարտական մեկ այլ տեղանվան՝ Աշտուխինի հետ, տե՛ս Пиотровский 1959, 31:

ձևը կազմված է թվում հայ. *-աք* ածանցով⁴⁵⁰, որին ավելացել է *-ունի* ածանցը: Օձ-վիշապի հնդեվրոպական անունը փոխառվել է հավանաբար նաև խուրիերեն՝ հմմտ. *Ullikummi* առասպելական հրեշի անունը, թերևս հնդեվրոպական **weliko-*/**welhko-* նախածնից *-mmi* խուրիական ածանցով (այդ անունը ևս տեսականորեն կարող էր ընկած լինել *Uelikuni*-ի հիմքում, բայց Գեղ լեռան և Գեղի ամրոցի անվանումները հայկական ձևեր են)⁴⁵¹:

Uelikuni/Գեղաքունին առանձնահատուկ նշանակություն ունի: Հայոց տիեզերածնության կենտրոն Արարատյան դաշտը և շրջակա աշխարհագրական օբյեկտները կապվում են ազգածին ավանդության նահապետների անունների հետ (Արամանյակ-Արագած, Արա-Արայի լեռ, Գեղամ-Գեղ լեռ, Գեղամա լիճ, Գեղամա լեռներ և Գեղաքունի գավառ): Դրանք մեկ միասնական անվանաբանական համակարգի անուններ են, որոնցից մեկի հին վկայությունը կարող է մատնանշել ողջ համակարգի տեղայնացումն այդտեղ նույն դարաշրջանում: Այսպիսով, *Ueliku-ni/hi*-ի հիշատակությունը կարող է ակնարկել նաև մյուս անունների համաժամանակյա առկայությունը Արարատյան դաշտի մերձակա տեղանուններում:

Անձնանուններ

Ինչպես ասվել է, հին ժամանակներում մարդկանց էթնիկական պատկանելության լավագույն ցուցիչ կարող է լինել անձնանունների լեզվական պատկանելությունը: Սակայն հնագույն հայերի անվանաբանության մասին մենք շատ քիչ բան գիտենք: Հայկական և այլ հին աղբյուրներում պահպանված հին հայկական անունների մեծագույն մասն իրանական ծագում ունի (Արտաշես, Տիգրան, Տրդատ ևն): Հետաքրքիր է, որ այնպիսի մի վաղ աղբյուրում, ինչպիսին Դարեհ I-ի բեհիսթունյան արձանագրությունն է, հիշվող հայերից՝ «արմինացիներից» (Դադարշի, Արախս, Հալդիտա), ոչ մեկի անունը պարզորոշ հայերեն տեսք չունի⁴⁵², իսկ վերջինը համեմատվում է ուրարտ. Խալդիի հետ (և պատահական չէ, որ այդ անուններն ուրարտերենով մեկնաբանելու և արմինացիներին

⁴⁵⁰ Այս ածանցի վերաբերյալ տես Ջահուկյան 1994, 82:

⁴⁵¹ Այս մասին մանրամասն տես Петросян 1987. 2002, 88-89. Petrosyan 2002, 81-82. 2016. Պետրոսյան 2015:

⁴⁵² Տես ՀԱՆԲ Ա, 265. Բ, 7. Գ, 12:

ուրարտական՝ ոչ հայկական ծագում վերագրելու փորձ է արվել)⁴⁵³: Հին աղբյուրներում սովորաբար հիշվում են իշխանավորների անունները, իսկ հայ ազնվականությունը, սկսած արդեն աքեմենյան ժամանակներից, գտնվում էր իրանական ազդեցության ոլորտում և նշանակալի մասով էլ իրանական ծագում ուներ: Հետագա հայկական աղբյուրներում մեծ քանակ են կազմում քրիստոնեական անունները (Հովհաննես, Պետրոս, Մարիամ ևն): Մնում են շատ քիչ բնիկ հայկական անուններ՝ Եզնիկ, Զարմայր, Սլաք, Չագուկ ևն⁴⁵⁴: Սրանք էլ ուրարտական անվանաբանության մեջ կարծես չեն հանդիպում:

Ե. Գրեկյանը Ուրարտուի անվանաբանությանը նվիրված իր անտիպ աշխատության մեջ հնարավոր աղբյուրներից հավաքել է ուրարտական և Ուրարտուի հետ կապված անձնանունները: Այնտեղ կան մի քանիսը, որոնք պատկանել են էթիոնցիների: Ահա դրանք՝ Diuṣini(ni), Murini(ni), Murinu(ni), Nidi(ni), Qapuri(ni), Šinalibi(ni), Uerdai(ni): Դիուծինիի հայկական բնույթը որպես հուն. Դիոգենեսի հայկական ստուգաբանական զուգահեռ, ինչպես ասվել է, միանգամայն թափանցիկ է: Ստորև շատ հակիրճ, առանց միարժեք մեկնաբանությունների հավակնության ներկայացվում են մնացած անունների հայերեն ստուգաբանության հնարավորություններ: Ծինալիբի(նի) անվան առաջին մասը համադրելի է Դիուծինիի երկրորդ մասի՝ հայ. *ծին*- արմատի հետ (որի հնդեվրոպական արմատը «ծնունդ, տոհմ, ծագում» նշանակություն է ունեցել), իսկ երկրորդ մասը կարող է լինել անուն կամ նշանակել մի լավ, դրական բան⁴⁵⁵, հմմտ. հուն. Γεννάδιος անունը «ազնվածին» նշանակությամբ: Մուրինի/Մուրինու անվան համար հմմտ. հնդեվրոպական *mor-՝ «սև», *mō(u)-ro-՝ «խենթ», *-ին(n)* ածանցով, իսկ Նիդի(նի)-ին, որը կարելի է կարդալ նաև *նետը*, համեմատելի է հայ. *նետ(ի)*՝ «նետ» բառի հետ, հնդեվրոպական *nedo-՝ «եղեգ» արմատից (հմմտ. հայ. Սլաք նույնիմաստ անունը): Կապուրի(նի)-ն նույնական է թվում անհայտ ծագման *կափուր*՝ «մեծ» բառին, իսկ Uerdaini-ի համար էլ դժվար չէ գտնել հնդեվրոպական *wer-dh կամ *wer-t- նախածներ, բայց

⁴⁵³ Դ. Սարգսյան 1991, 189-190:

⁴⁵⁴ Բնիկ հայկական անձնանունների մասին տես Զառուկյան 1984:

⁴⁵⁵ Այս անվան ստուգաբանության փորձեր տես Փիլիպոսյան, Մկրտչյան 2001, էջ 72-76. Ս. Պետրոսյան 2004, 169, ծան. 85:

ակնհայտ անվանաբանական զուգահեռ կամ հայկական համապատասխան մի ձև (ասենք՝ *գերդ-*) չի հայտնաբերվում:

Կան անուններ, որոնք կարող են պատկանել էթիոնցիներին կամ ունենալ էթիոնյան ծագում՝ Abiliuquni, Aluani, Tata⁴⁵⁶: Սրանցից առաջինը կարող է դիտվել որպես հիշյալ *արեդ-* արմատի մի ածանցյալ (եթե համապատասխան տեղանունից չէ): Երկրորդը և երրորդը վկայված են Կարմիր բլուրից, այսինքն՝ էթիոնիի տարածքից: Aluani-ն ուղղակի նույնական է հայկական Աղուան անձնանվանը, որը, ինչպես և *աղուան* ցեղանունը, կարող է ունենալ հայկական ստուգաբանություն (ըստ Խորենացի Բ.ը)⁴⁵⁷: Tata-ն, չնայած բազում այլալեզու զուգահեռներին, կարող է համեմատվել հայ. Թաթ անվան հետ (*թաթ* բառից. հմմտ. և նույնարմատ Թաթիկ, Թաթուլ անունները)⁴⁵⁸:

Դիցանուն

Aniqu. սա համարվում է Արարատյան դաշտի 'Aza երկրի տեղական աստվածուհին, որը երկու անգամ հիշվում է ուրարտական աղբյուրներում: Այդ երկիրը էթիոնիի կենտրոնական մի շրջանն էր, և Անիկուն պետք է համարվի հենց էթիոնիի դիցուհին: Համադրելի է հայ. *հանի*, *հանիկ* «մեծ մայր, տատ» բառերի հետ, հնդեվրոպական *h₂an-*՝ «տատ» արմատից: Այն, որ «մեծ մայր» դիցուհին կարող է հենց այդպես կոչվել, վկայում է խեթ. H₂anna₂h₂anna դիցուհու անունը (նույն հնդեվրոպական արմատի կրկնությամբ): Հայկական որոշ դիցանուններ հանդես են գալիս *-իկ* ածանցով, հմմտ. Հայկ և Աստղիկ (սա հենց մայր դիցուհու մի տարբերակն է), որը իրանական նվազական *-իկ*-ից տարբեր, բնիկ հայ. ածանց է, հնդեվրոպական **-kon-*ից, վերջին *n*-ի անկմամբ⁴⁵⁹: Հնագույն հայերենում, մինչև վերջին ծայնավորի անկումը, *հանիկ* կոչումը կարող էր հնչել **Հանիկո* կամ **Անիկո*, որը սեպագրում կարտացոլվեր որպես Aniqu⁴⁶⁰:

⁴⁵⁶ Որոշ անուններ ուղղակի մատնանշում են անձի հայրենի երկիրը՝ Abiliuquni-ն նշանակում է «աբեդյանցի», իսկ 'Azaya-ն՝ «'Aza երկրի բնակիչ»:

⁴⁵⁷ Աղաբեկյան 1990. հմմտ. ՀԱՆԲ Ա, 109: Ե. Գրեկյանը բերում է նաև լուվիական զուգահեռ՝ Alauwanni, ըստ Laroche 1966, 27 (Կարմիր բլուրում կարող էին լուվիական գաղթականներ լինել):

⁴⁵⁸ Նշված հայկական անունների վերաբերյալ տես ՀԱՆԲ Բ, 256-259:

⁴⁵⁹ Այս ածանցի վերաբերյալ տես Զահուկյան 1994, 66:

⁴⁶⁰ Ժողովրդական երգերի *հոյ Նար, Նարոյ* կրկնվող բացականչություն-

Մյուս վարկածների հեղինակները հայերի վաղնջական ցեղանվան՝ իրենց առաջարկված ձևերի հետ համադրելի անուններով կոչվող էթնիկական միավորներ չեն կարողանում գտնել ուրարտական արձանագրությունների հսկայածավալ անվանաբանության մեջ, որտեղ հիշվում են լեռնաշխարհի անգամ ամենաերկրորդական ցեղերը: Իսկ ըստ այս վարկածի՝ հայերը և նրանց երկիրը նույնացվում են որպես մի հզոր համադաշնություն, իր ներուժով լեռնաշխարհի երկրորդ էթնոքաղաքական միավորը՝ տեղայնացած հենց այն տարածքներում, որը և՛ ազգածին ավանդության մեջ, և՛ պատմական դարաշրջանում հանդես է գալիս որպես հայոց կենտրոն:

Այս վարկածը շատ ավելի պարզ կարող է բացատրել Ուրարտու-Հայաստան անցումը՝ որպես լեռնաշխարհի հյուսիսային և հարավային երկու էթնոքաղաքական կենտրոնների հակադրության արդյունք: Հարավի՝ շուրջ երկդարյա տիրապետությունից հետո գերիշխանությունն անցնում է հյուսիսին: Ընդ որում՝ այս երկու կենտրոնների բնակչությունը և նույնիսկ վերնախավը կարող էին գոնե մասամբ նույն էթնիկական հանրություններին պատկանել: Վանի արքաների և էթիունիի դարավոր հակադրությունն իր մասշտաբներով ուղղակի անհամեմատելի է Վանի արքաների և Ուրմե-Տարոնի՝ Գ. Սարգսյանի կողմից շեշտվող հակադրությանը (և նույնիսկ Վանի ու լեռնաշխարհի ողջ արևմուտքի երկրների հակադրությանը):

Ուրարտուի կործանումը, որը նախկինում թվագրում էին մ.թ.ա. VII-VI դդ. սահմանով, ներկայումս տարածված տեսակետի համաձայն տեղի է ունեցել ավելի վաղ՝ մ.թ.ա. VIII դ. կեսից հետո⁴⁶¹: Կարելի է պնդել, որ մ.թ.ա. VIII դ. վերջին քառորդին ուրարտական պետությունն

ները մեկնաբանվում են որպես *Նար դիցուիու հիշողություններ (հմմտ. Ծովինար), տես Капанцян 1956, 295 сл.: Ըստ այդմ՝ երգերի *հանիկ Նար* բացականչությունն էլ կարող է մեկնաբանվել որպես «մեծ մայրիկ Նար», տես Ս. Պետրոսյան, Ծ. Պետրոսյան 2001, 87: Ավելացնենք, որ ամպրոպային դիցուիու սիմվոլիկ կերպարը ներկայացնող մի հանելուկի առաջին տողում «հանք մի ունեմ հանա, հանա» կրկնվող *հան-* վանկն անագրամային մակարդակով նույնպես կարող է ակնարկել այդ դիցուիու՝ Ծովինարի աստվածային նախատիպի *հան-* կոչումը (Петросян 2002, 11, 16): Իմիջիայլոց, փաստարկներ են բերվում նաև Անի տեղանվան այս կոչումից ծագած լինելու օգտին, տես Լ. Պետրոսյան 2002:

⁴⁶¹ Տես Kroll 1984, 165-168, Salvini 1995, 117. Дьяконов 1994 а, 115-116 лн: Երկրի փլուզման վերաբերյալ նոր տեսակետ տես Grekyan 2013-14: Եղած բոլոր վարկածների քննությունը՝ Գրեկյան 2016թ, 467-500:

այլևս գոյություն չունեն։ Հզոր ավերածությունների հետքեր են վկայված ուրարտական գրեթե բոլոր խոշոր կենտրոններում։ Ընդ որում՝ գործ ունենք ուժերի հետ, որոնք օգտագործել են «սկյութական» տիպի նետասլաքներ (վկայված են Հայկաբերդում, Վերին Անձափում, Այանցում, Քայալը-դերեում, Յոնջաթեփեում, Կարմիր բլուրում, Արմավիրում, Արագածում և այլուր)։ Ովքեր կարող էին տերությանն այդ վերջին հարվածը հասցնել։ Պատմական տեղեկությունների և հնագիտական նյութի տվյալները ցույց են տալիս, որ այդ ուժերը պետք է լինեին ոչ միայն սկյութները, այլև էթիոնցիները։ Նախ, այս տարածքներում չկար որևէ այլ ուժ, որն ի զորու լիներ վերջին հարվածը հասցնելու ուրարտական տերությանը։ Հիշենք, որ նրանք էին, որ արդեն շուրջ մեկ դար առաջ ավերում էին Ուրարտուն։

Կարելի է կարծել, որ գործ ունենք սկյութա-էթիոնյան դաշնակցության կամ պետական կազմավորման հետ⁴⁶²։ Եվ իրոք, Խորենացին (Ա.Իա) հիշում է հայոց առաջին օծյալ թագավոր Սկայորդու որդի Պարույրին՝ որպես Ասորեստանի կործանմանը մասնակցած հայոց առաջնորդ։ Ինչպես ասվեց, հայկական ավանդության մեջ Ուրարտուն անձնավորվել է Շամիրամ թագուհով և ընկալվել որպես Ասորեստան (որի անկումն էլ մոտավորապես համընկնում է Ուրարտուի անկման դարաշրջանի հետ)։ Սկայորդի անունը, որը նշանակում է «հսկայի որդի», ընդունված է մեկնաբանել որպես վերափմաստավորված «սակի (սկյութ) որդի»⁴⁶³, ինչը կարծես հիմք է տալիս հաստատելու Ուրարտուի կործանման դարաշրջանի հնագիտական նյութի հիման վրա արված մեկնաբանությունը։

Ստորև՝ որոշ պարզաբանումներ այս հարցի վերաբերյալ։ Ուրարտական մի արձանագրության մեջ հիշվում է էթիոնիի *Iškugulu/Iškugulhi* երկրի (տեղայնացվում է Ներկայիս Գյումրիից հյուսիս) արքա *Šagaputara*-ն⁴⁶⁴։ Վերջին անձնանունը կարող է մեկնաբանվել որպես «սակի որդի» (հմտ. հնդիրան. *putra՝ «որդի») և միանգամայն համապատասխանում է հայ ավանդության Սկայորդի

⁴⁶² Grekyan 2014, 161. Գրեկյան 2016թ, 500:

⁴⁶³ Ղափանցյան 1940, 217. Пиотровский 1959, 127. Дьяконов 1968, 187. ՀԺՊ, 429-433. հարցի մանրամասն քննությունը տես Դալալյան 2010, գրականությամբ:

⁴⁶⁴ Çilingiroğlu, Salvini 2001, 262.

անվանը: Լճսցսլի երկրանունը ուրարտական ուղղագրության համաձայն կարող է կարդացվել Լճk(i)ysl- (-ի ածանցով): Սեպագրում այդպես պիտի հաղորդվեր սկյութների ցեղանունը՝ skula (< skuḏa < skuda)⁴⁶⁵, որը կարող էր skül- հնչողությամբ մի տարբերակ ունենալ: Այսինքն՝ Խորենացու հիշած հայ իշխան Սկայորդին կարծես ի հայտ է գալիս որպես պատմական դեմք, այն էլ իրոք որպես «Սակի որդի» և Լճսցսլի՝ «սկյութական» կոչվող երկրի արքա Էթիունիում: Սա հաստատում է Ասորեստանի և Ուրարտուի կործանման դարաշրջանում Էթիունի-սկյութական, այսինքն՝ հայ-սկյութական դաշինքի վարկածը:

Եթե դա այդպես է, և Էթիունյան ու սկյութական ուժերն են վերջին հարվածը հասցրել Ուրարտուին, ապա ովքեր պիտի տիրեին այդ երկրին և դառնային Ուրարտուի ժառանգորդը: Ակնհայտ է, որ Էթիունցիները և/կամ սկյութները: Զարմանալի բան կլիներ, եթե մի հզոր դաշինք վերջին հարվածը տար Ուրարտուին, բայց երկրին միանգամից տիրանար ինչ-որ ուրիշ մի էթնիկ խումբ (մանավանդ, որ այլ քիչ թե շատ հզոր ուժեր չկային ասպարեզում): Հետաքրքիր է նշել, որ Պիոտրովսկին և Դյակոնովը Խորենացու հիշած Սկայորդու որդի Պարույրի երկիրը՝ հայոց առաջին թագավորությունը, տեղայնացնում են այնտեղ, որտեղ իրենք են պատկերացրել հնագույն Հայաստանը, առաջինը՝ Սասունի շրջանում (որտեղ Պարույրը բնակեցնում է Ասորեստանի արքայի որդիներին), երկրորդը՝ Մալաթիա/Մելիդում: Այս երկու տեղայնացումներն էլ մտահայեցողական են, մինչդեռ Պարույրի հոր՝ Սկայորդու իրական ժառանգական «թագավորությունը» եղել է Էթիունիում:

Էթիունյան վարկածի համատեքստում առավել հասկանալի է դառնում Հայաստանի մասին գրած առաջին ականատես հեղինակ Քսենոփոնի այն տեղեկությունը, որ երկրի մի մասը կոչվում էր «Արևմտյան Հայաստան» («Անաբասիս», IV.4.4, մ.թ.ա. 401թ.): Այդ դեպքում որպես «բուն Հայաստան» պիտի պատկերացվեր երկրի արևելյան մասը⁴⁶⁶, իսկ այն համապատասխանում է ուրարտական աղբյուրների Էթիունիին և հարակից շրջաններին: Պարզ է, որ մ.թ.ա. V դ. «բուն Հայաստանը» չէր կարող կոչվել «Արևմտյան

⁴⁶⁵ Դալլալյան 2010, 44-45. հմմտ. Կարազյոզյան 1984, 75-80: Սկյութների ցեղանվան վերաբերյալ տես Куланда 2016, 89 et passim.

⁴⁶⁶ Այս մասին տես Գ. Սարգսյան 1988, 61-64:

Հայաստան», քանի որ այդ անվանումը ծայրամասային երանգ ունի, մինչդեռ Խաթիի և Հայասայի վարկածների շրջանակներում «բուն Հայաստան» պիտի համարվեր հենց «Արևմտյան Հայաստանը»: Այս համատեքստում կարող է հիշվել և Ստրաբոնի (XI.14.15) այն տեղեկությունը, որ «բուն Հայաստանը» Մեծ Հայքն էր՝ հակադրված արևմուտքն ու հարավ-արևմուտքն ընդգրկող Ծոփքին:

Հայոց ազգաձագման մյուս վարկածների հեղինակները հայոց ակունքները փնտրել են Հայկական լեռնաշխարհի հարավում և արևմուտքում: Դրա համար կան որոշ օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներ. հնագույն աղբյուրների տեղեկությունները վերաբերում են լեռնաշխարհի հարավային և արևմտյան շրջաններին, ազգածին ավանդության մեջ հայոց առաջին կենտրոնը տեղայնացվում է Վանա լճի հյուսիսում, իսկ հունական ավանդության համաձայն՝ Եկեղյաց գավառի շրջանում: Եթիունյան վարկածը չի բացառում հնագույն հայերի՝ սկզբնապես լեռնաշխարհի արևմտյան և/կամ հարավային շրջաններում տարածված լինելը: Արծանիա, Արծիա, Տուարածինի տեղանունները, ինչպես և Հայկ նահապետի՝ Հարքում հաստատվելը հուշում են, որ Վանա լճի հյուսիսում և Արածանի գետի հովտում դեռևս Ուրարտուի ձևավորումից առաջ հայերեն խոսող բնակչություն է ապրել:

Ավանդությունն ասում է, որ Արամանյակը թողնում է Հարքը և գնում հյուսիս՝ Այրարատ, Արարատյան դաշտ: Կարելի է ենթադրել, որ այդ տարածքները զբաղեցրած են եղել հնագույն հայերով, որոնք ինչ-ինչ պատճառներով իրենց կենտրոնը տեղափոխել են Այրարատ: Բայց ղր ժամանակներից: Երբ հայերի նախնիներին ուրարտական ժամանակներում փնտրում են արևմուտքում, դրանով ենթադրվում է, որ նրանք լեռնաշխարհի տարածքներն են մտել հիմնականում Ուրարտուի անկումից հետո: Իսկ եթե ընդունենք, որ հայերը տարածված են եղել լեռնաշխարհում դեռևս մինչուրարտական ժամանակներում, ինչը երևում է ուրարտերենում հայկական փոխառություններից և ուրարտական անվանաբանության քննությունից (և ինչպես կարծում են վերջին ժամանակների բոլոր լուրջ ուսումնասիրողները՝ Դյակոնով, Ջահուկյան, Սարգսյան և այլք), ապա կարող ենք նախաուրարտական ժամանակներով թվագրել նաև հայերի՝ իրենց կենտրոնն Այրարատը դարձնելը, որն ազգածին ավանդության մեջ ներկայացվում է հայոց երկրորդ նահապետ

Արամանյակի (ըստ Անանունի՝ հայոց երկրորդ էպոնիմի) Արարատ-
յան դաշտում հաստատվելով:

Եվս մեկ փաստարկ: Ինչպես ասվել է, Հայկի ավագ որդի,
հայերի էպոնիմ Արամանյակն է, որ թողնում է հոր ոստանը և գնում,
հաստատվում է Այրարատում: Մյուս երկուսը՝ Խոռը և Մանավազը՝
խուռիների և ուրարտացիների հավանական էպոնիմները, մնում են
տեղում՝ Վանա լճի շրջանում: Սա կարող է բացատրվել որպես խու-
ռա-ուրարտական ցեղերի ճնշման տակ հայերի՝ այդ շրջանը լքելու
արձագանք: Դա, ակնհայտորեն, պետք է տեղի ունենար Ուրարտուի
հզոր տերություն դառնալուց ավելի վաղ:

Ամփոփելով՝ կարելի է ասել, որ եղած փաստերի տրամաբա-
նության համաձայն, եթե հայ ցեղանունը նույնիսկ կապված էլ չի
էթիունիի հետ, միննույն է, այդ երկիրը պիտի հայերի կենտրոնը լի-
ներ դեռևս նախաուրարտական ժամանակներում:

Այս վարկածի համար կարելի է նշել հետևյալ ուժեղ կետերը.

ա. Տարածական և ժամանակային համապատասխանությունը
ազգածին ավանդության տվյալներին, ուր Այրարատը և Արարատ-
յան դաշտը հանդես են գալիս որպես հետհայկյան Հայաստանի
կենտրոն: Սա է վարկածի առաջադրման իրական ամուր հիմքը:

բ. Հայերի՝ ուրարտական ժամանակներում բացահայտ նույնա-
ցումը որպես լեռնաշխարհի բնակչության մի կարևորագույն հան-
րույթ, ի հակադրություն մյուս վարկածների, որտեղ հայերը անբա-
ցատրելիորեն չեն երևում ուրարտական արձանագրությունների
հսկայածավալ նյութում:

գ. Ուրարտու-Հայաստան անցման պատմականորեն պարզ
մեկնաբանելիությունը որպես Հայկական լեռնաշխարհում իշխա-
նության կենտրոնի փոփոխություն՝ աշխարհագրորեն հարավից
հյուսիս, իսկ էթնիկապես՝ Ուրարտուի իշխող հանրույթից՝ մյուս
հզոր հանրույթին՝ հայերին:

դ. Որոշ տեղանունումների, մեկ դիցանվան, գոնե մեկ արքայի
անվան պարզորոշ հայկական ստուգաբանությունը և ավանդա-
կան պատմության մեկ հայ իշխանի՝ Սկայորդու նույնացումը որպես
հենց Էթիունյան «արքա»: Մյուս վարկածները, հայերին տեղայնաց-
նելով լեռնաշխարհի արևմուտքում և հարավում, այդ շրջաններում

չեն կարողանում գտնել հայերենով հուսալիորեն ստուգաբանվող անուն ունեցող գեթ մեկ անձ:

Իհարկե, կան և որոշ խնդիրներ. ա. Etiu ձևը՝ ավելի հեշտ ենթադրելի Atiu-ի փոխարեն, բ. հայերենում *-t'i- > -y- անցման ժամանակագրության անհայտ լինելը ևն:

Տարբեր վարկածների հարաբերությունը

Ներկայումս այս երեք վարկածներն են իրենց տարբերակներով շրջանառվում գիտական գրականության մեջ: Ներկայացնենք վարկածների հաշտեցման որոշ հնարավորություններ: Խեթերի անվանումն ակնհայտորեն սկսվել է *խ*-ով, բայց հայերենում հայտնի են հերթագայող *հ/խ*-ով ստուգաբանական կրկնակներ (*հաշմ/խաշմ*, *տհեղծ/տխեղծ*, *հարբուխ/խարբուխ*, *ճահիճ/ճախիճ* ևն)⁴⁶⁷: Եվ եթե Հայասային անվանում տվող բնակիչները հնագույն հայերն էին, ապա նրանց լեզվում հին տեղական *Hatti* ցեղանվան մի հնարավոր կրկնակը՝ *հաթի*-ն կանոնավոր կարող էր դառնալ *հայ*՝ Հայասա տեղանվան հիմքը (**hat'iyā*, *-*ti*- > -*y*- անցումն այդ դեպքում պիտի տեղի ունեցած լիներ Հայասայի առաջին վկայությունից վաղ)⁴⁶⁸: Նույն ստուգաբանության համար հնարավոր է նաև մեկ այլ պատմական հնարավորություն: Ինչպես տեսանք, խաթական անուններն են ի հայտ գալիս և Հայասայում, և Տարոնում: Խաթերի և նրանց ազգակից կասկերի ցեղերը հավանաբար տարածված են եղել Հայկական լեռնաշխարհում հնագույն ժամանակներից: Եվ *Hatti*-ի *հաթի* կրկնակը կարող էր բնորոշ լինել Հայկական լեռնաշխարհի այդ հին բնակիչներին, որը, հայերին անցնելով, կանոնավոր զարգացմամբ կդառնար *հայ*:

⁴⁶⁷ Տե՛ս Джаукян 1967, 310:

⁴⁶⁸ Ըստ վերջերս արտահայտված մի կարծիքի՝ Հայասա անվանումը կարող էր ծագել խաթա-խեթական *Hatti*-ի մի ածանցյալից՝ երկրի մայրաքաղաքի *Hattusa* անվանումից (*Hattusa* > *Hattusa* > *Hayasa*, տե՛ս Colarusso 2005, 172): Այդ անցումը հայերենի օրենքներով չի կարող բացատրվել (-*at(t)u*-/*ato*- > -*aya*- զարգացումն անհնար է): Կարելի է միայն տեսականորեն ենթադրել *Hattiasa* տարբերակը, որից հնարավոր կլիներ Հայասա անցումը:

Էթիունյան վարկածում էլ ուրարտ. Etiu-ի համար կանխադրվում է տեղական **haxəh(j)n-* արտասանությունը, որն ուղղակի նույնական է խեթական վարկածի՝ արդեն Ենսենի կողմից առաջադրված նախաձևին: Ըստ այդմ՝ տեսականորեն չի բացառվում, որ սեպագիր Etiu-ն Կատի-ից ծագած տեղական *haxəh(j)n* ածանցյալի ուրարտական գրեւաձևը լինի: Այդ դեպքում *hax* ցեղանունը հետագայում է վերափոխվել հնդեվրոպական **poti-*՝ «տեր, ամուսին» արմատից ծագած համահունչ բառով (թեև դա դժվար է պատկերացնել, որ Հայկի կերպարը և ողջ առասպելը ստեղծված են նրա անվան այդ իմաստավորման վրա):

Եթե Խաթի և Հայասա, Խաթի և Էթիունի անվանումների կապը հնարավոր է, ապա Հայասայի և Էթիունիի ուղղակի կապն առաջին հայացքից անհավանական է թվում: Մ.թ.ա. XIVդ. հայտնի Հայասա ձևը համադրելի է Ժամանակակից *hax* ցեղանվանը, իսկ ավելի քան հինգ դար ավելի ուշ ավանդված Էթիունին ենթադրում է նույն ցեղանվան ավելի վաղնջական վիճակ: Բայց այս հակասությունը կարող է բացատրվել, եթե ենթադրենք, որ հայերի ցեղանվան հնագույն *haxəh* ձևը ուրարտերեն է մտել շատ վաղուց՝ մ.թ.ա. XIVդ. առաջ, և մնացել այդպես (*էթիո*), մինչդեռ կենդանի (էթիունյան) հայերենում այն վերափոխվել էր *հայո*-ի:

Սրանք, իհարկե, տեսական հնարավորություններ են, սակայն գիտության զարգացման ընթացքում երբեմն հաստատվում են ամենահամարձակ տեսակետները և մերժվում ամենահավանական թվացողները: Ըստ այդմ՝ որոշակի հավանականություն կա, որ այս վարկածներն իրար հետ կապված են: Բայց և այնպես, դրանք դեռևս պետք է դիտվեն որպես իրարից անկախ: Ընդ որում՝ պետք է հաշվի առնել, որ Խաթիի վարկածի դյակոնոմյան տարբերակը, որը երբեք իր ամբողջության մեջ չէր ընդունվել մասնագետների կողմից, ներկայումս, կարելի է ասել, կորցրել է իր հրատապությունը և շատ քիչ է շրջանառվում (այն էլ հիմնականում ռուսալեզու գրականության մեջ): Եվ վարկածների հաշտեցման հնարավորությունների մասին խոսելիս նկատի է առնվում Խաթիի վարկածի ոչ թե դյակոնոմյան տարբերակը, այլ միայն *hax* ցեղանունը Կատի-ից բխեցնելու Ենսենի ստուգաբանությունը:

Սուբյեկտիվ գործոնները

Հայոց ազգածագման վարկածների տարածման և գնահատման գործում շատ մեծ է եղել անձնավորությունների դերը: Ի. Դյակոնովը՝ հայ ժողովրդի նախապատմության վերաբերյալ մենագրության հեղինակը, համաշխարհային ճանաչում ունեցող գիտնական էր, ով բազում աշխատություններում՝ հրատարակված հայերեն, ռուսերեն և անգլերեն, պաշտպանում էր իր վարկածը: Նրա մենագրության անգլերեն տարբերակը մյուս անգլերեն աշխատությունների հետ դարձել էր արևմտյան մասնագետների ուղեցույցը հայոց ազգածագման և նախապատմության խնդիրներում (արևմուտքում հարցին իրազեկ մասնագետներ չկան): Այսպիսով, Դյակոնովի տեսությունը, թեև իր ամբողջության մեջ մասնագետների շրջանում կողմնակիցներ չի ունեցել, բայց լայնորեն հղվել և ընդունվել է աշխարհի գիտական հրատարակություններում⁴⁶⁹:

Աշխարհի գիտական շրջանակներում հայաստանյան վարկածի գնահատման գործում էական է եղել Գ. Ղափանցյանի՝ լեզվաբանական մոտեցումների անընդունելի լինելը. այդ հիման վրա է այն քննադատվել Ի. Դյակոնովի և նրա հետևորդների կողմից: Իմիջիայլոց, Ղափանցյանի աշխատությունը մի կողմից խրախուսվել, մյուս կողմից խստորեն քննադատվել է՝ նաև գաղափարախոսական՝ իբր «մարքսիստական» դիրքերից, և այն էլ՝ գրքի խմբագրի կողմից (սա օրինակ է, որտեղ երևում է, թե ինչ իրադրության մեջ են աշխատել խորհրդային գիտնականները)⁴⁷⁰: Ինչևէ, լեզվաբանական փաստարկների անընդունելի լինելը տեսականորեն չի ժխտում գաղափարի էությունը. այն կարելի է պաշտպանել այլ փաստարկներով: Այս վարկածը իր հետղափանցյանական՝ լեզվաբանորեն ճշգրտված տարբերակներով, հարցին քիչ թե շատ իրազեկ մասնագետների շրջանում փաստորեն միակ տարածված վարկածն է:

Ի. Դյակոնովը և հայաստանյան վարկածի կողմնակիցներն իրենց աշխատություններում փորձել են ցույց տալ իրենց նախընտրած վարկածի ուժեղ կողմերը և քննադատել ու անհավանական են

⁴⁶⁹ Տե՛ս բազում ռուսալեզու հրատարակություններում, Mallory, Adams 1997, 30. Hovannisian 1997, 25, Redgate 1998, 16, 24 ևն:

⁴⁷⁰ Гарибян 1949.

համարել իրենց կողմից մերժվողը⁴⁷¹: Ընդ որում, թեև սովորաբար մյուս կողմի նկատմամբ եղել է որոշակի հանդուրժողականություն, բայց երբեմն օգտագործվել է կատեգորիկ, նույնիսկ կոպիտ ոճ⁴⁷²: Ինչ վերաբերում է էթիոնյան վարկածին, այն լայն քննարկումների առիթ չի տվել⁴⁷³:

Հայագիտությունը, ինչպես արևելագիտությունն առհասարակ, քաղաքականացված է: Հսկայական միջոցներ և եռանդ է վատնվել ոչ թե գիտական խնդիրների անաչառ քննարկման և ճշմարտության բացահայտման, այլ քաղաքական նպատակներ հետապնդող

⁴⁷¹ Дьяконов 1968, 209–213. 1983a, 158. Бэнецяну 1961, 107–110. Джаукян 1964, 64–68. Զահուկյան 1987, 281–283. Гамкрелидзе, Иванов 1984, 913:

⁴⁷² Վ. Իվանովը գրում է, որ հին սեպագիր աղբյուրներում *հայ* ցեղանվան հետ համադրելի անունների վերաբերյալ նորագույն բացահայտումները «հաստատում են Գ.Ա. Ղափանցյանի եզրակացությունների ճշմարտությունը և Ի.Մ. Դյակոնովի բոլոր կառուցումների լիակատար սխալականությունը ցեղանվան *հայ* < **hati* ծագման և հայոց ազգածագման այլ հարցերի վերաբերյալ», տես Иванов 1983, 30, прим. 31: Դյակոնովն, իր հերթին կատեգորիկ անընդունելի է համարում *հայ* < Հայասա կապը (Diakonoff 1984, 201, n. 120), իսկ համահեղինակի հետ գրված նրա մի աշխատության մեջ կարդում ենք՝ «տակառներով թանաք է ծախսվել՝ փորձելու համար ապացուցել, որ հայասացիները Հայքի (հայերի) նախնիներն են՝ *Sirene des Gleichklangs* (գերմ.)՝ «համահնչունությունների սիրեն» - Ա.Պ.) կոչվող հիվանդության ծանր մի դեպք», տես Diakonoff, Medvedskaya 1987, 387 (նկատի ունեն հին հունական առասպելաբանության սիրեններին, որոնք իրենց երգով գայթակղում և կործանում էին ծովայիններին): Իմիջիայլոց, 1986թ. Իվանովը պատմել է, որ Դյակոնովն իրեն մի անգամ այդ հոդվ. վրա «հայ ազգայնական» է անվանել (Ա. Դեմիրխանյանի անձնական հաղորդումը):

⁴⁷³ Իր որոշ աշխատություններում այդ թեմայով մեր հրապարակած գործերից տարիներ անց էթիոնյան վարկածը փորձել է հիմնավորել Հ. Կարապյոզյանը, բայց ցավոք, հիմնականում բացարձակապես անընդունելի փաստարկների հիման վրա և իրեն ներկայացնելով որպես վարկածի հեղինակ (մինչդեռ նա մանրամասն տեղեկացված էր մեր գաղափարներին), առանց հիշելու կամ անհարկի քննադատելով մեր աշխատանքները, (տես Karagezian 1988. Կարապյոզյան 1998. այդ աշխատանքների քննադատությունը՝ Գ. Սարգսյան 1988ա. Петросян 1991a. Մարտիրոսյան 2014): Վերջերս հայ ժողովրդի կազմավորման հարցերին նվիրված իր աշխատության մեջ էթիոնյան վարկածն է պաշտպանում նաև Ա. Հակոբյանը (2013) առանց հատուկ հիմնավորման՝ հիշելով մեր և Կարապյոզյանի աշխատանքները:

տեսակետների պաշտպանության վրա: Այս վիճակը միայն ավելի է մեծացնում սուբյեկտիվ գործոնների դերը և դժվարացնում գիտության առաջընթացը:

Ներկայումս մոդայիկ են դարձել ազգային ինքնության և ազգայնականության պատմության ուսումնասիրությունները, և հայոց ազգածագման՝ առանց այն էլ քաղաքականացված խնդիրը առավել է քաղաքականացել: Իրոք, ազգածագման վերաբերյալ թե՛ գիտական, թե՛ մերձգիտական և ոչ գիտական աշխատությունները կարելի է ուսումնասիրել նաև հայ ազգայնականության պատմության դիտանկյունից՝ քննելով դրանց էվոլյուցիան Հայաստանում, ԽՍՀՄ-ում և արտասահմանում: Ազգայնականության պատմության հեղինակների համար մասնագիտական որակավորման բերումով դժվար է օբյեկտիվորեն գնահատել, երբեմն նույնիսկ տարբերակել եղած գիտական և ոչ գիտական վարկածները: Նրանք լավագույն դեպքում հենվում են առավել ընդունված կարծիքների և լավագույն համարվող ուսումնասիրությունների վրա: Այդօրինակ որոշ գործերում Ի. Դյակոնովի տեսությունը դիտվում է որպես միակ ճիշտը, օբյեկտիվը, ոչ ազգայնականը (հղվում են նաև այլ հեղինակներ, և տպավորություն է ստացվում, թե գործ ունենք մասնագետների կողմից համընդհանուր ընդունելություն գտած վարկածի հետ, մինչդեռ այդ հեղինակներն իրականում հայոց ազգածագման և վաղ պատմության խնդիրներին իրազեկ մասնագետներ չեն և միայն կրկնում են Դյակոնովին)⁴⁷⁴:

Երբ հրապարակում չկան մյուս վարկածները գիտական բարձր մակարդակով և օբյեկտիվորեն ներկայացնող այլ աշխատություններ (մանավանդ՝ եվրոպական լեզուներով), միայն այդպիսին

